

საბჭოთა

II სურ

საბჭოთა

გერმან, ჯერმანული და რუსული

საბჭოთა

№ 2

ფესტივალ

1902

საბჭოთა

Типография Груз. Издат. Т—ва. | Сахаровъ, Вранъ, Сибирсканъ.
1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

1.	ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ, պատմուհաժք Լ. Բաւալեանի . . .	5
2.	«Է՛Յ, ԿԱՆԱՆՁ ԱԽՊԼԻ», բանաստ. Աւ. Իսահակեանի . . .	9
3.	ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրխարի . . .	11
4.	ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓԵՐԻՑ, յօդ. Տ. Օսեանի. . .	39
5.	ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօի, թարգ. Հ. Ա- ռաքելեանի . . .	48
6.	«ԿԱՄԱՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ», Հեյնէյից, թարգմ. Մ. Տ.-Դ. . .	72
7.	ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ, հոգեբանական էսէյ, Ս. Շխեանցի . . .	73
8.	«ՍԵՒ ՎԻՃԱԿ», բանաստեղծութիւն Ալ. Մառութեանի . . .	100
9.	ԶԷՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ, յօդ. Հ.-ի . . .	101
10.	ՀԵՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի . . .	110
11.	ՄԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԻՒՆ.—5) Մ. Կորեյլի. «Մի մանկան հոգու պատմութիւն», Լ.—6) Dr. Rohrbach: „Die Bagdad- bahn“, Ե. Թ.—7) Մանեղապետ, «Վեղձաւոր դար», Վ. Ե.—8) Goumplowicz: Nationalismus und Internationalismus“. Ե. Թ. . .	117
12.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ. Անասնապահութիւնը և կաթ- նատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում, Ս. Ջաւարեանի . . .	159
13.	Վ. Ն. ԳՕԳՕԼ, յօդ. Սս. Լիսիցեանի . . .	173
14.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր ժողովրդի սնտոհաատու- թիւնը.—Ո՞վ է մեղաւորը.— Երկրաշարժի հիմնական պատճառը.—Նախազգուշական միջոցների նշանակու- թիւնը.—Բժշկիների VIII Պիոգովեան համաժողովից մի քանի տեղեկութիւններ.—Ինքնավարութեան դերը ժողովրդի կեանքում.—Փոքրիկ ինքնավարական սաղմեր՝ ժուխ, հոգաբարձութիւն.— Ժողովրդի ինքնավար իրա- ւունքների պաշտպանութիւնը մեզանում.—† Ստ. Իւզրաշեան. Լ. Սարգսեանի . . .	188
	Բէալիստների մուտքը Բժշկական ակադէմիա, Լու- սաւորութեան միւստորի հրամանը Մոսկուայի համալ- սարանի ուսանողական անկարգութիւնների առիթով. . .	194
15.	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Աղէտներ.—Յունուարի 31-ը.— Շամախու տներումը.—Դժբախտութեան չափերը.—Տե- սարաններ.—Պատմական տեղեկութիւններ Շամախում եղած երկրաշարժերի մասին.—Վնասուած գիւղեր.— Հասարակական օգնութիւն.—Շամախու ապագան.— Մտաւոր առաջադիմութեան գործը մեր դաստններում.	

Նոր շրջան II տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

1902

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ра. | Տպարան Գրաց Հրատ. Ընկերության.

1902

Дозволено цензурою. Тифлисъ, 26 февраля 1902 года.

ԲՈՎԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

1. ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ, պատմուածք Լ. Բաշալեանի 5
2. «Է՛Յ, ԿՍՆԱՆՁ ԱԽՊԷՐ», բանաստ. ԱԼ. Իսահակեանի 9
3. ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, Վէպ Շահրխարի 11
4. ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓԵՐԻՅ, յօդ. Տ. Օսեանի. 39
5. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, Վէպ Հանրի Բօրդօի, թարգ. Հ. Առաքելեանի 48
6. «ԿԱՄԱՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ», Հեյնէյից, թարգմ. Մ. Տ.-Դ. 72
7. ՓՈԹՈՐԿԻՅ ՅԵՏՈՅ, հոգեբանական էտիւզ, Ս. Շխեանցի 73
8. «ՍԵՒ ՎԻՃԱԿ», բանաստեղծութիւն Ալ. Մաթուրեանի 100
9. ԶԵԹՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԻ ԿԻՍՈՒՄ, յօդ. Հ.-Ի 101
10. ՀԷՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի 110
11. ՄԱՏԵԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—5) Մ. Կորեյի. «Մի մանկան հոգու պատմութիւն», Լ.—6) Dr. Rohrbach: „Die Bagdadbahn“, Ե. Թ.—7) Մանտէղադյա, «Կեղծաւոր դար», Վ. Ն.—8) Goumplowicz: Nationalismus und Internationalismus“, Ե. Թ. 117
12. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ. Անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում, Ս. Զաւարեանի 159
13. Վ. Ն. ԳՕԳՕԼ, յօդ. ՍՏ. Լիսիցեանի 173
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր ժողովրդի անտիհասարակութիւնը.—Ո՞վ է մեղաւորը.— Երկրաշարժի հիմնական պատճառը.—Նախազգուշական միջոցների նշանակութիւնը.—Բժշկիների VIII Պիոգովեան համաժողովից մի քանի անդեկութիւններ.—Ինքնավարութեան դերը ժողովրդի կեանքում.—Փոքրիկ ինքնավարական սղմեր՝ ծուխ, հոգաբարձութիւն.— ժողովրդի ինքնավար իրաւունքների պաշտպանութիւնը մեզանում.—† Ստ. Իզրաէլեան. Լ. Սարգսեանի 188
- Բէալիստների մուտքը Բժշկական ակադէմիա. Լուսաւորութեան միջոցների հրամանը Մոսկուայի համալսարանի ուսանողական անկարգութիւնների առիթով. 194
15. ԳԱԽԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Աղէտներ.—Յունուարի 31-ը.— Շամախու աւերումը.—Դժբախտութեան չափերը.—Տեսարաններ.—Պատմական տեղեկութիւններ Շամախում եղած երկրաշարժերի մասին.—Վնասուած զիւղեր.— Հասարակական օգնութիւն.—Շամախու ապագան.— Մտաւոր առաջագիմութեան գործը մեր զաւառներում.

	—Համակրելի Երևոյթներ.—Ժողովրդի անօղնականութիւնը, Ս.	197
	Գիւղական փոխառութիւնների հարցի առիթով, Ս.—Գօ.	208
16	ՎԻԿՏՕՐ ՀԻԻԳՕ, յօդ. Լ.	212
17.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդրկական կուսակցութիւնների վերաբերմունքը զէպի հաշտութեան հարցը.—Բօզբէրի Լիվերայուեան ճառը.—Անգլօ-եապօնական զաշնակցութիւն.—Գերմանիան Մերձաւոր Արեւելքում.—Բաղդադի երկաթուղին.—Ճոխ հայրենիք և իրաւազուրկ ազգաբնակչութիւն.—Մի հակապատկեր զրան.—Իսլանդիայի ինքնավարութեան ընդարձակումը. Վ. Ս.	230
	Սանատարեան զպրոցի տեղափոխութիւնը.	235
18.	† Օ. ԿԱՐՐԻԵՐ	237
19.	ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՅ.—Օձի թոյնը և հակաթոյնական շիճուկը.—Մի հաղուազիւտ օպերացիա.—Թունատրումն մազերի ներկով.—Վարակումն ավաէների, բաժակների, դանակի, պատտաքաղի և զոլալի միջոցով.—Ծխախոտի պատմութիւնից, Վ. Ս.	238
20.	ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	233
21.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	249
22.	ՅԱԻԵԼՈՒԱԾ.«ՅՐԱՄՈՒՏԻՆ», զէպ Ի. Ս. Տուրգենեւի. 33—48.	

Ե Ր Կ Ո Ւ Կ Ի Ն Ե Ր

(Ղալաթիոյ ստալալասակէն)

Մայրն ու երկու աղջիկներն էին. մայրը պարերդ մը կը նուագէր մաշուած ու ծակծկուած արօռտէոնի մը վրայ, ու երկու աղջիկները կը կաքաւէին դէմ առ դէմ: Ո՞ւսկից եկած էին, Բոլոնիայի կամ Հունդարիայի ո՞ր անկիւնէն. չեմ գիտեր: Երսունը անցած ըլլալու էր կիներ. ո՛չ գեղեցիկ, ո՛չ տղեղ, աննշան դէմք մը: Դեղձան մաղերը երկու լայն հիւսկէններով ծածկած էին քներքը, ու դէմքին ճերմակութեան վրայ, զոր արեւն ու հովը չէին կրցած գեռ այրել բոլորովին, երկու կապոյտ աչուրներ կը պարզէին յոգնած անտարբերութիւն մը: Ձեռուրները մեքենայաբար կը շարժէին նուագարանը, ինչպէս կին մը որ մրափին մէջ իսկ կը շարունակէ գուլպան հիւսել, և այդ ջախջախ լեզուակներէն խուլ և սուր խաղերու անընդհատ յաջորդութիւն մը ականջները կը վիրաւորէր. մերթ ընդ մերթ, օդը փրօցին պատառուածքէն ներս խուժելով, օրհասականի հոնդիւնի մը պէս կը խորդար: Պարերդը կը շարունակուէր, հունդարական աշխոյժ ու զուարթ չառտա մը որ գոգցես ամօթահար կը խուսափէր այդ անտարբեր ու անողոք մատուրներուն ներքեւէն, ու աղջիկները կը կաքաւէին:

Եօթը ութ տարեկան երկու մանկուհիներ էին ա-
սոնք, իրենց մօրը պէս դեղձան մազերով ու կապուտակ
աչուրներով, մազերնին խօլ խոպոպիքներով ցանցնուած
էին միայն իրենց պզտիկ գլուխներուն չորս բոլորքը,
ու կապուտակ աչուրներուն մէջ իրենց տարիքէն շատ
աւելի վեր հասկացողութիւն ու կրակոտ հետաքրքրու-
թիւն կար: Քանի մը անցորդներ ու դատարկապորտ-
ներ կէս բոլորակ մը կազմած էին անոնց շուրջը, ու
աղջիկները կը կաքաւէին դէմ առ դէմ, ոտքերնին այս
ու այն կողմ նետելով, տեղերնին փոխանակելով, իրա-
րու ձեռքի մէջ զարնելով: Ու յետոյ, երկու-երեք վայր-
կեանը անգամ մը, իրենց ճերմակ ու կակուղ ավր
կ'երկնցնէին հանդիսատեսներուն: Անցորդները կը հե-
ռանային նոյնհետայն, դատարկապորտները կը մնային
անզգած: Ու երբ տասնոց մը չէր դար արար մը յօ-
րինել այդ մանրիկ ավերուն ճերմակութեանը վրայ,
աղջիկներն իրենց մօրը կը նայէին յուսահատութեամբ:
Կ'երևայ թէ նոր խրախոյս մը կը կարգային անոր ա-
չուրներուն մէջ, զի կ'աւելցնէին իրենց թախանձանք-
ներն ու պաղատանքները, հանդիսատեսին ծունգերուն
կը փաթթուէին, շոյելով ու փայրայելով անոր ամէն
կողմը, անոր երեսին ժպտելով՝ բանիմաց աչքերով,
չնիկի մը պէս բծնելով: Օ՛հ, լաւ սորվեր էին իրենց
արհեստը, կատարելագործութիւնը տարիքին հետ պի-
տի դար աներկբայ: Ու մայրը կը շարունակէր պարերգը
մաշած ու ծակծկած աքոռտէսին վրայ, ու երկու աղջիկ-
ները կը կաքաւէին դէմ առ դէմ:

Յիսուն քայլ անդին կ'ին մը կ'երթար պզտիկ
աղջկան մը ձեռքէն բռնած սերտիւ: Օ՛հ, անմիջապէս
ճանչցայ զինքը. մենէ էր, իր արիւնէն կար մեր երակ-
ներուն մէջ: Փառառացի պանտոխոտ կ'ին մըն էր, Մշոյ
դաշտէն, եթէ չեմ սխալիր: Կարմիր կտաւ մը ծած-
կած էր ամբողջ դէմքը մինչև բերանը, արևակէզ այ-
տերը միայն կ'երևնային, ու մանրիկ սևուկ աչքերը,

որոնց մէջ ցուրտ կորով մը կը տեսնէի ես: Իր հայրենիքին նախշուն հագուստը կը կրէր, ասեղնագործ կապոյտ մէզար ու կարմիր գոգնոց: Մատաղատի աղջիկը մութ գոյնով վերարկու մը ունէր մինչև ծունգերը, և իր մերկ պստիկ ոտները իրենց ետեէն կը քաշքշէին առնական հաստ կօշիկներ, որոնց մէկուն մէջ հանգիստ կրնային սեղմիլ իր երկու ոտքերն ալ: Իր հասակը հազիւ կը հասնէր մինչև մօրը մէջքը, ու գգուական խանդաղատանքով՝ դուխը կը խորասուզէր անոր մէզարին խորերը: Հաստատ քայլելով՝ կ'ընթանային երկուքն ալ, կամաց-կամաց, անուշագիր իրենց շուրջը տիրող ընդհանուր օգևորութեան, այդ խաժամութիւն մէջ տարօրինապէս միայնակ: Մայրը սակայն խուզարկու նայուածքներ կը պտտցնէր սալայատակին վրայ, յամառ ուշադրութեամբ, և ահա յսնկարժ ծռեցաւ, փայտի կտոր մը առաւ գետնէն և գոգնոցին ծայրը վերցնելով՝ մէջը դրաւ: Քսան քայլ անդին, նորէն ծռեցաւ, շորչած ճիւղ մը առաւ, երկու-երեք կտոր ըրաւ և գոգնոցին մէջ սահեցուց: Այսպէս շարունակեց հինգ վեց անգամ: Երբեմն, ծռած ատենը, փայտին կտորներէն մին գետին կ'իյնար գոգնոցէն, ու այն ատեն պզտիկը, աշխուժիւ թողլով մօրկանը ձեռքը, կը վերցնէր և գոգնոցին մէջ կը նետէր յաղթական կերպով, մօրը աշխատութեանը օգնելու բնազդական եռանդով: Գոգնոցը սակայն չէր լենար. Ղալաթիոյ սալայատակին վրայ՝ քաղաքակրթութիւնը ամլութեան դատապարտած է բնութիւնը: Խեղճ կինը անշուշտ հասկցած էր ասիկա, որովհետեւ հիմա չորցած քակորի կտորներ ալ կը նետէր գոգնոցին մէջ: Եւ անշուշտ եկաւ վայրկեան մը, ուր իր տխուր պարէնը ամբողջացած նկատեց, որովհետեւ փութկոտ քայլերով սպրտեցաւ կողմնակի փողոցի մը մէջ, սերտիւ բռնած միշտ աղջկանը ձեռքէն:

Ո՞ւր կ'երթար, Ղալաթիոյ մը գաղբելի դռիհին

խորը, որ մութ ու ժահահոտ խանին անկիւնը: Չտեսայ: Միայն թէ կ'աճապարէր, — որպէսզի գիշերը, երբ իր ամուսինը խան դառնար՝ ցերեկուան տաժանելի յոգնածութեանը տակ ընկճած ու ոսկորները կոտորտած, կինը կարենար տաք կերակուր մը տալ անոր, Ղալաթիոյ սալայատակին վրայէն ժողված փայտի կըտորներովը:

Լ. ԲԱՇԱԼԵԱՆ

*
* *

Ե՛յ, կանանչ ախպէր, դուն բարճ՛վ եկար,
Դուն բարճ՛վ եկար, իմ կանանչ ախպէր *)։

Մով-մանուշակով ծաղկուն սարերէն
Արտուտն ու արօս ինձի ձէն տուին.
Ու գարնան անուշ արև ոսկեղէն
Ինձի ձէն տուին՝ սար ու ձոր ելնեմ։
— Երանի՛կ ձեզի, սարե՛ր ու ձորե՛ր,
Նշխուն հագեր էք գարնան զուքսերով.
Ա՛խ, սիրտս մեռաւ ծով-դարդերի մէջ,
Գարնան զուքսերին մնաց կարօտով։
Ա՛խ, սարե՛ր, ձորե՛ր, դո՛ւք առաջուանն էք,
Բլբուլ ու բաղե՛ր, դո՛ւք առաջուանն էք.
Ե՛խ, մենակ ես եմ փոխուեր ու չորցեր,
Բլբուլ ու վարդե՛ր, դուք առաջուանն էք։
Ա՛խ, ես եմ փոխուեր ու աշխարհի մէջ
Ղարիբ ու հիւանդ ճամբորդ եմ դառեր.
Ճամբես մոլորեր, կ'երթամ փշի մէջ.
Սարե՛ր ու ձորե՛ր, դո՛ւք առաջուանն էք։
Կեանքիս աղբուրը մարդիկ քամեցին,
Իմ փայ-աշխարհը դարձրին մութ զնդան,
Ա՛խ, սիրտս ու հոգիս հալ ու մաշ արին.
Ու ծաղիկ-կեանքիս փորին գերեզման։
Կ'երթամ փշի մէջ, գերեզման կ'երթամ՝

*) Մեր ժողովուրդը գարնան գալը «բարով եկա՛ր, կանանչ ախպէ՛ր»
ասելով է ողջունում. իսկ ձմրան գալը՝ «բարով եկար, ճերմակ ախպէր»։

Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ.
 Ա՛խ, տանեմ սիրտս, տանեմ գերեզման. —
 Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ
 Ազիզ մեռելս տանեմ՝ հողին տամ...

Է՛յ, կանանչ ախպէր, կուգաս գալ տարի,
 Ու գերեզմանս մամռով կը զուքես,
 Իմ կանանչ ախպէր, գալդ միշտ բարի,
 Խեղճ գերեզմանս մտքէդ չը քցես...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Զ Հ Ո Ւ Դ - Ք Ո Ւ Շ Ա Ն ^{*}

(Հրէաստանութիւն)

Վ. Է. Պ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

IV

Նազիրը ¹⁾ բարձրացրեց դռան վարագոյրը և տիեզերքի բևեռը ²⁾ մտաւ թալարը ³⁾, ուր պատրաստուած էր նախաճաշը: Քիրմանի գորգերով ծածկուած գետնի վրայ պատրաստուած էր դաստրխանը ⁴⁾. թալարի մէջտեղ մի ծայրից մինչև միւս ծայրը, գցուած էր մի երկար ընտիր զաւարթարի սփռոց. նրա վրայ՝ ոսկեթել տսեղնագործած կաշեայ սփռոց, որ ամբողջովին ծածկուած էր արծաթեայ կլորակ մէջմահիներով ⁵⁾. ամեն մի մէջմահու մէջ դարսուած էին մի քանի տեսակ կերակուրներ, իրանց մազաներով ⁶⁾, համեմներով, խուրշներով, թթուեղէնով, քաղցրեղէնով, պտղեղէնով, կանաչեղէնով, մածնեղէնով: Բոլոր կերակուրները լցուած էին կլոր չինական կամ հին պարսկական յախճապակեայ ափսէների մէջ, ծածկուած սրածայր սաղաւարտանման սարփուշներով ⁷⁾ և ապա կծրուած ⁸⁾ նազիրի կնի-

^{*}) Տե՛ս „Մուրճ“ № 1, 1902 թ.:

¹⁾ Տնտեսագետ. նազիր և վէդիր—արեւելեան պէտուժիւնների մէջ գլխաւոր սլաշտոնեաները: ²⁾ Շահի մի ալ տիտղոսը: ³⁾ Դահլիճ: ⁴⁾ Սեղան, ճաշ: ⁵⁾ Մատուցարան, սինի. ⁶⁾ Ախորժակ գրգռող ուտելիք: ⁷⁾ Ծածկոց: ⁸⁾ Պարակատանում հնուց սովորութիւն է որ բոլոր կերակուրները Շահի սեղանի համար կնքում են խոհանոցում նազիրի կնիքով. այդ կնիքը բացում է Շահի աչքի առաջ և առաջ ինքը նազիրն է ճաշակում կերակուրից, ապա Շահը:

բով։ Երբ նազիրը կնիքները քանդեց, և փիշիւրդմէթները վեր առան սարփուշները, բազմատեսակ փլաւներից, չիլաւներից, խուրուշներից ¹⁾, աբգուշաներից ²⁾, քեաբաբներից ³⁾ բարձրացած բուրմունքները և չոգիները հաճոյ կերպով դրդուցին Շահի և Թաւարում, երկար փէնջէրէի ⁴⁾ առաջ շարուած շահադէների քիմքը, այդտեղ էր և պատանի դահաժառանգ Նասրէդդին-Միրզան, Շահի եղբայր Բէհմէն-Միրզան — Ատրպատականի փոխարքան, միւս եղբայր Ղահարման-Միրզան, այդտեղ էր և Մէլիք-Գասըմ-Միրզան, Փաթալի-Շահի եօթանասուն որդիներից մինը, Մահմէդ Շահի հօրեղբայրը։

Շահադէները խոր գլուխ տուին Շահին, որ նրկատելով իր կրտսեր եղբայր Բէհմէն-Միրզային, կիտեց յօնքերը և դլխի թեթև շարժումով պատասխանելով շահադէների երկրպագութեան, չոքեց սեղանի գլխին, մէջքը թիկն տալով մութաքաներին։ Մեծ վիզիր Հաջի Միրզա Աղասին կանգնեց շահադէների հանդէպ. նրանից մի քիչ ներքև կանգնեց հէքիմ-բաշի ⁵⁾ Լօղման-ուլ-Մէմալիքը ⁶⁾, իսկ Շահի մօտ չոքեց նազիրը, որպէս զի առաջ ինքը ճաշակէ այն կերակուրը, որ հէքիմ-բաշին թոյլ կը տայ ուտել և ապա մատուցանի Շահին, որպէս զի Շահը ապահով լինի, որ կերակուրները թունաւորուած չեն։

Հարիւրաւոր տեսակ կերակուրներից բացի մէջ առ մէջ շարուած էին սփռոցի վրայ բազմատեսակ պտուղներ, հաղուադիւտ տարուայ եղանակի համար, անուշեղէն և թանկագին սրուակների ու շաքստանների ⁷⁾ մէջ գոյնզգոյն օշարակներ, շէրբէթներ, աբգուղ ⁸⁾։ Այդ սեղանը, անշուշտ, կարող էր կերակրել հարիւր հիւրեր

1) Համադամ։ 2) Արգանակ։ 3) Խորոված։ 4) Լուսամուտ. սենեակի ամբողջ մի պատը՝ ծառայում է իբրև լուսամուտ, չարմաքցրուած լինելով այդ պահանջին. պատը շարժական է լինում, փայտից շինած։ 5) Պալատական բժշկապետ։ 6) Ցէրուքեան Լօղմանը. վերջին բառով պարսիկները անուանում են Հիպոկրատին։ 7) Խոր ամսէներ։ 8) Թան։

իր առատ և ճոխ համադամ ուտելիքներով: Դանակ և պատառաքաղ ու անձեռնոց չը կար, միայն սփռոցի չորս կողմը շարուած էին սպիտակ, թղթի բարակու-թեամբ լաւաշ հացեր:

Խաս-փիշխըդ-մէթը ¹⁾ ներկայացրեց Շահին սակե աթափա-լեազեան ²⁾: Շահը լուաց ձեռները և նայե-լով իր հօրեղբօրը՝ ասաց. «Մէլիք-Գասըմ-Միրզա, նըս-տիր, հաց կեր». ապա դառնալով մեծ վիզիրին՝ «Սատրապամ, դու ևս նստիր, ծեր մարդ ես»: Դրանով Շահը կամենում էր հասկացնել, որ եթէ, հակառակ պալատական էտիկէտի, նա արժանացնում է մեծ վե-զիրին Շահի հետ սեղան նստելու մեծ պատուին, այդ՝ լոկ ի յարդանս նրա ծերութեան. իսկ դաճաթա-ռանդը իբրև որդի և եղբայրները, իբրև կրտսերներ, ընդունուած աւանդութեան համաձայն պէտք է կանդ-նած մնան և չը մասնակցեն սեղանին: Եթէ-Մէլիք-Գա-սըմ-Միրզան արժանանում էր սեղանակից լինելու մեծ պատուին, դրա պատճառն այն էր, որ նա, իբրև Շա-հի հօրեղբայր, հօր պատիւ ունէր, իսկ հօր պատիւը պարտադիր է շարիաթի պատուիրանով, որի պահպա-նութիւնը Մահմէդ Շահը իր համարնուիրական պարտք էր համարում, ինչպէս մանկութիւնից սովորեցրել էր իրան իր ուսուցիչ Հաջի Միրզա Աղասին: Սակայն թէ ծերունի մեծ վիզիրը, թէ հօրեղբայրը, խոնարհ դուրս ստալով ասացին՝ «դուբեան, դուք մէյլ արէք ³⁾» նհարը, մենք յետոյ վալիահօդի ⁴⁾ հետ սեղան կը նստենք»: Այս մերժումով նրանք կամենում էին թէ չը վիրաւորել պա-տանի դաճաթառանդին և թէ պահպանել աւանդու-թիւնը, որի համաձայն ոչ ոք չէ կարող նստել այնտեղ, ուր վալիահօդը կանգնած է:

Շահը այլ ևս չը պնդեց, կռացաւ մէջքից և նա-զիրին մատով ցոյց տուեց փասեանով և կարաւով փի-

¹⁾ Շահին ծառայող պաժերը կամ մանկավիճիկները կոչում են այդ-պէս: ²⁾ Առնք ու ջրաման: ³⁾ Անուշ: ⁴⁾ Գաճաթառանդ:

լաւը, նազիրը անմիջապէս մի թիքա լաւաչ հացով ճաշակեց փիլաւը և ապա ամբողջ ափսէն դրեց Շահի առաջ, որ հինգ մատերը մխելով մէջը, սկսեց ուտել:

— Դուրբան, նկատեց հէքիմ-բաշին, լաւ կը լինի չլով-բեաբաբ ուտէք, փիլաւն մի քիչ ծանր է և դժուարամարս:

Նազիրը ճաշակեց չլով-բեաբաբը և ափսէն դրեց Շահի առաջ:

«Դէ որ այդպէս է, այս փասեանով փիլաւը, հաջի, քեզ համար եմ թողնում»:

Եւ իւղաթաթախ մատները թափ տալով ափսէի վրայ, Շահը հրեց ափսէն դէպի մեծ վիզիրի կանգնած կողմը: Վերջինս խոր դլուխ տուեց այդ մեծ իլթիֆաթի¹⁾ համար և ասաց.

«Ալլահի օգնութեամբ, ձեր մէզաջը շէրիֆը (նուիրական ստամոքսը) շատ լաւ է երևում և կարծեմ հէքիմ-բաշին այսօր մասլահաթ²⁾ կը տեսնի, որ մի քիչ զափրանով փիլաւ մէյլ անէք»:

— Զափրանը շատ էլ չեմ սիրում, բայց այս բաւորջանի խուրուչը վատ չէ:

— Բատրջանը, դուրբան, հարարաթ³⁾ ունի, բայց մի բանի թիքա ուտելն փնաս չէ, միայն վրան նռան շերբէթ մէյլ արէք:

Շահի տրամագրութիւնը ակներև կերպով դէպի լաւն էր գնում: մատները հանելով իւղալի բաարջանի խուրուչի միջից և սրբելով լաւաչով, մի մեծ գդալ օշարակ տանելով դէպի բերանը, նա ծիծաղելով ասաց շահադէսներին.

— Լսեցի՞ք մունէջիմ-բաշու գլխին ինչ օյին եկաւ:

— Բէլի, բէլի⁴⁾, դուրբան, — պատասխանեցին միաբերան շահադէսները, — նա լաւ պատժուել է՝ մուռտառ ջհուդների ընկեր դառնալով:

1) Շնորհ 2) Խորհուրդ 3) Գրգռող է, հիանդութիւն յուզող 4) Այո, ալո

— Ի՞նչ պատիժ պէտք է տանք մունէջիմ-բաշուն, շահագութներ, հարցրեց Շահը իշխաններին:

— Հրաման ձեր շահնշահական հրամանն է ¹⁾, ասացին շահագութները, բայց մեր նուաստների կարծիքով, մունէջիմ-բաշին արժանի է ֆալախկայի, որ լաւ չէ կարողացել իմանալ, թէ ինչ են գուշակում ասողերը:

— Իսկ դու, Հաջի-Միրզա-Աղասի, ինչ ես ասում, դիմեց սագրաղամին Շահը, որ զուրկ լինելով առհասարակ անհատական ինքնուրոյնութիւնից և հաստատ կամքից, ոչ մի դորժ չէր կատարում և վճռում առանց իր ուսուցչի և մեծ վիզիրի կարծիքն ու կամքն իմանալու:

Ութսունամեայ ծերունի սագրաղամը, լաւ զգալով որ իր կամքն է լինելու մունէջիմ-բաշու բախտը վճռողը և կամենալով ցոյց տալ գոռոզ շահագութներին իր անսահման իշխանութիւնն ու վերաւորել նրանց ինքնասիրութիւնը, պատասխանեց.

— Ղուրբան, ի հարկէ, հրաման ձեր արքայական հրամանն է, բայց ես կարծում եմ, որ մունէջիմ-բաշին արժանի է խալաթի ²⁾:

— Ի՞նչպէս, խալաթի, բացականչեց Շահը:

— Այո, զուրբան, խալաթի. արդ անեմ. յիշում էք, որ ես շարունակ արգ էի անում, թէ Շահնէմէթուլլահի աստղագէտի արած գուշակութիւնը սխալ է և զուր է աշխարհի աղօթարանդ անհանգիստ լինում:

Մահմէդ Շահի հիւանդօտ գէմքը մթագնուեց և երկիւղի արտայայտութիւն երևաց նրա աչքերում: Սագրաղամը մատը դրել էր նրան կրծող վէրքի վրայ: Երկու հարիւր տարի առաջ մի մունէջիմ (աստղագուշակ) գուշակել էր Շահնէմէթուլլահ գրքի մէջ Պարսկաստանի

¹⁾ Բոլոր նախարարները, պաշտօնեաները, նոյն իսկ դռնապանները առանց ազգ խօսքերի չեն կարող լսելու իրանց կարծիքը: ²⁾ Վերարկու, իսկ փոխարեւական մոքով՝ վարձատրութիւն. երբ Շահը կամենում է մէկին վարձատրել, նա ուղարկում է նրան իր խալաթիներից մէկը:

ութ թագաւորների անունները և թագաւորութեան տեղութիւնը. արդ, Մահմէդ Շահը վերջին ութերորդ թագաւորն էր և աստղագուշակի գրածին նայելով նա պէտք է թագաւորէր միայն տասն երեք տարի, մինչև իրան գուշակութիւնը կատարուել էր. այդ պատճառով Շահը շարունակ երկիւղի մէջ էր, որ իր վերաբերմամբ ևս նա պէտք է կատարուի։ Արդէն նա իր թագաւորութեան տասնեւերեք տարումն էր, ուստի և համրում էր օրերը և ժամերը. նա շարունակ մտաւորանջութեան մէջ էր լինում և շատ անգամ կամենում էր ազատուել այդ մտաւորանջութիւնից զուարճութիւնների և քէյֆի մէջ։ Նա շատ զարմացաւ և բարկացաւ, որ սադրազամը համարձակում է արթնացնել նրա մէջ ցաւալի յիշողութիւնը, ուստի ցատմամբ լի ձայնով, ասաց.

— Ինչի համար ես յիշում այդ գուշակութիւնը.

— Ոտքիդ տակ կոխուելու հող լինեմ, պատասխանեց սադրազամը, նրա համար եմ յիշում, որ ցոյց տամ, թէ այդ գուշակութիւնը սխալ է, և աշխարհի աղօթարանդ դեռ երկար և ձիգ տարիներ պէտք է լուսաւորէ աշխարհս իր ճառագայթներով։

— Բայց ի՞նչպէս, ի՞նչպէս։

— Ձէ որ մեր մունէջիմ-բաշին, որ Իրանի հռչակաւոր գիտուններից մինն է, այսօրուայ համար գուշակութիւն արեց և, սակայն, գուշակութիւնը սխալ դուրս եկաւ. ինչո՞ւ Շահնէմէթուլլահի մունէջիմի գուշակութիւնը ճիշտ պէտք է լինի. ինչո՞ւ մեր մունէջիմ-բաշին պակաս է նրանից. բանի որ սրա գուշակութիւնը ուղիղ դուրս չեկաւ, նրանը հօ ուղիղ չէ, ուղիղ։

Շահի գէմքը պայծառացաւ, ուրախութեան կայծ փայլատակեց նրա աչքերում։

— Մաշալլա, մաշալլա, հաջի, ուղորդ որ այդպէս է. ոչ միայն մունէջիմ-բաշին արժանի է խալաթի, այլ և դու։

Բայց յանկարծ մի նոր կասկած մռայլ արտայայտութիւն ատեց Շահի գէմքին։

— Բայց զըսմէթը, ճակատագիրը. ինչպէս, դու, մօլլա և մոսուլման, չես հաւատում ճակատագրին:

— Աստաֆրուլլա, աստաֆրուլլա ¹⁾, բեաֆիրը միայն կարող է չը հաւատալ. ճակատին գրածը ոչ ոք չէ կարող ջնջել: Իմ ասածս այն է, զուրբան, որ ոչ թէ աստղերն են սխալ գուշակում, այլ մունէջիմ-բաշիներն են սխալում իրանց հաշիւների մէջ և սխալ գուշակութիւններ անում:

— Փիլիսոփայ է, փիլիսոփայ, Հաջի Միրզա Աղասին, դարձաւ Շահը շահղադէներին, բոլորովին ուրախացած և միամտուած. չէ, նա արժանի է լաւ խալաթի:

Եւ դառնալով փիլիսոփայութեան, ասաց. «կանչել իսկոյն սանդուխտար-բաշուն ²⁾ և խօշա-բաշուն» ³⁾:

Եւ Շահը ձեռքը մեկնեց դէպի Սպահանի սեխը և սկսեց ուտել, «աջար ⁴⁾ բաղցը է» ասելով:

Վարագոյրը բարձրացաւ և հանդերձապետն ու ներքինապետը երեւացին դռան շէմքում, խոր գլուխ տալով:

«Մօհսուն-Միրզա, ասաց Շահը սանդուխտարին, որ շահղադէ էր, մի լաւ խալաթ ուղարկիր մունէջիմ-բաշուն, թող բէստից դուրս գայ և ապահով լինի. այս մէջմահիներից մէկն էլ ուղարկէք նրան. խեղճը ջհուդներին հետ մնալով սովացած կը լինի: Իսկ դու, խօշա-բաշի, այսօր երեկոյեան սադրաղամի հարէմը ուղարկիր այն աղլկան, որ Քիւրդիստանի հաքիմը ⁵⁾ ուղարկել էր անցեալ օրը, թող սադրաղամը քէյֆ անի:

— Ղուրբան, իմ ինչ գործն է ջահէլ աղջիկը, իմ մի ոտս գերեզմանումն է արդէն, քմծիծաղ տալով ասաց սադրաղամը,

— Ձեռս իմանում որ ջահէլ աղջիկը ծերոց գաւաղան է. այս գիշեր իսկ սիղան կարգաւ տուր ⁶⁾. Նա քեզ կը ջահէլացնի, ծիծաղեց Շահը և թիկն տալով մութաբէ-

1) Մեղալ տէր, քաւ լիցի: 2) Գանձապահ—հանդերձապետ: 3) Ներք-նապետ: 4) Զարմանալի: 5) Նահանգապետ: 6) Ամուսնութեան գիրը, որ կարգում է և զրում մօլլան:

ին, ասաց. այժմ ես գնամ առանձնասենեակս, դու, վալիահդը և շահղադէները նհար արէք. ես էլ մի քիչ կը բնեմ և նամազից յետոյ կը գաս արղերդ կ'անես:

Փիշխըդմէթը ներկայացրեց ոսկէ կոնքը և ջրամանը. Շահը լուաց ձեռները, ողողեց բերանը. մի այլ փիշխըդմէթ ներկայացրեց միսվակը,¹⁾ բայց Շահը ձեռքով հրեց, «յետոյ, յետոյ» ասելով:

—Ոչ, դուրբան, մէջ մտաւ սադրազամը. վեր առէք այժմ միսվակը. հաղըթը փեղամբարը²⁾ —[Թող յաւիտեան փառաւորուի նրա անունը—հրամայել է, որ նամազից առաջ միսվակի դործածութիւնը 75 հասարակ նամազի տեղն է բռնուի: Ամեն անգամ, երբ աշխարհի աղօթարանդ միսվակն դործ ածի, անիծեալ շէյթանը սաստիկ բարկութեան մէջ կը մտնի և Ալլահը կը հրճուի³⁾:

Շահը վեր կացաւ, քչփօրիկը ատամների մէջ խաղացնելով. շահղադէները խոր գլուխ տուին. նա ուղղուեց դէպի յարակից սենեակը և դառնալով Բեհմէն-Միրզային. «Եղբայրս, ասաց, քո արղերդ կարգացի, Հաջին բեդ դէմ գանդատներ ունի. խորհուրդ եմ տալիս քեզ՝ լսել նրա ասածները և վարուել այնպէս, ինչպէս նա մասլահաթ կը տեսնի. նա լաթա է, տէրութեան և մեր զաջարների դահին հաւատարիմ ծառայ. վալիահդն էլ [Թող շարժի նրա հրահանգների համաձայն»:

Եւ վարագոյրը, որ փիշխըդմէթներից մինը բարձրացրել էր, ընկաւ նրա ետեից ու Շահը մտաւ առանձնարանը, ուր սովորաբար խմում էր սուրճը և ծխում զէյլանը:

Անմիջապէս վալիահդ՝ Նասրէդդին-Միրզան չօրեց դաստրխանի առաջ, Շահի նստած տեղից մի քիչ ներ-

¹⁾ Քչփօրիկ, ատամփօրիկ. ²⁾ Սուրբ մարգարէն. ³⁾ Ատամփօրիկի մասին մի ամբողջ գրականութիւն կալ իսլամի աստուածաբանութեան մէջ: Ամեն հաւատացեալի պարտքն է միսվակի դործածութիւնը, իրրե Ալլահին հաճելի գործ, որովհետեւ նա բարկացնում է շէյթանին, սատանային:

քեւ և «բիւմըլլահ» ասելով, հրաւիրեց շահադէներին նոյնպէս չոքել: Որովհետեւ պալատական էտիկէտը թոյլ չէր տալիս, որ վալիահդի հետ սեղան նստեն ոչ-շահ-զադէները, ուստի ծերունի սադրազամը, որին և ոչ որ չի հրաւիրեց մասնակցել ճաշին, դուռն տալով վալիահդին, ասաց. «Ես էլ, զուրբան, գնամ աշըս»¹⁾ ու տեմ, յետոյ կը հասնեմ ձեր սպասին»:

Անմիջապէս նազիրը ակնարկ արեց և սեղանի մէջ-մահիներից մինը դուրս տարեցին սադրազամի համար:

—Հողը մեր շահադէների գլխին, ասաց Բէհման-Միրզան, փիլաւի սկաւառակը առաջը քաշելով, հողը Իրանի գլխին, որի կառավարիչն այսպիսի ցնդած ծերուկը պէտք է լինի:

—Սուս, սուս, աչքով արեց Ղահրաման-Միրզան. այս պատերը ականջներ ունեն, առանց այն էլ հաջին դրդուում է քեզ դէմ: Հօրեղբայր:

Եւ շահադէները լուռ ու մունջ ճաշեցին. նրանցից յետոյ սեղանի նստեցին փիշիւրդմէթները հէքիմ-բաշու, նազիրի հետ: Մնացած և ձեռք չը տուած մէջ-մահիները հետզհետէ անցան զանազան սենեակներ, իսկ փշրանքները և թափթփուքը ստացան դռնապանները, պարտիդպանները և ձիապանները:

Թողնենք Շահին ծխել իր զէյլանը՝ ոսկեհուռ և գոհարակապ, Շիրազի անուշահոտ ծխախոտից, խմել իր սուրճը փոքրիկ ֆինջանով Արաբիայի ընտիր բերքից, խաղալ սատրանջ իր խաս փիշիւրդմէթների հետ և լսել իր ծաղրածուի կատակները.—նախաճաշից յետոյ մինչև չորրորդ նամազի ժամանակը այդ է սովորաբար Շահերի զուարճական պարապմունքը—և հետևենք Իրանի սադրազամին, որի ձեռքում են լինում իսկապէս կենտրոնացած պետութեան բոլոր գործերը:

Պարսից սադրազամի և միւս վէզիրների պաշտօնատները պարփակուած են Շահի պալատի շրջանակում,

1) Թանապուր:

մարմարեայ Գահի շինութեան մասին կից: Յերեկները, վաղ առաւօտից սկսած մինչև երեկոյեան էզանը ¹⁾ թէ սադրազամը և թէ միւս վէզիրները զբաղւում են գործերով այդ պաշտօնատներում: աւելի խորհրդաւոր և դաղտնի գործերը տեսնւում են երեկոյեանները, պաշտօնեաների տներում: Սադրազամը դրեթէ ամեն ժամ ստիպուած է լինում գնալ Շահի ոտքը. կամ Աստծու վէքիւն ²⁾ է կանչում նրան, կամ ինքն պէտք է տեսնում արժանանալ արեգակնափայլ երեսի տեսութեան՝ հրամաններ և հրահանգներ ստանալու համար. իսկ միւս վէզիրները նոյնպիսի պայմանների մէջ են գտնւում սադրազամի վերաբերմամբ. այդ է պատճառը, որ պետական բոլոր կենտրոնական պաշտօնատները կամ նախարարութիւնները կենտրոնացած են Շահի պալատի շրջանակում: Մեր ժամանակում այդ պաշտօնատների գործավարութեան ձևը դեռ փոքր ի շատէ եւրոպական ձև է ստացել և կատարւում է գլխաւորապէս, բայց յիսուն-վաթսուն տարի առաջ, գործավարութիւնը նախամեծարապէս բանաւոր էր, գրագրութիւն շատ քիչ կար, ամեն բան կատարւում էր բերանացի, մի հրամանով, ձեռքի, գլխի մի շարժումով, դէմ առ դէմ խօսակցութեամբ և բանակցութեամբ: Ամեն մի պաշտօնեայ, լինի նա սադրազամ, վէզիր, փոխանորդ, վէքիւն՝ իր դիւանատունը իր վրայ է կրում երկար թումարի ³⁾ ձևով, որ խրուած է լինում դօտու մէջ, իսկ գրպանումն զալամբանը՝ իր եղեգնեայ գրիչներով, մկրատներով և զմելինով, փոքրիկ արծաթեայ գդալով և թանաքամանով: Հաշուապահութիւնը՝ պետական ելեմուտքի, նահանգների, գտնւում է մուստօֆիների ձեռքում և ամեն մի նահանգ կամ կուսակալութիւն ունի իր մուստօֆին: Մուստօֆիները պաշտօնեաների մի առանձին դասակարգ կամ կաստա

¹⁾ Մօլլայի աղօթքի հրաւիրելը մինարէթից: ²⁾ Փոխարքայ, Շահի մի ալ ախտղոսը: ³⁾ Հաշուեցուցակ:

են կազմում Պարսկաստանում և երկրի ֆինանսական վիճակի բաժինը ամբողջովին նրանց ձեռքումն է կենտրոնացած, ինչպէս և ռոճիկների, թռչակների, թիւղների վարչութիւնը և այդ պատճառով այդ կաստան ահագին և ազդեցիկ դեր է խաղում և տնօրինում է երկրի բախտը: Ամեն մի պաշտօնատուն բաղկացած է մի մեծ և երկար թաւարից, ուր գետնին փռուած գորգերի վրայ ծալապատիկ նստած կամ չորած են մուստօֆիները, միրզաները և թուղթը ծնկին յենած՝ դրում են, և մի կամ երկու փոքր սենեակից, ուր նստած են լինում վէղիրները, պաշտօնատան պետերը: Նստում են ամենքը բարձի կամ սոփերի համաձայն. ով պաշտօնով, աստիճանով աւելի բարձր է, նաև աւելի բարձր է, կամ նրա բարձր, սնարը աւելի բարձր պէտք է դրուի. վէղիրը նստում է սենեակի գլխին, առանձին սոփերի վրայ և անջրպետը նրա և միւս պաշտօնեաների մէջ բաւական լայն է լինում: Նրա առաջ չորում են իր մտերիմ խորհրդականները, բարտուղաները, որոնց նա անդադար հրամայում է այս և այն գրել: Բացի դրանից ամեն մի վէղիր ունի իր փիեֆաւրը ¹⁾, որ միջնորդ է վէղիրի և նրան զիմուղ ազերսարկունների կամ խնդրատուների մէջ և որից է կախուած լինում գործին այս կամ այն ուղղութիւն տալը:

Բոլոր պաշտօնեաները այստեղ և անում են իրանց նհարը, ծխում են ղէյլանը, խմում են սուրճը և կատարում ցերեկուայ նամաղները. նհարը առանձին առանձին մէջմահիւնների մէջ, բաղկացած զանազան տեսակ կերակուրներից, նայելով պաշտօնեաների դիրքին և աստիճանին, բերում են կամ Շահի կամ սագարաթի ²⁾ խոհանոցներից, իսկ օշարակները՝ Շահի շէրբաթխանայից ³⁾:

1) Գործավար. 2) Մեծ վէղիրի պաշտօնատունը. 3) Օշարակատուն, մատանատուն:

Կէսօր է. մուէղինի զիւ ձայնը վաղուց հնչել էր Շահի մզկիթի մինարէթից. սաղարաթում շատերը արդէն կատարել էին նախաճաշեան նամազը, մի քանիսը պահել էին այդ նամազը, կամենալով միացնել յետճաշեան նամազի հետ. նհարը մէջմահիներում թէև վաղուց դարսուած էր սաղարաթի թալարում, բայց ամենքը սպասում էին սաղարազամին, որ դայ իր նհարը անի, որպէս զի իրանը ևս կարողանան անուշ անել փիլալը և չիլալը:

Թալարը հեազհետէ լցւում էր բազմականներով. դալիս էին խնդրատուններ, սէյիդներ, մօլլաներ, խաներ, եթէ միայն կարողանում էին անցնել բակով, բարձրանալ սանդուխներով և հասնել մինչև սաղարաթի դուռը, այդտեղ կանգնած բազմաթիւ ֆէրրաշներէից և շաթիրներէից չարդելուելով. այդ արդելքը վերացւում էր, ի հարկէ, մի քանի զուանով, որ մտնողները կամաց սահեցնում էին ֆէրրաշների ձեռքը: Թալարի վերևում, այդ օր սաղինչին¹⁾ էր սաղարազամի փիշքար Միրզա Իբրահիմ խանը, յիսուն տարեկան, մազերը և մօրուքը խինայած մի մարդ, որի առաջ թափուած էին բազմաթիւ թղթեր, թուժարներ և որի առաջ շարունակ չորում էին բոլոր մտնողներն ու քրչփըչում քիթ քիթ տուած:

Նախասենեակում լսուեց իրարանցում. թալարի վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ երեսնայ դաւազանին յեհուած Հաջի-Միրզա-Աղասին: Ամենքը անմիջապէս օտքի ցատկեցին և խոնարհ գլուխ տալով, կանգնեցին. սաղարազամը, առանց նայելու ոչ ոքի, Ղուրանի այաները²⁾ մրմնջալով, իր ութսունամեայ հասակին անսովոր առոյգութեամբ, անցաւ թալարից և մտաւ իր առանձնասենեակը, ուր հրաւիրեց նրան անմիջապէս փիշքար Միրզա Իբրահիմ խանը: Անմիջապէս սաղարազամի ետեւից ներս մտաւ կեղտոտ չորերով մի աշփեղջակերտ³⁾, գլխին դրած արծաթեայ

1) Նախագահ, Նախարարձ: 2) Յօդուածներ, կտորներ: 3) Խոհարարի աշկերտ:

մէջմահին և յանձնեց փիշխըդմէթին. դա Շահի սեղանից վերցրած մէջմահին էր, սադրազամի նհարը: Այդ նշան էր, որ կարելի է նհար անել և պաշտօնեաները չոքեցին մէջմահիների առաջ ու տիրեց խոր լռութիւն ամբողջ թալարի մէջ:

Մտնելով իր աշխատութեան սենեակը, որի ամբողջ զարդը բաղկանում էր գորգերից, սադրազամը նստեց մինդարէի վրայ, հանեց գօտիից թումարը և գրպանից զլաւմդանը. վերցրեց երկար բուխարէ մորթու գլխարկը ու դրեց կողքին. ապա քակեց գօտին և հանելով գրպանից Բեաշանի աղլուխը, սրբեց ճակատից քրտինքը: Փիշխըդմէթը դրեց նրա առաջին մէջմահին. միքանի գդալ աշ խմելով և միքանի թիբայ լաւաշով փիլլաւ ուտելով, նա հրամայեց վերցնել մէջմահին ու տալ դէյլան և սուրճ. ապա դառնալով իր առաջ ձեռքերը ծալած կանգնած Միրզա Իբրահիմ խանին, ասաց.

—Գնա նհարդ արա և շուտ եկ, մինչև զէյլանս կը քաշեմ: Փիշքարը, գլուխ տալով դուրս եկաւ, պատուիրելով դէպի նախասենեակը տանող դռան առաջին կանգնած Հաջի-Սէլիմ չաթիրին՝ ոչ ոքի չը թողնել սադրազամի մօտ մինչև իր վերադարձը:

Այդ մէջքը կռացած, երկարաքիթ, ատամները թափած, աչքի ստորին կողը դուրս ցցուած, քեօսա, նիհար, բայց կայտառ ութսուննամեայ ծերունին ամբողջ Իրան-Թուրանի հրամանատարն էր այդ ժամանակ շնորհիւ այն անսահման վստահութեան, որ տաժում էր դէպի նա հիւանդոտ և տկարամիտ Շահը: Նա հասել էր սադրազամութեան մեծ պաշտօնին բոլորովին անակնկալ կերպով, ինչպէս յաճախ պատահում է արևելեան բռնապետական երկիրներում: Երիտասարդ ժամանակը, Միրզա Աղասի անունով, նա մօլլայի պաշտօն ունէր Մաքուի մէջ. կարօտութիւնը ստիպեց նրան գնալ Երևան, որտեղ նրան յաջողուեց դառնալ Էջմիածնի Հայոց Եփրեմ կաթողիկոսի միրզան, պարսկերէնի գրագրութեան համար և իր խոնարհ, հլու ծառայութեամբ, բայց գլխա-

ւորապէս սրամտութեամբ ու պարսկերէնի մէջ ունեցած հմտութեամբ կարողացաւ դրաւել հռչակաւոր Ներսէս խալիֆայի¹⁾ բարեկամութիւնը ու հովանաւորութիւնը: Ներսէսի անընդհատ դրագրութիւնը գահաժառանգ Նալբուլ-Սալթանէի հետ նա էր վարում, բացի դրանից նա ունէր բանաստեղծական ձիրք և պարսկական շէյրէր²⁾ էր թխում, բայց միևնոյն ժամանակ նա իսկական մուսլիմ էր և մուշուանդ չիւ: Մի անգամ նա Ներսէս խալիֆայի յաճնարարութեամբ գնաց Թաւրիզ Նալբուլ-Սալթանէի մօտ, սա, տեսնելով փոքրիկ բանաստեղծ միրզայի ընդունակութիւնները և Ներսէսի ծառայութեան մէջ ձեռք բերած հմտութիւնները, նշանակեց իր որդիներից մինի՝ Մահմէդ-Միրզայի դաստիարակիչ և ուսուցիչ:

Լինել շահպադէի, այն ևս գահաժառանգի որդու դաստիարակիչ, այդպիսի բախտաւորութիւն երբէք չէր անցել իսեղծ մօլլա Միրզա Աղասու մօքից, ուստի նա ուխտեց իր սանին տալ ամենաբարեպաշտ մուսուլմանական կրթութիւն: Ի բնէ հեզ, վախկոտ Մահմէդ-Միրզան սիրեց իր ուսուցչին եւ չը կամեցաւ ուրիշ ուսուցիչ ունենալ, բայց իր միւս եղբայրները, մանաւանդե կայտառ և առոյգ Բէհմէն-Միրզան տանել չէին կարողանում տգեղ, քեօսա մօլլին և շարունակ ծաղրում ու արհամարհում էին նրան: Մօլլան երբէք չը ներեց Բէհմէն-Միրզայի վիրաւորանքները և ուխտեց վրէժ հանել ու ինչպէս շուտով կը տեսնենք, հանեց իր վրէժը:

Մի օր, երբ պատանի Մահմէդ-Միրզան ուրախ և գոհ տրամադրութեան մէջ էր, նա հարցրեց ուսուցչից. «Ի՞նչ ես կարծում, լէլա³⁾, ես Շահ կը դառնամ երբեւիցէ»: — Իսկ ի՞նչ կը տաս ինձ, եթէ դառնաս, պատասխանեց Միրզա Աղասին: — Եթէ ես Շահ լինեմ Ալլահի ողորմութեամբ, քեզ մեծ վիղիւրս կը շինեմ, — ասաց պատանի

1) Ներսէս Աշտարակցու 2) Ռսանաւոր 3) Դաստիարակի

չահղադէնք:—Ուրեմն, դու անպատճառ Շահ կը գառնաս Ալլահի ոգորմութեամբ:

Դէպքերը արդարացրին Միրզա Աղասու գուշակութիւնը: Գահաժառանգ Աբբաս-Միրզան, նա, որ երկնում էր վերանորոգել Պարսկաստանը, որ արդէն նկատուում էր որպէս Շահ, իբրեւ Նայիր-սէ-Սալթանէ, և որի վրայ էր դրել իր բոլոր յոյսերը Ֆաթալի Շահը, մեռաւ հորից առաջ. շուտով, այն է 1834-ին, մեռաւ և ինքն Ֆաթալի Շահը, նշանակելով առաջուց գահաժառանգ Աբբաս-Միրզի Մահմէդ-Միրզա որդուն, որն նստելով Դարէհների գահի վրայ, կատարեց իր խոստումը և սադրապամ նշանակեց իր ուսուցիչ Հաջի Միրզա Աղասուն ու շուտով ամբողջովին նրան թողեց պետութեան կառավարութիւնը, տաժելով դէպի նրան կոյր և անսահման հաւատ ու վստահութիւն: Դառնալով սադրապամ, արդէն եօթանասունամեայ հասակում, ծերունի Հաջին չը փոխեց իր կեանքի եղանակը. նա մնաց նոյն դէրվիշը, ինչ որ էր առաջ, ժուժկալ, սակաւապէտ, բայց նրա փառասիրութիւնը, սնապարծութիւնը, մանաւանդ իբրեւ բանաստեղծ և ռազմագէտ փայլելու ցանկութիւնը սաստկացաւ նրա մէջ, նա չը մոռացաւ և իր թշնամիներին, ծաղրողներին. ոյժ տուեց առանց այն էլ ազդեցիկ հոգեւորականութեան հեղինակութեան, և հոգեւորականութիւնը նրա օրով ահագին կշիռ ստացաւ. սակայն հասարակ ժողովուրդը սիրում էր նրան իբրեւ դէրվիշի և լաւ մուսուլմանի: Նրա մոտին հարկւրաւոր անեկեօտներ էին պատում ամբօխի մէջ, որոնք մինչեւ այսօր էլ պատմւում են: Նա շատ սէր ունէր քեահրիզներ ¹⁾ փորել տալ, ճանապարհներ, կամուրջներ շինել, այգիներ տընկել տալ. մի օր երբ նա գնաց դաշտը՝ հսկելու թէ ինչպէս է առաջ գնում քեահրիզի գործը, նա կանգնեց հորի գլխին. քեանքաններից ²⁾ մինը, որ բանում էր հորի մէջ և չէր տեսնում սադրապամին, ասաց ընկերին.

1) Ջրհորներ 2) Հոր պեղող:

«Մէկը հարցնող լինի այդ տխմար ծերուկ Հաջի Աղա-
սիից, թէ այսպիսի աւաղոտ տեղում ջուր կարո՞ղ է
դուրս գալ»։ Լսելով այդ խօսքերը, հորի գլխին կանդ-
նած սադրազամը ասաց. «Այ փէդէր-սուխտա, եթէ յի-
մար Հաջի-Միրզա-Աղասու համար ջուր չի դուրս գայ,
քեզ համար հօ փող դուրս կը գայ»։ Եւ այդ խօսքերն
եղան յանդուգն բեանքանի պատիժը։

Ահա ինչ տեսակ անձի ձեռքումն էր գտնուում մեր
պատմութեան ժամանակ ամբողջ Պարսկաստանի կա-
ռավարութեան ղեկը։

V

Երբ կէս ժամից յետոյ Միրզա Իբրահիմ խանը,
որի տիտղոսն էր Մուշիր-ուլ-Միւլք ¹⁾, կտմացուկ մտաւ
սադրազամի առանձնասենեակը, նա գտաւ նրան նիր-
հած, դդումի ղէյլանը ձեռքին։

— Հա, դու ես, Մուշիր-ուլ-Միւլք. նստիր, տես-
նենք ինչ կայ։

Փիչքարը նստեց սադրազամի առաջ, հանեց դո-
տիից թումարը և սկսեց ղեկուղանել։

«Սպահանից չափարը ²⁾ եկել է. էմին-Ռօվլէն արդէ
անում, որ մուշթէիդը և մօլլաները, իրանց շուրջը հա-
ւաքելով մի խումբ լօթիներ ³⁾, միանգամայն բամա-
հրում են իր և Շահի իշխանութիւնը, հարկեր են դրել
վաճառականների վրայ, կարաւանների վրայ. նա խընդ-
րում է թոյլատրել իրան զինուորական ոյժ բանեցնել,
ձերբակալել մուշթէիդին և ուղարկել Թէհրան, իսկ լօ-
թիներին գլխատել կամ գլխիվայր թաղել՝ խռովարնե-
րի ահաբեկման համար, ապա նա յայտնում է, որ մուշ-
թէիդի և լօթիների ապստամբութեան պատճառով, այս
տարի բաղի ⁴⁾ կ'ունենայ մօտ 100,000 թուման»։

¹⁾ Խորհրդական տէրութեան ²⁾ Սուրհանդակ ³⁾ Սրիկաներ ⁴⁾ Չնաս, ղեֆիցիտ. կուսակալները երբ չեն կարողանում կամ չեն կամենում ի-
րանց խոստացած վարձագրամը վճարել, ասում են րադի են ք-
բերել։

— Լաւ, փորացաւը հասկացանք, ասաց սադրազամբ, բաղի մի գինար անգամ չեմ ընդունի, այդպէս էլ գրի իրան և պատուիրիր որ զստերը ¹⁾ անյապաղ ուղարկի, եթէ չէ կամենում ենթարկուի Շահի բարկութեան. յիշիր և այն, որ Սպահանի կուսակալութեան ցանկացողներ չառ կան և իրանից չառ վճարել խոստացողներ:

«Մուխբիր-Դովլէն հէնց այս առաւօտեան եկել էր, յայտնեց փիշքարը, և արդ էր անում, որ եթէ չնորհանէր Սպահանի կուսակալութիւնը յանձնէր իրան, Շահի գլխին թասատուղ ²⁾ կ'անի 300,000 թուման, իսկ ձեր գլխին 50,000 թուման:

— Թող սպասի, Աստծով եկող Նովրուզին կը տանք իրան. հիմա, քանի որ Սպահանում չլուղ ³⁾ է, Շահը չի համաձայնի Էմին-Դովլից առնել կուսակալութիւնը:

— Իսկ մուշթէիդի ձերբակալութեան և լօթիների գլխատման համար ի՞նչ կը հրամայէր գրեմ Էմին-Դովլին:

— Դժուել ես, ինչ է, մարդ դու, զայրացած ասաց սադրազամբ. Սպահանի մուշթէիդին, Շէյխ-ուլ-Իսլամին ձերբակալել կարելի է: Ուզում էք ամբողջ երկիրը սուքի կանգնի. թող Էմին-Դովլէն մտքիցն անգամ չանցկացնի այդպիսի բան, իսկ լօթիներին թող ծածուկ ձերբակալել տայ և ուղարկէ այստեղ Թէհրան, բայց առանց որ մուշթէիդն իմանայ. այստեղ պատիժն կը տանք: Եագդաշտ արա ⁴⁾, որ Շահին արդ անեմ:

«Խորասանից վաճառականները և զիւղացիները չափարով մի մեծ արգունհար են ուղարկել, սաստիկ դանդաւառում են, որ կուսակալ Սաադ-ուլ-Դովլէն կեղեքում է ժողովուրդը, ծանր տուգանքներ է առնում», — շարունակեց զեկուցումը փիշքարը:

— Իսկ Սաադ-ուլ-Դովլէն ի՞նչ է գրում:

— Նա ուղարկել է 10,000 բաճաղլու ⁵⁾ ձեր սպա-

1) Վճար պալմանաժամի 2) Մատաղ 3) Խռովութիւն 4) Արձանագրիր չուշատետրի մէջ 5) Ոսկի:

սին ներկայացնելու, իսկ Շահի համար երկու գեղեցիկ քեանիզ ¹⁾։

—Շատ լավ, վաճառականները և գիւղացիները թող ինչքան ուզում են դանգաւեն. բայեաթին ²⁾ շատ էլ երես չը պէտք է տալ. ասուած է՝ բայեաթ քաբէր գիւմ էսք ³⁾։ յիշատակիր, Շահին արդ անեմ, մի լաւ խալաթ ուղարկենք Սաադ-ուլ-Դօվին։

Փիշքարը արձանագրեց յուշատետրի մէջ և ապա շարունակեց.

«Խամայի հեաքիմ Մադսուտ-Միրզան ⁴⁾ խոստանում է 100,000 բաշաղլու Շահին, 30,000 ձեղ, եթէ Համադանի կոռավարութիւնը իրան տաք. իսկ Նասրուլլահ-խանը ձեր գլխին 50,000 բաշաղլու է թասատուղ անում, եթէ իրան տաք»։

—Այդ շահզադէներից օգուտ չը կայ. Մադսուտ-Միրզան ֆրանկիւմաւք է ⁵⁾, որ մուսուլմանին չի վայելիլ. յիշատակիր, Շահին արդ անեմ Նասրուլլահ-խանին տանք։

Փիշքարի գէմքը փայլեց ուրախութեամբ, որ անհկատելի չանցաւ սադրազամի փոքրիկ, բայց սուր աչքերից. Նասրուլլահ խանը 5000 բաշաղլու էլ իրան էր խոստացել. նա շարունակեց, բայց այս անգամ աւելի կամայ ձայնով.

«Բէհմէն-Միրզայի փիշքարն եկել էր երէկ գիշեր ինձ մօտ, տունս...»

Սադրազամի գէմքը մռայլուեց.

—Ի՞նչ էր ասում։

—Ասում էր որ շահզադէն կը տայ ձեզ 50,000 բաշաղլու, եթէ Շահին միջնորդէք օր առաջ յետ ուղարկի իրան Թավրիզ վալիահօի հետ և տայ. իրան այն իրաւունքները, որ նա խնդրել է իր խնդրադրով, այ-

1) Աղախին։ 2) Հպատակին։ 3) Հպատակը ծնուած է բռնութիւն տեսնելու։ 4) Երբ միրզա բառը անուան յետոյ է դրուած, նշանակում է շահզադէ։ 5) Նշանակում է երոպականացած, երոպական տարազի սովորած։

սինքն այն իրաւունքները, որ վայելում էր ջաննաթմա-
քան ¹⁾ Ֆաթալի Շահի ժամանակ իր հայր Աբբաս-Միր-
զան. շահադէն յոյս ունի որ ձեր միջնորդութեամբ
Շահի աչքը կը քաղցրանայ նրա վրայ:

—Ինչպէս չէ, այն էլ իմ միջնորդութեամբ, վառ
յոյս չէ, միմեջ ապագամը, որ դառնապէս յիշեց
պատանի Բէհմէն-Միրզայի ծաղրաբանութիւնները և
վիրաւորանքները. երեւի մեզ յիմարի տեղ է դնում: Ես
վաղուց նկատում եմ նրա վառասիրական ձգտումները.
նա ոչ թէ Ատրպատականի փոխարքայ է ուզում մնալ,
այլ Շահ է ուզում դառնալ. տեսնե՞ք. ասած է՝ խո-
րամանկ ազուէսը ջուխտ ստբով թալակ կ'ընկնի. բայց
դու ասա նրա փիշքարին, թող 50,000 բաջազլուն
բերի:

—Բերի, զարմացական բացականչութիւն արեց
Միրզա Իբրահիմ խանը:

—Այո, ինչ քեզ պատուիրում եմ:

—Չէ՛ւմ ²⁾: հարկաւոր եմ համարում այս եւս արդ
անել, որ շահադէները ամեն դիշեր հաւաքւում են
Բէհմէն-Միրզայի մօտ, իսկ միքանի անգամ՝ ռուսաց
վէզիր մուխտարի ³⁾ թարգմանը գնացել է նրա տունը
և երկար մնացել:

—Թող ջասուսները ⁴⁾ լաւ հսկեն և ամեն բան հա-
ղորդեն. շարունակիր:

—Ի՞նչ էք հրամայում Բէգլար-բէգու մօտին. նա
մնում է շղթայած բանտում: Ես նրա կողմից ձեր գըլ-
խին թասատուղ եմ անում 5000 բաջազլու. իմ աներ-
ձագն է, ինձ բաշխեցէք, ես ձեր ստրուկը և ծառան
եմ: Նա խոստանում է լիովին վարձատրել ինքն իրան
սպանող մարդի ժառանգներին, վերադարձնելով այն
այգին, որ խլել էր նրանից և վճարելով այն գլխան ⁵⁾,
որ կը նշանակի շարիաթը:

¹⁾ Դրախտարնակ ²⁾ Աչքիս վրայ ³⁾ Լիազոր դեսպան ⁴⁾ Լրտես-
ները ⁵⁾ Արեան գին:

—Շատ լաւ, մի քանի բոպէ մտածելուց և համընկել վրայ մի քանի անգամ «խէր, շառ, Աստուած» կրկնելուց յետոյ ասաց սաղարազամը, ես կը կատարեմ խընդիւրդդ, կ'ազատեմ նրան, բայց Շահը շատ բարկացած է, թիչ էր մնում գլուխը կտրել տար. մունէջիմ բաշին ևս իրան արդարացնելու համար բոլոր մեղն պէտք է ձգէ Բէգլար-բէգու վրայ. թող այգին վերադարձնէ ժառանգներին, դիյան էլ վճարէ նրանց. մի ժամից յետոյ թող բերեն այստեղ. ներքին բակում ոտները ֆալախում դնեն, միայն պատուիրիր ֆէրրաշներին, որ չը խփեն, այլ խփել ձեւացնեն: Շահին արդ կ'անեմ, որ ֆալախի մէջ ենք դրել և կ'աշխատեմ մի քանի օրից յետոյ խալթ տայ ու վերահաստատի պաշտօնի մէջ:

—Թող Ալլահը երկարացնէ ձեր կեանքը. Բէգլար-բէգին ձեր խոնարհ և հաւատարիմ սպասաւորն է. այսօր առաւօտեան նա իր ճարպիկութեամբ ազատել է հրէաներին. իրանք, հրէաների աղ ստիկալները ¹⁾, որ եկել այստեղ են, կամենում են ձեր սպասին հասնել. մեծ շնորհակալութիւն են անում Բէգլար-բէգուց, օրհնում են նրա կեանքը:

—Լաւ, ջհուդներին ներս կը կանչես մի քիչ յետոյ. այժմ ուղարկիր մի ֆէրրաշ, թող կանչեն վէզիրը խարիջային ²⁾, Գավամ-Դօվլէին ³⁾, իսկ մինչ այդ ես նամագս կ'անեմ:

Եւ այս խօսքերը արտասանելով Հաջի Միրզա աղասին վեր կացաւ, «բէչչա» ⁴⁾ աղաղակեց իր սուր ձայնով, և երբ մի փեշիւրդմէթ երեւաց, «ալթաֆա» ասաց ու դուրս գալով նախասենեակը, ձեռքերը լուաց. ապա ներս մտնելով, ձեռքի թաց մատերով ոտքի մատերի արանքը սրբեց, անթերի կերպով կատարելով լուացման գործողութիւնը, որ շարիաթը պատուիրում է նամազից առաջ. հանեց վրայից սսկէ ժամացոյցը և դրեց մի քիչ հե-

¹⁾ Ծերունիները: ²⁾ Արտաքին գործերի մինիստր: ³⁾ Նեցուկ պետութեան: ⁴⁾ Աղառ:

ռու. հանեց գրպանից արքունւմ կտորից կարած փողի քիսէն և դրեց ժամացոյցի մօտ ¹⁾, սկսեց կոճկել կտաւէ շապիկի երկար թևքերը. փէշխըղմէթը սենեակի միւս գլխին փռեց մի մետաքսեայ սէջադէ ²⁾. հաջին, գուլբաները հանած, կանգնեց սաջադայի վրայ, գըբլէի ³⁾ ուղղութեամբ, հանեց ծոցից մի փոքրիկ բար, դրեց առաջը սաջադայի վրայ ափսպէս, որ կռանալիս ճակատն նրան գիպչի և սկսեց նամազը անել:

Այդ միջոցին վարագոյրը բարձրացաւ թալարի կողմից, ներս մտաւ Մուշիր-Միւլքը և նրա հետ մի երիտասարդ, հազիւ 22—23 տարեկան, գեղեցիկ գէմքով, թուխ աչքերով և կիսա-պարսկական կիսա-եւրոպական տարազով, կարճ քուլահով, բայց առանց կօշիկ, թիրմանման գուլբաներ հագած: Այդ 22 տարեկան երիտասարդը Պարսկաստանի արտաքին գործերի մինիստրն էր, Միրզա-Ալի-խան անուհով, Գավամ-Դօվլէ տիտղոսով: Մի տարի կար, որ նա նշանակուել էր այդ պաշտօնին, որ առաջ վարում էր իր հայրը, Միրզա-Մասուդ խանը. մինը այն սակաթիւ անձերից, որոնք ձգտում էին վերանորոգել Պարսկաստանը, մեծացած լինելով Աբբաս-Միրզա Նայիր-ու-Սալթանէի գալրոցում, և լաւ ըմբռնել էին, թէ որքան աղետաբեր է իրան հայրենիքին կրօնական մոլեռանդութիւնը և չիա հոգեւորականութեան ձեռք բերած իշխանութիւնը: Միրզա-Մասուդ խանը կարողացել էր բաւական ազդեցութիւն ձեռք բերել Շահի մօտ և ներշնչել նրան վստահութիւն, որով և գրգռել էր ծերունի և մոլեռանդ սադրազամի նախնանք. վախենալով մի գուցէ վերջ ի վերջոյ Մասուդ խանը իր անկման սլատճառ դառնայ, նա կարողացել էր բարի, բայց տկարամիտ ու կամքից զուրկ Մահմէդ Շահինանվստահութիւն ներշնչել, և մի օր Մասուդ խանը հրաման ստացաւ գնալ Խորասան ստանձ-

¹⁾ Նամազ անողը չը պէտք է իր վրայ որեւէ զարդ, փող, թանկագին իր ունենայ: ²⁾ Փոքր գորգ: ³⁾ Ազօթարան:

նեւու թիւրքմէնների դէմ՝ ուղարկուած զօրքի հրամանատարի պաշտօնը, բայց դրա հետ միասին հօր պաշտօնը յանձնուեց քսան և մի տարեկան որդուն, Միրզա-Ալի-խանին, որին և շնորհուեց Գավամ-Դովլէի բարձր տիտղոսը։ Այդ միջոցով Հաջի-Միրզա-Աղասին ազատուեց մի լուրջ ախոյեանից, որովհետեւ թէև երիտասարդ Միրզա-Ալի-խանը նոյնպէս Ֆրանգի-մաաբ էր, դիտէր նաև Ֆրանսերէն—մի հանգամանք որ շատ ազդեւ էր նրան արտաքին գործերի մինիստրի պաշտօնը տալու վճռի վրայ—բայց նա անփորձ լինելով, մանաւանդ, իբրև երիտասարդ, անձնատուր լինելով մոլի զուարճութիւնների և հարեմական բերկրանքների, չէր կարող վտանգաւոր լինել։ Եւ հէնց այդ մուլութիւնները դարձան ապագայում թէ երիտասարդ մինիստրի և թէ հօրը անկման ու կորստեան պատճառը։ Պէտք ունենալով դրամի իր ցօփ ու շուայտ կեանքի համար, Միրզա-Ալի-խանը սկսեց աջ ու ձախ կաշառներ, փէշքէշներ վեր առնել. այդ, թէեւ, տիրող ընդհանուր սովորութիւնն էր և ոչ ոք՝ սկսած մեծ վիզիրից մինչեւ վերջին մուստֆին զուրկ չէր այդ յատկութիւնից, բայց խորամանկ Հաջի-Միրզա-Աղասու ձեռքում՝ ծառայեց զէնք երիտասարդի և հօրը դէմ։ Կաշառակերութիւնը Պարսկաստանում սխտեմի է վերածուած. ամենքը գիտեն և ամենքը ուտում են, բայց նա ծառայում է և իբրեւ զէնք մեծերի ձեռքում, երբ կամենում են կորցնել փոքրերին կամ ազատուել մրցակիցներից...

Հաջի-Միրզա-Աղասին բարձրաձայն արտասանեց. «եա ըէբ-ուլ-ալէմին»¹⁾, «Լա-իլլահ-իլ-Ալլահ, Մուհամէդ-էլ րասուլ-Ալլահ. Ալի Վալլի-ուլլահ»²⁾, և դառնալով Միրզա-Ալի-խանին, որ ձեռքերը կրծքին դրած, կանգնած էր դռան առաջ, ի նշան յարգանաց և խոնարհութեան, ասաց.

1) Համեցէք։ 2) Ով ստեղծող տիեզերքի 2ը կալ Աստուած բացի Աստծուց. Մահմէդը Աստծու Մարգարէն, Ալին Աստծու փոխանորդը։

«Բխմուլլահ ¹⁾, Գավամ-Դովլէ, նստիր. այս լուսէիս
կը վերջացնեմ»:

Երիտասարդ մինիստրը այնուամենայնիւ կանգնած
մնաց:

Նորից լսուեց ծերունու ձայնը՝ «Լա-իլլահ». ապա
մրմնջիւնը և սաղրազամը անցաւ նստեց իր մինդարէյի
վրայ, հագնելով գուլպաները և հանելով բազմաթիւ
գրպանների մինից մի սպիտակ, քրտինքից իւզոտած
արախչին, դրեց գլխին: Ձեռքի թեթև շարժումով նա
նորից հրաւիրեց մինիստրին նստել. սա չոքեց մինդա-
րի մօտ:

— Ինչալլահ, ձեր օրհնեալ ստամոքսը (մէղա՞ չէ-
րիք) լաւ է, դուրս տալով ասաց Միրզա-Ալի խանը:

— Փառք Ալլահին, իսկ ձեր հալը խնչպէս է:

— Ձեր բարձրութեան հովանին որքան իմ գլխիս
է, միշտ լաւ եմ. թող չը պակասի ձեր ստուերը իմ գըլ-
խից:

Եւ ապա, խորհրդաւոր դէմք առնելով, Գավամ-
Դովլէն յարեց.

— Ռուսաց վէդիր-մուխտարի աւագ թարգմանը
նորից եկել էր. խստիւ պահանջում է, որ դրական պա-
տասխան տանք. ասում է, լաւ չէ գրգռենք իմիէրա-
թօրի ²⁾ զայրոյթը. որքան շուտ վերջացնենք գործը,
այնքան լաւ:

— Լաւ, ասաց սաղրազամը, այստեղ մի բան կայ.
ես չեմ հասկանում թէ ինչո՞ւ այդ քեաֆիր ռուսները
մի աղի և անպէտք ջրի համար այդքան փող են խոս-
տանում մեզ. ախր ինչի՞ է պէտք մի ջուր, որ ոչ խմել
կարելի է և ոչ դաշտերը ոռոգել, ոչ էլ ձուկն ունի
մէջին: Դու ի՞նչ ես կարծում:

— Ի հարկէ, հրաման ձեր հրամանն է, բայց երեւի
ռուսների համար այդ Խըզըր ծովը ³⁾ շատ կարևոր է.
ախր կարող են նրա վրայ նաւ բանեցնել:

1) Համեցէք, 2) Կախար, 3) Կասպից ծովը:

— Ինչքան ուզում են թող բանեցնեն. մեզ ինչ գուռ այն ասա, ինչքան են խոստանում տալ:

— Հինգ հարիւր հազար բաշաղլու, իսկ ձեզ էլ 100,000 և առաջին կարգի շքանշան:

— Իսկ ձեզ, ինչքան են տալիս:

— Ձեր հովանին թող պակաս չը լինի գլխիցս. ինձ էլ, ի հարկէ, ձեր պատուի համար չեն մոռանայ:

— Շատ լաւ, ուրեմն այդպէս էլ եադդաշտ արա, որ Շահին արդ անենք. ուսները կամենում են, որ Կասպից ծովի կէսը, որ մերն է, իրանց տանք. որովհետեւ այդ ծովի ջուրը անպէտք է, աղի, անհամ, վարուցանքսի էլ անօգուտ, ուստի բարւոք է տալը, մանաւանդ որ Շահի խաղինէն կը հարստանայ և ուսուներն էլ մեզ բարեկամ կը մնան:

— Բայց մասլահաթ չէք տեսնում շուրա ¹⁾ անել:

— Ո՞վ պէտք է լինի շուրայում. շահադէշները. նըրանց ինչ խելքի բանն է. նրանք ինչ գիտեն. ինչ շուրայ անելու բան կայ, աղի, անհամ ջրի համար այդքան փող են տալիս, դեռ նազ պէտք է անենք: Երբ Շահը կամենայ, ո՞վ այլ ևս կը համարձակուի խօսել. այդպէս չէ:

— Բէլի, բէլի, պատասխանեց միայն արտաքին գործերի մինիստրը և ապա յարեց.

— Ինգլիզի վէզիր մուխտարը ուղարկել էր իր թարգմանին ասելու, որ մօլլաները սպառնալիք են կարգում քաղաքում հրէաներին, գրգռում են ամբոխը. խնդրում է պատժել խռովարարներին:

— Շատ դժուար է ջհուդների գործը. Իմամ-Ջուլա մէն և սէյիդները չեն հարգարտի մինչև աղջկան չը տանք իրանց, իսկ աղջիկը հօր հետ բէստ է մտել Շահի ախոռատունը, այնուամենայնիւ դու միամտացրու ինգլիզի վէզիր մուխտարին, որ հրէաների մասին միամիտ մնայ, պէտք է Աբբաս խան սարգարին հրամայել, սարբաղներ դնի ջհուդների թաղում և հսկէ որ իջմա ³⁾ չը լինի:

1) Պետական խորհուրդ: 2) Յարձակումն. զրոհ տալ:

—Ձեր հրամանները ճշտութեամբ կը կատարուեն, պատասխանեց Միրզա-Ալի խանը և վեր կենալով, խոր գլուխ տուեց ու դուրս եկաւ:

Փիշխըդմէթը ներս մտաւ չաղ արած ղէյլանը ձեռքին, չորեք մի ծնկի վրայ և ներկայացրեց ղէյլանի եղեգնեայ ծայրը:

—Ներս կանչեցէք ջհուդներին, հրամայեց սադրազամը, գլխացնելով ղէյլանը:

Մի քանի րոպէից յետոյ նախասենեակում մի տեսակ իրարանցումն տիրեց. երբ վարագոյրը բարձրացաւ, Սէլիմ շաթիրը միմնջաց ներս մտնող ծերունի հրէայի ականջին. «Ղօչաղ կաց, չը վախենաս, համարձակ խօսիր»:

Հինգ ծերունիներ էին ներս մտնողները, հագնուած բոլորովին պարսկական տարազով, երկար մորթէ գտակներով, զադաք արխալուղով, ջուբայով. միայն զադաքի վրայ կարած կարմիր կտորի նշանակը ցոյց էր տալիս, որ նրանք պատկանում են Ալլահից անիծուած ցեղին: Առաջին ծերունին, որ միւսների առաջնորդն էր երեսում, ձեռքին բռնած ունէր մի փոքր արծաթեայ մատուցարան, վրան մի փոքրիկ, թիրմա շալից կարած սփռոց գցած. մտնելով սենեակը, ծերունիները խոր գլուխ տուեցին սադրազամին և շարուեցին դռան առաջ, առաջնորդ-ծերունին, մօտեցաւ, մատուցարանը դրեց Հաջի-Միրզա-Աղասու առաջ և վերցրեց ծածկոցը. մատուցարանի մէջ դրուած էր յիւլունքով կարուած ջիբի երկու քիսաներ, մէջը լցուած բաշալլունքով:

—Այս ի՞նչ է, Խախամբաշի, հարցրեց սադրազամը ծերունուն:

—Շահի և ձեր գլխին թասատուղ է, ներողութիւն արէք աւել պակասի համար. մեր գլխի տէրը դուք էք. Աստուած և մեծ մարգարէ Մովսէսը չը պակասեցնեն մեր գլխից ձեր ստուերը. սէյիդները, մօլլաները սպառնում են մեզ փողոցներում, բազարներում, թէ մեզ կը կոտորեն, կ'աւերեն մեր թաղը. մենք ի՞նչ յանցանք ենք

գործել, միթէ մենք Աստծու արարած չենք. Շահի հպատակ չենք. միթէ մենք հարկ չենք վճարում:

—Նստիր, նստիր, Խախամբաշի, մի վախենաք, Շահի հովանին միշտ ձեր վրայ է, ձեր գլխից մի մազ անդամ չի պակասի. բայց ասացէք, խնդրեմ, դուք խելօք մարդ էք, արժէ մի քածի համար, մի աղախնի համար այդքան աղմուկ հանել, գրգռել Իմամ-Ջու-մայի բարկութիւնը. կնիկարմատը ինչ բան է, որ նրա պատճառով ամբողջ ժողովուրդը ղինաւորէք ձեր գէմ:

—Ա՛ղա, ձեր գլխին զուրբան, լաւ էք հրամայում, բայց ինչ հողը տանք մեր գլխին, որ մեր կանայք և աղջիկները չեն կարող մեր փողոցներում աղատ պատել: Մենք ոչ ոքի նեղութիւն չենք տալիս. հօ չենք կարող գնալ ինգլիզի, մոսկօֆի դրօշակի տակը մտնել. մեր տէրը Շահն է, դուք էք, ձեզ էլ դիմում ենք և աղերսում պաշտպանել մեզ:

—Միամիտ մնացէք. ես ձեր նուէրը գըբլէյի ալէմի սպասին կը ներկայացնեմ և ինչ որ հարկն է արդ կ'անեմ. դուք զնացէք միամտացրէք ձեր ժողովրդին,— ասաց սադրազամը և քսակները վեր առնելով դրեց ծոցը:

Հրէաները նորից խոր գլուխ տալով յետոյետ գնացին դէպի դուռը:

Հազիւ վարադայրը ընկել էր հրէաների ետեւից, որ մի սեւ, խափշիկ մանկլաւիկ շտապով ներս մտաւ և ասաց. «Շահը հրամայեց, աղա, որ այս րոպէիս գնաք իր սպասին»:

—Իսկոյն, իսկոյն, պատասխանեց սադրազամը, և դառնալով դէպի դուռը, գոչեց իր սուր ձայնով.

—Բէչչա, կօշիկներս:

Բայց հազիւ սադրազամը մի բանի քայլ առաջ էր գնացել թալարում, երբ թալարի ներքեւի դռան վարդայրը բարձրացաւ և ներս մտաւ սպիտակ ջուբբան վրան գցած, գաւաղանը ձեռքին Իմամ-Ջուման, իսկ նրա ետեւից սէյիդների և մօլլաների մի ամբողջ դրոհ:

Սագրազամը կանգ առաւ, միրզաները, մուսու-
ֆիները, ֆէրրաշները ամենքը մօտեցան աղայի աջը և
բղանցքը համբուրելու:

—Բիսմըլլահ, բիսմըլլահ, ասաց սագրազամը, տա-
նելով Իմամ-Ջումային իր առանձնասենեակը, որից նոր
էր դուրս եկել:

Սագրազամը նստեց մինգարէյի վրայ և իրանից
բարձր նստացրեց Իմամ-Ջումային: Անմիջապէս փիշ-
խըդմէթներին մինը մի փոքր սրուակով վարդաջուր
բերեց և Իմամ-Ջուման լցնելով բուռի մէջ վարդա-
ջուրը, շփեց երեսը և մօրուրը:

—Շատ իլթիֆատ էք ¹⁾ արել, աղա, դարխանէն ²⁾
դալով, ինչ նոր բան կայ:

—Էլ ինչ պէտք է լինի, աղա սագրազամ, յուզուած
և գրգռուած ձայնով ասաց Իմամ-Ջուման. իսլամ
երկրում, Մահմէդ-Շահի թագաւորութեան ժամանակ,
Հաջի-Միրզա-Աղասու սագրազամութեան ժամանակ
մուռտառ ջհուգները ծաղրում և անդոսնում են մեր
սուրբ դինը և մենք տանում ենք այդ անպատուութիւ-
նը, համբերում ենք. միթէ այս օրն էլ պէտք է տես-
նէինք:

—Հանգարտուեցէք, աղա, ամեն բան կը դրստուի,
կարգի կ'ընկնի. արժէ մի ջհուգ քածի համար այդքան
վրդովուել. ինչ անենք, եթէ բռնութիւն դործ դենք,
ինգլիզի և ռուսի դեսպանները կը միջամտեն և մեր
տէրութեան համար լաւ չի լինի: Դուք մի քիչ համբե-
րեցէք, ես դուցէ կարողանամ համոզել ջհուգներին,
որ ազլիան յետ տան, նրանք բէստ են մտել Շահի ա-
խուռատանը. հօ բէսաից զօռով հանել չենք կարող:

—Միթէ համբերելը սրանից աւելի կը լինի, ա-
սաց Իմամ-Ջուման. հաղրաթը Աբբասի գլխով երգւում
եմ, որ ժողովուրդը վաղուց հիմնայատակ արած կը

¹⁾ Շնորհ: ²⁾ Պաշտօնատուն:

Փետրուար, 1902.

լինէր ջհուդների թաղը, եթէ ես ֆիթվան տուած լինէի. ինձ հանգստութիւն չեն տալիս: Ո՞վ էր սեսել մինչեւ այժմ, որ ջհուդը համարձակուի ձի նստել, առաջից լապտեր տանել տալ, իսկ այժմ այդ մուռտառները այդ էլ են անում: չէ, հաշի, իսլամը բոլորովին ոտնատակ եղաւ:

—Մեծ է մարգարէի զօրութիւնը, իսլամը միշտ զօրաւոր է եղել և կը լինի, աղա, բայց փօլիսիկ պէտք է բանեցնել: Ես հէնց այժմ արգ կ'անեմ Շահին, որ դուր շնորհ էիք բերել և կը հաղորդեմ ձեր ասածները. հանգարտեցրէք ժողովուրդը:

Փիշիւրդմէթը ներս բերեց սուրճ, բայց ոչ թէ շարքով, այլ չամիչով. Իմամ-Ջուման սովորութիւն չունէր անհատներին ձեռքով պատրաստած շաքարը ճաշակել:

Նորից երեւաց խափշիկի գլուխը դռան շէմքում. «Շահը բարկանում է, հրամայեց այս րոպէիս դաք»:

—Իսկոյն, իսկոյն, աղա, ներող եղէք, Շահը կանչում է, ասաց սողաղամը և սուրճը ձեռից թողնելով, հետեւեց խափշիկին:

Վերկացաւ և Իմամ-Ջուման և նոյն մեծարանքի, երկրպագութեան մէջ հեռացաւ, մրմնջալով աղօթք և շարժելով ձեռքում սև համրիչը:

Սէլիմ շաթիրը դրեց Իմամ-Ջումայի առաջ չմուշկները և խոր դլուխ տուեց, մրմնջալով կոանալիս. «սպասիր, ես ք» հախից կը գամ, ք» փորացաւդ ջհուդի գեղեցիկ աղջիկն է. տեսնենք»:

—Հա, Հաշի-Սէլիմ, դձև ես, քէֆդ լմն է:

—Ձեր աղօթքով, աղա, ապրում ենք:

Եւ չրթունքները մօտեցրեց աղայի քլանցքին:

ՇԱՀՐԻԱՐ

(Կը շարունակուի)

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓԵՐԻՑ *)

Գ.

Պարմի և Բարանդուլի հայեր. — Հայերի թիւը. — Հայաբնակ գիւղեր. — Հայերի պարագմունքը. — Պանդխտութիւն. — Հայերի դրութիւնը. — Ուրմեցի հայուհին. — Բարանդուլցի հայեր և օտար հոգևորականներ. — Հայերի հոգևոր կառավարչութիւն. — Եկեղեցիներ. — Երէցութիւններ. — Քահանաներ. — Ուխտատեղիներ. — Վրթական գործը և գործողներ. — Քաւրիզի և Ատրպատականի Հայուհեաց ընկերութիւններ. — Ուսուցիչներ. — Հայաբնակ կենտրոններ. — Ուրմի քաղաք. — Գեարդարադ. — Նախջեան-Քալիս. — Իսալու. — Գահվա. — Իքի-Ալաջ. — Դիզա-Քաբա, Բալառու. — Թումաթար. — Ընդհանուր աղիւսակ:

Ուրմիի հայերը բացի քաղաքում բնակուողներէն ընկնեն Ենու Սմբողջ հայերը հազար տուն են և բնակուած են 35 գիւղերում, առհասարակ Բարանդուլ և Նազլու գետերի վրայ 70—80 տարիներ առաջ Կապուտանի արեւմտեան ափերը և չորս բոլորը ծածկուած են եղել հայ ազգաբնակչութեամբ. նոյն իսկ լեռնային դաւառները: Այսօրուայ քրդաբնակ Սօմային, որ մի գեղեցիկ և հրաշալի լեռնագաւառ է, ծածկուած է հայաբնակ եկեղեցիների և վանքերի աւերակներով և հայ գերեզմանատուներով, որոնք կենդանի վկաներ են մեր ասածներին:

Հայերը գիւղաբնակ լինելով, տնտեսապէս շատ ողորմելի դրութեան մէջ են գտնուում: Ուրմիի գիւղերը ընդհանրապէս սոսկալի պայմանների տակ են գտնուում, դաւառի հարիւրաւոր գիւղերը, մի երկու բացառութեամբ, աղալըլ են: Կալուածատէր և փողատէր հայեր շատ քիչ կան, չնորհիւ տիրապետող կարգերի: Թէ որքան շատ և բազմատեսակ հարկերի են ենթարկուած գիւղաբնակ հայերը, այդ ընթերցողը կը տեսնի ստորեւ բերած հարկատուութեան աղիւսակից:

Զուտ հայաբնակ Գեարդարադ գիւղը պատկանում է մի տիկնոջ, որի համար ստում են թէ բարեխիղճ է և սիրում է իր

հպատակներին: Ահա բարեխիղճ կալուածատիրուհու հպատակ-
ները վճարած տարեկան հարկերի ցուցակը.

- 1) Գլխահարկ $5\frac{1}{2}$ ղոան (ղոանը 20 կոպեկ է):
- 2) Իւրաքանչիւր զլուխ 3 մշակ կամ 3 ղոան փող:
- 3) » տան հարկ 8 ղոան:
- 4) » տունը » 2 հաւ:
- 5) Առու հանելու համար իւրաքանչիւր զլուխ՝ 2 մշակ:
- 6) Գիւղատիրոջ բրինձ ցանելու և հնձելու » 2 »
- 7) Իւրաքանչիւր գոմէշին 3 ղոան 4 շահի.
- 8) » կովին 1 » 12 »
- 9) Մատակ իշուց 1 » 12 »
- 10) Մատակ ձիուց 3 » 4 »
- 11) Տարեգլխին (նաւրուդ) տունը 15 »
- 12) Հարսանիքին 2 զլուխ շաքար:
- 13) Բամբակ ցանած արաի թանա-
ֆին (64 քառ. արշ.) 14 ղոան:

14) Առույտ ցանած արաի թանաֆին 14 »

15) Այգու . . . » 14 »

16) Աղայի արտը ցանելուն, ինքը աղան սալիս է սեր-
մացուի կէսը, վարուցանքի, հնձելու, կալսելու բոլոր աշխա-
տութիւնը գիւղացուն է մնում, իսկ աղան բերքի կէսը վեր-
ցնում է:

17) Աղայի ցանած բամբակի, բոստանի, բրնձի կայլն-ի բո-
լոր աշխատութիւն և մշակութիւն գիւղացիներին է:

18) Սարփարաստին՝ իւրաքանչիւր տուն վճարում է 2
ղոան:

Իւրաքանչիւր գիւղատէր կարող է իր գիւղից արտաքսել
իր չը սիրած ոռային: Համեմատելով քրիստոնեայ և մահմեդա-
կան գիւղականների զրուծիւնը, վերջիններս աւելի ճնշուած
և անզօր են բողոքելու:

Ուրմիի հայ գիւղացիների գլխաւոր պարապմունքներն
են երկրագործութիւն և այգեգործութիւն, կան քիչ հիւսնե-
ր էլ, որոնք աւելի շատ երկրագործական գործիքներ են պատ-
րաստում:

Որովհետեւ գիւղական ժողովուրդը իր աշխատութեան ար-
դիւնքին չի կարողանում տիրանալ, այնքան չի մնում իր տրա-
մադրութեան տակ որ նրանով կարողանայ մի կերպ ապրել,
եօլա գնալ,—ստիպած պանդխտութեան է դիմում: Չընայելով այս
ստիպողական հանգամանքին ուրմեցի հայերը, համեմատելով
Սալմաստի հայերի և ուրմեցի ասորիների հետ, զարձեալ շատ

քիչ են պանդխտում. օրինակ՝ 120 տուն հայ բնակիչ ունեցող Գեարգարաղը միայն 30 պանդխտ ունի: Ուրմնցի հայերի պանդխտավայրը շատ հեռու է, իսկ ժամանակամիջոցն էլ խիստ կարճ: Հալալ աշխատանքով պարապող ուրմնցի պանդխտները Կովկասից դուրս չեն գնում, անցկենողներ լինում են ուրմնցի խաչագողներ: Ներկայումս էլ ապրում են ուրմնցի շատ քահանաներ, մահտեսիներ և աշխարհական հայեր, որոնք մեծ հըրձուներով պատմում են իրանց խաչագողական սխրագործութիւնները: Այժմ այս սև գործով պարապող հայեր գրեթէ չը կան, որովհետև այլ ևս չեն կարողանում մրցել հայրենակից ասորիներին հետ:

Պանդխտ ուրմնցին ոչ մի լաւ բան հետ չի բերում, աւելի այլասեւում է, դարմանալի ճարպիկութեամբ իւրացնելով օտար երկրի վատ սովորութիւնները:

Ուրմնցի հայերը, որոնք գրեթէ ոչինչ չունին հայկական, շատ տեղերում սրդէն մոռացել են մայրենի լեզուն: Բարանդուղ զաւառի հայեր թուրքից կամ ասորուց զանազանել չի լինի: Խօսում են թուրքերէն, հազնւում են թուրքի և քիւրդի պէս: Այն յիշատակելի օրերից, երբ պատահեց պարսկահայերի գաղթականութիւնը, երբ տասնեակ հազար հայեր, ապագայ երջանիկ կենցաղավարութեան յուսով, թողին հեռացան իրանց սիրուն հայրենքը, չէն տունը, տրտն ու այգին,—հայրենիքից բաժանուել չը կարողացող մի բուն հայեր ենթարկուեցին այս տեսակ այլասեւման:

Հայերի կենցաղավարութիւնը անշնորք և կոշտ է, շատ քիչեր կան մաքուր հագնողներ և ապրողներ: Տները շատ քիչ յարմարութիւն ունին բնակուելու համար: Ամեն մի գիւղացու տուն բաղկացած է հետեւեալ մասերից.—Տուն-թոնրատան, սա մի մեծ շինութիւն է, տան մի կողմը դռնւում են 2 թոնիրներ, միւս կողմը «փեթակ» (իւքալթի), որի վրայ դարսում են անկողիններ, մի անկիւնը լցնում են ցորեն, թոնրի եղերքը փռած են լինում փալաններ կամ գորգեր նստելու և քնելու համար, ամբողջ ընտանիքը մի կտուրի տակ է քնում: Փողտիկը ուրմնցու մառանն է: Օթաղում պահում են մրգեղէններ: Բակերը շատ նեղ և կեղտոտ են: Բայց գիւղացու համար այս այնքան էլ նշանակութիւն չունի, որովհետև տարուայ մեծ մասը նա անց է կացնում հովասուն այգիներում և զուարճալի դաշտերում:

Ուրմնցի հայ կանայք տղամարդկանց հետ մասնակցում են դաշտային բոլոր գործերում: Կանայք առհասարակ ճշշուած են: Ուրմնցի հայուհիները շատ աւանդապահ են, չնորհիւ հայ կա-

նանց աւանդապահութեան է որ զեռ պահպանուում է այս մո-
ռացուած անկիւններում հայութիւնը և լուսաւորչական կրօնը:

Սալմաստից յետոյ Ուրմին՝ Ատրպատականի հայոց թեմի
երկրորդ բազմահայ դաւան է, բայց միշտ անուշադրութեան է.
մատնուած թեմակալ առաջնորդների կողմից, որոնք ուրմեյի-
ների հովուութիւնը շատ անգամ չաւաղաբերէին ևն յանձնում,
մինչդեռ Ուրմին պէտք ունի ուսում առած և կտրիճ մի վար-
դապետի, որ կարողանայ գիւղացիներին պաշտպանել գիւղա-
տէրերի և պաշտօնեաների կեղեքումներից, որ մրցի օտար մի-
ախօնարութիւնների հետ, հեռայն է և պատժէ անարժան քահա-
նաներին, բարեկարգէ եկեղեցիները և այլն:

Կառավարութիւնը և գիւղատէրերը շատ են յարգում հայոց
գործակալին (նայիբի խալիֆա-արամինա), կամ հայոց ազգապե-
տին (միլլաթ-բաշի):

Ուրմիի հայ լուսաւորչական քահանաները 12 հոգի են
(մէկը Բարանդուղի). մի երկու բացառութեամբ բոլորն էլ տը-
գէտ և անբարոյական մարդիկ են: Եւ այսպիսի ապիկար մարդ-
կանց է յանձնուած հազարաւոր հայերի հովուութիւնը:

Ուրմիի գաւառում գոյութիւն ունին քսան երկու հայոց
եկեղեցի: Այս եկեղեցիները բոլորն էլ վերջին տասնամեակումն
են չինուել կամ վերանորոգուել: Առհասարակ անշուք և համեստ
շինութիւններ են, միայն քաղաքի եկեղեցին քարաշէն է, մնա-
ցածները թրծած կամ հում աղիւսով են շինուած, կալուածներ
և եկամուտներ իսկի չունեն:

Երէցփոխները պատկառելի և ազգեցիկ զիրք ունեն, երէց-
փոխի պատիւը, ազգեցեցութիւնը համահաւասար է տանուտէրի
հետ: Ուրմի հայաբնակ գիւղերում, երէցփոխի տունն է, ուր հիւ-
րասիրում են՝ ճամբորդին, մուրացկանին, ժողովարարին և պա-
տահական մարդկանց: Երէցփոխի եկամուտը շատ քիչ է, այնպէս
որ երէցփոխ դառնալու ցանկութիւնը փող կամ եկամուտ չէ որ
գրգուում է, այլ բարոյական ազգեցեցութիւն ձեռք բերելը:

Հայ վանքեր և ուխտատեղիներ չը կան: Ուխտագնացու-
թիւն լինում է ասորիների հետ խառն, ամռան ժամանակ ամին-
մի կիւրակի օր, բոլոր գիւղացիները հաւաքուում են այն գիւղ-
որի եկեղեցու տօնն է, և սկսում են ուրախութիւն անել, մին-
չև անգամ ծովին էլ յատուկ հանդիսաւոր տօն կայ, և այդ օր
ամբողջ ազգաբնակչութիւնը ծով է գնում լողանալու: Այսպիսի
տօներին ասորիները ասում են Շաւա: Ասորական ուխտատեղի-
ներից ամենայայտնին է Ս. Սաշգսի մատուռը, որ գտնուում է
Ուրմի քաղաքի հարաւ-արեւմտեան կողմ, Սըռ լեռան կրճքին:
Ս. Սարգիսը ամենակարողի հռչակ ունի, ուխտի են գալիս Սալ-

մաստից, Սօլդուզից և Սովուզ-Բուլաղից, նոյն իսկ բազմաթիւ թուրքեր: Քրդաբնակ Սօմայի լեռնագաւառում, ինչպէս յիշեցինք վերևում, մնում են հայկական վանքերի բազմաթիւ աւերակներ:

Ուրմեցիները կրթական գործի վրայ միայն 1—2 տարի առաջ կարգին ուշադրութիւն դարձրին. թէև 90-ական թուականներից եկել և գնացել են մի քանի գործիչներ, Ուրմի քաղաքում, Գեարգաբադ և Դահլա գիւղերում բաց են արել զըպրոցներ, բայց նիւթական հաստատուն միջոցներից զուրկ լինելով, գրեթէ ոչինչ չեն կարողացել անել: Այդ գործիչներից յիշատակութեան արժանի է պ. Գ. Բաղէչցեանը, որի եռանդուն աշխատութիւնների շնորհիւ կառուցուել է Նախջևան-Փափա գիւղի ուսումնարանը: Գիւղացիք մինչև այսօր էլ յիշում են այդ մարդուն, և պատմում թէ նա ինչպէս իր քամակով քար, աղիւս էր կրում, ցեխ շինում: 94 թուականին էջմիածնից Ուրմի են ուղարկում պ. Մ. Բաղդասարեանին, մի որբանոց կամ գիւղական վարժապետներ պատրաստելու համար մի գիշերօթիկ զըպրոց բաց անելու. այդ պարոնը մի ամբողջ տարի իզուր սպասում է էջմիածնի կարգադրութեան... Այնուհետև Ուրմի քաղաքի հայ հոգաբարձուները մի երկու տարի քաջքշում են, եօլա են տանում քաղաքի հայոց դպրոցը, որն վերջի վերջոյ փակւում է...

Սրանից 3—4 տարի առաջ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական երկու ընկերութիւնները (այժմ Միացեալ) իրանց գործունէութեան կենտրոն ընտրում են Ուրմի, և սկսում են հայաբնակ գիւղերում և քաղաքում դպրոցներ բաց անել, զըպրոցական գործը շնորհիւ Բարեգործական ընկերութեան տարէց տարի սկսում է առաջադիմել, և հաստատուն հիմք գցել: Ներկայումս Միացեալ ընկերութիւններ ունեն եօթ ուսումնարաններ, որոնցից երեքը երկսեռ են:

Ուսումնարանների մասին յետոյ, այժմ դառնանք մի ուրիշ կարևոր հարցի: Ուսուցիչների պակասութիւնը շատ և շատ զգալի է, մանաւանդ արժանաւորների: Ի՞նչ պէտք է անել, ուրմեցին հնարաւորութիւն չունի իր որդուն ուրիշ տեղ ուղարկելու, իսկ առանց տեղացի ուսուցիչների գործ առաջ տանելը շատ դժուար է: Ապագայ քահանայութեան և գիւղական ուսուցիչներ պատրաստելու համար ամենանպատակայարմար միջոցն է, մեր համեստ կարծիքով,—Ուրմի քաղաքում հիմնել գիշերօթիկ 4 դասեան ուսումնարան և այդտեղ հաւաքել գիւղական աշակերտներից ընտրեալներին:

Եթէ իրադրոժուի մեր այս առաջարկը, ուրմեցիների կըրթական գործը միանգամ ընդմիշտ կ'ապահովուի: Ներկայումս

Ուրմի և Բարանդուղ դաւառում կան եօթ ուսուցիչներ և երեք վարժուէի, միծամասնութիւնը կազմում են տարրական կրթութեան տէր անձինք, և շատ քիչ են վարձատրւում, գոնէ այնքան չեն վճարում, որ այս նահատակ մարդիկ կարողանան գլուխ պահել, խեղճերը միշտ պարտքի մէջ են...

Ուրմիի հայերը հասարակական հիմնարկութիւններ չունեն: Այս տարի քաղաքի ուսուցչի նախաձեռնութեամբ հիմնուեց մի Ընթերցարանական ընկերութիւն, որքանամ Գրիգոր Ջանչեանի անունով, այս ընկերութեան նպատակն է «ուսում և ընթերցասիրութիւն տարածել Ուրմիի գաւառի հայ ազգաբնակչութեան մէջ, հիմնելով գրադարան-ընթերցարաններ հայաբնակ գիւղերում»: Այս ընկերութիւնը բաց է արել մի ընթերցարան Ուրմիի քաղաքում:

97 թուականին՝ թեմական տեսուչ պ. Սրաշն Յակոբեան Ուրմիում առաջին անգամ տալիս է հայկական ներկայացում, շարժական բեմի վրայ, այնուհետև տեղի են ունենում մի երկու երեկոյթներ, մինչև այս տարի: Այս տարի թատերասէրների խումբը տուել է երկու ներկայացում, և զրանց արդիւնքով Ուրմի քաղաքի հայոց դպրոցի շինութեան մէջ կառուցել տուին մշտական բեմ:

Աշխատենք այժմ ամփոփ գաղափար տալ հայաբնակ կենտրոնների մասին:

Ուրմի քաղաքը, Ատրպատականի արևմտեան սահմանների ամենաբազմամարդ և վաճառաշահ քաղաքն է: Գեղեցիկ է Ուրմի քաղաքի զիրքը. զրեթէ ամեն բակերի միջից անցնում է ջուր, որը Շըհէր-չայից են բերում: Քաղաքում աչքի ընկնող շինութիւնները և տեղերն են՝ ընդարձակ գերեզմանոցներ, բազմաթիւ մզկիթներ, մի քանի տաճնեակ գիւղատէրերի պալատաման բնակարաններ: Քաղաքի պարիսպների մէջ և դուրս ընկած են միսիօնարական բազմաթիւ և չքեղ շինութիւններ, միսիօնարները ունեն տպարաններ, ուր տպւում են ասորերէն գրքեր և կրօնական ամսաթերթեր: Քաղաքի պարիսպներից դուրս, Շըհէր-չայի ափին, շինուած է բողոքականների կոլլէժ, հիւանդանոց կայլն, այս շինութիւնները իրանց խմբով կոչւում են դալա:

Ուրմի քաղաքում բնակւում են 50 տուն հայեր, որոնցից 25 տուն միայն բնիկ ուրմեցիներ են (գիւղերից եկածներ), մնացեալները սալմաստեցիներ, թաւրիղեցի և վանեցի վաճառականներ և արհեստաւորներ են: Տեղացիները առաջներում բոլորն էլ «մեկամասնիներ» են եղել, այժմ էլ մի քանի տուն կայ

այդ սև գործով զբաղուողներ: Տեղացի և ընտանիք ունեցող հայերը բնակւում են Փաթալխան Գիօլ և Նանամէրիամ թաղերում. առաջինումն է հայոց եկեղեցին և դպրոցը: Եկեղեցին չինել են 1890 թուականին Թաւաքալեան վարդապետի օրով, սալմաստեղիները աջակցութեամբ: Դպրոցը այժմ բարելաւ վիճակի մէջ է գտնւում:

Ուրմի քաղաքի հիւսիսային կողմում գտնւում է Գեարդաբադ գիւղը՝ զուտ հայաբնակ է (120 տուն). կայ եկեղեցի և դպրոց: 98 թուականից Ատ. Հայունհայ Ընկերութիւնը բաց է արել դպրոց, բայց չնորհիւ ուսուցիչների ապրկարութեան արգիւնքը ոչինչ է եղել: Ներկայումս էլ դպրոցը Հայունհայ Ընկ. հովանաւորութեան տակ է գտնւում:

Նախջեւան-Թափա (70 տուն) զուտ հայաբնակ է, Նազլու գետի ափին. կայ եկեղեցի և ուսումնարան: Մի քանի տարի առաջ Հայ. Ընկերութիւնը ուղարկեց մի ուսուցիչ, որը քահանաներից մէկի չնորհիւ թողեց փախաւ:

Իսալու (35 տուն) զուտ հայաբնակ է. ունի եկեղեցի, դպրոցի չէնք չը կայ:

Ռանվա (110 տուն) գիւղում բնակւում են մի քանի տուն ասորիներ էլ: Գիւղի երկսեռ դպրոցը հովանաւորում է Հայուն. Ընկերութիւնը:

Իֆի-Աղաջ (40 տուն) կան ասորիներ էլ. կայ դպրոց, որ դարձեալ գտնւում է Հայունհայ Ընկ. հովանաւորութեան տակ:

Բարանդուզ չայի թրքախօս հայերի կենտրոնն է Բաբառու (50 տուն), որ գտնւում է Բարանդուզ գետի վրայ, Ուրմի քաղաքի հարաւային կողմը, 21 վերստ հեռաւորութեամբ: 98 թվականից Հայունհայ Ընկերութիւնը բաց է արել երկսեռ ուսումնարան, որ մինչև այսօր շարունակւում է. գիւղացի հայ մանուկները այժմ խօսում են մաքուր հայերէն: Դպրոցի չէնք չը կայ:

Դիգա-քափա (35 տուն): Այս գիւղումն էլ 98 թուականից յիշեալ ընկերութիւնը բաց է արել երկսեռ դպրոց, որ այժմ էլ շարունակւում է: Դպրոցի չէնք չը կայ:

Թումարաւ (30 տուն). այս գիւղում բնակւում են քիւրդեր էլ, այս տարուանից բացուեց արական սեռի մի ուսումնարան:

Մնացեալ հայերը, 5—35 տուն, ցրուած են ասորաբնակ և թուրքաբնակ գիւղերում, ուր նրանց զրութիւնը շատ անմիջ-թարական է: Ահա այդ գիւղերի, դպրոցների, եկեղեցիների, քահանաների, ուսուցիչների և աշակերտների աղիւսակը.

Գիւղերի անուններ.	Տուն.	Գոյլոց.	Ուտու- ցիչ.	Աշա- կերտ.	Եկեղե- ցի.	Փահա- նայ.
1. Ուրմի քաղաք .	50	1	1	45	1	1 ¹⁾
2. Գեարդարադ .	120	1	1	35	1	4
3. Ռահվա .	110	1	2 ²⁾	50	1	1
4. Նախջևան-Թափա .	75	1	—	—	1	4
5. Ջամալուա .	5	—	—	—	1	—
6. Կարա-Կըզ .	20	—	—	—	—	—
7. Իքի-Աղաֆ .	40	—	1	20	1	1
8. Ֆախկ-Բակլու .	20	—	—	—	—	—
9. Բատլոօ .	40	—	—	—	1	—
10. Ջէյնալու .	6	—	—	—	—	—
11. Գըզըլ-Աշուղ .	19	—	—	—	1	—
12. Խանբարախան .	20	—	—	—	1	—
13. Աղա .	8	—	—	—	1	—
14. Սիւփիւրղան .	12	—	—	—	1	—
15. Ղալաջալու .	22	—	—	—	1	—
16. Գարագեօզ .	8	—	—	—	—	—
17. Շիր-Աքադ .	20	—	—	—	1	—
18. Դիզալա .	25	—	—	—	1	—
19. Աղջա-Գալա .	10	—	—	—	1	—
20. Թաքալու .	12	—	—	—	—	—
21. Խանիշան .	2	—	—	—	—	—
22. Շմբլաբադ .	17	—	—	—	—	—
23. Սարաջուկ .	1	—	—	—	—	—
24. Չամաքի .	5	—	—	—	—	—
25. Չիչակլու .	14	—	—	—	—	—
26. Իսալու .	35	—	—	—	1	—
27. Չարբաշ .	24	—	—	—	—	—
Բարանդուզ-Չայ						
28. Բարառու .	50	—	2 ³⁾	50	1	—
29. Բալանիշ .	16	—	—	—	1	—
30. Դար-Բառու .	25	—	—	—	—	—
31. Դիզա-Թաքա .	32	—	2 ⁴⁾	35	1	—
32. Թումաթար .	30	—	1	10	1	1
33. Նորաշէն .	12	—	—	—	—	—
34. Սհաթլու .	8	—	—	—	—	—
35. Սարղարութ .	20	—	—	—	1	—
36. Սարալան .	5	—	—	—	—	—
37. Ֆիւքեսա .	5	—	—	—	—	—

Ընդհանուր գումարն է. 943 4 10 245 21 12

1) Ուրմի քաղաքում մշտական-ծխատէր քահանայ չը կայ:

2) Մէկը ուսուցչուհի:

3) Մէկը ուսուցչուհի:

4) Մէկը ուսուցչուհի:

Ներկայ յօդուածով մենք աշխատեցինք ընթերցող հասարակութեան ծանօթացնել Կապուտանի արեմտեան ասիերի՝ վրայ բնակուած հայերի ներկայ դրութեան հետ: Մենք լիայոյս ենք որ ընթերցողները մէջ կը գտնուեն այնպիսի մարդիկ, որոնք կ'աշխատեն թէ նիւթապէս և թէ բարոյապէս օգնութեան հասնել այս մի բուն մոռացուած հայերին: Ուրմին գործունէութեան ընդարձակ և ազատ ասպարէզ ունի, ով բարոյական գաղափարական գործ է վնասում, թող նա չտապէ: Հայ հարուստները թէ իրանք մեծ օգուտ կը ստանան և թէ մեծ բարիք արած կը լինեն, եթէ գնեն մի-երկու գիւղեր և նրանց մէջ բնակեցնեն այլազգիները մէջ ցրուած հայերին, իսկ եթէ ապագայում միջոց արուի գիւղացիներին յետ գնել՝ իրանց մշակած հողերը և սեփականատէր դառնալ՝ աւելի լաւ: Ահա մի ասպարէզ, ուր գործ չատ կայ, իսկ մշակներ սակաւ...

ՏԻԳՐԱՆ ՕՏԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ^{*)}

ՎԵՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՕԻ

II

—Թոյլ տուէ՛ք ներկայացնել ձեզ անառակ որդուն՝ Նախաճաշին մենք կ'ունենանք չաղապրած հորթ, որն, եթէ կամենում էք, կըլինի և հնդկահաւ գեանսանկով լցրած:

Այսպէս Մերանը իր հիւրերին յանձնարարեց Լիւսիէն Հաւանդին: Տիկին Մերանը ընդունեց երիտասարդին այնպէս, որպէս թէ նա բացակայ էր միայն մի քանի օր: Լիւսիէնը գտաւ որ նա մի քիչ պառաւել է, գիրացել, և առհասարակ կորցրել իր նախկին թարմութիւնը, բայց մնացել է, ինչպէս և էր, սիրալիր, փոքր ինչ անտարրեր, անվրդով: Աննին զարմանալի կերպով նմանում էր առաջուայ չքնաղ երեխային: Տարիները հպել էին նրան նոյն գրեթէ զգոյշ քնքշութեամբ, ինչպէս այդ բոսկիին նրա նուրբ մատերը ուղղում էին ծաղիկները ծաղկամանի մէջ, որ շարժել էր տեղից հայրը, նոյն օդային թեթևութեամբ, որ տեսնւում էր նրա քայլուածքի մէջ, երբ նա վերադառնում էր իր նախկին տեղը:

Լիւսիէն զմայլւում էր նրա մութ կապուտակ աչքերով, որոնք յիշեցնում էին իրանց խորհրդաւոր և մի քիչ թախծալից գեղեցկութեամբ, անտառային գեղեցիկ, թափանցիկ լճերը. զմայլում էր նրա մոխրագոյն, խոպոպ մազերով, նրա վայելչակազմութեամբ, չնորհալի տեսքով և գրեթէ մանկական մաքրութեամբ, որ նրան աւելի ջահէլ կերպարանք էր տալիս: Նա ցան-

*) ՑԽՍ Մուրճ № 1.

կանում էր խօսել մանկամարդ աղջկայ հետ, յիշեցնել իրանց նախկին բարեկամութիւնը. բայց օրիորդը կամ մոռացել էր բուրդովին, կամ ամաչկոտ էր, որովհետեւ նկատելի կերպով հեռանում էր նրանից: Ընդհակառակը, նրա կրտսեր քոյրը—Ժաննան, որին նա հազիւ էր յիշում, երբ նա 6 կամ 7 տարեկան էր, նստեց նրա կողքին սիրահարուած քաջուող աշակերտուհու նման: Սակայն նա զրեթէ ոչ մի ուշադրութիւն չը դարձրեց երիտասարդ աղջկայ ոչ պայծառ աչքերի և խարտեաչ մազերի, ոչ ևս թարմ երեսիկի վրայ:

Մի բարձրահասակ, ուղղաձիւ իրանով, սպիտակադէմ և բիտասարդ, որ ունէր արածայր մօրուք, մի տեսակ ցուրտ մետաղական նայուածք, համարձակ, ինքնավստահ քայլերով մօտեցաւ նրան և սեղմեց **ձեռքը**:

—Բարև, Լուսինն. Դու առաջին անգամ ես զաւաճանում Գարիգին:

Ձեռքի չափազանց խիստ սեղմումը և այս անցերեմօն դիմումը «դու»-ով, գիմնադիայի նախկին ընկերի կողմից, բաւական անհաճելի տպաւորութիւն գործեցին Լուսինի վրայ, բայց քաղաքավարութիւնից ստիպուած նա էլ պարտաւոր զգաց իրան յայտնել Ժակ Ալվարին փոքր ինչ ուրախութիւն այդ անակնկալ հանդիպման առիթով:

—Դու բնակութիւն հաստատեցիր Աննէսի—հարցրեց նա, յանդիմանելով ինքն իրան որ թուլութիւն ունեցաւ հակառակ իր ցանկութեան «դու»-ով խօսել:

Նրան միշտ վրդովեցնում էր պարտաւորիչ մտերմութիւնը, մի մտերմութիւն, որից յաճախ զրկում են իսկական բարեկամներին, և որը ստիպուած են լինում պահպանել հեռաւոր անյեալի մոռացուած ընկերներին հետ:

Նրա հարցին պատասխանեց Մերանը: Յոյց տալով Ժակին որ անսովոր գոռոզ գէմք էր ընդունել, նա ասաց.

—Սա ամենալաւ փաստաբանն է մեր զաւառում և մեր ապագայ պատգամաւորը:

—Այդ միանգամայն կախուած է ձեզանից, պարոն Մերան, —ասաց Ալվարը:—Ձէ որ դուք զլխաւոր ընտրողն էք մեր երկրում:

Միւս երկու հիւրերը, կոմս և կոմսուհի Ֆերրեզի, բոլորովին անյայտ էին Լուսինին:

—Ահա արդէն երկու տարի է, որ նրանք բնակուել են Տալուարում, երկու քայլ Մենտօնիցը հեռու, բացառեց նրան տիկին Մերանը, որին նա առաջնորդում էր դէպի սեղանը:—Մի գեղեցիկ զոյգ է, և որքան համերաշխ կոմսուհին տեղափոխ-

ուել է Սաւօյա ամուսնու պատճառով, որին Հռոմը յողնեցնում էր. կոմսը թոյլ առողջութիւն ունի: Իսկ կինը չափազանց շատ սիրունիկ է, այնպէս չէ:

Կոմսուհի Ֆերրեզիի ֆիզիկական գեղեցկութիւնը կատարելութեան էր հասած, մի գեղեցկութիւն, որ կազմում է վենետիկի հռչակաւոր գեղեցկուհիների առանձնայատկութիւնը: Նրա փայլուն, սև մազերը հիանալի կերպով ընդգծում էին ձիւնի նման սպիտակ և թափանցիկ մորթը:

— Լաւ ուտելը օգտակար է հոգու համար, — արտասանեց Մերանը կոմիկական հանդիսաւորութեամբ, բազմելով սեղանի առաջ:

Նա աշխատում էր զուարթացնել հաւաքուած հիւրերին, որովհետև սիրում էր տեսնել իր շուրջը գոհ և ուրախ դէմքեր:

— Սակայն ձեր խօսքի մէջ շատ քիչ հոգեկոտն բան կայ, — արհամարհանքով նկատեց գեղեցիկ կոմսուհին:

— Հոգեկանը հետևում է ուտելուն և երբէք նրանից առաջ չէ ընկնում. դեռ քանի որ մեր բնազդները բաւարարութիւն չեն ստացել, նրանք հարկադրում են որ երևակայութիւնն էլ գործի իրանց օգտին, բայց բաւարարութիւն տալուց յետոյ, մենք համարձակ և ազատ անցնում ենք վերայականի աշխարհը, Յոյները աւարտում էին իրանց խնձոյքները մետաֆիզիկական վիճաբանութիւններով, իսկ անապատականները շատ յաճախ իրանց ճրդնութիւնների երկար քննութիւններից յետոյ իրանց տանջում էին ուտելու կամ մի ուրիշ բանի ցանկութիւններով, իսկ այդ տանջանքներից նրանց կարող էր փրկել աւելի կանոնաւոր կեանքը:

Աննին՝ որ նստած էր ժակ Ալվարի կողքին, ուշադրութեամբ լսում էր նրա պատմութիւնները ընտրութիւնների մասին: Սա խօսում էր շատ բարձրաձայն, անշուշտ այն նպատակով, որ իրան կարողանան լսել բոլոր սեղանակիցները:

«Կարծեմ այստեղ բացի ուտել խմելու և քաղաքական խօսակցութիւններից ուրիշ ոչինչ չէ կարելի սպասել», — մաղձոտ կերպով մտածեց Լիւսիէնը, աչքի տակից նայելով այն ոգիորուած ակնարկներին, որ երիտասարդ աղջիկը ձգում էր իր դրացու վրայ:

Ֆերրեզին տեղեկացաւ ընտրութիւնների օրուայ մասին: Ալվարը պատասխանեց.

— «Le Temps» լրագրի երեկուայ համարում ընտրութիւնները նշանակուած էին 1893 թ. օգոստոսի 20-ին: Ուրեմն, ճիշտ երկու ամսից յետոյ:

Այդ ասելով նա շոյեց իր չէկ մօրուքը, մտածեց և իր ա-

առաջիկայ յաջողութեան մասին, որի վերաբերմամբ ոչ մի բոպէ չէր կասկածուում: Մերանը դիմեց Լիւսիէնին:

—Ձեր նախնիքը, պարոն Հալանդ, անկասկած, չէին ճանաչի այս երկիրը, որի ներկայացուցիչներն են եղել այնքան տարիներ, չընկալատուած ընդհանուր պատուով և յարգանքով: Այժմ երկիրը ընկել է գինեւիմառներին և ստոր լնտրիզանտերի ձեռքը, որոնք չողորթութում են ժողովրդին, որպէս զի նրան աւելի հեշտ խարեն:

—Դուք զրպարտում էք Սալոյի ընտրողներին,—տաարկեց Ալվարը:

—Երևում է, որ դուք թեկնածուներից մէկն էք,—ասաց Մերանը:—Մեր այժմեան պատգամաւորը—ոմն պ. Ֆրոսսար, նախկին արդիւնագործ, սրտով գլխով ապուշ է և մի ողորմելի սինքոր: Ամեն առաւօտ նա վճռում է Եւրոպայի դործերը արեսէնդ խմլիս: Նա—կատարեալ ապէտ է պատմութեան, ֆինանսների, քաղաքական տնտեսութեան մէջ,—մի խօսքով այն ամենի մէջ, ինչ որ կարելի է գիտենալ պատգամաւորին:

—Էհ, այդպիսիներից չատ կը գտնէք և պատգամաւորների ժողովում,—վստահացաւ նկատել Լուսիէնը:

—Առ նուազն հինգ հարիւր: Մեր Ֆրոսսարը գերազանցում է նրանց միմիայն իր աներեսութեամբ: Վերջին ընտրութիւնների ժամանակ, երբ նրա դէմ դուրս եկաւ բարձն Ռոչէն, նա հաւատացնում էր վախեցած ժողովրդին, որ իր հակառակորդը մտադիր է վերադարձնել նախկին կարգերը, և տասնորդը, և բէգարը, և ճորտութիւնը: Մի գեղեցիկ յանպատրաստից ճառի մէջ,—իսկ նա խօսում է միշտ յանպատրաստից,—նա հաստատում էր, որ Ռոչէն եթէ ընտրուի, կը հրամայի գիւղացիներին դուրս քշել գորտերին լճակներից, որպէս զի սըրանք չը խանգարեն նրա քունը: Ծերունիներից մէկը, որ երբեք չէր լսել Ռոչէնի հին տոհմի այդ տարօրինակութեան մասին, համարձակուեց հարցնել:

—Մի՞թէ դա ճիշտ է:

—Ի հարկէ ճիշտ է—հաստատեց արդէն տաքացած Ֆրոսսարը:—Այդ էր պակաս որ սուտ լինի: Չէ որ ապացոյցը այստեղ է:

Սկսեցին կարծիքներ յայտնել այն մասին, թէ արդեօք ժակ Ալվարը կ'ընտրուի՞ առաջիկայ ընտրութիւններին, թէ ոչ:

—Ճակատամարտը տաք կը լինի,—ասաց նա:—Պրեֆեկտը կամենում է Ֆրոսսարի ընտրութիւնը:

Մերանը խորամանկ ժպտաց:

—Ես գիտեմ թէ ինչու նա այդ կամենում է:

Եւ շարունակեց պատասխանելով Լիւսիէնի լռելոյն հարցին:

— Ես ձեզ իսկոյն ամեն բան կը բացատրեմ ծիւղու սենեակում: Իսկ հետաքրքրու՞մ էք դուք քաղաքականութեամբ, պ. Հալանդ:

— Ես երբէք չեմ մասնակցել ընտրութիւններին: Ես, Թաւէյրանի նման, առաւօտները մի կարծիքի եմ, ճաշից յետոյ մի կարծիքի, իսկ երեկոյեան ոչ մի կարծիք չունեմ:

— Ձեր խօսքերը, պ. Հալանդ, անպակաս հարուած կը լինէին ձեր հօր համար, եթէ նա կարողանար լսել: Դուք նրա ամենաջերմ համալսողներին ընդդէմ էք դնում: Նա իրան համարում էր այս երկրի բնական ներկայացուցիչը. նա ասում էր որ այդ պարտադիր էր անում նրա համար հարստութիւնը և ընտանիքի հասարակական դիրքը: Ժողովուրդը կործանում է, որովհետև այժմ նա չունի բնական ներկայացուցիչներ, այնպիսիների նման, որոնք միշտ պաշտպանում էին և շարունակում են պաշտպանել հասարակական շահերը Անգլիայում: Այդ ապացուցել է իմ դրացի Տէնը:

— Տէնը ձեր զրացլին է, — հարցրեց Լիւսիէնը:

— Նա ամառը ապրում է Մենտօնում, — պատասխանեց տիկին Մերանը:

— Նրա գէմքից դժուար է ըմբռնել, որ նա մեծ մարդ է, — աւելացրեց կոմսուհի Ֆերրեզին:

Վախտ, փոքրիկ և կուսցած կոմսը, որ ամբողջ ժամանակ կորացած էր իր ափսէի վրայ, յանկարծ ձգուեց և դարձնելով իր գունատ և մեծ ընչաքաւոր գէմքը կնոջ և Ժակ Ալվարի կողմը, նայեց նրանց մի անծածկելի հեզնութեամբ:

— Ձե՞ որ դուք, Լիօնորա, սիրում էք միմիայն տէնօրներին ու սօրէյադօրներին, — արհամարհանքով արտասանեց նա:

— Տէնը քաղապետական խորհրդական էր Մենտօնում, — շարունակեց Մերանը, — քայց նրան վերադասեցին մի լաստսպանի, որ ծառայում էր նաւահանգստում, կամուրջի վրայ:

Ալվարը սկսեց պաշտպանել ժողովրդական իրաւունքները: Նա ապացուցանում էր որ ինքն իր կամքին թողուած ժողովուրդը, բնազդաբար կ'ընտրէ ուժեղ և եռանդուն ներկայացուցիչներ. որեւէ ճնշում բարձրից, անկասկած, աննպաստ հետեանք կ'ունենայ ընտրողական սկզբունքի համար:

Կոմսուհի Ֆերրեզին նրա կողմն էր, իսկ ջահէլ աղջիկները թէև ոչինչ չէին խօսում, բայց յայտնապէս Ալվարի կողմն էին: Կրքոտ և հնչիւն ձայնը աւելի ևս պայծառութիւն էր տալիս նրա զուտ արտաքին ճարտարախօսութեան: Կոմս Ֆերրեզին ծայրա-

յեղ կարծիքների էր հետևում—նրան գրաւում էր սօցիալիզմը և նա հակուած էր դէպի անիշխանութիւնը: Առողջութեամբ թոյլ և շարունակ ֆիզիկական ցաւերից տանջուելով, նա աշխատում էր խլացնել այդ տանջանքները, անձնատուր լինելով մտաւոր շահերի:

—Քաղաքագէտները ոչինչ չեն հասկանում մտքի էվոլյուցիայից: Յեղափոխութիւնը անխուսափելի է և կը կատարուի առանց նրանց: Սօցիալիզմ և անիշխանութիւն—ահա երկու հղօր լծակներ ժամանակակից բարրարոսութեան դէմ: Բարբարոսութիւն—ահա իսկական խօսքը ժամանակակից վիճակը որոշելու համար: Ամեն տեղ մենք տեսնում ենք անարդարութիւն և ամբողջ ոյժը այժմ փողի մէջն է: Փողը—մեր Աստուածն է, որին արթուն կերպով պահպանում են գոյութիւն ունեցող օրէնքները:

Ալլարը խօսակցում էր մի ինչ որ բանի մասին կիսաձայն իր դրացուհու՝ Աննի Մերանի հետ: Կոմսուհի Ֆերրեզին ուշադիր հետևում էր նրանց և Լիւսիէնը կարդաց խորին տանջանք նրա աչքերի մէջ: Նրանց արտայայտութիւնը յաճախ փոփոխւում էր, կամ նրանց մէջ վառւում էր մոլի կրակ կամ նրանք դառնում էին քնքոյշ և հլու:

Ճաշը վերջացաւ: Մերանը հրաւիրեց տղամարդկերանց ծխելու սենեակը: Առաջարկելով հիւրերին սիգար, նա կանգնեց Լիւսիէնի մօտ:

Ես խոստացել էի ձեզ ինչ որ բան պատմել: Սա—իսկական անեկզօտ է այս վերնագրով. «Ահա ինչպէս են կտրում կապերը»: Նրա մէջ դուք կը գտնէք այն հանելուկի պատասխանը՝ թէ ինչու հէնց Ֆրօսսարին ընտրեցին: Մեր արհամարհական վերաբերմունքից դուք, ի հարկէ, արդէն վաղուց հասկացաք, որ նա ոչ մի արժանիք չունէր ընտրուելու համար: Ամբողջ գործը այն է, որ կայ մի ոմն տիկին Ֆրօսսար, նախկին գեղեցկուհի, որի մասին ասում են, իբր թէ պրեֆէկտը օգտուելիս է եղել նրա բարեհաճութիւնից: 1889 թ. մեր պրեֆէկտը սկսեց աշխատել ուրիշ տեղ պաշտօն ստանալ,—երևի նա ձանձրացել էր այդ կապից,—բայց նոր պաշտօնը գլուխ չեկաւ: Այն ժամանակ պրեֆէկտը աշխատեց համոզել Ֆրօսսարին, որ նրա յատուկ պերճախօսութիւնը պարտաւորեցնում է նրան պատգամաւորի աթոռ ձեռք բերել: Նա ամեն բան արտ, որպէս զի Ֆրօսսարն ընտրուի և զրանով միանգամից վերադարձրեց իր ազատութիւնը:

—Բայց ձեր պրեֆէկտը կատարեալ իմաստուն է,—նկու-

տեց Լիւսիէնը.—նա չը վախեցաւ ամբողջ մի նահանգ աշխատեցնել տալ իր կեանքի անդորրութեան համար:

Ամենից շատ զարմացած էր իր ընտրութեամբ ինքը՝ Ֆրօսսարը, ասաց ժակը:

—Դատարկ բան էր—առարկեց Մերանը.—նա այդ գտաւ միանգամայն բնական: Ես նրան տեսայ ընտրութիւնից յետոյ, երեկոյեան: Տաքացած ընտրողները, հպարտացած իրանց յաջողութեամբ, որի մէջ նրանք տեսնում էին համարեա թէ ամբողջ երկրի փրկութիւնը, բաշեցին Ֆրօսսարին սեղանի վրայ: Ես շատ լաւ յիշում եմ մեր հաստ և կարմիր սլափամաւորի զարհուրած կերպարանքը: Աշխարհում ոչ մի բան նրա համար այնքան թանկագին չէ, ինչպէս իր սեփական անդորրութիւնը: Նա ամեն կերպ աշխատում էր լինել իր կոչման բարձրութեան վրայ, բայց նրան խլացնում էին ոգևորութեան բուռն արտայայտութիւնները և սաստիկ վախեցնում էր երերուն սեղանը: Գտնուեցան յիմար կանայք, որոնք մեկնում էին նրան իրանց փոքր երեխաներին և նա չը գիտէր թէ ինչ անէր նրանց: Հաւատացնում եմ ձեզ, նա յուզուած էր միմիայն այդ հանդիսաւորութիւնից, բայց ոչ ընտրութեան իրողութիւնից:

—Ընտրողները այնուամենայնիւ նրա կողմը կը լինեն,— արտասանեց Ալվարը, որ ընդունակ չէր մտածել ուրիշ բանի մասին, բացի իր թեկնածութիւնից:

—Իրանց ազատութիւնը ոռճկով ծախող պաշտօնեաները պէտք է գրկուած լինեն ձայնի իրաւունքից,— ասաց Լուսիէնը. նրանք կարող են միայն ներկայ լինել ազգային կամքի արտայայտութեան ժամանակ, լուռ և անկարեկից, իբրև ներքինիներ սուլթանի ներկայութեամբ:

Ժակը այդ միջոցին հարցնում էր Մերանից մի քանի մանրամասնութիւններ հիւսիսային Աննէսի զաւառի մասին, որ սա գլխաւոր խորհրդական էր: Կոմս Ֆերրեզին նորից սկսեց քարոզել անիշխանութիւն և սօցիալիզմ, իսկ Լիւսիէնը փորձեց ապացուցանել նրան, որ այդ երկու վարդապետութիւնները տրամագծօրէն հակառակ են, բայց երկուսն էլ հաւասարապէս խախտւոյ են, չունենալով հաստատ հիմք. մինը քննում է մարդին շատ վերացականապէս, միւսը բոլորովին նկատողութեան չէ տալով այն հասարակութիւնը, որի մէջ նա ապրում է:

Խօսակցութեան մէջ խառնուեց և ժակը:

—Նապօլէօնը իրաւունք ունէր ծաղրել վերացական մտքերով գրաւուող մարդկանց: Ամեն մի սովոր և ուժեղ կամք իսկոյն կ'ոչնչացնէր տեսականներին, որոնք ստեղծում են բոլոր

անկարգութիւնները, իսկ ժողովուրդը փորձով տեսնելով ապստամբութեան ապարդիւն լինելը, շուտով կը հաշտուէր գոյութիւն ունեցող կարգի հետ:

—Գրադ եմ բռնոււմ, որ դուք բոլորովին այլ կերպ կը խօսէք հէնց առաջին ժողովում,—նկատեց Մերանը:

—Շատ կարելի է,—համաձայնուեց ծիծաղելով երիտասարդը:

—Երկուսի մէջ էլ ճշմարտութիւն կայ,—շարունակեց Մերանը:—Սօցիալիզմի ազդեցութեան տակ մենք կարող ենք աւելի արդարադատութիւն մտցնել մեր հասարակական յարաբերութիւններին մէջ, իսկ անարխիզմը այն կ'անի որ անհատը այլ ևս զոհ չի բերուիլ պետութեան:

Այդ բոլէին դուռը բացուեց և շէմքի վրայ երեսցին կոմսուհի Ֆերրեզին և Աննի Մերան: Կոմսուհին քնքշաբար գրկել էր մանկամարդ աղջկայ իրանը:

—Դէն ձգեցէք ձեր բոլոր թէօրիւնները, նրանք ոչ մի բանի չեն հասցնի,—ժպտալով արտասանեց նա.—մեզ ուղարկել է ձեր հոտից տիկին Մերանը: Դուք այնքան երկար ժամանակ մեզ թողեցիք, որ առանց ձեզ տխուր է անցնում մեզ համար:

Ժակ Ալվարը յանդուգն նայուածքով չափեց երկու կանանց և այդ բոլէին նա սուսնաձայն անհամակրելի երևաց Լիւսիէին:

Աննին քնքշաբար և սնվստա՜ նայում էր ապագայ պատգամաւորին, որ կիրթ սճով արտասանում էր մի ինչ որ ծամծամած խօսքեր:

Մերանը և Լիւսիէն Հալանդ ամենքից յետոյ դուրս եկան սենեակից:

—Դուք լաւ ճանաչում էք Ալվարին,—հարցրեց Մերանը:

—Մենք միասին սովորել ենք: Յետոյ ես նրան պատահեցի համալսարանում: Նա միշտ ինքնավստա՜ և փառասէր էր: Ես նրան չէի սիրում: Այդ օրից նա, ինչպէս երևում է, ամենին չէ փոխուել:

—Ո՛հ, նա ձեռք կը բերի յաջողութիւն, թէև նա այստեղ եկուոր է: Դուք երևի գիտէք, որ նրա հայրը պարիզիւմն մի բանկիր, միքսնի կալուածներ ձեռք բերեց Սալօյում, որ մնացել էին բանկի վրայ պարտքի տեղ, բայց վերջը սնանկացաւ և ստիպուեց ծախել նրանց: Նրա որդին ոչ մի կապ չունենալով այս դաւաճում, կարողացաւ այնուամենայնիւ ժողովրդասէնութիւն ձեռք բերել: Ես նրան պաշտպանում եմ, որովհետև փրօսարը կատարեւրապէս ծիծաղելի է, բայց սնկեղծօրէն ասած, մի քիչ վախում եմ նրա փառասիրութիւնից և անսկզբունք լինելուց:

—Իսկ ես կարծում էի որ նա հարուստ է,—ասաց Լիւսիէնը, — Ուրեմն նրա հայրը անանկացաւ մահից առաջ:

—Այդ անանկութիւնը յարաբերական էր, — ուրիշները նրանից աւելի վնաս կրեցին: Ալվարը համաձայնութիւն կայացրեց իր պարտատէրներին հետ և կարողացաւ մի բան ազատել: Հօրը անուանում էին գաւառում քանդող, բայց որդին վերականգնեց ընտանեկան պատիւը: Նա մեղանում մի փայլուն փաստաբան է:

—Իսկ եթէ նրան ընտրեն, պարլամէնտական ո՞ր կուսակցութեան պէտք է պատկանի:

—Ես կարծում եմ, որ ինքն էլ դեռ չը դիտէ այդ: Նա կը վճռի յարմարուելով հանգամանքներին: Այո, պարոն Հալանդ, յեղափոխութիւնը պատրաստեցին արիստոկրատները, որոնք ձգեցին իրանց կալուածները և տեղափոխուեցին Պարիզ: Նրանք գործունէութեան լայն ասպարէզ բացին չնչին և ազահ մարդկանց համար:

Լիւսիէնը չը կարողացաւ ոչինչ պատասխանել դրան, որովհետև այդ բոլէին Մերանը բացեց հիւրասենեակի դուռը:

Երբ մի քիչ յետոյ նա պատրաստուում էր մեկնել տուն, ժակը դուրս եկաւ նրա հետ և ցանկութիւն յայտնեց ուղեկցել նրան:

—Ես նկատում եմ, որ դու գրաւում ես քաղաքականութեամբ,—դիմեց Լիւսիէնը իր ուղեկցին, բոլորովին վստահ, որ նրան կը հետաքրքրի այսպիսի խօսակցութեամբ:

—Այո, նա ինձ մի անսովոր հաճոյք է պատճառում: Պատմութիւնը ինձ համար անցեալի քաղաքականութիւնն է, և ես համարում եմ քաղաքականութիւնը կենդանի մարդկանց պատմութիւն: Կենդանի էակը գրաւում է ինձ աւելի քան արձանը հէնց նրա համար, որ նրա մէջ զգացւում է կեանք: Մասնակցել մի ամբողջ ազգի ճակատագրին, տեսնել, թէ ինչպէս քո գործունէութիւնը անդրադառնում է ամբողջ ազգի վրայ—ահա ինչի մէջն է կեանքի նպատակը և միևնոյն ժամանակ բարձր հաճոյք հասարակական գործչի համար: Հաւատաշնում եմ քեզ, որ այդ հաճոյքը նոյն իսկ սիրոյ հաճոյքից գերազանց է:

Եւ Լիւսիէնը հասկացաւ, որ Ալվարի համար հասարակական գործունէութիւնը միայն միջոց է ուժեղացնելու կենսական սպաւորութիւնը:

—Բայց մեծ մասամբ մարդկանց խաղաղած դերը հասարակական յեղափոխութիւնների մէջ այնքան չնչին է,—արտասանեց նա:

—Ես գիտեմ միայն մի բան, իմ այժմեան կեանքս ինձ չէ

դոհայնում, — շարունակեց ժակը բռնն շեշտով, — և ես կը ստիպեմ գիւղացիներին, որոնց մէջ հաղիւ զարթնում է զիտակցութիւնը, աշխատել ինձ համար և իմ ապագայ ասպարիզի հիմքը դնել: Չորս տարի ես անցկացրի այս խուլ անկիւնում, երկար և յամառ աշխատեցի նրա բարեկարգութեան համար, բայց չեմ կամենում ընդ միշտ նրա ստրուկը մնալ: Ես զգում եմ ոյժ: Ինձ հարկաւոր է մի պատգամաւորական ամբիօն, ինձ գրաւում է Պարիզի կոիւը, փայլը և հոյակապութիւնը: Ես ծարաւ եմ իշխանութեան, ինչպէս ուրիշները ծարաւ են սիրոյ:

Նրա խօսքերի մէջ լսում էր գոռոզութիւն և բաւարարութիւն չը ստացած մարդու մոլեգնութիւն: Լուսիէնը զարմացած նայում էր նրան, ապշած այս անակնկալ խոստովանութիւններէ: Ժակ Ալվար հասկացաւ նրա նայուածքը:

— Այստեղ ես ոչ ոքի չեմ վստահանում և չոյում եմ ամբողջը, բայց երբեմն ես զգում եմ պահանջ ասել մէկին, թէ որ աստիճան ինձ զգուցեցիլ է այս գաւառական միջավայրը: Դու այստեղացի չես, եկել ես միայն ժամանակով և կարող ես ինձ հասկանալ:

Նա ըստ երևոյթին, հարկաւոր չէր համարում ծածկել իր մտքերը իր նախկին ընկերից, ուստի և շարունակեց.

— Այստեղ նայում են պատգամաւորին իբրև հրամաններ կատարող ծառայի և ամեն տեսակ տեղեր մատակարարողի վերայ: Իսկ ես, հէնց որ ինձ ընտրեցին, կ'աշխատեմ, որքան կարելի է, չուտ մոռանալ բոլոր իմ ընտրողներին: Ես կամենում եմ լինել պատգամաւոր ինձ համար և ոչ նրանց համար, իսկ չորս տարուց յետոյ այնպիսի դիրք ձեռք կը բերեմ, որ ինձ կրկին կ'ընտրեն, եթէ ոչ սիրելով, գոնէ երկիւղից ստիպուած:

— Լաւ, իսկ ինչ կ'ստես քո քաղաքական ծրագրի մասին: Նրա նկատմամբ ես դեռ ոչ մի բառ չը լսեցի: Հօ չես մտածում առանց նրան եօլա-գնալ, հարցրեց հեգնութեան շեշտով Լիւսիէնը:

— Իմ քաղաքական ծրագիրը կը դոհայնի ամենքին և մի և նոյն ժամանակ շատ էլ չի ճնշի ինձ:

— Բայց ինչ ուղղութեան պէտք է հետեւես:

— Այն, որը կ'ապահովացնի ինձ յաջողութիւնը:

— Ինչպէս աւանդում եմ, դու շատ էլ վտանգաւոր մրցանակիցներից չես:

— Ես քո կարծածից աւելի վտանգաւոր եմ: Յրօստարը ոչ ոքի համար արգելք չէ, իսկ նրա բնածին կոպտութիւնը նոյն իսկ դուր է գալիս ընտրողներին. ինձ նրանք համարում են չափազանց երիտասարդ: Մեզ մօտ գիւղացիները սիրում են պատկառելի դէմք և մեծ մօրուք, — ահա ինչի համար ես մօրուք

եմ թողել, իսկ պահպանողական կուսակցութիւնը չունի թեկնածու և բաւական անվճռական է: Մերանը զեկավարում է այդ կուսակցութիւնը առանց որ և է աշխատութեան: Իսկապէս նրանից էլ կախուած է ամեն բան:

Եւ ըստական լուծութիւնից յետոյ նա նորից սկսեց գրեթէ չը փոխելով չեշտը.

— Կոմսուհի Ֆերրեզին շատ սիրուն կին է: Դու միայն ուշադրութիւն դարձրու նրա քայլուածքի, նրա բոլոր շարժումների, նրա ազդերի կլորութեան վրայ: Նրա մէջ կայ ինչ որ մի գրգռիչ գեղեցկութիւն: Երիտասարդութեան թարմութիւնը միացած է նրա մէջ մի փոքր գիրութեան հետ: Նրան դուր է գալիս, երբ նրա շուրջը պատում են. իսկ դու, ի դէպ, արդէն հմայել ես նրա ամուսնուն, սկսելով քննել նրա վայրենի թէօրիաները:

— Ես երբէք չեմ էլ մտածում դուր գալ կոմսուհի Ֆերրեզիին:

— Ի դուր, ի դուր: Դու այստեղ չես գտնի մի սիրուհի, որ քեզ պատիւ բերէր և այնքան հաճոյք պատճառէր, ինչպէս նա և եթէ ես միտք չունենայի ամուսնանալու:

— Դու ամուսնանում ես...

— Այո: Վաղը ես պատրաստում եմ խնդրել Մերանից նրա դուստր Աննիի ձեռքը: Ես արդէն ձեռք եմ բերել տիկին Մերանի աշակցութիւնը:

— Այ քեզ բան, — արտասանեց Լիւսիէնը պարզամտութեամբ:

Ժակը սկսեց մի առ մի թուել այդ ամուսնութեան բոլոր օգուտները իր համար:

— Աղջիկը սիրուն է: Մերանը շատ հարուստ է: Բացի դրանից, այդ կ'ապահովեցնի իմ ընտրութիւնը:

— Շնորհաւորում եմ, — արտասանեց վերջապէս Լիւսիէնը:

— Ճշմարիտ, այդ հիանալի կերպով է սարքում քո բաները:

— Հա, ճիշտ չէ, — ասաց Ժակը, չը նկատելով հեգնութիւնը և կ'ասես թէ կրկնելով մի ամենահասարակ ճշմարտութիւն՝ աւելացրեց.

— Ազատական զբաղմունքները այլ ես ոչ մի օգուտ չեն բերում: Միայն ամուսնութեամբ կարելի է միանգամից մեծ կարողութիւն ձեռք բերել:

Նրանք պտոյտ տուին Աւիլիի շինութեան շուրջը, մօտեցան անտառի այն կողմին, որ նայում էր դէպի գետակը: Այստեղ նրանք սեղմեցին միմեանց ձեռքը և բաժանուելին, խոստանալով նորից տեսնուել:

Տուն գնալուց առաջ Լիւսիէնը կանգ առաւ կաղնիների հղենիների մէջ, որոնք այնպէս ծանօթ էին նրան մանկութիւնից: Այդ բոլակէին նա չէր զմայլուած այդ ծառերի գեղեցկութեամբ, այլ ամբողջովին անձնատուր էր եղել ամենատխուր մտքերի:

«Երկու օր առաջ ինձ հիացնում և յուզում էին այս հայրենի վայրերը, մտածում էր նա—Ես այստեղ անելու բուն շունեմ... բայց քիչ մնաց, որ վճռում էի աստեղ մնալ: Ես—օտար եմ, ժամանակաւորապէս եկած այստեղ, ինչպէս ինձ յայտնեց ժակը. և սակայն ես պատկանում եմ մի բնտանիքի, որ այս երկրի բարերարն է եղել, իսկ նա—մի կտակածելի բանկիրի որդի է, անյայտ ծագումով, օգուտ է քաղում ժողովրդի գերահաւատութիւնից, իր սեփական ետաքրութիւնը և անափառութիւնը գոհացնելու համար: Հէնց էգուց կը հաղորդեմ Մերանին, որ ես միտքս փոխեցի»:

Բայց երբ նա մտաւ հիւրասենեակը, ակամայ զմայլուեց երեկոյեան շողով լուսաւորուած զաւտերի և լճի գեղեցկութեամբ. հին դղեակի քաղցրութիւնը միանգամայն յափշտակել էր նրան:

«Հաստիկ նօտարը ասաց ինձ, որ Մերանը իմ հողը նշանակել է օժիտ իր աղջկայ համար,—յիշեց նա—Այդ դէպքում ժակը ամուսնանալով նրա հետ, կը բռնի այստեղ իմ տեղը, կը բնակուի այս սենեակում և կը զմայլուի այս տեսարանով: Աննին կը բռնի մօրս սենեակը»:

Թէև վերջին մտապատկերի մէջ մի անհաճոյ բան չը կար, սակայն նա զգաց սաստիկ ներքին դրդումներ:

«Բութութեային պատկանող այս սուսուփուս համեստ աղջկերբը, որ ծածուկ նայում են տղամարդկանց և սխրահարւում են, իտալացի կոմսի ասելով—տէնօրի կամ տրօյադօրի վրայ, նենգամիտ են իբրև ծով: Ժակը գրաւել է Աննիին իր արտաքինով և իր հոգեւորական կլորիկ ֆրազներով, որոնք թաւալում են իբրև գնդակներ, թեք հարթութեան վրայ»:

Նա վեր առաւ բուխարու վրայից Աննիի մանկական լուսանկարը և մօտեցրեց լոյսին, որպէս զի կարողանայ լաւ տնտղել: Աղջկայ հեղ աչքերը և միամիտ դէմքը ակամայ յուզեց նրան: Նրա դէմքի մէջ կար մի ինչ որ անօգնականութիւն և խորհրդականութիւն, այնպէս որ կարծես նա կամենում էր ասել. «սիրեցէք ինձ»: Եւ նա յիշեց իրանց նախկին բարեկամութիւնը և այն վստահութիւնը, որով Աննին վերաբերւում էր իրան իբրև աւելի համարձակի, երբ միասին վազում էին անտառներում, որ երբեմն վրայ էր հասնում երեկոյեան ժամանակը:

Աննին մոռացել էր և նրան և բոլոր այդ իրանց ընդհանուր անցեալը: Բաւական էր, որ երեսար ժակը, որպէս զի խաւարեն և անհետանան բոլոր այդ մանկական յիշողութիւնները:

Դեռ երկար նա նստած էր, մտածմունքի մէջ ընկղմուած դանդաղ մարող օրուայ պայծառ վերջալոյսը դիտելով:

«Ժակը Աննիին չի հասկանայ: Նա նրան չէ սիրում: Աննին դժբախտ կը լինի: Բայց ես ընկնում եմ յիմար զգայականութեան մէջ,—կանգնեցրեց ինքն իրան, արդէն հեռանալով լուսամուտից:—Ինչու իսկապէս ես պէտք է անհանդիստ լինեմ՝ այն մասին, թէ Ֆրանսիայի այս անկիւնի ներկայացուցիչները զանազան Ֆրոսսարները և Ալվարներն են, և ինչու ես խղճահարւում եմ մտածելով մի ջահէլ աղջկայ ճակատադրի մասին, մի աղջկայ, դէպի որ ես բոլորովին անտարբեր եմ: Հօ ինձ վրայ չէ ընկած այս երկրի հոգսը, հօ իմ մտքով ամենին չէ անցել խնդրել Աննիի ձեռքը»:

Եւ սակայն, չը նայելով այս դատողութիւններին, նա զգում էր թախիծ և անհանգստութիւն:

III

Առաւօտեան շուտ ժակ Ալվարը զարթնեց և իսկոյն նստեց աշխատելու: Նա սկսեց պատրաստել այն զեկուցումը, որ պէտք է կարդար երկրորդ օրը և դրա համար հարկաւոր նիւթերը ուղչեց: Նա աշխատում էր արագ, ամբողջովին նուիրուելով իր զբաղմունքին և չը մտածելով ոչ մի կողմնակի բանի մասին:

Ժամը իննին նա արդէն հագնուած էր, այս անգամ շատ խնամքով և գնաց նաւակով Մենտոն: Այդ առաւօտեան նա զգում էր անսովոր, կենսունակ ուրախութիւն:

«Եւ այսպէս, ուրեմն, այսօր առաւօտեան ես խնդրում եմ Աննի Մերանի ձեռքը, մտածեց նա: Ես արդէն իմաց եմ տուել հօրը, որ ինձ հարկաւոր է նրա հետ խօսել, բայց նա, ի հարկէ, մտածում է, որ մենք պէտք է խօսենք իմ թեկնածութեան մասին: Երեկոյեան ժամ 8-ին ինձ մօտ կը հաւաքուեն ընտրողական մասնաժողովի անդամները: Սիրում եմ, երբ ամբողջ օրը զբաղուած եմ լինում»:

Սակայն, նրա կեանքի այդ երկու վճռողական դէպքերը ամենին արգելք չէին հանդիսացել նրա առաւօտեան աշխատութեան:

Մերանը արդէն սպասում էր նրան և իսկոյն սկսեց խօսել նրա հետ քաղաքականութեան մասին:

—Ես կարդացի ձեր ծրագիրը, որ դուք հրատարակելուց

առաջ տուել էիք ինձ, բայց դեռ չեմ կարող վճռականապէս խոստանալ ձեզ աջակցութիւն: Պահպանողական կուսակցութիւնը ձանձրացել է այն դաշնակիցներից, որոնք նրան որ և է օգուտ չեն բերում, այլ միայն վայր են ձգում նրա վարկը: Դուք, օրինակ, ոչինչ չէք խօսում դպրոցների մասին և, սակայն, կրթական հարցը—ամենակարևորներից միէն է և սերտ կերպով կապուած է համայնքի աղատութեան հարցի հետ: Եւ վերջապէս, ես ուղղակի դգում եմ ծերութեան մօտենալը և հանգստութեան անհրաժեշտութիւնը:

«Այդպիսի սկիզբն ոչ մի լաւ բան չէ գուշակում»,—մտածեց Ալվարը:

Բայց նա ծնուած էր կռուի համար և նա ցանկանում էր ձեռք բերել յաղթութիւն: Նա սկսեց տաք-տաք ապացուցանել որ անհրաժեշտ է կենտրոնացել չափաւոր կուսակցութեան բոլոր ոյժերը պաշտօնական կանգիտատի, Ֆրոսսարի դէմ, որ վըտանգաւոր էր հէնց իր ոչնչութեամբ և իր աղանդաւորական ու կղերական կրքերով: Եւ Մերանի վրայ, ի զարմանս իր, այս անգամ նա ազդեց իր ճարտարախօսութեամբ, որի ամբողջ մակերևոյթականութիւնը ինքը չատ լաւ գիտէր. նա աւելի կսկուղ և զիջող դարձաւ: Ժակը այդ նկատեց և որպէս զի ծերունուն բոլորովին լաւ տրամադրութիւն ներշնչի, բաւական ճարպիկ կերպով հայթայթեց նրան առիթ, պատմել իր սիրելի անեկոտններից միւնը, նոյն չարաբաստիկ Ֆրոսսարի առիթով:

—Բայց այսօր ամենեւին ես չեմ եկել ձեզ մօտ, որ խօսենք քաղաքականութեան մասին,—սկսեց Ժակը լուրջ և նոյն իսկ մի քիչ թախծալից դէմքով, երբ վերջապէս հողը բաւականին պատրաստուած էր:—Ներկայ բոպէում, հաւատացնում եմ ձեզ, ընտրութիւնները ինձ համար երկրորդական տեղ են բռնում,—աւելացրեց նա, իր ձայնին քնքոյշ արտայայտութիւն տալով:—Խնդիրը իմ ամբողջ կեանքի երջանկութեան մասին է և այդ երջանկութիւնը—ձեր ձեռքումն է:

Մերանը հասկացաւ Ժակին, բայց այդ նրան ամենափոքր ուրախութիւն չը հայթայթեց: Ալվարը այդ նկատեց:

«Ի հարկէ, աւելի լաւ կը լինէր իրան, Աննիի հետ խօսել, —մտածեց նա:—Աղջկայ ուշը, խելքը իմ վրայ է, բայց անհնարին է նրա հետ առանձին խօսելու առիթը գտնելը:

Եւ սկսեց խօսել իր վաղուցուայ սիրոյ մասին դէպի Աննին: Գովեց նրա թանկագին յատկութիւնները, թէ ինչպիսի լաւ տնտեսուհի և տանտիկին կը լինի: Սաստիկ զգոյշ և ճարպիկ կերպով նա շօշափեց իրանց նիւթական վիճակի անհաւասարութեան հարցը: Բայց միևնոյն ժամանակ, առանց կեղծ գո-

ռողութեան. նա յիշեցրեց իր ապագայ ասպարիզի մասին: Նա կախարհիչ էր, խիստ մեղմ և վերին աստիճանի համոզիչ:

Մերանը պատասխանեց խոստափողական կերպով: Նա այնպէս ցոյց տուեց, որ շատ շոյուած է, խոստացաւ մտածել, խօսել կնոջ և աղջկայ հետ: Աղջիկը, նրա խօսքերով, այնպիսի քնքոյշ և դերաբեկ կազմուածք ունէր, որ նրան հարկաւոր է դեռ մի քանի ժամանակ շարունակել իր սովորական, հանդարտ կեանքի եղանակը: Շտապելու հարկ չը կայ, մանաւանդ որ ընտրողական տապը, ըստ երևոյթին, պէտք է մի որոշ ժամանակամիջոց պարապեցնի ժակի օրերը: Բայց երիտասարդը ուժգնապէս հերքեց բոլոր նրա առարկութիւնները, և աշխատելով դիմակաւորել իր անխախտ վճռականութիւնը՝ յաջողութիւն ձեռք բերելու, սկսեց զթաշարժ ձայնով խօսել այն մասին, թէ ինչպէս կեանքը կախուած է այդ սիրուց:

— Ինչու հէնց այսօր չը խօսել ձեր կնոջ ու աղջկայ հետ, — պնդում էր նա: Եթէ դուք, ճշմարիտ, հաւանում եք դիտաւորութիւնս, ձեզանից աւելի էլ ո՞վ կարող է նպաստել նրա իրագործման: Ինձ ծանր է հեռանալ Մենտօնից, տանելով հոգւոյս մէջ նոյն կսկծալի յուղմունքը, որով ես այստեղ եկայ:

Մերան դիտում էր նրան և մտածում.

«Դու կամենում ես ամուսնանալ աղջկանս հետ փողի և քո ասպարիզի համար: Իմ Աննին քո կինը չի լինի: Բայց, սակայն, քեզանից ազատուելը շատ դժուար է լինելու»:

Ժակը տակտ ունեցաւ չը պնդելու անմիջական պատասխան ստանալու վրայ: Նա ինքն առաջարկեց գնալ Լիւսիէն Հալանդի մօտ և այնտեղ «սպասել իր բախտի վճռին»: Մերանին թուաց, որ նա կարող է օգտուել այդ կէսօրեայ ժամանակամիջոցից և նա համաձայնուեց:

Ժակը մեկնեց, իսկ Մերանը գնաց պարտէզ. նրա կինը պարտիզային մկրատները ձեռքին, խնամքով կտրտում էր վարդի թփերից թառամած վարդերը: Երբ ամուսինը հաղորդեց նրան Ալվարի նշանախօսութեան մասին, նա բաւականացաւ այս խօսքերն ասելով. — «ահա այսպէս լաւ է», և այդ ասելով, կտրեց վարդի թփից մի ճիւղ: Մերանը չը դիտէր լաւ, այդ խօսքերը վերաբերում էին ժակի առաջարկութեան, թէ ծաղիկներին և բայականչեց մի փոքր գրգռուած.

— Ախ, թող քո մկրատը: Այստեղ խօսքը մեր աղջկայ երջանկութեան մասին է:

Տիկին Մերանը շատ զարմացաւ տեսնելով իր ամուսնու խաղաղասէր և հեղ բնաւորութեան այնքան անյատուկ այդ տաքութիւնը: Երջանիկ իր կեանքի մէջ, լաւատես իր դատողու-

թիւնների մէջ, նա չունէր կարեորը ջնշինից զանադանելու ընդունակութիւն, նա չունէր հեռատեսութիւն, ուստի և այժմ ազգկայ ամուսնութիւնը միենոյն գծի վրայ էր դնում այդեզործական զբաղմունքների հետ: Երջանկութիւնը միշտ արգելում էր նրան ամեն բանի աւելի դիտակցօրէն վերաբերուել:

Նա վայր ձգեց սլարտիդային մկրատը, և նրա երևակայութիւնը նկարագրեց նրան Աննիի երջանիկ ապագան:

— Նա շատ, շատ գողտրիկ է, այդ երիտասարդը: Նա կը լինի պատգամաւոր, իսկ ապագայում և մինիստր: Իր արտաքինով և ճարտարախօսութեամբ նա կարող է ամեն բանի հասնել: Մենք հիւր կը դանք Աննիի մօտ Պարիզ, կը ճաշենք նրանց հետ միաստորութեան մէջ զեսպանների և ակադեմիկոսների հետ:

Սովորաբար Մերանը զմայլւում էր իր կնոջ հանդարտութեամբ և պարզատեսութեամբ, բայց այս անգամ նա նրան յուսահատեցրեց:

— Հա, այդպէս, ուրեմն իմացի՛ր, — ասաց նա, — որ ևս մերժեցի քո թեկնածուին:

Տիկին Մերան ժպտաց ինչպէս միշտ, անվրդով և հեզ:

— Տեսնում եմ, որ դու հանաք ես անում, — արտասանեց նա: Ես արդէն յայտնել եմ այդ հարսանիքի մասին իրան՝ Աննիին, և ի դէպ, կոմսուհի Ֆերրեզային: Կոմսուհին, կարծեմ շատ էլ չուրախացաւ լսելով այդ լուրը:

— Դու այդ առաջարկութեան մասին խօսել ես Աննիի հետ:

— Ի հարկէ: Ինձ անտանելի է որեւէ զաղտնիք: Երեխաս շատ գոհ է: Երէկ ժակը ինձ ինչ որ մի բան ակնարկեց և այսօր առաւօտեան ևս ժպտացի, երբ տեսայ որ նա դարձեալ կական: Իսկ ժաննին, ո՛հ, նա շատ խորամանկ է, վեր առ և ասա քրոջդ. «տհա քո նշանածը»: Իսկ ես բոլորովին պարզ ասացի նրանց. «Այդ աւելի ճիշտ է, քան դուք կարծում էք»: Նրանք այժմ միասին ձեռնում են ծառաստանում:

Նա լռեց, հասկանալով իր մարդի թունդ գէմքից, որ ինչ որ մի սխալ է գործել ինքը: Մերանը հազիւ էր զսպում իրան:

— Բայց այդ անխելքութիւն է, — բացականչեց նա: — Ես չեմ ուզում տալ իմ մաքուր և հեզ Աննիին այդ անապարծ, եսասէր Ալվարին: Միթէ դու չես տեսնում որ նա կամենում է ամուսնանալ նրա հետ միայն փողի և իմ աջակցութիւնս ընտրութիւնների ժամանակ ձեռք բերելու համար: Դու չես կամենում որեւէ բանի մասին մտածել և քո սեփական երեխայի զբաղախտութեանն ևս նպաստում, կտրելով վարդերը քո յիմար մկրատով:

Տիկին Մերանը ամենևին չը վրդովուելով, աշխատեց իս-

կոյն հեռացնել իրանից այդ յանդիմանութիւնները և ծագած անհաճոյութիւնները զրստել, ի հաճոյս ամենքի:

—Լաւ, ինչ կայ, կանչենք Աննիին: Ասենք նրան, որ ընտրել ենք նրա համար ուրիշ նշանած և նա մեզ կը լսի:

—Եւ ձրտեղից մտաւ քո գլուխը՝ կոմսուհի Ֆերրեզային այդ ամուսնութիւնը յայտնելու միտքը:

—Տէր Աստուած, էլ ինչի՞ մասին խօսէի նրա հետ երէկ երեկոյեան:

—Նրան համարում են Ալվարի սիրուհին, իսկ դու նրա երեսին ես խփում այդ լուրը, այն էլ կեղծ լուր:

—Ի՞նչ վատնոգութիւն: Մի թեթեւ ֆլիրտ, ամենահասարակ թեթեւ ֆլիրտ և ուրիշ ոչինչ: Կոմսուհին պաշտում է իր ամուսնուն: Ամենին չը պէտք է հաւատալ բամբասանքներին: Ժակը դաստիարակուել է վարդապետների մօտ և նա չէր խնդրի մեր աղջկայ ձեռքը, եթէ սիրէր մի որեւէ արարած:

Այդ միջոցին ծառաստանի խորքում երևացին Աննին և Ժաննան: Հեռուից քոյրերը երևում էին մի հասակի—երկուսն էլ բոլորովին միատեսակ, նուրբ և չքեղ էին: Արեգակի ճառագայթները թափանցելով տերևներից սահում էին նրանց գլխի վրայ, տալով Ժաննիի վարսերին վառ, գրեթէ ոսկեգոյն:

—Աննի, գնա հօրդ մօտ, նա կամենում է խօսել քեզ հետ, —ասաց տիկին Մերանը, երբ երկու աղջկերքը մօտեցան նրանց: Նրա մտքովն անգամ չէր անցնում, որ ինքը հաղորդի աղջկան անհաճոյ լուրը:

Աննին մտածեց, որ կամենում են հաղորդել իրան երջանիկ նորութիւնը և հետեւեց հօրը մինչև նրա աշխատութեան կաբինետը: Աղջիկը զգում էր անսովոր թեթևութիւն, և նրան թւում էր, որ ոտքերը չեն դիպչում գետնին: Մերանը նայեց նրան երկար սիրալիր նայուածքով: Չէ որ քիչ էր մնում որ նրանից խլէին այդ գանձը: Նա զմայլւում էր այդ գէմքով, որ դողդողում էր ցանկալի լուրի ակնկալութեամբ, այդ աչքերով, որոնց պայծառ արտայայտութիւնը պատրաստ էր փոխարկուել երկիւղի, և այդ մոխրագոյն վարսերով, որոնք թեթեւ ծածանւում էին քամուց: Դեռ երբէք նա չէր զգացել այդքան խոր այն քնքոյշ հմայքը, որով համակուած էր այդ երեխայի ամբողջ էութիւնը—չնորհալի և դիւրաբեկ, իբրև թանկագին արձանիկ, որ միշտ կտարել վախում են: Նա բռնեց նրա ձեռքը:

—Ճշմարիտ չէ, սիրունիկս, որ դու չես ուզում մեզ թողնել, դու քեզ դժբախտ չես զգում մեզ մօտ, այնպէս չէ: Մենք քեզ այնքան սիրում ենք:

Աննին ոչինչ չը պատասխանեց, միայն նրա աչքերը տըր-

տում արտայայտութիւն ստացան: Նա քաշեց նրան դէպի իրան և նստեցրեց ծնկների վրայ, իբրև փոքրիկ աղջիկ:

—Ալվարը եկել էր ինդրելու քո ձեռքը,—սկսեց նա:—Մայրդ արդէն ասել է քեզ այդ մասին: Դու գիտես, թէ ինչպէս ևս ցանկանում եմ քո երջանկութիւնը: Լսիր ինձ. ոչ ոք քեզ այնպէս չէ սիրում, ինչպէս ես: Այդ ամուսնութիւնը քեզ երջանկութիւն չի տայ: Ալվարը—փառասէր է, նա ընդունակ չէ սիրել: Դու դեռ չառ մասադահաս ես այդ հասկանալու համար: Մի ձգտի նրա կիներ լինելու: Ձէ որ դու ինքդ այդ չես ցանկանում, Աննի: Նա նայեց հօրը և յետոյ երկար նա չէր կարողանում մոռանալ այդ նայուածքը լի տանջանքներով և քնքշութեամբ: Նա թեքեց գլուխը դէպի նրան: Հայրը մտածեց, որ նա լացում է, կռացաւ. դէպի նա, և զգաց որ նա ընկնում է: Առանց մի խօսքի, առանց որեւէ շարժումի նա ուշաթափուեց:

—Աննի,—բացականչեց Մերանը: Զաւակս, ես ամեն բան կ'անեմ, ինչ որ դու ուզում ես:

Նա սեղափոխեց նրան իր անկողինը, կաբինետի կողքին գտնուող խորշի մէջ: Ամենաւարժարժ խօսքերով նա ինդրում էր նրան հանգստանալ. երիտասարդ աղջկայ գունատ դէմքը, նրա անկենդան աչքերը և անշարժացած անդամները, նրա զարհուրած երևակայութեան մէջ մտնուան պատկերն էին առաջ բերում: Աննին հանդարտ վրայ եկաւ, յառեց հօր վրայ նայն քնչքութեամբ և տանջանքով լի նայուածքը, տեսաւ որ նա լացում է, որոնեց նրա ձեռքը և մրմնջաց.

—Ես կը մնամ ձեզ հետ, հայրիկ:

Նա սկսեց առարկել:

—Ուրեմն դու նրան սիրում ես, Աննի: Ուրեմն դու կարողացել ես նրան սիրել:

—Չը գիտեմ,—պատասխանեց նա թոյլ ժպիտով:

«Ինչո՞ւ ես նրանից հարցրի» —յանդիմանեց իրան Մերանը:

—«Մի՞թէ կարելի է իմանալ՝ ինչու համար է մարդ սիրում, և մի՞թէ պէտք է անպատճառ ճանաչես մարդին, որպէս զի սիրես նրան»:

Առաջ նա սաստիկ սիրում էր իր աղջկայ մէջ այդ դարձանալի զգայականութիւնը, որ դրդում էր նրան այդպէս հեշտօրէն ոգևորուել և կարեկցել: Նա չէր հասկանում, որ հէնց շնորհիւ այդ զգայականութեան, սէրը պէտք է միանգամից նուաճէր նրան: Նա ինքը զարթեցրել էր նրա մէջ սէր դէպի բնութիւնը և ինքը գրգռել էր ոգևորութիւն դէպի ամենը, ինչ որ գեղեցիկ է: Նրան ուրախացնում էին այդ արթնացնող հոգու կրքոտ աւելանքները, նա չէր կասկածում որ ինքը այդ կերպով

Նրան գարձնում էր անպաշտպան և անընդունակ, գիմադրել գեղեցկութեան, երիտասարդութեան և ճարտարախօսութեան: Ժակ Ալվարը ընդունակ չէ գնահատել բոլոր նրա քնքշութիւնը և հոգեկան գերազգացութիւնը. նա կը պղծի և կ'ոչնչացնի հոգու այդ նուրբ ամօթահար շարժումները, ինչպէս բարբարոսը կորզում է ծաղիկները, որոնք իրան անպէտք են երևում:

Բայց Աննին սիրում էր նրան և միայն նրան էր պատկանում: Աղջկայ դեռ հիւանդոտ ժպտի, նրա մեծ և դեռ թախծալից աչքերի, նրա այնքան չնորհալի բայց գունատ դէմքի ամբողջ հմայքը, բոլոր նրա գեղեցկութիւնը պատկանում էին միայն նրան: Հայրը արդէն երկրորդ տեղն էր զրաւում քնքշութեամբ լի այդ սրտի մէջ:

Մերանը իրաւունք չը համարեց իրան պաշտպանել աղջկայ ապագան, ջարդելով նրա ակնյայտնի սէրը: Նա չոյելով դիպաւ երիտասարդ աղջկայ ճակատի վրայ թափուած մետաքսեայ վարսերի խոպոպիկներին և արտասանեց անսովոր բարութեամբ.

— Դու սիրում ես նրան: Այդ արդէն ուրիշ գործ է: Ես այդ չը դիտէի: Ես կամենում եմ, որ դու լինես երջանիկ: Այս րոպէիս կը գնամ նրա ետեւից: Դու գո՛հ ես:

Աներեւակայելի ժպիտ փայլեց աղջկայ դէմքի վրայ: Նրա այտերը բռնկուեցին: Այդ րոպէին նա նման էր մարգագետնին, որ յանկարծ յուսաւորում է արեգակը որոտումի և հեղեղից յետոյ: Նա չրթունքներին տարեց հօր ձեռքը և մրմնջաց.

— Ես քեզ սաստիկ սիրում եմ: Ո՛հ, որքան ես քեզ սիրում եմ:

Նա վեր կացաւ գնալու համար և այդ միջոցին մտաւ տիկին Մերանը:

Նա զարմանալի բնազդ ունէր, որ պահպանում էր նրան ամեն տեսակ անհաճոյ տեսարաններից: Նա զրկեց Աննին, ապա իր ամուսնուն և խսկոյն սկսեց մտածել, թէ ում հրաւիրեն վկայ հարսանիքին, ընտրելով նրանց այն ծանօթներին միջից, որոնք ամենայայտնի դիրք էին զրաւում հասարակութեան մէջ:

Մերանը, հոգին լի յուսահատութեամբ, գնաց Ալվարի ետեւից:

Ալվարը նախաճաշել էր իր հին ընկերի մօտ, որին մի քիչ զարմացրել էր այդ տեսակ համարձակութիւնը: Նրանք այլ ես չէին խօսում ժակի սուսջիկայ հարսանիքի մասին, բայց վերջինիս հանգարտ դէմքից Լուսիէն Հալանդը կարող էր եզրակացնել որ նրա առաջարկութիւնը արդէն ընդունուած է:

Լիւսիէն մեծ յուզմունքով մասն էր գալիս սրահում, իսկ

Ժակ Ալվարը հաճոյքով կուժ էր անուժ ընտիր կիւրասօ, որ գտնուել էր դղեակի մասանում, և աշխատում էր իր բարեկամին գրաւել իր ընտրական կոմիտէտի անդամ:

— Բեզ անձամբ այստեղ չեն ճանաչում, — ասում էր նա, — բայց քո անունը ամենանախատաւոր տպաւորութիւն կը թողնի: Երեակայիր, որ այստեղ չատ և չատ լաւ յիշում ենք. Կօրը և քո պապին: Այստեղի ծերունիները աչքի են ընկնում անսովոր անձնութիւններ:

Եւ, նկատելով ներս մտնող Մերանին, նա բացականչեց.

— Լիւսիէ՛նը կը լինի իմ ընտրական կոմիտէտի անդամ:

— Ո՛չ, ո՛չ, — գոչեց Հալանդ. — ևս ամենին չեմ զբաղւում քաղաքականութեամբ... Ես կը հսկեմ քեզ իրրի հասարակ դիլլետանտ:

Նա զարմացքով նկատեց փոփոխութիւն Մերանի դէմքի վրայ. Վերջինս դիմեց Ժակին և արտասանեց նուազած ձայնով.

— Զեզ սպասում են: Գնացէ՛ք: Ես յետոյ կը գամ:

Ժակը վերկայաւ, սեղմեց նրա ձեռքը և ցոյց տուեց այնպիսի յանկարծական յուզմունք, որ չէր կարող բոլորովին անկեղծ լինել: Նա հրաժեշտ առեց Լիւսիէնից և ուղղուեց դէպի դուռը. երբ արդէն հասել էր, Մերանը կանգնեցրեց նրան և բնորոշ ձայնով մօտենալով՝ մրմնջաց.

— Դուք է՛ք կարող երեակայել ձեզ, թէ ինչպէս Աննին թուլակազմ և ջղոտ է: Նրան պէտք է մեծ խնամքով պահել: Ես նրան ձեզ եմ յանձնում:

— Դուք կարող էք վստահ լինել իմ վրայ: Ես ամեն բան կ'անեմ, որպէս զի նա երջանիկ լինի, — պատասխանեց Ժակը:

Երբ նա մեկնեց, Մերանը թուլացած ընկաւ բազկաթոռի մէջ: Նա չէր աշխատում ծածկել իր վիշտը Լիւսիէնից, առ որն զգում էր մեծ համակրութիւն: Վերջապէս նա արտասանեց.

— Ահա տեսէ՛ք, ամբողջ մարդիկ իրանց կեանքը անց են կացնում նրանով, որ դիտում և դատում են մարդկանց և ամբողջ պետութիւններ, բայց միևնույն ժամանակ չեն նկատում, թէ ինչ է կատարւում իրանց քթի տակ, իրանց սեփական տան մէջ:

Նա յանդիմանում էր իրան, որ ժամանակին չը հեռացրեց իր տնից Ժակին և մտածում էր.

«Պէտք է արթուն կերպով հսկել երիտասարդ աղջիկներին վրայ: Նրանց միակ երեակայութիւնը մէկին սիրել է: Այդ շատ բնական է, բայց մենք պարտաւոր ենք ղեկավարել նրանց զգացումները: Ես վատ հայր եմ»:

Եւ նա աւելացրեց ի ձայն.

—Երեխաները շատ մոռացկոտ են, պարոն Հալանդ. նրանց համար միևնույն է, եթէ իրանց մերձաւորները տանջոււմ են:

Նա նախանձ էր զգում և տանջոււմ էր այն մտքից, որ իր աղջիկը սիրում է ուրիշին աւելի, քան իրան:

Լիւսիէնը նրան հասկանում էր. նա զլլալ էր ընկնում որ Աննին սիրում է և հայրը հակառակ է նրա ամուսնութեան, և չը նայելով դրան նա պատասխանեց բաւական խիստ.

—Բոլորովին բնական է, որ երեխաները յարգարում են իրանց ևրջանկութիւնը, ինչպէս իրանք են հասկանում և ոչ նրա համար, որ հաճոյք պատճառեն իրանց ծնողներին:

Նա աշխատում էր չը հետաքրքրուել երիտասարդ աղջկայ վիճակով, բայց այդ վիճակը ակամայ յուզում էր նրան:

Մի բոպէ նրանք երկուսն էլ լռեցին: Նրանց զրաղեցնում էր միևնույն միտքը. նրանք պարզ երևակայում էին Աննիի բաւական անազան հիւսիսներով: Մերանը ամեն կերպ աշխատում էր խաղաղացնել իրան.

—Ես ոչ մի բանի մէջ չեմ կարող յանդիմանել ժակ Ալվարին: Նա բոլորովին օրինաւոր մարդ է, խելօք և ևռանդուն: Ես տանջոււմ եմ ինչ որ մշուշային նախազգացումներից: Ես չեմ կարող մոռանալ Աննիի այդ սիրտ ճնշող նայուածքը: Ի՞նչ էր մնում ինձ անել այդպիսի զգացման արտայայտութեան առաջ:

Լուսիէնը առաջինը խղեց լռութիւնը հարցնելով բաւական հանդիսաւորապէս.

—Օրիորդ Մերանը մարդի է գնում պարոն Ալվարին:

—Այո, մարդի է գնում: Միթէ ես արդէն ձեզ չասացի այդ մասին:

Նա մտաւ հարեան սենեակը և վերադարձաւ լուսանկարը ձեռքին, որ տուեց Մերանին:

—Ահա Աննին մանկութեան ժամանակ,—ասաց նա:—Այս պատկերը մնացել է այստեղ մօրիցս յետոյ: Ի՞նչպէս նա այստեղ գեղեցիկ է: Մի ժամանակ մենք նրա հետ շատ մեծ բարեկամներ էինք: Մեզ միայնում էր ընդհանուր սէրը զէպի անտառները և լիճը: Նա այդ բոլորը մոռացել է:

Նրա գէմբի վրայ անցաւ թախծալի ժպիտ: Նա յիշեց հեռաւոր մանկութիւնը: Գուցէ նա այդ ժամանակ արդէն անդիտակցարար սիրում էր այդ մտախոհ և սլայծառ աչքերով աղջկան: Բայց այդ միտքը նրան թուաց տարօրինակ և նա աշխատեց կանգ չառնել նրա վրայ:

Մերանը գրեց լուսանկարը սեղանի վրայ:

—Իր մահից մի փոքր առաջ,—ասաց նա,—ձեր մայրը,

նայելով իր սիրեցեալ Աննիին, որ եկել էր այցելել նրան ինձ հետ, դրեց ձեռքը նրա գլխին և ասաց ինձ.

— «Երբ և իցէ, շատ տարիներից յետոյ, եթէ որդիս արժանաւոր կը լինի, ես կը խնդրեմ սրան ձեզանից ինձ աղջկեցուն: — Ապա նա աւելացրեց, երբ սկսեց գուշակել, որ իր հիւանդութիւնը մահացու է. — «Ո՛հ, ես չեմ համար այդ ուրախութեան»: — Ես բոլորովին մոռացել էի դրա մասին, իսկ այժմ յիշեցի, նայելով այս հին լուսանկարին:

Լիւսիէնը մտածում էր. «Արդեօք իմ այսքան ուշ գալովս, չը կորցրի հանգստութիւնս և երջանկութիւնս»:

Եւ նա արտասանեց այն սովորական խօսքը, որ ընդհանրապէս ընդունուած է ասել, լսելով մէկի նշանախօսութիւնը.

— Յոյս ունեմ որ օր. Աննին երջանիկ կը լինի:

Բանալով ծառաստանի վանդակապատը, ժակը տեսաւ Աննիին, որ մուտքի մօտին դանուած թուփերից վարդ էր քաղում. նա առաջուց ուրախանում էր, որ կը տեսնի թէ ինչպէս սէրը յայտնուելու է այդ մանկան մէջ, որի խորին զգացումը նա գուշակել էր առաջ, քան ինքն Աննին: Վերջինս չէր տեսնում նրան: Նրա ճերմակ ծոծրակը փայլում էր և նրա մատերի վրայ հոսում էին պայծառ լոյսեր, որոնք կարծես արեգակի ճառագայթներիցն էին դալիս: Մի րոպէ նա դիտում էր, թէ ինչպէս նրա ճկուն իրանը հակուած էր ծաղիկների վրայ. նրա մէջ բռնկեց կոսիտ անպատկառ ցանկութիւն, և նա ցանկացաւ համեմատել նրան իր սիրունու հետ.

«Աննին շատ գոգտրիկ է, թէն շատ վտիտ,— մտածեց նա: — Լէօնորան աւելի կլորիկ դժեր ունի:

Եւ ոչ մի րոպէ նա չը մտածեց այն մասին, թէ որպիսի սքանչելի երագներ և մաքուր ցանկութիւններ է նեղնչում սէրը այդ գոգտրիկ և անմեղ սրտին: Նա ամենին չը զգաց յարգանքի այն զգացումը, որ կանգնեցնում է ամենանեշտասէր և ողջախոհ երիտասարդներին ջանէլ աղջկանց որոշ դէմքի առաջ և արգելում է նրանց սրբապղծութիւն գործելու. փառասիրութիւնը ցամաքեցնում էր խանդաղատանք զգալու անընդունակ նրա միտքը:

Յանկարծ նա տեսաւ թէ ինչպէս Աննիի այտերը բռնկեցին Սա յետ նայեց և նկատեց նրա ներկայութիւնը: Նա ամբողջովին դողդողում էր սիրոյ մերձեցումից, որին նա սպասում էր: Վայր ձգելով վարդերը, նա ձեռքը տարաւ սրտին, որ շատ սաստիկ թրթռում էր:

ժաղը գիտէր շատ գեղեցիկ կերպով արտայայտել այն զգացումները, որ ինքը չէր զգում: Նա մօտեցաւ Աննիին և ասաց քնքոյշ և շոյող ձայնով.

—Նա պէտք է հաղորդեմ ձեզ մի կարևոր բան: Ես մի շատ մեծ ինչիւրը ունեմ ձեզ անելու, և ձեր ծնողները թոյլ են տուել ինձ խօսել ձեզ հետ:

Նա արդէն գիտէր, թէ ինչի մասին ժաղը կ'ամենաւ էր խօսել, բայց այնուամենայնիւ նրա խօսքերը յարուցին նրա մէջ նոր յուզմունք և նրա արտօսումը միջագնացաձև աչքերի մէջ ցոլաց իր ամբողջ հոգին:

—Ձեր ծնողները թոյլատրել են ինձ խնդրել ձեր ձեռքը ձեզանից: Համաձայն էք...

Եւ բռնելով նրա ձեռք, իբրեւ թէ նա ամենեին չէր կասկածում նրա համաձայնութեան մասին, նա աւելացրեց քնքշութեամբ, որ հաճելի կ'երգով զարմացրեց նոյն իսկ իրան.

—Աննի, արդեօք մի քիչ կ'ը սիրէք ինձ:

Աննին լուրեպան լացում էր, բայց նրա յուզման մէջ ոչ մի վրդովմունք չը կար ապագայի մասին:

—Արդեօք մի քիչ կ'ը սիրէք ինձ, Աննի,—կրկնեց նա. բայց այս անգամ նրա ձայնը էլ չէր թնդում այնքան երաժշտաբար և համոզիչ:

—Այո,—աւելի հառաչեց, քան արտասանեց Աննին և նրան թուաց, որ ինքը արտասանում է այդ խօսքերը յաւիտեան:

Այժմ կը զգայ իր ճակատի վրայ նրա համբոյրը, բայց այդ վայրկեանին նրա երջանկութեան իրաւունքի հազիւ նկատելի մի անհաճոյ զգացում. նա նկատեց որ այդ համբոյրը, որ դող առաջ բերեց ամբողջ էութեան մէջ, ամենեին չը խանգարեց իրան ժաղի սովորական հանգստութիւնը և չը վանեց նրա գէմփից յաղթական ժպիտը:

—Ես սպասում էի ձեզ և պատրաստել էի ձեզ համար այս վարդերը,—սքանչելի ամօթխածութեամբ արտասանեց նա, ցոյց տալով գետին ընկած ծաղիկները:

Նրանց մօտեցաւ տիկին Մերանը իր կրտսեր աղջկայ հետ: Մայրը չափազանց ընտելացած էր երջանկութեան, ուստի և առանձին մեծ նշանակութիւն չէր տալիս նրան: Նա ամենեին չէր կասկածում որ ամեն բան շատ լաւ կը կարգադրուի և իր ապագայ փեսան բոլոր կատարելութիւնների նմուշ կը հանդիսանայ: Բայց զրանից, նա շատ դուր էր, որ այժմ կարող է հանդարտ աւարտել նոր ընկած թփերի ճիւղերի կտրելը պարտիզային միջատով, որ նա գեռ ձեռքին բռնած ունէր: Ժաննան հետաքրքրութեամբ նայում էր քրոջ, որ շատ գեղեցկացել

էր յուղմունքից և մտածում էր իր սեփական նշանածի մասին, որ պէտք է գար աշխարհի ծայրից, բայց կարելի է արդէն ապրում է բոլորովին մօտ, հարեան մի տեղում: Երբ ժակը կամեցաւ հրաժեշտ առնել, տիկին Մերանը թոյլ տուեց Աննիին ուղեկցել նրան մինչև վանդակապատն:

Նա իր հետ տարաւ ծաղիկները և մի կտոր այդ սիրահար հոգուց:

Նա գնում էր տուն, մտովին քննելով, թէ ինչ պէտք է խօսի ընտանոցական կամիտէտի անդամների առաջիկայ ժողովի ժամանակ: Որովհետև իր նշանախօսութիւնը յաջողուեց, նա այլ ևս չէր մտածում նրա մասին: Իսկ այդ ժամանակ Աննիին ուղղւում էր դէպի տուն, ծանօթ ծառուղիով, կրկնելով մտովին. «ես սիրում եմ նրան, ևս սիրում եմ նրան»: Բայց յանկարծ մի յիշողութիւն կայծակի նման սրացաւ նրա մտքով և նա զարհուրելով՝ անշարժացած մնաց իր տեղում՝ «նա ինձ հարցրեց արդեօք սիրում եմ իրան: Նա ինձ չասաց, թէ ինքը ևս սիրում է ինձ»:

Իր հօր խօսքը յիշեց. «նա անընդունակ է սիրելու»:

Բայց Աննիին իր քնքշութեան և երիտասարդութեան մէջ գտաւ այն հաւատը երջանկութեան մասին, որ վանում է վատ գնչակութիւնները և արհամարհում է նախազգացումները: Ապագան շուտով երևաց նրա սիրող սրտի առաջ սարդ և անմշուշ: Եւ նրա ուրախութիւնը այնքան թեթեւ էր դարձնում նրան, որ նա վախեցաւ թէ չը լինի յանկարծ թուշի երկինքը ոսկեզօծ գեղեցիկ լոյսի ճառագայթների վրայ:

Հ. ԱՌԱՔՅԵԼԵԱՆ

(Ելք ՇԱՐԱՆԱԿՈՒԻ)

Հ Է Յ Ն Է Յ Ի Յ

Կամարում անշարժ աստղերն են կանգնած
Անթիւ տարիներ,
Եւ ուղարկում են սիրալիլ միմեանց
Իրանց բարեւներ:
Նրանք սքանչելի լեզուով աննրման
Զըրոյց են անում,
Եւ նըրանց լեզուն ոչ մի լեզուաբան
Դեռ չէ հասկանում:
Բայց ես հասկացայ կատարելապէս
Այդ դիւթիչ լեզուն.
Սիրուհուս դէմքը եղաւ ինձ համար
Քերականութիւն:

Մ. Տ.-Դ.

ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ

(Հոգեբանական էսիւղ)

I

Ընկերական մի նեղ-մտերիմ շրջանում էր:

Երկու փոքրիկ սենեակ, հասարակ, պարզ կահաւորումած: Մի թախտ 5—6 աթոռներ, մի գրասեղան՝ ծանրաբեռնուած գրքերով: Դիմացի պատը զարդարած յայտնի գրողների և գիտնականների լուսանկարներով: Ճիշտ մի ուսանող երիտասարդի բնակարան, թէև նրա տէրը երկու տարի էր որ՝ աւարտելով արտասահմանեան մի համալսարան, վերադարձել էր հայրենիք:

Երեկոյեան դէմ էր: Սամովարը սեղանի վրայ դրած եռ էր գալիս: Նրա շուրջը չորս հոգի բոլորած տաք տաք վիճաբանում էին:

—Իսկ մեր երիտասարդութիւնը,—հարց էր տալիս մէկը:

—Երիտասարդութիւնը,—հեղնաբար կրկնեց միւսը: Մեր երիտասարդութիւնը... Միթէ նա կանգնած է իր կոչման բարձրութեան վրայ: Ի՞նչ է ներկայացնում նա իրանից, ի՞նչ,—ձեզ եմ հարցնում:—Այսօր նա՝ մոռացութեան տալով, ոտնատակ անելով իր բոլոր գաղափարները, իդէալները, որոնց անունով դեռ երէկ նա յուզուած երդուում, կուրծք էր ծեծում,—այժմ նա՝ այդ ինտելիգենտ կոչուած երիտասարդութիւնը իր ամբողջ բանակով խմբուած է ոսկէ հորթի բոլորքը: Նրան է պատարագ մատուցանում, նրան է ծնկաչոք

խնկարկում, նրա սուրբ անունով երգւում:—Հայ ինտելիգենցիայի միակ անկեղծ երգումը, որին նա հաւատարիմ կը մնայ «մինչ ի մահ, մինչ ի կախաղան»...

Այս վիճաբանութիւնների ժամանակ աչքի էր ընկնում մանաւանդ երիտասարդ տանտէրը՝ Ռուբէնը, որի եռանդոտ խօսքը՝ բղխելով անկեղծ համոզմունքից, խոր տպաւորութիւն էր գործում իր ընկերների վրայ: Այդ երեկոյ նա առանձնապէս լաւ էր տրամադրուած: —Բրավօ, բրավօ,—բացականչեց Վահանը՝ լսելով Ռուբէնի կրակոտ լէպլիկան:

—Այ, այդպէս է. կեցցես,—նկատեց Վահանը՝ մօտենալով իր սիրելի ընկերոջ: Ահա այժմ՝ դու նորից մեր նախկին Ռուբէնը՝ աշխոյժ, ուրախ, զուարթ և որ գլխաւորն է՝ լի եռանդով և բուռն ցանկութեամբ մաքառելու, գործելու:

—Ես լսել էի և չէի հաւատում,—շարունակեց նա: Ինձ գրել էին քո այդ նոր մետամորֆոզի մասին, որ դու այլեւս չես թափառում աննպատակ, տխուր ու տրտում: Միշտ ինքդ քո մէջ փակուած, ինքդ քեզ տանջում, չարչարում:

«Այժմ, Ռուբէն, քանի որ անցեալն անցել է, եկ, դու պատմիր՝ թէ ինչպէս եղաւ քո այս նոր փոփոխութիւնը: Ասենք՝ լաւ կը լինէր, որ դու պատմէիր և քո դարդը, այսինքն անցեալ դարդդ, մանաւանդ որ այս երկուսը ևս շատ են փափագում լսել այդ քեզանից: Լսել ենք, որ դու արտասահման ընկճուել, յուսահատուել ես: Բայց թէ ինչո՞ւ, ինչպէս և վերջապէս ո՞ւմ պատճառով,—դա մեզ համար մինչև օրս գրեթէ անյայտ է: Հը՛, ինչ կ'ասես, պատմիր:

Ռուբէնը լուռ էր:

—Պատմիր, պատմիր,—դիմեցին բոլորքեան:

Նա դարձեալ չէր խօսում: Տխրութեան մի ամպ էր քողարկել նրա դէմքը: Աչքը գցած թէյի բաժակին՝ նա, կարծես, չէր լսում ընկերներին:

—Պատմիր,—կրկնեց Վահանը՝ թօթուելով ընկերոջ ուսը:

Ռուբէնը՝ թէյը արագ-արագ խառնելով, խմեց, բաժակը դրեց վայր և ասաց.

—Քանի որ այդպէս ցանկանում էք, ես կը պատմեմ. շատերն են հարցրել, շատերն են խնդրել,—բայց ես չէի ուզում քրքրել այն անցեալը, ուր յաւ և վիշտ, փուշ և տատասկ էր ցանուած: Թէեւ նա ինձ համար և մի... դպրոց էր...

II

—Իւրաքանչիւրիդ յայտնի է՝ թէ ինչ վառ գոյներով է նկարուում արտասահմանը մեր երեւակայութեան մէջ,—այսպէս սկսեց Ռուբէնը իր պատմութիւնը: Եւ յանկարծ ինձ վիճակուում է գնալ ուսում, կըրթութիւն ստանալ Աւետեաց այդ նոր երկրում:

Ինչ վառվռուն յոյսերով ես թողի հայրենի յարկը և մեկնեցայ դէպի արեւմուտք: Ո՛րպիսի ծրագիրներ, պլաններ չէի ես ստեղծում գնացքում, վազօնի պատուհանի մօտ նստած: Քաղցր և անմոռանալի բույսեր: Ո՞վ կարող է մոռանալ նրանց հրապոյրը, նըրանց վեհ, վսեմ թռիչքը...

Այսպէս փայլուն յոյսերի մի ահագին բեռով ես հասնում եմ արտասահման՝ իմ ընտրած քաղաքը: Լճի ափին, գեղեցիկ, սիրուն, մի հրաշալի միջավայր: Ես մտնում եմ մի ընտանիք—այնտեղ ապրելու: Այդպիսով ես հնար եմ ունենում մօտիկուց ծանօթանալ և տեղական բուն ժողովրդի հետ:

Ո՛րքան նիւթ կայ այնտեղ ուսումնասիրելու, սովորելու: Ես համարձակ կարող եմ ասել՝ որչափ ինձ համալսարանն էր տալիս, գրեթէ նոյն չափով ինձ կըրթում, գիտութիւն էր մատակարարում և տեղական կեանքը, նիստ ու կացը, ժողովները և այլն: Ես չէի բաւականանում միմիայն պրօֆէսորների դասախօսու-

թիւններով, ինչպէս սովորոյթ է արել իր համար հայ ուսանողութեան մեծ մասը, որ բացի համալսարանի և լաբորատորիաների նեղ, զուտ գիտական շրջանից անլ հօրիզոն չէ ճանաչում և չէ էլ ցանկանում իմանալ...

Ես ժամանակ էի գտնում հետեւելու և մեր հասարակական կեանքին, մամուլին, գրականութեան՝ նուիրելով նրանց իմ ազատ ժամերը:

Այդպէս զբաղուած գիտութիւններով, նուիրուած և հասարակական գործունէութեան, անյնում էի տարիներ:

Գիտութիւն և գործունէութիւն: Դա էր իմ գոյութեան հիմքը, պատուանդանը. դա էր իմ բաւականութիւնը: Այդտեղ էի ես գտնում, այդտեղից էի ես բազում և՛ սէր, և՛ եռանդ, և՛ մխիթարութիւն: Երջանիկ, բախտաւոր ժամանակ: Որքան անոյշ, որքան քնցք, որքան սփոփիչ՝ երբ մարդ յափշտակուած, անձնատուր եղած մի գաղափարի, մոռանում է ամեն, ամեն ինչ՝ իրան, իր «ես»-ը, իր անձնական բարօրութիւնը...

Բայց բախտ, կատարեալ երջանկութիւն չատ քիչերին է վիճակուած: Եւ իմ երանութիւնը, աւանդ, երկար չը տևեց: Ահա այստեղ է սկսում իմ խաչը, իմ Գողգոթան:

Մեր գործունէութեան հօրիզոնի վրայ երեւացին սև-սև ամպեր, նախ մի քանիսն էին նրանք: Սակայն ես և ընկերներս՝ ուշադրութիւն չը դարձնելով, շարունակում էինք մեր աշխատանքը: Ամպերը մէկը միւսից աղետադուժ կամաց-կամաց աւելացան, շատացան, պատեցին ողջ հօրիզոնը:

Մուսլ էր երկինքը, մուսլ էր և բնութիւնը: Օդը ծանր, հեղձուցիչ:

Մօտ էր փոթորիկը, անխուսափելի:

Մենք չնչասպառ, լարուած ուշադրութեամբ սպասում էինք նրա վախճանին:

Որոտմունք, կայծակ, հուր՝ իրար անցած քանդեցին, աւերեցին, տալն ու վրայ արին ամեն ինչ։ Ուր նայում էինք, սարսափած տեսնում էինք անողորմ փոթորկի հետքեր։ Աւերակ, կործանում, կատարեալ ամայութիւն... Մի քանի սերունդների հարթած ճամբան, որով ընթանում էինք և մենք, քարուքանդ արած, ահաւոր խորխորատների, փլատակների մի ողբալի տեսարան էր ներկայացնում։

Փսթորիկն անցաւ։

Մենք շանթահար եղած նստած էինք գլխակոր։

Սոսկումը ահւելի էր. բնութեան ցասումը զարհուրելի։

Եւ մենք, որպէս ձագուկները կորցրած թշուառ մայրեր՝ կանգնած մեր աւերուած բունների վրայ, ողբում էինք բնութեան հասցրած անազորոյն հարուածները։

Այդպէս անցնում են օրեր, շաբաթ, ամիսներ։

—Բայց քանի ողբանք,—դիմեցի ես ընկերներիս։ Բաւ է լաց ու կոծ և տխրութիւն։ Արտասուքով չենք կարող լուալ մեր վէրքերը։ Գործ է հարկաւոր, գործ։

Ոչ ոք չը պատասխանեց իմ առաջարկութեան։

Նայում եմ շուրջս։ Բոլորն էլ վշտաբեկ, յուսահատ, մեղամաղձոտ գէմքով գիտում են ինձ զարմացած և ապշած։ Կարծես հարցնում լինէին՝ թէ խելքս գլխիս է, չեմ ցնդե՞լ արդեօք։

—Գործ,—կրկնում եմ ես նորից։

Դարձեալ ոչ մի ձայն չը բարձրացաւ, ոչ մի ձեռք չը պարզուեց։

Ես վրդովուած սկսում եմ կշտամբել, նախատել ընկերներին։ Դիմում եմ առանձին-առանձին մէկին, միւսին, երրորդին... Յուսահատ անտարբերութիւն ամեն կողմից...

—Բո առաջարկութիւնը խիղախ է և անմիտ։ Այլ ևս ի՞նչ գործունէութիւն, ի՞նչ գործ կարող ես դու ունենալ,—բացականշում է վերջապէս ընկերներիցս մէկը։

Դա դժնքիչօտութիւն կը լինի, եթէ չասեմ անբարոյականութիւն...

— Անբարոյականութիւն, — վրդովուած և դառնացած ընդհատեցի ես նրան: Ո՞րն է աւելի բարոյական. սկսել մի գործ ու դեռ չը վերջացրած, կիսատ թողնել և փախուտ տալ, թէ՞ ամբողջ պատասխանատուութիւնը վրադ առնելով՝ հասցնել նրան ցանկալի վաճանի:

— Բայց երբ այդ գործը խորտակուել է...

— Մենք կը մտածենք, կը խորհնք ձեռք առնելիք միջոցների մասին:

— Երանի՛ր քեզ և քո հաւատին, Ռուբէն, — ասաց մի այլ ընկեր հազիւ լսելի ձայնով և դուրս եկաւ սենեակից:

Նրա օրինակին հետեւեցին և միւսները: Եւ այդպէս լուռ ու մունջ մէկիկ-մէկիկ հեռացան: Ես մնացի մենակ... և շուարած... Երանդ էր սա արդեօք...

Միայն այդ րոպէին ես չէի կարծում՝ թէ դա մեր վերջին խորհրդակցութիւնը պիտի լինէր: Իսկ նրանց դեմօնստրատիվ հեռանալը ես վերագրում էի մեր բոլորիս տրամագրութեանը և ջղայնութեանը:

Մի քանի օր յետոյ ես նրանց կրկին հրաւիրեցի: Որոշած ժամին ես մոռնում եմ մեզ ծանօթ սրճարանը: Նրանցից դեռ ոչ ոք չը կար: Կը գան, — մտածում եմ ես, — ընտրում մի յարմար տեղ ու նստում: Սպասում եմ կէս, մի, երկու... ժամ... չը կան:

Չը կան... Պարզ է, որ նրանք երես էին դարձրել ինձնից. այլ եւս չէին ուզում ինձ հետ գործել:

Յուսահատ դառնութեամբ ես դուրս եկայ սրճարանից և քայլերս ուղղեցի նրանց բնակարանները: Ծեծեցի մէկի դուռը՝ տանը չէր: Միւսը՝ նոյնպէս: Ես գնացի նրանց մօտ միւս և հետեւեալ օրերը. բազմիցս անգամ հեռները տեսնուեցայ: Սկսեցի բոլորի հետ առանձին-առանձին խօսել, համոզել: Նրանք դարձեալ անգրգուելի էին. վճիռները՝ վերջնական:

Ես մնացի միայնակ, բոլորովին մեն-մենակ:

Այդ հարուածը եւս գուցէ կարողանայի տանել,—
ինչ էր նա համեմատած փոթորկի հետ,—եթէ ես սար-
սափով չը ստուգէի, որ իմ սաքի տակ եւս հողը երե-
րում, փլուում է...

Ընկերներին հետ վիճաբանելիս ես աշխատում, ջանք
էի թափում համոզել նրանց՝ դործը վերսկսելու անհրա-
ժեշտութեան մէջ։ Դա ինձ համար պարզ էր, որպէս
արեւի լոյսը։ Բայց թէ ինչպէս, ինչ ձեւով,—այդտեղ
եւս գէմ էի ընկնում, մնում էի կանգնած...

Ես սկսեցի նորից և նորից մտածել, խորհել. հա-
րիւր ու մի կոմբինացիաներ սարքել։ Ես գլուխ էի պատ-
ւում. ես անբուն գիշերներ էի լուսացնում։ Բայց չէի
տեսնում. ես չէի գտնում, ես չէի նշմարում և ոչ մի
եղբ, ոչ մի հնար՝ նորից ուղղելու, վերականգնելու այն
ուղին՝ որով ընթանում էինք մենք ձեռք ձեռքի տուած։

Ես կրկին և կրկին հարց էի տալիս ինքս ինձ՝ ինչ
անել, ինչ միջոցի գիմել՝ նոր շունչ, նոր հոգի փչել մի
գործի, որ եղել է իմ հոգսերի միակ առարկան, իմ գոյ-
ութեան, կարող եմ ասել, միակ *raison d'être*-ը։

Եւ ես չէի գտնում փրկութեան և ոչ մի դուռ։

Ի՞նչ անել ուրեմն։

Փակուել կարէնէտի մէջ. նուիրուել գիտութեան.
թողնել հասարակութիւն, ժողովուրդ, նրա ցաւերը,
նրա տենչանքները...

Օ՛հ, ոչ։ Ես անկարող էի այդ անել։ Դա իմ ոյժից
վեր էր։ Ես կարօտ, ես ծարաւ էի կենդանի գործի։

Իմ ընկերները այլ կերպ էին նայում։ Նրանք աւե-
լի սառնասիրտ, աւելի փիլիսոփայաբար վերաբերուեցին
հարցին։ Ես տարբեր տեմպերամենտի մարդ էի, տար-
բեր աստղի տակ էի ծնուած։

Ես ցաւում, ողբում էի ոչ այն ի դուր, ի դերեւ
գործ դրած ջանքերի, ժամանակի, եռանդի համար,—
այլ որ հնար չունէի, ես չէի զգում իմ մէջ, ինձ պա-
կասում էր մի մեծ իմպուլս, սիզիֆեան ոյժ՝ նորից

վերսկսելու իմ սիրած գործը... Դա մի սոսկալի հարուած էր, որ հասցրեց ինձ անողոր ճակատագիրը:

Եւ ես յուսախաբ, ուժասպառ ընկճուեցի:

Ես կորցրի յոյս, հաւատ դէպի գործը, դէպի գիտութիւն, դէպի մարդիկ, նոյն իսկ դէպի մտերիմ ընկերներս:

Իսկ ի՞նչ կայ աւելի սոսկալի քան հաւատի կորուստը:

Կորցնել հաւատը,—դա կը նշանակէ կորցնել ամեն ինչ: Կեանքը այլ եւ չէ ունենում եւ ոչ մի հրապոյր: Բնութիւնը չէ ներկայացնում ոչ մի գեղեցկութիւն, ոչ մի պատրանք:

Շուռ եկաւ իմ անիւը. փոխուեց իմ կեանքը: Խոցուեցաւ սիրտս. մթնեցաւ իմ դէմքը: Ծանրացան իմ քայլերը, շարժումս, քները. կորաւ իմ բունը եւ հաղբստութիւնը: Մարեց իմ ճրագը եւ իմ եռանդը:

III

Տխուր եւ տրտում շրջում էի ես փողոցները եւ այգիները: Աննպատակ, քշուած, ցնորուած. միշտ ինքս իմ մէջ, իմ «ես»-իս, իմ խոհերի մէջ ընկղմուած: Իմ ցաւերին անձնատուր եղած՝ յաճախում էի ես համալսարանը, թատրոն, կաֆէ-րեստորաններ գրեթէ նոյն հետաքրքրութեամբ, աւելի ճիշտն առած, նոյն սառն, յուսահատ անտարբերութեամբ:

Ես ման էի գալիս մեքենայաբար: Մեքենայաբար գնում էի համալսարան եւ անբաւական, դժգոհ սրտով հեռանում: Իմ սիրած պրոֆէսորը, որին ես մի ժամանակ յարգում էի, խոնարհւում նրա գիտութեան, տաղանդի առաջ,—այժմ նա կորցրել էր իմ աչքում իր բոլոր հրապոյր-արժէքը: Նրա դասախոսութիւնները ինձ ձանձրացնում, զրգռում էին...

Մտնում էի սրճարան: Ինձ ծանօթ սպասաւորը բերում էր սուրճ եւ իմ սիրած լրագիրները: Ես մեքե-

նայաբար, ըստ նախկին սովորութեան, ձեռքս էի առնում թերթերը, կարդում: Ո՛րքան խորթ էր ինձ քաղաքական և դրական աշխարհը: Ո՛չ մի հարց այլ ևս չէր չարժու՞մ իմ հետաքրքրութիւնը, չէր դրաւում իմ ուշադրութիւնը:

Ինձ թւում էր, թէ տասնեակ տարիներ, մի անհունութիւն է անցել այն երջանիկ օրերից, երբ ես սրտատրտի հետևում էի քաղաքական այս և այն հարցին. ոգեւորւում, հրճւում իմ համակրած կուսակցութեան զանազան երկիրներում տարած յաղթութիւններով:

Ես զգուանքով դէն էի գցում լրագիրները, դուրս գալիս սրճարանից և քայլերս ուղղում դէպի լճի ափը զբօսներու... Ինքս ինձ մոռանալու:

Պատահում էր երբեմն որ երեկոյեան, ըստ հին սովորութեան, գանւում էի ընկերական շրջանի մէջ: Խօսակցութիւն, տաք վիճաբանութիւն, զրոյց, ծիծաղ, բրբիլ: Սակայն ես դարձեալ անտարբեր, լուռ ու մունջ բաշուած էի սենեակի մի անկիւն:

Այդ բոլէքները ինձ համար անտանելի էին. մի կատարեալ տանջանք:

Ես նեղւում, տանջւում էի, որ այդ ընկերները ինձ համար խորթացել, օտարացել են. այնքան խորթ, անհետաքրքիր էր ինձ թւում նրանց կեանքը, նրանց զբաղեցնող հարցերը, նրանց ոգևորող մտքերը, ձգտումները և իդէալները...

Սակայն չէ՞ որ մի ժամանակ ես եւս ոգեւորւում, յափշտակւում էի նոյն գաղափարներով, իդէալներով: Իսկ հիմա: Ուրեմն ես եմ փոխուել, ես եմ խորթացել: Ե՛ս եմ ընկել, ընկճուել և դուրս եկել ընդհանուր հոսանքից: Ես եմ միայն, որ ապրում եմ աննպատակ, անզեկ:

Ես չէի կարողանում երկար մնալ ընկերական այդ շրջանում և աննկատելի կերպով դուրս էի գալիս փո-

զօց, ուր ինձ զգում էի միայնակ, հազարաւոր մղոններով հեռու կեանքից:

Զգում էի իմ ամբողջ էութեամբ, իմ հոգու բոլոր զօրութեամբ, որ ես աւելորդ եմ այս աշխարհում: Մի ոչնչութիւն, մի զերօ...

Եւ ինքնաիմացութեան այդ եղբակացութիւնը մի գառն գիւտ, մի նոր թոյն էր ինձ համար:

Մի տարօրինակ սարսուռ էր անցնում իմ ամբողջ մարմնով:

«Մայրիկ, մայրիկ», — թոթովում էի ես արտասուած խառն ձայնով և սրպէս նեղն ընկած անպաշտպան մի մանուկ՝ մօրս օգնութիւնն էի հայցում: Ապա գծուած խելագարուած շտապում էի դէպի ջրվէժը:

Այնտեղ՝ ջրվէժի գիմացը շինած կամուրջի վրայ յենուած, նայում էի ես ձիւնանման սպիտակ փրփրադէղ ալիքներին: Այդ ջրվէժն էր իմ միակ մտերիմ, հաւատարիմ ընկերը: Նրա խլացուցիչ, գիշերային այդ խորհրդաւոր պահուն ահեղ գոռոցն ու վշտը թմրեցնում: օրօր էր կարգում, մի տեսակ նիրհ էր բերում իմ քայքայուած ջղերին:

Քաղաքի անցուդարձը դադարել էր արդէն: Ես էի, որ միայնակ կանգնած կամուրջի վրայ ագահաբար նայում էի ջրվէժին, երկար ժամերով չէի հեռանում այնտեղից: Ուշ գիշերին, հադիս շորերը խոնաւացած, ինքս սառած վերադառնում էի սենեակս քնելու: Քնելու... բայց քունը եւս խոյս էր տալիս ինձնից...

IV

Ռուբէնը կանգ առաւ: Նրա ճակատը ծածկուած էին կնճիռներով: Լուռ էին և նրա երեք ընկերները: Ոչ ոք չէր ուզում խանդարել այդ լուռութիւնը: Աչքերը դցած ընկերոջ վրայ նրանք եւս համակուել էին նոյն տրամադրութեամբ:

Ռուբէնը մի ծխախոտ հանեց գրպանից. մատների

մէջ մեղմիկ, դանդաղ տրորելով շտկեց, ապա սեղանի վրայ յենուելով սկսեց անընդհատ ծխել:

Աչքը սեւեռած ծխախոտի վրայ, նա՝ ընդհատելով տիրող լուսթիւնը, շարունակեց:

—Այդպէս ես գիշեր-ցերեկ թափառելով՝ ոչ մի տեղ էլ հանգստութիւն, անդորրութիւն չէի գտնում:

Ես նիհարել, լղարել էի: Թէեւ յոգնած, թուլացած, բայց բունը աչքերիցս դարձեալ խօսով՝ միշտ հեռու էր ինձնից:

Ընկերներիցս մի քանիսը լռելեայն ինձ կարեկցում, խղճում էին: Այլատուում էին միտթարել, սփսփել ինձ: Եւ այդ նրանք կատարում էին մի այնպիսի վարպետութեամբ, որ ես չը նկատէի և չը զգայի: Այդ կարեկցութիւնը ինձ գրգռում, աւելի եւս ջղային էր դարձնում: Եւ ես խոյս էի տալիս և այդ մի խումբ մտերիմներից:

Մի քանի այլ ծանօթներ՝ իրանց բանը-դործը թուած զբաղուած էին զանազան ենթադրութիւններով, գուշակութիւններով՝ թէ ինչ կարող էր լինել իմ տխրութեան պատճառը: Քննում և վճռում են՝ թէ ես սիրահարուած եմ, անյոյս սիրահարուած...

Խեղկատակներ:

Փառնում են ուսանողուհիներ, նոյն իսկ երկուսը, որոնցից իւրաքանչիւրը սնդուկ է՝ թէ ինքն է իմ սիրոյ առարկան...

Այս ամենը ինձ յայտնում են միայն յետոյ, միայն վերջերս...

Печальный демонъ, духъ изгнанія... Այն, ես որպէս մի ուրուական, որպէս մի ոգի,—օհ, ոչ չոր,—թափառում էի՝ բանադրուած, արսորուած, մահուան վճիռ ստացած ոչ յիմար, տիմար ամբօխից, այլ ինքս իմ ձեռքով,—որ աւելի տրագիկ, աւելի ահուելի է...

Ես վճռում եմ հայրենիք չը վերագառնալ, այլ գնալ, փախչել հեռու, հեռու հեռու ընկերներից, հեռու

ծնողներից և եղբայրներից: Ո՛չ մի համոզմունք, ոչ մի խնդիր անկարող եղաւ յետ կանգնեցնել ինձ իմ այդ վճռից:

Անջատման օրն էր, մի դեղեցիկ, փայլուն օր:

Ուսանող ընկերներս բոլորն էլ ժողովուրդ էին երկաթուղու կայարանը: Մի այդպիսի ժամին հաղար ու մի ասելիք է լինում միմեանց հաղորդելու: Իւրաքանչիւր լռպէս թանգ, և մարդ աշխատում, շտապում է յայտնել, ապսպրել, պատուիրել և՛ այս, և՛ այն: Պակաս չեն լինում և սրամտութիւն, հանաք, ծիծաղ, լուրջ խօսակցութիւն՝ իրար խառնուած, աննկատելի կերպով թռչում, սահում են այն միջանի թանկագին վայրկեանները:

Սակայն այդ օրը ոչ ոք չէր ժպտում, չէր ուրախանում և չէր խօսում: Թէև ասելիք շատ էր այն ինչ որ անգոր էր պատմել լեզուն, կարդացւում էր իւրաքանչիւր դէմքի, իւրաքանչիւր հայեացքի վրայ: Ես չը կարողացայ տանել այդ լարուած դրութիւնը: Արտասուք նկատեցի իմ սիրեցեալ երկու ընկերների աչքերում: Արտասուքը խեղդում էր և իմ կոկորդը և ես առանց կրկին անգամ «մնաք բարով» ասելու, ընկայ վագօնի նստարանի վրայ: Գլխարկս խորացնելով աչքերիս վրայ՝ մնացի տեղս անշարժ:

Հսուկեց վերջին սուլոցը: Գնացքը տեղից շարժուեց:

Գլխարկներ, թաշկինակներ բարձրանալով օդի մէջ՝ ծածանւում են պատուհանիս առջև:

—Բարի ճանապարհ, բարի ճանապարհ... Bon voyage!.. Adieu!..

«Adieu! Adieu! Այո՛, Adieu! Գուցէ իմ վերջին Adieu»-ն,—մտածում էի ես: Եւ ինձ թւում էր, որ դա մի յուզարկաւորութեան հանդէս էր... իմ յուզարկաւորութեան...

Սիրտս պատառ-պատառ էր լինում, երբ մտածում, երբ յիշում էի՝ թէ ինչ յոյսերով, ինչ ծրագրերնեւով, ինչ իդէալներով էի ես առաջին անգամ ոտք դրել այդ

քաղաքը. և այժմ, դատարկաձեռն, բոլորովին զուրկ եռանդից, ուժասպառ վերագառնում եմ ոչ թէ հայրենիք, այլ նորից հազարաւոր մղոններով հեռու մի այլ երկիր...

Ես խնայում եմ ձեր ջղերը. ես չեմ ուզում պատմել ձեզ այն ահռելի սոսկումները, որ ես քաշել եմ ճանապարհին, շնորհիւ ինձ՝ ինքս ինձ դատաւիտելով, ինքս ինձ անողոր հարուածներ հասցնելով, անխնայ քննելով, դատապարտելով իմ ներքին «ես»-ը: Դա մի ձաղկանք, մի ինքնամորակում էր, որ ծայրայեղութեան հասնելով արգէն անարգար էր... (Այդ ես միայն այժմ եմ ստուգում):

Կ

—Թողնելով մշտապայծառ հարաւը իր գեղածիծաղ ավերում և ջինջ, կապուտակ երկնքով՝ ես հասնում եմ մառախլապատ, մութ և մռայլ Ալբիոնի մայրաքաղաքը:

Ես կարծում էի՝ թէ այդտեղ ինձ մոռացութեան կը տամ: Կը մոռանամ իմ ցաւը, իմ դարդը և մի գործ կը սկսեմ: Սակայն զուր յոյսեր:

Լօնդօնը ինձ մի քանի օր զբաղեցրեց, շէնքերեց իր աշխոյժ, եռացող կեանքով, իր հսկայական շարժումով, իր վիթխարի գործարաններով, զարգացած, կատարելութեան հասցրած արդիւնագործութեամբ: Օրական հազարաւոր գնացքներ սաստիկ արագութեամբ մտնում, դուրս են գալիս, գնում կղզու զանազան ուղղութեամբ. միլիօնաւոր մարդիկ, ահագին անհուն քանակութեամբ ապրանք են բերում, թափում, կուտակում կամ նորը դուրս տանում դէպի հազարաւոր քաղաքներ, գիւղեր, նաւահանգիստներ ու այնտեղից յղւում տասնեակ հազար մղոններով հեռու երկիրներ...

Պատելով քաղաքի փողոցները՝ մի անգ զուր լսում

էք սուր, խլացուցիչ ձայներ: Դա երկաթէ մեծ թերթեր են վազօններից թափում և դարսում: Մի այլ տեղ ջրմուղ մեքենաների միօրինակ ֆլշոյց-վրթոցը: Կտաւի, կօշկի, սապոնի և այլ գործարանների հսկայ մեքենաների, սղոցների որոտընդոստ, անսասան գործունէութիւնը: Ծուխ, գոլորշի միացած՝ թանձր շղարշով պատել են ամբողջ բաղաբը: Փողոցների խռնուած խիտ, հոծ, անվերջ, անծայր բազմութեան անցուղարձը, հազարաւոր երկանիւ սրընթաց կառքեր, տրամուէյ, օմնիբուսներ, ստորերկրեայ երկաթուղու անթիւ գնացքներ: Ապա Թէմզի վրայ երթեկեղող նաւերը, մակոյկները, ովկիանեան հսկայ շոգենաւերը...

Երևակայեցէք այժմ այդ բոլորից առաջ եկող խառնակութիւնը, այդ տարօրինակ, բայց ճոխ, հարուստ քաօս-համերգը՝ սիմֆօնիան, որ տիրում, թագաւորում է Մեծ-Բրիտանիայի մայրաքաղաքում:

Եւ որքան խեղճ, որքան թշուառ էր երևում այդ սիմֆօնիայի հեղինակ-մարդը: Նա է, որ ստեղծել է շոգին, ելեքտրականութիւնը, որ այժմ հրաշքներ են գործում: Նա է կառուցել այն բոլոր նաւերը, նա է շինել, բարձրացրել այն վիթխարի գործարանները, որոնք յաճախ նրան գերեզմանի տեղ են ծառայում: Նա է այդ բոլոր բարիքների, աչքի ընկնող բոլոր ստացուածքների խկական տէրը, ստեղծողը, բանեցնողը: Նա ամեն ինչ է և միևնոյն ժամանակ՝ ոչինչ, մի զերօ, մի միևնուս...

Թշուառ արարած:

Ես ամբողջ ժամերով կանգնած Թէմզի մի կամուրջի վրայ, ապշած, հիացած շուրջս տիրող կենդանի շարժումով և դրանից ելնող վեհ համերգով,—նայում էի ներքեւ՝ կայմերի և նաւահանգստի վրայ վիտտող բանուորներին, որ կորացած, ամբտմբալով մեծ-մեծ հակեր էին փոխադրում դէպի նաւը և նաւից դէպի ափը:

Քիչ հեռու բանուորների մի այլ խումբ մի ինչ որ ահագին, վիթխարի ծանրութիւն էր մօտեցնում դէպի նաւը: Խեղճերի թափած բոլոր ճիգը ապարդիւն էր

անցնում: հսկայ հրէշը տեղից չէր շարժւում: Անգութը չէր լսում այն խոր, խռպոտ տնքոցները: Նա սիրտ չունէր, որ այդ թշուառ կուրծքերը ահա մօտ են պատ-
ռուելու...

Եւ ես նախանձում էի նրանց՝ այդ գրաստի նման շինքները ճկած օրն ի բուն աշխատող բանուորներին: Ես նախանձում էի փողոցում, ցուրտ և անձրեւի տակ դողալով կանգնած փոքրիկ տղային, որ կէս պեննիով անցորդի կօշիկներն է մաքրում: Ես նախանձում էի նոյն իսկ այն խեղճ ու կրակ, անտուն, ողորմելի մուրացկանին, որ սրան-նրան ձեռք է կարկառում:

Ես նախանձում էի նրանց, որ չը նայած իրանց հէգ, թշուառ վիճակին, նրանք դարձեալ շարունակում են յամառութեամբ մաքառել կեանքի դէմ: Ուրեմն նրանք դեռ մի փոքրիկ յոյս ունեն, որ նրանց ապրե-
ցնում, գուցէ և ոգեւորում է...

Նախանձը, բարի նախանձը յաճախ ծնեցնում է մեծամեծ գործեր: Ես նախանձով դիտում էի շուրջս վիտող կենդանութիւնը: Կեանքը առաջ է ընթանում հսկայական քայլերով, նա եռում, եփ է գալիս իր բո-
լոր վիբրացիաներով: Նրա ալիքները ինձ ևս գրկելով փորձում, ճիգ են թափում նետել ընդհանուր հոսանքի մէջ, սրսկել, սթափեցնել...

Եւ ինձ վրայ իջնում, ինձ եւս հաղորդւում է մի-
լիօնաւոր թշուառներին ապրեցնող լաւագոյն ապագայի յոյսը...

Ես սկսում եմ սովորել անգլիերէն լեզուն: Յաճա-
խում եմ թանգարանները, գրադարան-ընթերցարան, թատրոն, պարլամենտ, միտինգներ... Հարց ու փորձ եմ անում, տեղեկանում, կարդում, ուսումնասիրում եմ Լօնդօնը, նրա հիմնարկութիւնները, բանուոր դասա-
կարգի դրութիւնը...

Խօսքով՝ ես սկսում եմ հետաքրքրուել ինձ շրջապա-
տող կեանքով: Այստեղից սկիզբն է առնում իմ փըր-

կութիւնը, կամ, ինչպէս դու ես ասում, Վահան, իմ մետամորֆոզը:

Բայց տխրութիւնը դարձեալ ինձնից անբաժան էր: Ես նման էի այն մարդուն, որ յանկարծ ընտանեկան մի մեծ կորուստ կրելով՝ ձգում, թողնում է իր գործերը, իր սովորական պարապմունքները: Նա մոռանում է, ուշ չէ դարձնում իր չրջապատողներին: Նրան չէ հետաքրքրում ոչ մի երևոյթ, ոչ մի բան: Ամեն ինչ սեւ գոյներով է նկարւում: Ապա երբ կեանքը նրան հրելով սթափեցնում, զարթեցնում է, խեղճը կսկիծը սրտում սկսում է կամաց-կամաց ապրել:

Ես եւս թէև գործում էի, բայց մրմնունջը սրտիցս, թախիծը դէմքիցս չէր հեռանում:

VI

—Մարդուս կեանքը կախուած է դիպուածներից և պատահմունքներից. նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ դիպուածների մի երկար շարք: Պիտի նկատած, որ այս հարցում հանգամանքները ինձ մասամբ ֆատալիստ են դարձրել: Մարդ երեւակայում է՝ թէ ինքը իր կամքի տէրն է, ուրեմն անկախ և ազատ: Յանկարծ մի անսպասելի դիպուած փոխում, որոշում է ձեր ընդգծած կեանքի ողջ ընթացքը...

Ի հարկէ դա չէ նշանակում՝ թէ կեանքի դառն, բռնազբօսիկ կատակների դէմ մաքառել-մարտնչելը անելորդ է: Իմ ասածներից չէ հետևում՝ թէ մեզ ուրեմն մնում է միայն ձեռքներս ծալել և նստել, որպէս զի կեանքի ալիքները՝ մեզ տաշեղի նման տարուբերելով, ըստ իրանց քմահաճոյքին քշեն՝ ուր որ ցանկանան:

Բայց անցնենք:

Ծնողներս՝ իմանալով իմ տրամադրութիւնը և վճիռը՝ հայրենիք չը դառնալ, նամակ նամակի յետեւից յղելով, խնդրում էին, մանաւանդ մայրս աղերսում էր

վերադառնալ գոնէ մի քանի ամսով: «Խնայիր ծերու-
թեանս օրերը»,—գրում էր նա իր մի նամակում:

Ես չը կարողացայ դիմանալ: Տասը օր կը մնամ ծը-
նողներիս մօտ, այդքանը բաւական է: Վճռում եմ ես
և մեկնում:

Ես ցանկացայ Տիրօլով անցնել. նորից այցելել այն
հրաշալի վայրերը. գուցէ նրանք կարողանային ինձ քիչ
սթափեցնել: Լօնդօնից Պարիզի վրայով գնացի Յիւրիիս,
այդտեղից Բուքս և ապա Տիրօլ:

Մեր գնացքը սրընթաց սլանալով՝ կտրում, անց-
նում էր անթիւ ձորերի, հովիտների, լեռների միջով:
Յունիս ամիսն էր. դարունը դեռ նոր էր բացուել
Տիրօլի բարձրաւանդակի վրայ:

Ճամբորդները վազօնի պատուհանների մօտ՝ ճիւղ
նստած, ճիւղ կանգնած ամբողջ ժամերով հիացած նայ-
ում էին այն չքնաղ, հրաշալի տեսարաններին, որ բա-
ցում էր մեր առջև աննման Տիրօլը:

Ահա այնտեղ՝ հեռւում խրոխտաբար գլուխները
երկինք պարզած կանգնած են բարձրաբերձ լեռներ,
որոնց ձիւնապատ գագաթները պայծառ արևի ճառա-
գայթներից ոսկեղօծուած պսպղում, շողշողում էին: Քիչ
դէսը՝ լեռների լանջի վրայ, նեղ կիրճերում սպիտակի
են տալիս դարձեալ ձիւնի ահագին շերտեր, մի կա-
տարեալ ծով: «Գլետչէր է դա»,—ձայն է տալիս ճամ-
բորդներից մէկը: Իսկ ներքեւում բնութիւնը՝ ձմրան կա-
պանքներից աղատուած, իր զարդ-զարդարանքներով և
հմայքով պնծուած, մարդու ուշք ու միտք է հրապու-
րում, գգւում:

—Նայեցէք, նայեցէք այս կողմը: Տեսէք այս հովի-
տը: Ո՛րքան գեղեցիկ, ճրքան հրաշալի է,—բացական-
չում է մի օրիորդ՝ դիմելով մի խումբ ճամբորդների:

Մինչ այդպէս բոլորը հիացած իրօք գեղատեսիլ,
չքնաղ, վեհ բնութեամբ,—ես պատուհանի մօտ նստած,
լուռ, անմասն էի ինձ չըջապատող հասարակութեան:
Սակայն ոչ մի տեղ մարդ այնպէս չուտ և հեշտ, ա-

ուանց արտաքին ցերեմոնիաների ծանօթութիւն, գրեթէ բարեկամութիւն չէ հաստատում,—ինչպէս այդ տեղի է ունենում գնացքների մէջ։ Մարդ այդտեղ աւելի պարզ, աւելի անկեղծ է լինում քան այլուրեք։ Սա էլ երեւի ճանապարհորդութեան ազդեցութիւնն է։ Ես էի միայն, որ այդ անգամ բացառութիւն էի կազմում։ Ոչ ոքի հետ չէի խօսում, ոչնչով չէի արտայայտում իմ հիացումը, իմ տպաւորութիւնները։

Այդպէս խորասուզուած իմ մտքերի մէջ՝ ես չէի էլ նկատում, որ մի զոյգ աչքեր՝ յառած ինձ վրայ, զընդունում, դիտում էին։ Գլուխս բարձրացնելով՝ տեսայ ես այդ հայեացքը։ Դա մի օրիորդ էր, որի հետ ես թէեւ 8 ժամից աւել միեւնոյն գնացքում, դէմ առ դէմ նըստած, բայց ոչ մի բառ չէինք փոխանակել։

Այդ հայեացքի մէջ ես կարգացի մի տեսակ համակրանք և զարմանք։ Նա կարծես հարցնում լինէր.

—Ի՞նչ է պատահել ձեզ։ Ի՞նչու էք այդպէս տըխուր։ Մի՞թէ այս պանօրամաները, այս բնութիւնը ձեզ չէ հետաքրքրում...

Օրիորդը մենակ չէր. նրա հետ էր և իր փոքրիկ եղբայրը, որ անդադար հարցեր էր տալիս քրոջը։ Նրբեմն գիմում էր և ինձ։ Ես բաւականում էի հակիրճ և կտրուկ պատասխաններով։ Եւ մենք շարունակում էինք ճանապարհը դարձեալ լուռ։

Ես կրկին բռնեցի օրիորդի հայեացքը ինձ դիտելիս։ Ակամայ թէ մեքենայաբար սկսեցի ես եւս դիտել նրան։ Դա մի շատ համակրելի դժերով, ինտելիգենտ դէմքով անձնաւորութիւն էր։ Նա քիչ չփութուեց, կարմրեց, երբ նկատեց, որ ես եւս նայում, քննում եմ իրան։

Փոքրիկը սկսեց կրկին տարափի նման հարցեր տեղալ, ինձ եւս անմասն չը թողնելով նրանցից։ Այդ միջոցով խօսակցութիւն սկսուեց և մեր երկուսիս մէջ՝ օրիորդի և իմ։ Սկզբում ես դժգոհ էի, բայց զնալով խօսակցութիւնը ինձ հետաքրքրում, գրաւում էր։

Իմացանք՝ որտեղացի է իւրաքանչիւրս, ուր ենք գնում և այլն։ Իմ հայ լինելս նրան շատ հետաքրքրեց։ Յանկացաւ աւելի մանրամասն տեղեկութիւններ ծածկահայաստանի մասին, նրա թշուառ ժողովրդի ներկայ դրութեան, ապահովութեան և այլն։

Ընդհանուրից անցանք մասնաւորի, անձնականի։ Նրա հարցին ես պատմեցի՝ թէ ուր եմ աւարտել, ինչ եմ ուսումնասիրել և ինչ երկիրներ այցելել։ Այդ տեղերից ստացած տպաւորութիւններս, կարծիքս... Գրականութիւն, փիլիսոփայութիւն, սօցիալական հարցեր՝ այս բոլորը իրար խառնուած երկար ժամերով ղեզաւեցնում էր մեզ երկուսիս։

Ես զարմանքով նկատեցի, որ մօտ 5 ժամ ես խօսում, վիճաբանում եմ օրիորդի հետ և դա ինձ չէր ձանձրացնում։

Մեր վիճաբանութիւններից, արտայայտուած հայեացքներից և կարծիքներից օրիորդը չէր կարող չենթադրել, որ իր խօսակիցը մի հիասթափուած, վհատուած անձնաւորութիւն է։ Եւ նա կանանց յատուկ հետաքրքրութեամբ ցանկացաւ շօշափել և այդ հարցը, մի գուցէ կարողանար գուշակել իմ հիասթափման պատճառը։ Խնդիրը բաւական նուրբ էր և փափուկ։ Միայն օրիորդը այնպիսի վարպետութեամբ, զգուշութեամբ դիմեց հարցին, որ նա խոստովանքի կամ մոեքիմ յայտնութեան ձեւ չընդունեց։

Ես բաւականացայ ընդհանուր պատասխանով՝ մի կողմ թողնելով մանրամասնութիւնները։ Մի բառ անգամ չը յիշեցի իմ տանջանքների, իմ աստանդական կեանքի մասին։

Նա՝ կարծես աւելի բնազդամբ ըմբռնելով, հասկանալով բոլորը, գուշակելով իմ կիսատ թողած պատմութիւնը, չը վերջացրած նախադասութիւնները, բաղմակէտերը, — սկսեց երկարօրէն խօսել հիասթափման մասին ընդհանրապէս։

Ես լսում էի նրան ուշադրութեամբ, բռնկուած

հետաքրքրութեամբ: Նրա խօսքը ուժեղ էր, անյողդողդեղ լոժիկ: Այդպեղ հնչում էր անկեղծ զգացմունք, խորին համոզմունք: Նրա ասածները ոչ լոկ տրամաբանական եզրակացութիւն, զուտ դատողութիւն, սխալիզմների հետեւանք էր, այլ ինձ թւում էր, որ օրիորդը ինքը ևս անցել է մի այդպիսի բովով, ինքը ևս ընկճուել, վհատուել է. ինքը ևս տանջուել, չարչարուել է. ինքը ևս ունեցել է իր Գողգոթան. ապա անվկանդ, անապակ դուրս է եկել առաջտանքի այդ ամեն ինչ հալող հնոցից...

Նրա աչքերը փայլում էին սփորականից աւելի կենդանութեամբ. դէմքը փոխուել, մի առանձին, մի վեհ արտայայտութիւն էր ստացել: Նա խօսում էր խորին կերպով զգացուած, ոգեւորուած: Ես՝ հիացած, դրեթէ յափշտակուած, նայում էի այդ ուժեղ բնաւորութեան տէր քնքոյշ էակի վրայ: Նայում էի և չէի ուզում խանգարել, ընդհատել նրա խօսքը, չէի ուզում պատասխանել, հերքել նրա արդումենտներից մի բանիս: Այնքան ինձ բաւականութիւն էր պատճառում այդ սրտաբուխ, անկեղծ, կենդանի խօսքը:

Օրիորդը վերջացրեց:

Բոպէաչափ ես լուռ էի: Ես ցանկանում էի պատասխանել նրան երկարօրէն: Ես ուզում էի բացուել, յայտնել իմ սիրտը կորզող ցաւերը: Ես կամենում էի նրա առջև բանալ իմ հիատթափման ամբողջ պատմութիւնը: Այն ժամանակ, — մտածում էի ես, — նա կը համոզուի, կը համաձայնի ինձ հետ, որ իրօք ես շատ դժուար, բացառիկ, իր տեսակի մէջ եզակի դրութեան մէջ եմ, որ իմ պրօբլէմը համընդհանրական «լինել-չը լինել» է, մի գորդեան հանդոյց, որը լուծելու համար անհրաժեշտ է Մակեդոնացի ծնուել... Ես այդ չարի: Այլ բաւականացայ մի բանի ընկալիկաներով: Նրանց հետեւեց օրիորդի ոչ պակաս համոզեցուցիչ արդումենտացիան:

—Գիտէք, օրիորդ,—նկատեցի ես վերջապէս,—գործ էլ կայ, գործ էլ:

—Ինչ գործ էլ որ լինի: Ջրի կաթիլը. ինչ է ջրի կաթիլը, նրա դիմացկանութիւնը, մեծութիւնը, առձգութիւնը՝ համեմատած ժայռ-քարի ամրութեան հետ: Բայց նա՝ կաթ-կաթ ծորալով ծակում է նոյն քարը և ճանապարհ հարթում իր համար: Յիշեցէք և մի մըլիւնի Լէնկ-Թէմուրին տուած օրինակը...

—Այդ այդպէս է, ճիշտ է: Դուք իրաւացի էք, բայց...

—Ինչ բայց: Ասում էք գործ էլ կայ, գործ էլ: Մի անգամ չը յաջողուեց, նորից սկսեցէք. փորձեցէք երկրորդ, երրորդ, չորրորդ... անգամ... Վերջապէս ձեռնարկեցէք մի այլ գործ:

—Ա՛խ, դուք չը գիտէք՝ թէ ինչ կապերով եմ ես եղել կապուած այն գործի հետ: Իմ հոգու, իմ էութեան մի մասը, եթէ չասեմ ամբողջը, դրուած էր այնտեղ, այն գործի մէջ: Առանց նրան ես մեռած եմ... Ով գիտէ՝ գուցէ այդ հիասթափումը և ինքնասպանութեան դուռը հասցնէր ինձ, եթէ...

—Ներեցէք նկատողութեանս: Ինքնասպանութիւնը թուլամորթութեան, փաքրոգութեան, աւելի ճիշտն ասած, էգօիզմի նշան է: Դուք մեր ծանօթութեան սկզբում խօսում, շեշտում էիք ձեր ժողովրդի անկրթութիւնը, նրա թշուառ կացութիւնը: Մի՞թէ այնտեղ բիշ անելիք կայ ձեզ նման անհատների համար...

Մեր վիճաբանութիւնը այդտեղ ընդհատուեց: Մենք արդէն հասել էինք Ինսպրուք: Հարկաւոր էր փոխել գնացքները:

VII

—Ես այլ եւս խոյս չէի տալիս օրիորդից: Ընդհակառակը ինքս ինդերեցի՝ թոյլ տալ միասին ճաշել և միասին շարունակել մեր ճանապարհը: Կարծես մի ներ-

քին համակրութիւն էր ստեղծուում մեր երկուսիս մէջ։ Նրա առոյգ, զօրեղ խօսքը մի տեսակ թարմացնում, մխիթարում էր ինձ։ Ես դարձեալ կարօտ, դարձեալ փափագում էի նրան լսել։

Մինչ Վիեննա դեռ միասին էինք, ուրեմն գրեթէ մի ամբողջ օր։

Սակայն հասնելով Վիեննա՝ ես ցանկացայ մի քանի օր մնալ։ Մի քանի օրը դառաւ չաբաթ, չաբաթը՝ ամիս, նոյն իսկ մի քանի ամիսներ։

Ես գրեթէ ամեն օր տեսնուում էի օրիորդ Իդայի հետ, — այդպէս էր նրա անունը։ Յաճախում էի և նըրանց ընտանիքը, ուր ինձ ընդունում էին շատ սիրալիւր կերպով։

Մենք կարողացանք շատ մօտիկուց ծանօթանալ իրար հետ։ Մենք երկար ժամերով խօսում, վիճաբանում էինք։

Ես առիթ ունեցայ պարզելու իմ պեռիմիտտական հայեացքները, պատմելու իմ ցաւերը, իմ աստանդական կեանքը... Ես չը ծածկեցի Իդայից և ոչ մի բան։

Ես չէի սխալուել՝ ենթադրելով, որ նա եւս մի ժամանակ վհատուել, ընկճուած է եղել... Օ՛հ, ինչպէս էինք մենք իրար հասկանում, ըմբռնում... Եւ այն ներքին համակրանքը, որ մենք լուեկայն տածում էինք փոխադարձաբար միմեանց, այժմ աւելի անդրդուելի, աւելի հաստատ հիմքերի վրայ էր հանգչում։

Խօսելով հիասթափման մասին, օրիորդը ակնարկեց իր գործունէութեան վրայ, որով նա կարողացել է խուսափել, ազատուել այդ վիշապի սուր ճանկերից։

Ես գիտէի, որ Իդան կանանց և որբերի խնամատար ընկերութեան անդամ է։ Նա ամբողջովին կլանուած էր այդ գործերով։ Յերեկը գրեթէ հանգստութիւն, դադար չունէր։

Այժմ առիթից օգտուելով ես նկատեցի, որ նա չափազանց շատ է ծանրաբեռնուած գործերով։

— Ի՞նչ արած, — պատասխանեց նա շտապով։ Զէ

կարելի խօսմ' ամբողջ ժամանակ փիլիսոփայութեամբ զբաղուել, աշխատել, ճիգ թափել՝ անդրադարձնել, վերացնել այն հարուածը, որ արդէն հասցրել են ձեզ հանգամանքները: Ձէ կարելի խօսմ' մի սոսկալի դժբախտութիւնից յետոյ ձգել, թողնել ամեն ինչ: Մոռանալ ժողովուրդ, գրականութիւն, հասարակական պարտականութիւն...

—Ո՛չ. դա անկարելի է. դա յանցանք է,—չեշտեց նա: Ժամանակը իր պահանջներն ունի: Նա սուրը ձեռքին կանգնած է մեր առջեւ և պահանջում է իւրաքանչիւրիս կատարել նրանցից մէկն ու մէկը: Բանականութիւնից և սրտից զուրկ էակները միայն կարող են լրբութեամբ անցնել անհուն թշուառութիւնների առջեւից:

—Ես եւս,—չարունակեց Իգան քիչ լռութիւնից յետ,—կեանքիս մէջ հարուած եմ ստացել. թէեւ ոչ այնպէս անողոր, տմարդի, անխիղճ, ինչպէս ձերը: Բայց դարձեալ հարուած էր: Ես եւս ընկճուեցի, վհատուեցի և երես դարձրի բոլորից:

«Սակայն այդ երկար չը տեւեց: Կեանքը բաղխում էր իմ դուռը: Ես անուշադիր էի: Մի, երկու, երեք... անգամ: Նա շարունակում է ծեծել, ոյժ դնելով մտնում է սենեակս: Եւ ես լսում եմ հաղարաւոր թշուառների, կորածների հառաչանք, կոծ և աղերսանքը:

«Ես նորից նետուում եմ մարդկային մրկածովի ովկիանը: Թող մեր արածը՝ սրբել մի երկուսի արտասուքը, ամոքել մի քանիսի ցաւերը, չնչին լինի: Ես համաձայն եմ. դա մի կաթիլ է միայն: Բայց մինչ մենք կ'ունենանք հասարակական, չեմ ասում իդէալական, այլ տանելի կազմակերպութիւն,—այդ կաթիլները եւս անհրաժեշտ են:

Այս խօսակցութեան ժամանակ աղախինը բերաւ մի բեռը նամակներ՝ ուղղած «Կանանց խնամատար ընկերութեան»:

—Ահա կեանքը,—ասաց օրիորդը՝ ձեռքը դնելով

նամակները կոյտի վրայ.— ահա այն տխուր իրականութիւնը, որ ձեզ հանգստութիւն, դադար չէ տալիս. շարունակ գործ, գործ և գործ է կոչում, պահանջում:

Օրիորդը առաջարկեց ինձ այն նամակները կարգալ: Նրանց ծրարներից և թերթերից իսկ երեւում էր, թէ ինչ վայրերից են նրանք գալիս. ի՞նչ լուրեր, ի՞նչ խաբրիկներ են գումարում:

Միւս օրը ես եւս սկսեցի օրիորդի հետ միասին այցելել թշուառների թաղը, «տները»: Աստուած միայն տուն համարէ...

Օրիորդը գնում էր. և ես հետեւում էի նրան:

Ոչ մի բառ իրար չէինք ասում: Մեր տեսած թշուառութիւնը, լսած կսկիծ-աղերսանքները կլանել էին մեզ ամբողջովին:

Իդան անցնում էր այնպիսի փողոցներով, ուր ես երկիւղ կը կրէի մեն-մենակ այցելել:

Սակայն ռպլիսի յարգանք և ակնածութիւն էր նկատում բոլորի կողմից դէպի այդ քնքոյշ հակը:

Ես հիացած և զարմացած հետեւում էի օրիորդին, որ մոռանալով կանացի քնքշութիւն, իրան, իր «ես»-ը, նոյն իսկ վտանգի ենթարկելով իր կեանքը, թշուառների խրճիթները մտած, նրանց հոգսերով համակուած՝ նրանցով ապրում, նրանցով էր միայն շնչում և տանջւում:

Նիւթական միջոցներ հայթայթելու համար նա կոչ էր անում լրագրութեան միջոցով: Նա դիմում էր մագաղինները՝ որից փող, որից ապրանք կամ հագուստեղէն ստանում: Նա անվեհեր բաղխում էր և հարուստների դռները: Այդտեղ ևս նա ընդունւում էր յարգանքով:

Նա ինձ յիշեցնում էր յայտնի կին-գրող Սէվըրինին, որի յառաջադէմ գաղափարները թէև շատերը չեն բաժանում, բայց որի յօգուտ թշուառների, լքեալների արած հրաւերը արձագանք է գտնում հարկւարւոր սրտերում:

Բացի այդ Իդան ոչ պակաս ջանք և եռանդ էր գործ դնում և մտաւոր սնունդ տալ կրթութիւնից զուրկ դասակարգին: Կիրականօրեայ դպրոց, ժողովրդական համալսարան, — այդտեղ ևս նա աշխատակցում, մասնակցում էր:

Ես ոգեւորուած, յափշտակուած էի նրանով. նրա բնաւորութեամբ, նրա անխոնջ, անդուլ, անսասան գործունէութեամբ:

Նա ինձ ևս անմասն չը թողեց: Նա ինձ ևս հաղորդեց գործունէութեան երկնային այն կայծը, այն աւիւնը:

Նա ինձ նոր եռանդ, նոր ոյժ, նոր հոգի ներշնչեց:

Եւ ես յարութիւն առայ իմ անծայր հիասթափութիւնից:

Ամեն օր ուղեկցում էի Իդային դէպի բնութեան խորթ զաւակների վայրերը: Աշխատում, օգնում էի նրան իր գործունէութեան մէջ:

Յաճախում էի ժողովրդական համալսարանը, ուր ես ևս կարդում էի շաբաթական երեք դասախօսութիւն:

Եւ այդպէս աննկատելի կերպով անցնում են շաբաթ և ամիսներ:

Զարմանք և բերկրանքով նկատում եմ ես իմ մէջ կատարուած փոփոխութիւնը, իմ փրկութիւնը...

VIII

— Զորս ամիս էր արդէն անցել:

Մի կիրակի օր էր՝ երեկոյեան դէմ: սովորական զբօսանքից վերադառնալով տուն, մենք մտանք դահլիճը, ուր ոչ ոք չը կար: Իդան գլխարկը հանելով՝ մօտեցաւ դահնամուրին և սկսեց նուագել:

Ո՛րպիսի զգացմունք, կորով և եռանդ էր նա հաղորդում այն անշունչ գործիքից ելնող հնչիւններին. նրանց նոր կեանք, նոր ոգի, նոր լեզու ներշնչում, խօսե-

ցնում: Եւ նրանք իրօք խօսում, տրանջում էին, հեծում, ողբում և լալիս...

Հմայուած լսում էի ես այն դիւթիչ հնչիւնները և մի նոր, մի անյայտ զգացմունք՝ բարձրանալով սրբա-տիս խորքերից, խփելով նրա նուրբ լարերին, հեռա-ցրել էր իմ անցեալը. չքացել էր իմ Գողգոթան... Յափշտակուած, կարծես, թեւեր ստացած՝ վերացել, սաւառնում էի ես մի գողտրիկ մթնոլորտում... Տես-նում էի իմ ցնորքները, իմ անուրջները իրագործուած... Երձգ էր այդ՝ Ո՛չ. դա իրականութիւն, դա մի կենդանի ամփոփումն էր իմ մէջ կատարուած փոփոխութիւնների:

Արտասուքը, ո՛չ դաճն, այլ բերկրալի, սփռփիչ, ոգի և եռանդ տուող արտասուքը սեղմում էր կոկորդս... սիրտս արագ, ուրախ բաբախում...

Իդան վերջացրել էր. մնացել տեղը անշարժ, նոյնպէս խորապէս զգացուած: Հրաշալի և աննման էր նա այդ վայրկեանին:

Ես մօտ վազեցի, բռնեցի նրա ձեռները և սեղմե-լով չրթունքներիս՝ անվերջ համբոյրներով ու արտասու-քով ծածկեցի:

Դա մի խորին, անհուն յարգանք էր, իմ առաջին սէրն էր, որ ես մատուցանում էի մի չքնաղ արարածի. իմ հրեշտակին, իմ փրկչին...

—

Թողնելով Իդային Վիեննա, ես վերջապէս եկայ հասայ հայրենիք:

Մի քնքոյշ էակի սկսածը լրացրեց, ամրացրեց հայ-րենի բնութիւնը, հայրենի օդը, հայրենի յարկը...

Եւ որպէս առասպելական Անտէյը նոր ոյժ, նոր զօրութիւն էր ստանում, երբ մօտենում, մերձենում էր մայր-հողին, — նոյնպէս և ես նոր ոյժ, նոր եռանդ ստա-ցայ՝ շփուելով, նորից կապուելով մայր-հայրենիքի հետ, ուր այնքան գործ կայ անելու, ուր, ինչպէս ռուս բա-նաստեղծն է ասում, դեռ՝

... злю вокругъ черезчуръ ужъ гнететъ,
Ночь вокругъ черезчуръ ужъ темна!

—

Ռուբէնը լռեց: Ծխախոտ վառելով՝ սկսեց ծխել:
Ընկերները քիչ մնայլուած՝ լուռ էին նոյնպէս:
Նրանք, կարծես, սպասում էին՝ թէ պատմութիւնը դեռ
պիտի շարունակուի: Նկատելով այդ՝ Ռուբէնը շտապեց
աւելացնել՝

— Ես վերջացրի:

— Ի՞նչպէս թէ վերջացրիր, — բացականչեց Վահանը՝
կարծես սթափուելով: Իսկ քո բօմանք:

— Իմ՝ բօմանք... իմ բօմանք... կրկնեց Ռուբէնը
կարմրելով:

— Այո, այո. քո այն օրիորդը:

— Ես անցեալ ամառ ևս այնտեղ էի: Ծնողները
դժուարանում էին Իգայի ընդ միշտ Կովկաս փոխա-
դրուելուն: Բայց այդ դժուարութիւնն այժմ վերացած
կարելի է համարել: Հայրը արդէն համաձայն է...

— Ուրեմն կարող ենք քեզ շնորհաւորել երկու
յաղթութեամբ, — ասացին ընկերները:

Ս. ՇԽԵԱՆՑ

Ս Ե Ի Վ Ի Ճ Ա Կ

(Աւսուդի երգերից)

Վայ քու օրին, այ ախպէր,
Քու սև օրին, հայ ախպէր.
Կեանքիդ դարդը չի՛ չափուի—
Ծո՛վ է խորին, ջան ախպէր:

Ախպէր, անքուն թըռչուն ես,
Վաթան չունես, տուն չունես.
Դըլիիդ բարձը՝ չոր բար է,
Քընի կարօտ՝ քուն չունես...

Ախպէր, չորցած մի ծառ ես,
Բաղչա-բաղին օտար ես.
Յարգ ու պատուից ընկել ես,
Խալխի դըռան նօթար ես...

Վայ քու օրին, այ ախպէր,
Քու սև օրին, հայ ախպէր.
Կեանքիդ դարդը չի՛ չափուի—
Ծո՛վ է խորին, ջան ախպէր:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԶԵՅԹՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ

Արտաքին յարաբերութիւնները մշակելուց և Լիբանանի խնդիրը կարգադրելուց յետոյ, սուլթան Ազիզը հետապնդում էր նուաճելու Կիլիկիայում գոյութիւն ունեցող ղէքէքէկիներն ու կիսանկախ ցեղերը, և այդ քաղաքականութիւնը անխափր էր ամենի՝ թէ մահմեդականների և թէ քրիստոնեաների նշկատմամբ: 1860—70, այս տասը տարուայ ընթացքում, երբեմն բիրտ ոյժով, երբեմն արեւելեան խորամանկութեամբ՝ նայած հանգամանքներին, նա աջողեց բոլորովին ճնշել Գեաւուլուր-դաւլի ապստամբ քիւրդերը, ընկճել և հպատակեցնել քօղանները, Աղջէ-Դաղին, Պայասի ղէքէքէկիները և հաստատել օրինաւոր կառավարութիւն Մարաշում՝ անկախ Զիւլգադիր ցեղապետների ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւններից:

Դուռը, ինչպէս երևում է, մտադրուել էր նախ նուաճել Զէյթունը, որ նկատուած էր զօրաւոր և վտանգաւոր ոյժ միւս ապստամբ ցեղերի շարքում, և արդէն 40-ական թուականներէ ի վեր զաշնակցել էր Քօղան-օղլիների հետ սուլթանի կառավարութեան դէմ: Եւս առաւել, կառավարութիւնը փութացրեց Զէյթունի նուաճումը, երկիւղ կրելով, որ այս վերջինի շարժումները կարող էին առիթ առաւ եւրոպական այս կամ այն պետութեան՝ միջամտելու թիւրքիայի ներքին գործերի մէջ և արծարծելու զանազան խնդիրներ: Արդէն նմանօրինակ բազմաթիւ փորձութիւններ նա ունէր Յունաստանի, Բալկանեան փոքր ազգերի և Լիբանանի քրիստոնեաների շարժումներից առաջացած:

1862 թուի ամառուայ սկիզբները Զէյթունի շուրջը տեղի ունեցան մի քանի աննշան դէպքեր, որոնք յարմար պատրուակներ կայացան թիւրք կառավարութեան՝ իրադործելու իր մտադրութիւնները Զէյթունի նկատմամբ: Քաղաքի հիւս. արեւելեան կողմը հաստատուած Քէթմէն և Բէշէն թիւրքաբնակ զիւլա-

ցինները միմեանց հետ ունեցան կռիւ և սպանութիւններ: Բէ-
շէնի ընակիչները, ինչպէս սովորաբար, գիմեցին Ալաբաշի
յայտնի զիւղապետ Կարապետին՝ միջամտելու և կարգադրելու
իրանց ներքին վէճերը: Քէթմէնցիները մերժեցին Կարապետ
քէհնային և դէնքով ընդդիմացան: Տեղի ունեցաւ ընդհարում
հայերի և թիւրքերի մէջ և սպանուեց մի հայ և եօթը թիւրք,
որոնք պատկանում էին Քէթմէնի յայտնի մի ընտանիքի: Բէ-
շէնի թիւրքերը կռուի միջոցին միացել էին հայերի հետ՝ ընդ-
դէմ Քէթմէնի թիւրքերի: Յաղթուած քէթմէնցիները գիմեցին
Մարաշ և բողոքելով կառավարիչ Ազիզ փաշային՝ պահանջեցին
ապստամբ Ջէյթունցիներին պատժուելը: Միևնոյն ժամանակ
բէշէնցիները մի պատգամաւորութիւն ուղարկեցին Մարաշ՝
բացատրելով որ այդ գործի մէջ հայերը չունեն որևէ մեղք,
ընդհակառակը թիւրքերն են յանցաւորները: Մարաշի կառա-
վարիչը, առանց ուշադրութիւն անգամ դարձնելու վերջինների
խնդրագրերին, առաջացրեց պատերազմական պատրաստութիւն՝
անմիջական յարձակում գործելու Ջէյթունի վրայ: Իսլամ հա-
սարակութեան մէջ տարածուել էր, թէ սալմալիները նորից
ապստամբել են և կոտորել կրօնակից եղբայրներին:

Փակագծի մէջ պէտք է ասել, որ ապստամբ ցեղերին
նուաճելու և իր ծրագրերը իրագործելու համար Դրան առաջ
բացուել էր մի նոր անակնկալ միջոց: Նա զրկարաց ընդու-
նեց Կովկասից և Արևելեան Թիւրքեստանից եկող հարիւր հա-
զարաւոր իսլամ մուհաջիրներին, որոնք չարաչար տարաւում
Ռուսաստանի ոյժի տուալ, խուսափում էին իրանց բնիկ եր-
կրից: Նողայի թաթարներն ու Դաղստանի լեռնաբնակ վայրե-
նի ցեղերը, որոնք սուհասարակ ծանօթ են թիւրքիայում չէր-
քէզ անունով, սուլթանի կողմից վայելելով բարոյական և նիւ-
թական հոգածութիւն, հազարաւոր ընտանիքներով իրանց
զխաւորների հետ միասին անցկացան թիւրքիա: Գաղթակա-
նութիւնը աւելի ընդարձակ ծաւալ ընդունեց մանաւանդ Շա-
միլի պատերազմների և պարտութեան ժամանակ: Սուլթան
Ազիզը, խալիֆայի գահը դեռ նոր բարձրացած, ջերմ պաշտ-
պանութիւն ցոյց տուեց նրանց բնակեցնելով հայաշատ նա-
հանգները և նուիրելով երկրի ամենալաւ հողերը: Կիսանկախ
և ըմբոստ ցեղերին նուաճելու դժուար գործը յանձնեց այդ
գաղթականներին և միանգամայն խոստացաւ պարգևել նրանց
այն ամեն գաւառները, որոնք կարող կը լինեն կորզել ապրս-
տամբ դէրէշէկիներից կամ ցեղերից:

Քէթմէնի գէպրից մի քանի չարաթ յետոյ, Ազիզ փաշայի
առաջնորդութեամբ Մարաշում համախմբուել էին մի քանի

հազար չէրքէզ և նողայի թաթար: Սուլթանը խոստացել էր նրանց յանձնել լեռնային, անմատչելի Ձէյթունը, երբ բնակչութիւնը կոտորուած և երկիրը գրաւուած կը լինէր *): Փանատիկոսութեան դրօշը պարզուել էր Մարաշում և շրջակայ մահմեդական ազգաբնակչութիւնը գունտ-գունտ գիւմում էր, համախմբուած նրա շուրջը: Թիւրք կառավարութիւնը, ինչպէս պատմում են, յայտարարել էր իր պատմական նշանաւոր խօսքը— «մալ եաղմա, ըրզ հէլալ, բաշ բէկլիք»: Թիւրքմէն զանազան ցեղերը, Աղջէ-Դաղի քիւրդերը և Գարս-Բազարի ղէրէրէկիւնները ուրախութեամբ ընդունել էին Աղիզ փաշայի հրաւերը:

Օգոստոսի 6-ին (հ. ա.) Աղիզը սպառնական կերպով գէյթունցիներից պահանջեց—ա) Անպայման զինաթափութիւն, բ) 1000 քսակ դրամ (մօտաւորապէս 100,000 ֆր.), գ) Ամինազլիսաւորն է, չորս իշխանների և յայտնի մարդկանց անձնասրուքիւն: Ձէյթունը արհամարհանքով մերժեց փաշայի սոյն առաջարկները:

Օգոստոսի 7-ին թիւրքական բաղմացեղ բանակը երկու լեռնային թնգսնօթներով, ճանապարհ ընկաւ Մարաշից և նոյն օրը երեկոյեան հաստատուեց Բերդուսի գետակի եզերքը՝ Ալաբաշի հանդէպ: Հետեւեալ օրը խումբ-խումբ թիւրք զինուորներ կտրոււմ են Ձիհանը և անցնում Ալաբաշի հողի վրայ: Նրանց առաջին զործն է լինում հրդեհել Ալաբաշի օբաները և կոտորել բնակիչների անդէն մասը, որ գեռ չէր կարողացել Ձէյթուն ապաստանել:

Շրջակայ հայ գիւղացիները նոյն օրը, թշնամուն թողած իրանց տներն ու անասունները, խոյս են տալիս Ձէյթուն: Բարձր լեռներն ու կիրճերը պահպանող հայ լրտեսները մինեոյն օրը հաղորդում են թէ Ձիւլպաղիի Ահմէդ փաշան 5,000 բաշիքօզուկների զլուխ անցած, Ալքիստանից անցել և բանակ է դրել Ղսուխի մօտերը: Իսկ Ինկիլիզ Հասան անուն փաշան նոյնքան բազմութեամբ առաջացել է Անարունի ճանապարհով և Միսալ ու շրջակայ հայ գիւղերը հրդեհելով՝ հաստատուել է Ձէյթունի արևմտեան կողմը, հաղլա երկու մղոն հեռու:

Ձէյթունը պաշարուած էր: Երեկոյեան դէմ վանքի և եկեղեցիների զանգալները հնչում են երկար ժամերով: Դաքաղաքի կողմից հրաւէր էր հասարակութեան՝ զինուորուելու և համախմբուելու իշխանների տան առաջ կամ եկեղեցիների բակում:

*) Այս բովանդակութեամբ սուլթանի մտանաւոր ֆէրմանը՝ ուղղուած չէրքէզ բէկերին, զոնուեց չեռագալ կուում սպանուած բէկերից մէկի զրգանում:

Ընդհանուր ժողով էր գումարուել զիշերը Միջին-Թաղի եկեղեցում, ուր ներկայ էին չորս իշխանները,—Եէնի-Դունեհանե Աստուածատուր՝ Վերի Թաղից, Եաղուբեան Մկրտիչ՝ Կարկալարից, Շորվոյեան Ղաղարոս և Բալճեան՝ Բօղ-Բայրիբից, Սուրէնեան Նազարէթ՝ Միջին Թաղից,—յայտնի աղաներ և Ալաբաշի ու Մխալի զիւղապետները։ Դրութիւնը ճակատադրական էր. պէտք էր մղել գոյութեան օրհասական կռիւը։ Միաձայնութեամբ կայացնում են որոշումներ և գործունէութեան եղանակ։

Գիշերը կէս էր եղել։ Վերի և Սուրէնեան Թաղերից մօտ 100 զինուած աղամարդ, Եէնի-Դունեհաների առաջնորդութեամբ բարձրանում են քաղաքի հիւսիսային զառիվերից և ուղղւում դէպի Ղսուխը, որի խորութեան մէջ հանգստանում էր Ահմէդ փաշայի բանակը հարիւրաւոր խորոյկներ վառած։ Բոլորովին ապահով որո՛հ պատահականութեան առաջ, սեփական վրանի ներքե նարդիլէ էր զլղայնում փաշան։ Արշալոյսից մի ժամ առաջ զէյթունցիների նորեկ խումբը միանում է Ղսուխը լրտեսող որսորդական խմբերի հետ և, մի քանի մասի բաժանուած, անակնկալ կերպով յարձակւում են թիւրք զինուորների վրայ։ Մի քանի ժամուայ յանդուգն գործողութիւնից յետոյ թշնամին, հարիւրաւոր զիակ, գէնք, ռազմամթերք և ուտեստ թողած կռուի դաշտը, ցիրուցան խոյս է տալիս դէպի Ալբիստան. իսկ լեռնականները իրանց աւարով վերադառնում են Զէյթուն և օղնութեան դիմում այն խմբերին, որոնք կռուի մէջ էին զանազան կողմեր։ Սոյն առաջին յաղթութիւնը խրախոյս և ոգևորութիւն ներշնչեց զէյթունցիներին *)։

Նոյն գիշեր մի խումբ կարկալարցիի և Մխալի զիւղացիներ դիմում են Հասան փաշայի բանակը և արիւնհանգ ընդհարումից յետոյ, որ տեւել է հազիւ մէկ և կէս ժամ, թշնամին նահանջում է խոյս է տալիս դէպի Ալիզ փաշայի բանակը։

Բացի սոյն երկու մասնակի ընդհարումներից, այդ օրը ամենամեծ կռիւը տեղի ունեցաւ Ալաբաշում, Չաղըր-Դէրէ կոչւում աեղը։ 500 բօղ-բայրցիներ, իշխան Ղաղարոսի հրամանատարութեամբ, ճանապարհ են ընկնում գիշերանց դէպի Ալիզի բանակը։ Լուսաբացին ալաբաշցիների և Զէյթունից եկած ուրիշ խմբերի հետ միացած, նրանք ամրանում են Չաղըր-Դէ-

*) Դեռ թարմ աւանդութիւնը պատմում է, թէ այս կռում մասնակցել է Պալիկ փաշան։ Դեռ 15 տարեկան մի պատանի, նա նախաջարձակ է լինում Ահմէդ փաշայի վրանի վրայ և փորձ անում սպանել նրան, սակայն անաջող, որովհետեւ թիւրք փաշան աւելի շուտ փախուստի էր դիմել, Պալիկը չափշտակել է նրա արծաթէ նալդիլէն, որի վրայ դեռ տակաւին վառւում է եղել ձխախոտը։

քէի բարձր բլուրների վրայ՝ յարձակում գործելու նպատակով: Թշնամին ցրուած էր ամբողջ ձորամէջը և բլուրների վրայ, և այգավիտի մի անյարմար տեղ կռիւ մղել միայն հազար հոգով մի զօրաւոր և ստուար բանակի դէմ, բաղկացած 35,000 մարդկանցից՝ յանդուգն և կորստաբեր մի քայլ էր: Հայերի մէջ հարց է յարուցւում թշնամու հետ այդտեղ ճակատելու մասին և շատերը մասնացոյց անելով դիրքի անյարմարութիւնն ու յաղթանակի վտանգուած լինելը, պնդում են Զէյթուն վերադառնալ: Բայց ընդհանուր պետք, Շորվոյեան, որ ողջ է այժմ և արեւադարձ մի ծերունի, ընդգրկմանում է նրանց և չեչտում, թէ չը պիտի փախչել, հարկաւոր է յարունակել կռիւը: Յարձակման առաջին նշանը տրւում է հայոց կողմից մի ընդհանուր հրացանաձգութեամբ: Թշնամին ամեն կողմերից առաջանում է և կարճ ժամանակի ընթացքում կարողանում է պաշարել և սեղմել հայերին ղինուորական շղթայի մէջ, հակառակ նրանց հերոսական դիմադրութեան: Կռիւը շարունակւում է ամբողջ չորս ժամ, և հայերը տեսնելով որ անհնարին է պաշտպանուել այդ բլուրների վրայ, որոնք ռազմական դիրք ու յարմարութիւն չունեն, հետզհետէ նահանջում են: Բայց այդ ուշ էր. թշնամին փակել էր խուսափելու ամեն ճանապարհ: Հայոց սոյն խմբերը, որոնք գտնւում էին հիւսիսային բլուրների վրայ և խառն էին ալաբաշչիների հետ, կարողացան կտրել թշնամու շղթան և՛ ձորերի միջով, աւելի կարճ անցքերով, որոնց ծանօթ էին ալաբաշչիները, հասնել Զէյթուն: 72 բոգ-բայերցի մի խումբ, որ գտնւում էր կռուի աւելի խորքերը, հնաւորութիւն չունեցաւ աղատուել: Հերոսական դիմադրութիւնից յետոյ նրանք բոլորը ընկան այնտեղ. նրանց ոսկորները թաղուած են Չազըր-Դէրէից չորս մղոն հեռու դէպի հիւսիս-արեւելք, ուր տեղի ունեցաւ կոտորածը և որ կոչւում է Գերեզմնոց: Այդ կռուի մէջ հայերի կորուստը հասնում է ընդամենը 102 հոգու:

Ազիզը, համախմբելով հիւսիսային արեւմտեան բանակների փախստականներին, նոյն այդ օրը առաջացաւ մինչև Զերմուկի դաշտը և կանգնեց վրաններ: Ս. Փրկիչ վանքը նախ և առաջ ենթարկուեց թալանի ու հրդեհի, և մի վարդապետ ու երկու սարկաւազ, որոնք յամառեցան մնալ վանքում՝ արապաշտպանութեան համար, սպանուեցան: Չորրորդ օրը թշնամին մի փորձ արեց քաղաք մտնելու, բայց ուժգին ընդդիմութեան բաղխելով՝ վերադարձաւ նախկին տեղը:

Օգոստոսի 15-ին, Աստուածածնի տօնին, որ Զէյթունի համար նուիրագործուել է որպէս յիշատակելի մի օր, թշնամին պատրաստւում է վճռական յարձակում գործել: Ազիզ փաշան

հրահանգել էր բաժան-բաժան չը դործելու Բանակի ամբողջական թիւը, միասին առած չերքէզներն ու նողայիները, համաձայն պաշտօնական աղբիւրի, հասնում էր 44,000-ի:

Արեւ կրեալուց յետոյ թիւրքական բանակը շարժուում է: Փորձառու կղած երեք օր առաջ տեղի ունեցած անաջող կոռւից, վաչան աշխատում է նախ դրաւել Փրկիչ լեռան բարձունքները և նոյն շղթայի ուղղութեամբ առաջանալ գէսլի քաղաք: Բանակի մի մասը հասել էր Բերդինկայի տափարակ գլուխը, իսկ միւս մասը, հեծկազնի առաջնորդութեամբ, կտրում է Սաղիր կոչուած բլուրները՝ քաղաքի արեւելեան կողմը: Բանակը դիմում էր Զէյթուն խառնիխուռն ընթացքով և օփռուած բլուրների վրայ ու ձորերի մէջ: Իւրաքանչիւր աշիրէթ կամ ցեղ, մի-մի բարխանա կազմած, իր զրօշակի հետ հետևում էր ընդհանուրի հստանքին: Մի մեծ զրօշակ, չըջապատուած հետիոտն զինուորներով, և մի քանի կրածչտական խմբեր առաջնորդում էին բանակին: Վերջինները ածում էին թմբուկ, զուռնա և սփական այլ և այլ ազմկալի նուագարաններ:

Ամբողջ քաղաքը շարժում էր: Վանքի և եկեղեցիների զանգակները, ըստ հին աւանդութեան, հնչում էին անվերջ: Կիներ խումբ-խումբ դիմում էին կամուրջները՝ մասնակցելու ընդհանուր շարժման: Բոլոր չափահասները, զինուորուած, քաղաքից դուրս վազում և ամրանում էին զուլաների ետև: Բերդինկայի բարձրերից թնդանօթների որոտը իշխում էր այդ բլուրի վրայ, անընդհատ արձագանքներով: Հրացանաձգութիւնը սկսել էր ամեն կողմ և կոիւր ստանում էր սուր կերպարանք Սաղիրի և Բերդինկա լեռան ստորոտը: Յարձակուողների շատութիւնը անհամեմատելի էր և ընթանում էր ինչպէս հեղեղի անդիմադրելի մի հոսանք: Այդ բլուրների վրայ, քաղաքից մի ժամ հեռու, պատերազմը տեսց երկու ժամ, և հայերը, նկատելով որ անհնար է կսիւր շարունակել այգտեղ, կանոնաւոր կերպով նահանջում են քաղաք:

Յարձակման երրորդ ժամին թշնամու ահազին բանակը ձգուել էր քաղաքի առաջ՝ Բերդինկայի ստորոտից մինչև Անէ-Չոր, մինչև Զէյթունի գետակը, և ամբողջ զառիվայրը թաղուել էր թանձր ծուխի տակ: Թնդանօթները ցածր էին բերուած և որոտում վանքից հազիւ քսան րոպէ հեռու: Հայերը ամբացել էին տները և քաղաքի շուրջը գտնուած քարերի ետև, որտեղից թափում էին դնդակները թիւրք զինուորների վրայ: Տիպական է այն, որ Կարկալար թաղից հիւանդ, անդամալոյծ մի ծերունի ինքն իրան քարչ տուած հազիւ կարողանում է իրան տանել կռուի վայրը: Հրացանն ու ռազմամթերքը դրած առաջը,

մենակ նստում է մի զուլայի ետև, և երբ հեռուից ծածանում է թշնամու մեծ զրօշակը, գնդակահար է անում զրօշակրին: Մօտ մի տասնեակ զինուորներ փորձելով բարձրացնել ընկած զրօշակը, յաջորդաբար զոհ են դառնում ծերունու գնդակներին:

Ազիզի բանակը բոլորովին վստահ Չէյթունի զրաւման մասին, անարգել առաջանում է քաղաք, և արդէն զինուորների մեծագոյն մասը իջել էր պատմական Ձորը՝ Գրբում-Դէրէն: Կը-ռիւը օրհասական երևոյթ էր առել Բօզ-բայիւրի զիմաց՝ բլուր-նների վրայ և վանքի շուրջը, որտեղ երկու հակառակորդները գրկախառնուել էին և սրերով կռուում: Մի քանի հարիւր չեր-քէզ, ձեռքները քարիւղով լի արկղներ և այլևայլ վառելու նիւթեր, վազում են քաղաք՝ աները հրդեհելու համար: Վանքի շուրջը, միաժամանակ, ներկայացնում է արիւնալի տեսարան: Մի քանի առանկակ կտրիճներ այնտեղ ամրացած՝ պատուհանից անդադար տեղացնում են գնդակներ և հնարաւորութիւն չեն տալիս թշնամուն մերձեցաւ այդ անասիկ հաստատութեան: Մի սղաւարդ դուրս է դալիս վանքից, արագ սլանում է դէպի թնդանօթը և սրի հարուածով սպանում է թնդանօթածիգ զինուորին, սակայն քիչ յետոյ գնդակների հարուածի տակ լեռնային ընկնում է իր զոհի զիակի վրայ: Քաղաքի հարաւային կողմը չերքէզները մօտեցել են աներին. նրանցից մինը հասնում է մի հայ կնոջ, որ վառօդի պարկը ունի օգնութեան է հասնում իր տղամարդին, և՛ «սեմ բանա մամա օլաջագ»... (գու իմ կինը պէտք է լինես) ասելով յարձակւում է նրա վրայ: Բայց չերքէզը դեռ ևս տակաւին չաւարտած խօսքը, թաւալւում է կնոջ ոտքերի առաջ: -

Կէսօրը անցնում էր և տակաւին յաղթութիւնը որոշ չէր: Հետեւալ գործողութիւնը վճռում է կռուի ճակատագիրը յօգուտ Չէյթունցիների: Երկու ժամ առաջ Եէնի-Դիւնեան գերդաստանի զրեթէ բոլոր կտրիճները Բերզինկայի նեղ կիրճով անց են կենում լեռան միւս կողմը և, միանալով մի քանի խումբ լեռնականների հետ, որոնք առաւօտը կանուխ ամրացել էին այդ կողմերը, — կէսօրուայ միջոցին, երբ պատնիւղմը գտնւում էր օրհասական ճգնաժամի մէջ, անսպասելի կերպով յարձակւում են բանակի աջ թևի վրայ և սեղմում: Միևնոյն ժամանակ Չէյթունցիները գոռում-գոչումով առաջ են խաղում զանազան կողմերից: Թշնամին իրան կորցնում է քարքարոս և սնելանելի ձորերի ու կիրճերի մէջ, որոնց հետ ծանօթ չէ, և նրանց ամեն մէկ անկիւնից, ամեն մի թուփի կամ քարի տակից բարձրանում են, ինչպէս ուրուական, լեռնականի հրացանի ծուխի

քուլաները, լվվվում նրա զնդակը, մինչդեռ ինքը լեռնականը
չէր նշմարում:

Կէսօրից շատ յետոյ թշնամին, յուսահատուած քաղաքը
գրաւելուց, անկանոն կերպով նահանջում է: Զէյթունցիքն
դուրս է գալիս իր բոյնից և հետապնդում փախստական բա-
նակին մինչև Փրկչի վանքը: Յարձակուողների մի մասը այդտեղ
թաւանով ու աւարով է զբաղւում, իսկ միւս մասին իշխաննե-
րը արգելում են բաց դաշտում թշնամուն հալածել, համարե-
լով այդ վտանգաւոր: Այն զիւղացիները, որոնց աները վառ-
ուած էին, կսկծալի սրտով հետամուտ են լինում մինչև Զիհան:
Հայերը գրաւում են երկու թնդանօթ, հարիւրաւոր զէնք, ձի,
մեծ քանակութիւն ուտեստի և բանակի գոյքերը:

Միայն Գըրըմ-Դէրէում և վանքի շուրջը սպանուած էին
1500 զինուոր, որոնց զիակները քարշ տրուելին մինչև
գետակը: Սպանուածների մեծագոյն մասը չերբէզներ էին
և ի միջի այլոց յայտնի բէկեր, որոնք Շամլիի հետ երկար
ու յամառ կռիւներ էին մղել ուսական բանակների դէմ:
Նրանցից մէկի պաշտօնակում հայերը գտան զանազան պաշ-
տօնական զօկիւմէստներ, ինչպէս նաև սուլթանի մի իրա-
դէն, որով Զէյթուն գաւառը չերբէզներին էր շնորհւում,
եթէ նրանք կարողանային կոտորել բնակիչներին:

Յաղթութիւնից յետոյ անմիջապէս զէյթունցիները մի
խաչ կանգնեցրին քաղաքի արևելեան կողքը մի մեծ ժայռի
վրայ և անուանեցին Խաչ-փառ: Այդ է սահմանը, մինչև ուր թըշ-
նամին առաջացաւ և յետոյ պարտուած փախուստի գիւմից: Ա-
շուղները յօրինեցին զանազան տաղեր, որոնցով երգում են
կարեւոր գէպերը և քաջագործութիւնները պատերազմի ընթաց-
քում:

Սոյն պարտութիւնը անախորժ տպաւորութիւն թողեց
կառավարական չրջաններում: Սուլթան Ազիզը հրամանագրեց
անմիջապէս պատրաստել մի բանակ աւելի ստուար քան առա-
ջինը: Զէյթունցիները տեղեկանալով այդ, մի հանրագիր պատ-
րաստեցին և Շահնաղարեան Կարապետ վարդապետի միջոցով
ներկայացրին Նապօլէօն III-ին՝ Պարիզ, Այդ խնդրագրով նը-
րանք նկարագրել էին իրանց սպառող անխուսափելի վտան-
գը և խնդրել միջամտութիւն Դրան առաջ: Նապօլէօնը անմի-
ջապէս հեռագրում է սուլթանին Պօլիս և պահանջում է դա-
դարեցնել թշնամութիւնը Զէյթունի քրիստոնեաների հետ և
հրաժարուել այնտեղ նոր բանակ ուղարկելու մտադրութիւնից:
Սուլթանը՝ արդէն չլիւում Սիւրէական անցուղարձերից, դա-
դարեցնում է պատերազմական գործողութիւնները:

Մի քանի ամիս յետոյ երեք հոգուց կազմուած մի յանձնախումբ, սուլթանի մասնաւոր կարգադրութեամբ, գալիս է Չէյթուն: Նրանք զանազան խոստումներով համոզում են իշխաններին՝ հնազանդուել, և գրաւուած թնդանօթներն ու ռազմամիջերընքը յետ վերցրած՝ վերադառնում են Մարաշ: Քիչ յետոյ գնում են նաև չորս իշխանները այլ և այլ կարգադրութիւններ անելու և յարաբերութիւններ մշակելու կառավարութեան հետ, սահլայն, հակառակ պայմանների և տրուած խոստումների, անմիջապէս Մարաշից սրանք ուղարկւում են Պօլիս, ուր մի քանի շաբաթ բանտարկուելուց յետոյ ազատ են թողնւում եւրոպական զեսպանների միջամտութեամբ:

Թէև նոր բանակ չուղարկուեց, բայց Չէյթունը արդէն կղզիացած զրութեան մէջ էր և անհնար էր յարաբերութիւն վերսկսել չրջակայ գաւառների հետ: Այդ կայութիւնը տևեց ամբողջ երեք տարի, և այդ ժամանակի ընթացքում զէյթունցիները բազմաթիւ ընդհարումներ ունեցան մահմէդականների և մասնաւորապէս չերքէզիների հետ. վերջինների և հայերի մէջ ատելութիւնը այն աստիճանի լարուած էր, որ երկու կողմից խմբերը կտրել էին երկրի նեղ անցքերը՝ միմեանց օրսալու և սպանելու համար:

1865 թ. Դրան աջողուեց վերջապէս կառավարութեան պաշտօնէութիւն հաստատել Չէյթունում: Այդ առաջին անգամն էր որ սուլթանի ներկայացուցիչները ոտք դրին ազատ լիոնականների հողի վրայ և դրանով այնտեղ գոյութիւն ստացան թիւրքական օրէնքներն ու կարգերը: Քաղաքի արևելեան կողմը, հազիւ հինգ վայրկեան հեռու, մի զառիվայրի վրայ, կառուցուեց մի մզկիթ և կառավարական շէնքը, ուր բնակւում էին մի գլխամագամ, նրա օգնականը և մի քանի ոստիկաններ:

1863 թ. սկիզբները Նապօլէօնը ուղարկել էր մասնաւոր մի քննիչ տեղեկագրելու Չէյթունի բնակիչների զրութիւնը:

Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Ի Ն

Իբրև համահերոսական զբամատուրգ.—Իբրև հակառակորդները (Բ. Փօն Գոթշալ).—Իբրև միատիկականութիւնը (Լէօ Բէրգի նկատողութիւնները).—Նորվեգական բնութեան նշանակութիւնը.—Իբրև կեանքից մի քանի գծեր.—1848-ի չեղափոխութիւնը.—Եւրոպայի և անհատի բարոյական արժանիքի մէջ եղած յարաբերութիւնը.—Եւրոպական շիրիմը.—Իբրև Բերգէնում.—Եւրոպայի տիրուհին.—Եւրոպայի տօնը, Եւրոպ Լեյկէկըանը.—Իբրև Քրիստիանիայում.—Եւրոպային ուղղութիւնը Նորվեգական զբանուրթեան մէջ.—Եւրոպային զօրարշաւը.—(Եւրոպիզմի և Եւրոպիզմի զազաւարը).—Եւրոպայի անհատները (հին թեմայի կրթութիւնը. Իսկական և կեղծ հանճարը).—Եւրոպայի կատարելութիւնը (սիրտը և ամուսնութեան մէջ եղած յարաբերութիւնը):

Նորվեգացի հռչակաւոր զբամատուրգը իրաւամբ համարուում է XIX դարու Շէքսպիրի Երկու մեծ թատերադրողների բախտը ի միջի այլոց տարբերում է նրանով, որ հանճարեղ բրիտանացին իր մահուանից յետոյ, երկարաձիգ տարիներ ընթացքում միայն փրկուեց մոռացութեան լախող ստուերից և հետզհետէ համաշխարհային զբանուրթեան հորիզոնը հեղեղեց: XVIII դարում Վոլտէրի նման մի անձնաւորութիւն Շէքսպիրի ստեղծագործութիւնների մէջ նշմարում էր միայն «մի մութ քառս, ուր հանճարի մի քանի կայծեր են փայլում, բայց որոնց մէջ ճաշակի ամենաաննշան հետքն անգամ բացակայում է»:

Այն ինչ Իբրև հէնց իր կենդանութեան ժամանակ գնահատուեց: Նա հռչակուեց ոչ միայն իբրև Նորվեգական, այլ համահերոսական մի զբամատուրգ և իր փոքրիկ հայրենիքից դուրս գրական պատուաւոր քաղաքացիութիւն ձեռք բերեց ինչպէս Գերմանիայում, Անգլիայում, Նոյնպէս հետզհետէ՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Ռուսաստանում և այլն: Հիւսիսի մեծ բանաստեղծը իր համացեղ ազգերի շրջանում, առանձնապէս Գերմանիայում, ցնցող տպաւորութիւն գործեց, ուժղին ազդեցութիւն ունեցաւ, հետեաքար և ամենախոր կերպով հասկաց-

ուեց: Բաւական է յիշել միայն, որ Հառւստմանի և Զուգերմանի պէս խոշոր տաղանդներն, ըստ էութեան, Իբսէնի աշակերտներն են և մեծ մասամբ նրա ստեղծագործութիւններովն են սնուել, կազմակերպուել: Այս պատճառով զարմանալի չէ ի հարկէ, որ Գերմանիայում ոչ միայն Իբսէնի բոլոր գրամաները անմիջապէս թարգմանուում և թատրոնասէր ու ընթերցասէր հասարակութեան կողմից անյազաբար ճաշակուում, այլ և այնտեղ այժմ գոյութիւն ունի Իբսէնեան մի հարուստ և ճշիւ գրականութիւն:

Ինչ վերաբերում է բոմանական և սլաւոնական ազգերին, պէտք է նկատել, որ նրանք ընդհանրապէս աւելի նուազ ներառւածութիւն ցոյց տուին դէպի գերմանական ցեղի երկու աղդեցիկ և նորագոյն հանճարները—Ռիխարդ Վագներ և Հէնրիկ Իբսէն: Այս երկոյթն ունի, անտարակոյս, իր ցեղական-հոգեբանական և պատմական լուրջ և բնորոշ պատճառներ, որոնց վրայ կանգ առնելը մեր նպատակից զուրա է: Բայց իրողութիւնն այն է, որ այս երկու ցեղերը շատ ուշ և դանդաղաշարժ կերպով ըմբռնեցին թէ Վագների վիթխարի երաժշտութիւնը և թէ Իբսէնի 'սորօրինակ գրամաները: Իբսէնի գրամաները այժմ նոյնպէս մեծ հետաքրքրութիւն են շարժում բոմանական չրջաններում:

Սակայն այս ուժեղ ազդեցութեան, համատարած հռչակի և հիացմունքի հետ միասին՝ Իբսէնը ազատ չը մնաց ինչպէս նշանաւոր թէ աննշան հակառակորդներից, այնպէս էլ զանազան անհասկացողների խժըժանքներից: Նրան յայտարարեցին «խեղագիր», «մարդատու», «բարոյականութեան և պետական սկզբունքների թշնամի» և այլն: «Ներսասարդ Գերմանիայի» յայտնի ներկայացուցիչներից մէկը, Ռուդօլֆ ֆօն Գոթշալ, որ մինչև այժմ դեռ կենդանի է և որը սակայն իր ընդհանուր աշխարհահայեացքով և առանձնապէս գեղարուեստական ըմբռնումով բաւական անկենդան, հին, անժամանակակից մի միջավայրի է պատկանում—անա թէ ինչ էր գրում մի քանի տարի առաջ Իբսէնի գրամաների մասին. «պատուներ, ինչպէս «Րօսմէրսհօլմ», «Ծովի տիկիւնը», «Ճարտարապետ Սօնէս», «Հէդդա Գարլէր», «Փոքրիկ էյօլֆ» եայլն—օտարոտիութեան մոլութեամբ բռնուած մի նրբամիտ գլխի թիւր և խառնակ արտագրութիւններ են և առողջ ճաշակով օժտուած մի անձնաւորութիւն ընդունակ չէ այս բշխիտական մանրանկարչութեան և լուսնոտական յափշտակութիւնների անառողջ խառնուրդը վայելել»: Համարեա նոյն ոճն է բանեցնում և նշանաւոր գրող Մաքս Նօրդաուն իր յայտնի աշխատութեան՝ «Այլասեռման» մէջ, ուր մի

ամբողջ գլուխ է նուիրուած «Իբսէնականութեանը»։ Աւելի մեղմ և վայելուչ է արտայայտում Ֆրանսիացի հանգուցեալ տաղանդաւոր քննադատ Սարսէն, որին նոյնպէս գծուար է Իբսէնի բարեկամների շարքը դասել։

Բայց Բ. Փօն Գօթշալի վերոյիշեալ նկատողութիւնը շատ ընտրու է. այդպէս ևն մտածում սովորաբար նրանք, որոնք գեղարուեստը միայն էստէտիկական յայտնի կանոնների հետ ևն կապում և դա պրօկրուստեան մի անկողնի վերածում, որոնք անդէտ ևն այն թէ և ոչ ամենօրեայ, հաղուագիւտ, բայց նշանակալից երևութիւն թէ՛ հանճար իր սեփական կանոններն է ստեղծում։ Յիրաւի, ինչ նշանակութիւն ունեն այս տեսակ պարսաւական ընդհանուր խորհրդածութիւնների արուեստագէտի իսկական ոգևորութիւնների, յափշտակութիւնների և խորհրդաւոր ստեղծագործութիւնների առաջ։ Վերջինս անապթաք հետեղականութեամբ առաջ է գնում իր շաւղով և այս յառաջխաղացութեան ականատեսներից մի տպաւորուող մանուկ երբեմն գուցէ աւելի զգայուն, նոյնիսկ աւելի հասկացող է, քան թէ կանխակալ կարծիքներով պաշարուած քննադատը, որ մաքր կաշկանդուող կապանքներից անկարող է ազատուել և անմիջականութեան հաճոյքով վայելել արուեստի հրաշակերտները։

Իբսէնի հակառակորդների համար զայնակողութեան վերտանդաւոր քար է համարուում մանաւանդ նրա միատիկական բնաւորութիւնը և ընտրած հերոսների անբնականութիւնը։ Գերմանացի քննադատ Լէօ Բէրգը, որին գծուար է հակաիբսէնեան համարել, կարծում է մինչև իսկ, որ Իբսէնի ամբողջ բանաստեղծութիւնը կարելի է անուանել «Երեւակայողի ողբերգութիւն»։ Բէրգը նաև այն կարծիքի է, որ Իբսէնի բէալիզմը միայն իր «երեւակայութեան աշխարհի սրբագրութիւնն է»—նա բէալիստ է, որովհետև երգիծաբան է, որովհետև բէալիզմը երգիծաբանութեան հոգին է, որի մահացու ոյժը միայն իրականութեան, ճշմարտութեան մէջն է ամփոփուած—ինչպէս և նրա փիլիսոփայութիւնը և զիանականութիւնը միայն մի տեսակ բացատրութիւն, իսկ միատիկականութիւնը խորհրդաւոր գաղտնիքն է այդ նոյն երևակայական աշխարհի։ Նա մոռացութեան չէ տալիս սակայն, որ Իբսէնը իր հերոսներով ազդարարական մի կոչ է անում անգործ և պարտադանց երազողներին, թէ անցեալի և ապագայի ցնորքը դառնում է մի անմոռութիւն, մի ոճիր ներհայի նկատմամբ։

Բայց Իբսէնի գեղարուեստական զարգացումը տարբեր աստիճանաւորումներով է տեղի ունեցել։ Նա, ինչպէս յետոյ մանրամասն կը տեսնենք, սկզբում յեղափոխական-բոմանտիկա-

կան բնաւորութիւն ունէր, յետոյ երգիծաբանական-քննադատական, այնուհետև փիլիսոփայական, յուետևս և միստիկական ուժեղ հակունակներ է ցոյց տալիս: Միստիկական տրամադրութեան սաղմը վաղուց արդէն նրա նախնական շրջանների ստեղծադործութիւնների մէջն անգամ նկատուի է. սակայն ինչքան նա մարդկային բնաւորութեան, հոգու և ներքին աշխարհի խորերն է թափանցում, այնքան աւելի միստիկական է դառնում, այնքան աւելի նրա հերոսները խորհրդաւոր կերպարանք են ստանում:

Մի նշանաւոր գերմանացի նկատում է. «ով որ բանաստեղծին ճանաչել է կամենում՝ պէտք է գնայ նրա հայրենիք»։ Իբսէնի նման բարդ, անթափանցիկ բնաւորութիւնները փոքր ի շատէ պարզելու, լուսաբանելու համար՝ կրկնակի անհրաժեշտ է «գնալ դէպի հայրենիք»:

Վեհ է և կախարդիչ սկանդինաւեան բնութիւնը, բայց բնական ահաբեկող տեսարանները զոյութեան կուռի բարդութեան հետ միացած՝ այդ բնութիւնը դարձնում են մոայլ և ծանրաշունչ: Առանձին խորհրդաւորութիւն և կախարդանք է ներշնչում մանաւանդ շրջապատող ծովը: Սկանդինաւեան գրողներից մէկը ահա թէ ինչպէս է նկարագրում ծովի ազդեցութիւնը. «Այս ծովափնեայ բնակիչները շատ լաւ գիտեն, որ ծովն է իրանց մայրը, քան թէ այն հողը, որի վրայ իրանց խրճիթներն են կառուցուած: Ծովն է կեանքի և մահուան տնօրէնը, ծովի միջոցովն է խօսում մեծ Աստուածը նրանց հետ. այս մօրից աւելի զօրեղ բան նրանք չեն ճանաչում»: Մութն է, մոռալ, միստիկական այս ահարկու տարրի ներշնչած տրամադրութիւնը: Այս է պատճառը, որ սկանդինաւեան գրողները, առանձնապէս հորվէգացիք, մշուշապատ երազների, խորհրդաւորութեան և արհաւիրքների աշխարհիցն են խօսում: Դարերից ի վեր ի միջի այլոց այս ահարկու բնութեան դրկումն ստեղծուեց գերմանական ցեղի անմոռանալի վէպը, նիրէլուենգների սոսաւ պելը, որ առատ նիւթ մատակարարեց հանճարեղ երաժիշ-փիլիսոփայ Վագներին, այստեղ կազմուեցին նաև այն սքանչելի բալլադները, որոնք ահագին դրգուններ տուին Իբսէնի բոմանտիկական շրջանի դրամաներին և լիրիկական բանաստեղծութիւններին:

Հիւսիսային բնութեան, ինչպէս և Նորվեգիայի ներքին պայմանների ազդեցութիւնը Իբսէնի վրայ աւելի շօշափելի կերպով կը ներկայանար՝ երբ մեր խօսքը կը վերաբերի նրա դրամաներին:

II

Հէնրիկ Իբսէնը ծնուել է 1828-ի մարտի 20-ին, Նորվէգիայի Սկիէն փոքրիկ քաղաքում, ոչ հեռու Քրիստինիայից: Հէնրիկի հայրն էր Քնուդ Իբսէն, որի նախահայրը զանաւոյն մի նաւաւար է եղել, որ 1720 թուականին տեղափոխուել է Նորվէգիա, իսկ մայրը՝ Մարիա Գորնսկիա Ալզէնբուրգ՝ գերմանացի մի հարուստ վաճառականի աղջիկ էր: Այնպէս որ Իբսէնի սերունդը շոտլանդական, գանձական և գերմանական խառնուրդներից է բաղկացած և նորվէգացի գրամատուրգը իրաւունք ունէր իր կենսագիր Հէնրիկ Յգէրին յայտնելու, որ Քիր տէմպերամէնտի կաղմակերպութեան մէջ նորվէգական ոչ մի կաթիլ արիւն անմիջական ներգործութիւն չէ ունեցել:

Իբսէնի հայրը փոքրիկ Սկիէնում հարուստ և աղղկեցիկ մի վաճառական էր. այնպէս որ նրա մանկական տարիներն անցնում են առանց զրկանքների, ուրախ և երջանիկ: Բայց հազիւ նա բոլորել էր իր ութերորդ տարին, երբ իր հայրը տընտեսական մի ծանր ճգնաժամի է ենթարկուում: Այս անակնկալ դժբախտութեան հետեանքն այն է լինում, որ ամբողջ ընտանիքը տեղափոխուում է քաղաքի մօտակայ գիւղերից մէկը: Այս գրկանքների և նիւթական ձախորդութիւնների չըջանումն տհաւ սկիզբ են առնում Հէնրիկի յոռետեսութեան և մարգատեցութեան սաղմերը: Իր քսր՝ տիկին Հէգվիգ Շտուսլանդի հազորդած տեղեկութիւններին նայելով՝ Իբսէնը գիւղում, իբրեւ մանուկ, չստ լուրջ ապաւորութիւն էր թողնում. նա ցուրտ և լուսաղուրկ սենեակում հաճոյքով որոնում էր զրքերի բարեկամութիւնը. երբեմն սիրում էր նաև նկարել կամ թղթէ պատկերներ կաղմել:

Վեց տարուց յետոյ անանկացած ընտանիքը նորից վերադառնում է Սկիէն, ուր Հէնրիկը յաճախում է տեղական բէալական դպրոցը: Ուսումնարանական հէնց առաջին տարում նա մի շարադրութեամբ ամբողջ վարչութեան ուշադրութիւնն է գրաւում: Այդ շարադրութիւնը գրուած է եղել մի տարօրինակ ոճով և միատիկական յափշտակութեամբ, որի մէջ նա երկրաւոր բարիքների ոչնչութիւնն ու անյանելիութիւնն է պատմում:

Իսկ առանձնապէս Սկիէն, իր ծննդավայրը, ինչպէս իր գեղեցիկ չըջականերով մանուկ Իբսէնին բանաստեղծական տրամադրութեամբ էր համակում, այնպէս էլ իրանց բնակութեան հանգիստակայ եկեղեցին իր վերամբարձ գմբէթով, հէնց

Քրեանքի սեփական խոստովանութեամբ, չատ խոր և միտքիական տպաւորութիւն էր թողնում, մանաւանդ տարեմուտի օրերին՝ երբ սկսւում էր խորհրդաւոր զանգահարութիւնը:

Իրեն երկու տարուց յետոյ ստիպուած է թողնել դրպրոցը: Նա գնում է Գրիմշտադ և սեփական աշխատանքով իր օրապարիկը հայթայթելու համար մտնում է մի դեղատուն աշակերտելու:

Գոյութեան կռուի ծանր լուծը չափահաս պատանու համար այժմ աւելի զգալի էր, քան թէ մանկական հասակում, երբ նա դեռ անհոգ էր և ընտանեկան ընդհանուր հոգսերին անմասնակից: Դժբախտութիւնը կրկնակի է և աւելի ճնշող իրեն համար, որովհետև նա գիտակցում է իր մէջ ուրիշ ձգտումների և ուրիշ կոչման ընդունակութիւն, որը ապրուստի խնդրի անողոք ձիրաններում կարող է թառամել և յաճախ աշմատախիլ լինել:

Նա համակում է մի յուստեւ տրամադրութեամբ, որի զեղուն արտայայտութիւնները դրոշմուած են իր անդրանիկ ոտանաւորներում: Բայց յուստեւ պատանին չէ ընկճւում և չէ յուսահատւում, այլ ամեն ջանք ի գործ է դնում բարեփոխելու իր կեանքի եղանակը: Մտաւոր դժբախտներ և բանաստեղծութիւններ գրելու համար նա իր աշխատութեան ժամերից բոլորէր է խլում:

Իրեն արդէն քսանամեայ հասակումն էր, երբ ընկուեց 1848-ի յեղափոխութիւնը: Եւրոպայի քաղաքական և հասարակական կեանքի հորիզոնը փոթորկող այս ուժեղ շարժումը իր վառ յոյսերով, կենսատու ներշնչումներով և անխուսափելի հրապթափութիւններով՝ մեծ տպաւորութիւն թողեց կրիտասարդ գեղագործի վրայ և զգալի դրդումներ տուեց: Նա յեղափոխական և ազատասիրական ոգով բանաստեղծութիւններ է գրում *): Բայց ամենահետաքրքրականն այն է, որ Իրեն նոյն

*) Իրեն մինչև 1875 թուականը 60-ի չափ ոտանաւորներ է գրել: Նա մինչև իսկ իր առաջին դրամաները ոտանաւորով էր գրում: Նրա լիրիկական բանաստեղծութիւնները, որոնք մեծ մասամբ զիպուածական ընտրութիւն ունեն կամ հայրենասիրական ոգի են կրում, աչքի ընկնող մի երևոյթ չեն ներկայացնում: Նրա ոտանաւորներից ամենաշողուածները մատեների վրայ կարելի է համարել. — «Բանաստեղծի երգը», «Շնորհակալութիւն», «Կորած է», «Հեռո՛ւ», «Բարդութիւններ», «Բանաստեղծական ողջոյն», «Գեղարք Բրանդէսի կարծիքով լաւագոյնները այս վերջին երեքն են, որոնցից առաջինը Իրենի բանաստեղծութիւններից ամենաջոպիւն է», երկրորդը՝ «ամենատարամիտը և ամենախորը», իսկ երրորդը՝ «գեղարուեստական կողմից ամենակատարեալը»:

յեղափոխութեան ազդեցութեան տակ՝ 1848/49-ի ձմեռը գրում է իր անդրանիկ դրաման—«Կաթիլինա»։ Այս դրամայի համար նրան առանձին նիւթ էին մատակարարում իր ուսանողական քննութեան նախապատրաստութիւնները։ Նա ծանօթացել էր հռոմէական հեղինակների հետ, առանձնապէս Յիցերոնի և Սալլուստի գրուածքներին, որոնք վերաբերում էին Կատիլինայի դաւադրութեանը։

«Կատիլինան» Շիլլէրի «Աւագակների» նման ըմբոստ և յեղափոխական մի գիծ էր կրում և իբրև քսանամեայ երիտասարդի առաջին դրամատիկական փորձը՝ ունէր անկասկած իր աչքի ընկնող թերութիւնները։ Սակայն դրամայի այն սրամիտ բնորոշումը, որ տալիս է Յրիգրիխ Նիլչէն իր առաջին զբոսուածքում («Ողբերգութեան ծնունդը») — դրամայի էութիւնն ամբողջութեամբ է այն հակադրութեան մէջ, որ գոյութիւն ունի Ապոլլոնի անհատական ազատութեան և Դիօնիզոսի զգայական բռնադատութեան մէջ *) — գուցէ ոչ մի դրամատուրգ զժխտաւ փիլիսոփայից առաջ կամ յետոյ այնքան խորաթափանց կերպով չէ իրականացրել՝ ինչպէս Իբսէն։ Նրա դրամաների հիմնական պրօբլէմը հասարակութեան և անհատի մէջ եղած յարաբերութիւնն է։ Ահա այս նոր պրօբլէմն է, որ երեան է զալիս «Կատիլինայում»։ Ինքը՝ հեղինակը, 25 տարուց յետոյ իր անդրանիկ դրամայի մշակուած և նոր հրատարակութեան յառաջաբանում գրում էր հետևեալը. «Շատ առանձնայատկութիւններ, որոնք իմ ապագայ բանաստեղծութիւնների նիւթն են կազմում — հակադրութիւն ոյժի և ցանկութեան, կամքի և հնարաւորութեան, մարդկութեան և անհատի, ողբերգութեան և կատակերգութեան — բոլորը ազօտ կերպով երևան են զալիս Կատիլինայում»։ Այս և Նիլչէյի վերոյիշեալ տողերի մէջ եղած կապը կարծում ենք բաւական պարզ է։

Ապականուած և անբարոյականութեան տեղմի մէջ թաթախուած մի դարաշրջանի դաւակ կարո՞ղ է արդեօք իր ժամանակակիցների վերաբերմամբ կրթող դեր կատարել՝ նրանց ազնուացել, բաժրացնել — ահա «Կատիլինայի» հիմնական խնդիրը։ Կատիլինան անբաւական է իր ժամանակակից հռոմէական հասարակութիւնից, բայց հին հասարակապետական կարգերը վերահաստատելու նկատմամբ նա անյոյս է և երկմիտ, հետևա-

*) Ապոլլոն հին յունական դիցարանութեան մէջ, ի միջի այլոց, բարոյականութեան սկզբունքի ներկայացուցիչն էր, և նրա պաշտամունքը մեծ զարկ տուց հելլենական բարեքերի աղնուացման։ Այն ինչ Դիօնիզոսը (Բաքոս) բնիկատուրքեան, արեւոյդութեան և զգայական հաճութեան մարմնացումն էր։

բար և անզոր: Ինչո՞ւ—որովհետև ինքն էլ հէնց ապականուած դարաշրջանի մի պոռուղ է, այլասեռուած ազնուական դասակարգի մի ծնունդ, որը Սուլայի հոգու գուշակութեան համեմատ՝ ինքը պէտք է իր կորուստի սլաճառ դառնար: Կատիլի-նայի անկարողութեան, հոգեկան պառակտման ամենալաւագայոյցն է բացի այն գաւազրութիւնից, որ նա կազմում է իր հայրենիքի դէմ—այն անհաստատ զիրքը, որ նա բռնում է մի կողմից դէպի չար, նենգամիտ Փուրիան (Կատիլինայի սիրուհին): Այս երկու կանաչն արդէն բարիի և չարի խորհրդանշաններն են, որոնց ընտրութեան մէջ տատանւում է ըմբոստ և quasi վերսնորոգութեան տենչանքով համակուած հռովմէացիներ: Փուրիայի կախարդական հաճոյախօսութիւններից յափշտակուած՝ նա սպա-նում է իր թանկագին կնոջ: Բայց զղջման զգայմունքն անմիջապէս տանջում է ոճրագործին: Այնպէս որ նա չարամիտ Պուրիայից մահ է աղերսում և իր կնոջ հետ միաժամանակ է զոհ-ւում: Հետեանքը—զրակների հաշտութիւնը:

Իբսէն իր գրաման 1849-ին ներկայացրեց Քրիստիանիայի թատրոնի վարչութեանը, բայց վերջինս մերժեց ներկայացնել: Դրաման լոյս տեսաւ 1850 թուականին: հեղինակը այդ ժամա-նակ գրում էր կեղծ անուն—Բրինեօլֆ Բիարմէ: Մայրաքաղաքի համալսարանի փիլիսոփայութեան երիտասարդ պրօֆէսոր-ներից մէկը՝ Մօնրադ նպաստաւոր կերպով քննադատեց «Կատի-լինան» և այն կարծիքի էր որ «Բրինեօլֆ Բիարմէն խոստա-նում է մի բան»: Մօնրադի գուշակութիւնն ապագայում շատ փոքուոր կերպով պիտի իրականանար:

Իբսէն նոյն թուականին գնում է Քրիստիանիա և մի մասնաւոր զպրոցում՝ այսպէս կոչուած չուսանողական գործա-րանում», ուր այդ ժամանակ յաճախում էր նաև իր ապագայ մեծ հայրենակից Բեօրնսօն, պատրաստուում է համալսարանու-կան նախնական քննութիւն տալու: Բայց Իբսէն առանձին յա-ջողութիւն չունեցաւ քննութեան մէջ, մասնաւորապէս որ նա այդ ժամանակ զբաղուած էր մի նոր գրամայով, բացի դրանից աչ-խատակցում էր ուսանողական մի թերթի, որ իր արմատական ուղղութեան պատճառով չուտով խափանուեց:

Այնուհետև Իբսէն մի քանի երիտասարդների մասնակցու-թեամբ հրատարակում է մի շարաթաթերթ, որի ղեկավարէնը նոյնպէս կարճատև է լինում:

1850-ի գարնան նա պատրաստում է իր երկրորդ գրաման կամ աւելի ճիշդ՝ գրամատիկական բանաստեղծութիւն—«Դիւ-

ցազեական ժիրիմը» (Kjämppehöjen): Իբսէն արդէն բաւական ծանօթացել էր հիւսիսային առասպելներին և ժողովրդական աւանդութիւններին հետ. բայցի զրանից առանձին զրգումներ էր ստացել Դանիայի յայտնի բանաստեղծ Օհլէնշլէգէրից և Հէրցից: Այս է պատճառը, որ նա այս անգամ փոխանակ կլասիկական աշխարհը տեղափոխուելու՝ ազգային ազբիւրներից է քաղում իր գրամայի նիւթը, որը ոչ այնքան պատմական ինչքան ժողովրդական բնաստութիւն ունի:

Նորվեգիայի նախապատմական շրջանը մինչև X դարը չատմութիւն է և առասպելախառն. բայց այս շրջանի պատմական յայտնի երևոյթներից մէկը Նորմանների ծովային արշաւանքներն են: Վերջիններս Եւրոպայի հիւսիս-արեւմտեան մեծ կղզիներից շատերը բնակելի են դարձնում և ի միջի այլոց պատճառ են դառնում Սկանդինաւիայում ինչպէս հեթանոսութեան այնպէս էլ մի քանի հին ցեղերի բնաջինջ լինելուն: «Դիւլյադնական չիրիմն» ահա ամփոփում է այս արշաւանքներից մի երես, ուր սիրուն այլաբանութեամբ նկարագրուած է քրիստոնէութեան մուտքը Նորվեգիա:

Իբսէնի այս նոր գրաման Քրիստիանիայի թատրոնում լաւ ընդունելութիւն է դանում, այնպէս որ նրան կարճ ժամանակից յետոյ, 1851-ին, հրաւիրում են Բերգէն—Նորվեգիայի արեւմտեան ափին՝ ծովեզերեայ և վաճառաչահ քաղաք— ուր յայտնի ջութակահար Օլէ Բուլլ հիմնել էր «Նորվեգական թատրոն»: Սկստել Իբսէնին առաջարկում են բէթիստօրի և թատերադրողի յատուկ պաշտօնը: Թատրոնական գործին մօտիկից ծանօթանալու համար նա շուտով եռամսեայ արձակուրդ է ստանում և այցելում է Դանիայի ու Սաքսօնիայի մայրաքաղաքները—Կօպէնհագէն և Դրէզդէն:

Իբսէն վեց տարի մնում է Բերգէն, ուր նա իր սովորութեան համեմատ իւրաքանչիւր տարուայ յունուարի 2-ին մի նոր գրամա էր պատրաստում թատրոնի համար: Նա այստեղ առիթ է ունենում ծանօթանալ, ի միջի այլոց, Շէքսպիրի զբոսաւանդներին: Բայցի զրանից բէթիստօրական պաշտօնը մի անփոխարինելի ասպարէզ էր գործնականապէս ծանօթանալու թատրոնի և բեմական տեխնիկայի հետ: Բերգէնում գրած գրամաներից յիշենք «Տիկին Ինգեր» կամ «Lousrosk sbrn. hñ» (Fru Jnger til Osteraat), «Սոլհաուգի սօնը» (Gildet pá Solhaug) և «Օլաֆ Լիլիէրանգ» (Olaf Liljekrans)—վերջինս լոյս տեսաւ միայն հեղինակի ծննդեան եօթնամասնամեայ յօբէլեանին, 1898-ին: «Էօստրօտի տիրուհին» պատմական գրամա է, բէթօրմայիսի շրջանից, երբ Նորվեգիան ներքուստ քայքայուած՝ Դա-

նիայի իշխանութեանն էր ենթարկուած: Տիկին Ինգէրի անձնաւորութիւնը Նորվեգիայի պատմութեան մէջ այնքան էլ նախանձելի հետք չէ թողել: Նա իր սիրահարական արկածի ծնունդ որդու կեանքը փրկելու համար զոհուած է ոչ միայն իր անդրանիկ աղջկան, այլ և ոտնակոխ է անուած հայրենիքի շահերը, ժողովրդի ազատութիւնը: Բայց դժբախտութիւնը նրանումն է, որ տիկին Ինգէրը նոյն նպատակով սպանել է ապրիս ոմն կոմս Ստուրէին և վերջը երեան է գալիս տխուր յայտնագործութիւնը—սպանուածը հէնց իր սեփական որդին է եղել, որի կեանքի պահպանութեան նա զոհաբերել էր ամեն ինչ:

Ինչպէս Կառլիւնան հռոմէական ընկած բարբերի, այնպէս էլ Ինգէրը Նորվեգական ապականուած ազնուականութեան պտուղն է: Իրսէն կարծեք հակուած է մի փոքր իդէալականացնել այս պատմական կնոջ դէմքը, բայց նա մի նուրբ հոգեբանութեամբ քողաղութիւն է անուած մի կողմից նրա խարդախ, ևսական, միւս կողմից տառապանող, անվճողական բնաւորութիւնը: Ինգէրը յիրաւի մի բոպէ գիտակցում է, որ հայրենիքի լուրջ ճգնաժամին (չվէգական արշաւանքների ժամանակ) ինքը մի մեծ դեր ունի կատարելու, բայց առաջին գործողութեան վերջին տեսարանում նա մի վախկոտ թերահաւատութեամբ ինքը իր սեփական դատավճիռն է արձակում—«իրաւունք ունէր Աստուած ինձ իբրև մի կին ստեղծել և տղամարդու պարտականութիւններ բարձել իմ ուսերին»: Այսպիսի կնոջ համար ճիշտ որ մի բան էր միայն պակաս—«մի դուգաղ որդուս գերեզմանի մօտ»:

Միւս երկու դրամները՝ «Սօլհաուգի տօնը» և «Օլաֆ Լիլիէկրանդ» բոլորորին ուրիշ տրամադրութեան, բօմանտիկական հակումների ծնունդ են: Առաջինը ներկայացուեց 1856-ին Բերգէնում և շատ լաւ ընդունելութիւն գտաւ: Բեօրնսօն՝ մայրաքաղաքում՝ ներկայացման թարմ տպաւորութեան տակ զրկեց մի սիրուն բանաստեղծութիւն: Այս դրաման իրաւամբ համարւում է Իրսէնի «ամենալուսաւոր և պայծառ» ստեղծագործութիւնը, որովհետև միանգամայն ազատ է հեղինակի ստրապայ խորհրդաւոր և դժուարըմբռնելի դրամաներից: Իրսէն հէնց ինքը տեսնում է այս դրամայի մէջ «ամառնային մի զովաշունչ տրամադրութիւն»: Օրիորդ Մարգիդ ամուսնանում է Սօլհաուգի հարուստ կալուածատէր Բէնգդ Գաուդէսօնի հետ, որին սակայն չէ սիրում, որովհետև նրա սիրտը պատկանում էր չքաւոր երգիչ Գուդմունգին: Վերջինիս աղքատութեան պատճառով սիրող սրտերը բաժանւում են միմեանցից: Գուդմունգը եօթնամեայ բացալայութիւնից յետոյ հարստացած և

արքայական չնորհներն արժանացած յետ է գալիս: Մարգիդ իր տիպուր կեանքից ձանձրացած՝ յոյս ունէր նորից գրաւել Գուղմունդին, որին մինչև այժմ դեռ սիրում էր. բայց իզուր. վերջինս այլ ևս Մարգիդի մասին չէ մտածում, այլ սիրում է նրա փոքր քրոջ՝ Սինյէին, որի հետ և ամուսնանում է: Սինյէի վրայ սակայն աչք ունէր նաև Կնուզ Գէսլինգ, որը մեծամարտի է բռնում Մարգիդի ամուսնու՝ Բէնգզի հետ: Վերջինս սպանւում է: Մարգիդը տեսնելով իր քրոջ և նախկին սիրածի երջանկութիւնը՝ կարծում է, որ սա մի աստուածային տնօրինութիւն է, այդ պատճառով մտնում է մի մենաստան:

Իբսէնի գրամաների շարքում սա դեռ մի թեթև նախերգանք էր. անբախտ ամուսնութեան հետևանքները նա «Ուրուականներին», «Կովի տիկնոջ» և «Հէդդա Գաբլէրի» մէջ աւելի մոայլ և սոսկալի գոյներով պիտի նկարագրէր: «Օլաֆ Լիլիէկրանդ» իր բովանդակութեամբ բաւական մօտ է «Սօհաուդի տօնին», միայն այն տարբերութեամբ, որ առաջին գրամայում սիրող զոյգերը՝ հակառակ իրանց ծնողների ցանկութեան՝ խուսափում են ամուսնութիւնը առուտուր դարձնել և իրանց սրտի թելադրութեանն են լսում:

Այս երկու գրամաները իրանց բովանդակութեամբ և բօմանտիկական բնաւորութեամբ, անկասկած, մեծ կապ ունէին Իբսէնի կեանքի մի խոշոր երևոյթի հետ, որ առանց յիշատակութեան չենք կարող թողնել.— նա սիրահարուած էր Նորվէգական յայտնի բանաստեղծուհի Մադգալէնա Թօրէսէնի աղջկայ՝ Սուսաննայի վրայ, որի հետ նա ամուսնացաւ 1858 թուին:

Իբսէնը իր գրամաներով և բանաստեղծութիւններով արդէն այնպիսի անուն էր վաստակել, որ 1857-ին հրաւիրւում է իբրև կառավարիչ Քրիստիանիայի «Նորվէգական թատրոնի»:

Նա այս նոր պաշտօնն ստանձնում է ոչ միայն իբրև թատրոնի, այլ և ամբողջ մի գրական-հասարակական, այսպէս կոչուած, ազգային-նորվէգական ուղղութեան ղեկավար:

Պէտք է նկատել, որ Նորվէգիան վերածնութեան դարից սկսած զուրկ էր մի միաւորող, ինքնուրոյն լեզուից: Կրթուած շրջաններում թէ՛ գրական և թէ՛ խօսակցական լեզուն դանիերէն էր. հետևաբար և նորվէգական գրականութիւնը ոչնչով չէր տարբերւում դանիականից: Այս դրութիւնը շարունակուում էր համարեա մինչև 1814 թիւը, երբ Նորվէգիան քաղաքակաճանապէս ազատուեց դանիական տիրապետութիւնից: Այնուհետև նորվէգական գրողները ամեն կերպ աշխատում էին իրանց գրականութիւնը, նոյն իսկ լեզուն, ինքնուրոյն դարձնել: Իր-

քեզարդի և Մօրից Հանգէնի սկզբնական փորձերից յետոյ նոր-վէգական աղգային գրականութեան քաջամարտիկներ են հանգիստանում՝ Վէրդէլանդ, Վէլհավէն, Մունի ևայլն, որոնք մեծ աջողութիւն ունեցան և նոր ուղղութեամբ ամբողջ սերունդներ կազմակերպեցին՝ ընդդէմ, այսպէս կոչուած «միջազգային» ներքո՝ Ահա այս աղգային ուղղութեան յայտնի ղեկավարներն էին Բեօրնսօն և Իքսէն, որոնք հիմնեցին «Նորվեգական ընկերութիւն»՝ աղգային գրականութիւնը և գեղարուեստը զարգացնելու համար։ Այս ընկերութեան զլխաւոր և կենդանի օրինակներից մէկն էր Քրիստիանիայի նորահաստատ «Նորվեգական թատրոնը», որի ղեկավարութիւնը յանձնուեց Իքսէնին։

Ձը մոռանանք այստեղ նկատել, որ աղգային ուղղութեան նշանաւոր ներկայացուցիչներից Բեօրնսօն աւելի կրքոտ և մոլեռանդ էր, այն ինչ Իքսէն աւելի չափաւոր էր և նեղ, շօվինիստական հակումներից միանգամայն հեռու, ինչպէս յետոյ կը տեսնենք՝ նրա աղգասիրութիւնը աւելի լայն հիմքերից էր բլլիսում և, եթէ կարելի է ասել, բացասական բնաւորութիւն ունէր՝ անխնայ, մտրակող, սակայն միշտ ճշմարտասէր։

III

Իքսէնի պաշտօնավարութիւնը Քրիստիանիայում տևում է հինգ տարի. և նա այս ժամանակաշրջանում գրում է հետեւեալ զրամաները—«Հիւսիսային գօրաւաւը» (Hoermondene paa Helgeland), «Սիրոյ կասկեղութիւնը» (Kjoerlighedens Komedie) և «Դահաժառանգներ» (Kongsemnerne)։

«Հիւսիսային գօրաւաւը» նիւթը կազմում է իսլանդական մի հին ընտանեկան աւանդութիւն՝ X դարից, որ մասամբ հետնողութիւն է յայտնի Զիգֆրիդի առասպելին։ Այս առասպելի զլխաւոր բովանդակութիւնը հետեւեալն է. վալկիր Բրիւնհիլդ կամ Սիգրդրիֆան—վալկիրները գերմանական հին զիցարանական էակներ են, կանայի ըմբոստ, կռուող և ուժեղ բնաւորութիւնների հոգիները, որոնք մահուանից յետոյ շարունակում էին ապրել և փայլակի ու որոտման աստուծոյ՝ Օդինի կամ Վօտանի հովանաւորութեամբ մասնակցում էին իրանց սիրած հերոսների կռուին և պաշտպանում էին նրանց—Վօտանի կամքին հակառակ սպանում է մի հերոսի։ Որոտման աստուածը զայրոյթի շանթեր է արձակում և յանդուգն վալկիրին ընկղմել է տալիս մի խոր քնի մէջ՝ մինչև մի հերոս գար և նրան արթնացնէր։ Այս հերոսը լինում է Զիգֆրիդ, որը փրկուած Բրիւնհիլդին

սիրոյ յաւիտենական հաւատարմութիւն է խոստանում: Բայց Ձիգֆորիդ այնուհետեւ հանդիպում է Գրիֆիսի որդիներին և յանձնում է սրանց իր սպանած ահեղ վիշապի՝ Փաֆնէրի գանձը, որի փոխարէն ստանում է Գրիֆիսի գեղեցիկ դստեր՝ Գրիմհիլզի ձեռքը, իսկ Բրիւնհիլզին տալիս է Գրիւնթէրին՝ Գրիֆիսի որդուն:

Իբրէն օգտուելով այս առասպելից՝ հիւսեց իր երիտասարդ ժամանակուայ—«Հիւսիսային զօրարշաւը», գրուած 1858 թուին—ամենալաւ, ուժեղ և խորիմաստ դրամաներից մէկը: Ի նկատի ունենալով այս դրամայի խոշոր նշանակութիւնը՝ մենք մի փոքր երկար կանգ կ'առնենք նրա վրայ:

Երկու բարեկամներ՝ Կորիճ Զիգուրդը և Կիւղայի հարուստ կալուածատէր Գուննարդ՝ Նորվեգիայից ճանապարհ են ընկնում դէպի Իսլանդիա՝ փառք և հարստութիւն որոնելու: Այստեղ ներանք հանդիպում են ծերունի իշխան Էօրնուլֆին, որ Նորվեգիայի նշանաւոր թագաւոր Հարալդի ժամանակ իր հայրենիքից զաղթել էր Իսլանդիա: Էօրնուլֆի մօտ գտնուում էին երկու գեղեցիկ աղջիկներ՝ Հիօրդիս և Դանյի: Վերջինս Էօրնուլֆի իսկական աղջիկն էր, իսկ առաջինը՝ գերի ընկած մի կոյս, որին Էօրնուլֆ՝ նրա հօրը—Եօկուլին սպանելուց յետոյ՝ որդեգրել էր իւրի իր երկրորդ աղջիկ: Հիօրդիս տիտանների ցեղիցն էր և ըստ աւանդութեան գոյլի սրտով էր սննդուած: Նա մի հրաշագեղ աղջիկ էր, իսկօք և կտրիճ, այնպէս որ Զիգուրդ և Գուննարդ միաժամանակ յափշտակուում են նրա սիրով, բայց սկզբում միմեանցից թագցնում են իրանց սէրը: Մի երեկոյ, խնձոքի ժամանակ Հիօրդիս յայտնում է, որ նա միայն այն հերոսին կ'ընտրէ իւրի ամուսնացու, որ իրանց ամբողջի մօտ չըլթայուած սպիտակ արջին մի փոքրիկ սրով կը սպաննէ և զիսկը ձեռների վրայ իրան նուէր կը բերէ: Կարիճ Զիգուրդի սիրտն սխտում է ուրախութիւնից բաբախել, որովհետեւ նա վստահ էր Հիօրդիսի առաջարկութիւնը կատարել և գեղանի հերոսուհու սիրտը գրաւել: Բայց Գուննարդ առաջուց յայտնում է Զիգուրդին, որ նա սիրում է Հիօրդիսին: Զիգուրդը լուռ ու մունջ գնում սպանում է Քասն տղամարդու չափ ուժեղ արջին և զիսկը Հիօրդիսին յանձնում: Սակայն Զիգուրդը Գուննարդի գէնքերովն է մանում Հիօրդիսի սենեակը. վերջինս գինով դրութեան մէջ չէ ճանաչում նրան, բայց իր խոստման համեմատ տալիս է նրան իր մատանին: Երկու բարեկամներն այնուհետեւ փախցնում են Հիօրդիսին և Դանյիին: Զիգուրդը այս վերջինին է վերջնում, իսկ Հիօրդիսին մեծահոգութեամբ տալիս է իր բարեկամ Գուննարդին:

Ծերունի Էօրնուլֆ չորս տարի շարունակ այս ու այն կողմն ընկած փնտռում է իր ազնիվներին և կամենում է վրէժխնդիր լինել այս արատի համար կամ թէ, ըստ հին գերմանական սովորութեան, որոշ վրկանք ստանալ և հաշտուել իր փեսաների հետ։ Զիգուրդը տալիս է պահանջուած վրկանքը և իր միջնորդութեամբ հնարաւոր է դարձնում նաև Գունհամայի և Էօրնուլֆի հաշտութիւնը։ Բայց չար Հիօրդիս կամայականաց ցոյց է տալիս իր դիւային բնաւորութիւնը. նրա սիրտը վաղուց պապակում էր իր հօր մահուան վրէժով. այժմ ամենայարմար առիթն արդէն ներկայացել էր։ Սակայն հանգամանքներն այնպէս են դասաւորւում, որ Հիօրդիսին վիճակւում է ոչ միայն Էօրնուլֆի կրտսեր որդուն՝ Թօրօլֆին ստոր մեքենայութիւններով սպանել տալ, այլ և մի ուրիշ անակնկալ վրէժ լուծել։ Կանայի մի բնորոշ ընդհարման ժամանակ նա տեղեկանում է Դանյիբից, որ ինքը խաբուել է իր ընտրութեան զեկանում է Դանյիբից, որ ինքը խաբուել է իր ընտրութեան մէջ, ամենակարիճին ձեռքից բաց է թողել, որ Զիգուրդն է և՛ զեկ արջին սպանողը և ոչ թէ Գունհարդը՝ իր ներկայ ամուսինը։ Այս անակնկալ յայտնագործութիւնը կատաղեցնում է Հիօրդիսին. նրա մէջ շարժւում է անզուսպ խանդը և կանայի բարկութեան զօրեղ կիրքը։ «Այժմ ես միայն մի գործ ունեմ կատարելու—կամ Զիգուրդը պէտք է մեռնի կամ ես»—այս է Հիօրդիսի անսասան վիճակը, որովհետեւ թէև «գիտար է մեռնել, բայց աւելի գիտար է ապրել»։ Նա առանց միջոցների խորութեան դրդում է իր ամուսնուն վրէժխնդիր լինել Զիգուրդից— «վրէժից յետոյ կ'ապրեմ քեզ հետ սիրով և քեզ այնպիսի ոյժով և ջերմութեամբ կրծքիս կը սեղմեմ, որ դու կրե՛ք չես երազել»։ Բայց Գունհարդը հրաժարւում անմիջապէս ենթարկուել չարամիտ կնոջ խաղաղաւանանքին։ Միւս կողմից Հիօրդիսի կրծքում թէև դեռ բորբոքւում է ջերմ սիրոյ զգացմունքը, բայց նա մի համարձակ շեշտով վրայ է բերում—«Իմ սէրը պահանջող, կրաւորական չէ, ինչպէս թոյլ կանանց սէրը»։ Միևնոյն ժամանակ նա կծու յանդիմանութեան և նախատինքի մի տարալի է թափում Զիգուրդի գլխին.—«Դու իմ ամբողջ կեանքը թունաւորեցիր... Ամեն ինչ կարելի էր զոհել հաւատարիմ բարեկամին, ամեն ինչ, բայց ոչ սիրած կինը...»։ Իրաւնի նախաՎերջին զրամայի հերոսութիւններից մէկը՝ Էլիզան, ինչպէս յետոյ կը տեսնենք, ճիշտ միևնոյն կերպով է արտայայտւում Զօն Գարրիէլ Բօրկմանի առաջ։ Երբ Զիգուրդը ճակատագրական տնօրինութեան մասին է խօսում, Հիօրդիս ինքնալստան և ուժեղ հաւատով վրայ է բերում. «Յիրաւի ճակատագրի աստուածուհիներն են կառավարում երկիրը, բայց նրանց զօրու-

թիւնը չնչին է, եթէ նրանք մի օժանդակող ոյժ չը գտնեն մեր կրօնքում: Բայտը միայն նրան է ողջունում, ով որ ուժեղ է և համարձակութիւն ունի ճակատագրի դէմ կռուելու—և այս կռիւը ես կամենում եմ այժմ փորձել: Համարեա նոյն մտքով՝ նա ասում է մի այլ տեղ. «Եթէ երկուսս միանայինք՝ դու աւելի կը փառաւորուէիր և ես աւելի բախտաւոր կը լինէի և մեք այդ կարող եմք անել, երբ կամեցանք»: Հիօրդիս պապականութիւնը նորանոր դափնիներով, նրա իդէալն է «Հէրալդի (Նորվեգիայի առաջին պատմական թագաւորը) դահի վրայ էրէքի սերունդների փոխարէն՝ տեսնել կարիճ Զիգուրդին»: Նա գործ է դնում իր վերջին ճիգը Զիգուրդին դրաւելու. բայց իգուր Կարիճ Զիգուրդը անդրդուելի է. նա չէ կարող դաւաճանել ոչ իր կնոջ և ոչ բարեկամին. և երբ նա մարտը բարոյականութեամբ և քրիստոնէական անձնուիրութեամբ նրկատում է թէ՛ «մեր մէջ գոյութիւն ունի մի զօրեղ արդիւլ՝ Դանյին և Գուննարդը»—գիւական հակումներով տոգորուած Հիօրդիսը սրա դէմ դնում է իր վայրագ բարոյականութեան դաւանանքը—«Ընչ մնաս, եթէ երկու ողորմելի կեանք ոչընչանայ»:

Զիգուրդը անձնազոհ է լինում ոչ միայն իր բարեկամի բախտաւորութեան, այլ և պատուի համար—Թօրօլֆի մահուան պատճառով իր ասպետական պարտականութիւնը ծերունի Էօրնուլֆի վերաբերեամբ ցոյց տալու համար՝ նա վճռում է միանամարտել Գուննարդի հետ: Բայց այս հանգամանքը չէ խանգարում ազնիւ ասպետին, որ նա մենամարտի նախընթաց օրը Գուննարդի վրայ յարձակուող թշնամիներին յետ մղէ: Այն ինչ Հիօրդիս գիւային ինքնաբաւականութեամբ և ցինիկական հաւճոյքով մենամարտի է սպասում.—«Մենամարտ, ով է ընկնելու. բայց այդ միևնոյն է, ով էլ որ ընկնի՝ ես և Զիգուրդ կը մնանք միացած»: Այդ նոյն գիւային արամազորութիւնն է, որ այն րոպէին, երբ Զիգուրդ սարսափած նկատում է հեռուից, թէ թշնամիները նրա միակ որդուն՝ մանուկ էգիլին սպանում են, անխիղճ մօրը պատասխանել է տալիս՝ «Թող էգիլը մնանի, զրանով մեռնում ե իմ արագը». կամ երբ Զիգուրդը խորին կարեկցութեամբ նկատում է՝ «Ամուսնուդ կեանքը վտանգի մէջ է».—«Ոչինչ, ես այս գիշեր աւելի ընտրեալ մի ամուսին եմ գտնելու»,—վրայ է բերում քարասիրտ կինը:

Զիգուրդի անդրդուելիութեան հետեանքն այն է լինում, որ Հիօրդիսը մենամարտից առաջ Զիգուրդին սպանելու բաւականութիւնը ինքն է ուզում վայելել: Նա «իր մազերից հիւստած» աղեղն ուղղում է գէպի Զիգուրդ և երբ զգում է

հարուածի մահացու լինելը՝ հրճուանքով նկատում է. «այժմ մենք միմեանց ենք պատկանում»։ Եւ ինչ վիրաւորուած Զիգուրդը պատասխանում է՝ «այժմ աւելի քիչ քան թէ որ և է ժամանակ, որովհետեւ ես քիստնեայ եմ... աղօթում եմ սպիտակ (արգար) Աստծուն»։—«սարսափելի է, սարսափելի է»,—այդպէս է մօրմղքում հիասթափուած Հիօրդիս։

Զիգուրդի վերջին խօսքերը ամփոփում են իր բնաւորութեան և հայեացքների ամբողջ էութիւնը։—«Ես քրիստոնեայ եմ»։ Մեր առաջ բերած հատուածներն արդէն չօշափելի կերպով ցոյց են տալիս, որ յիրաւի ամբողջ դրամայի ընթացքում երկու՝ հիմնովին տարբեր գաղափարներ դէմ առ դէմ են կանգնած—մի կողմից քրիստոնէութիւն, միւս կողմից հեթանոսութիւն։ Մի կողմից անսահման ալտրուիզմ, միւս կողմից անսանձ էգօիզմ կամ ինչպէս նկատում է Էմիլ Բայիս, մի կողմից Շօպէն-հաուէր, միւս կողմից Նիչչէն։ Առանց տրամադիր լինելու Հիօրդիսի մէջ տեսնել բուն Նիչչէական սկզբունքների մարմնացումը—որովհետեւ մեզ թւում է, որ իսկական Նիչչէականութիւնը այսպէս թէ այնպէս Հիօրդիսի վայրագ բարոյականութեան հետ չէ կարող միանգամայն նոյնանիչ համարուել,—այնուամենայնիւ մենք էլ որոշ չափով համաձայն ենք այն երկու բուհանքի հակադրութեանը, որը մատնացոյց է անում վերոյիշեալ գերմանացի քննադատը։ Զիգուրդը բարի կամքով և անօրինակ անձնութեամբ իր ընկերոջ բախտաւորութեան համար զոհում է իր անձնական հաճոյքը, իր երջանկութիւնը, չէ խնայում նոյն իսկ իր կեանքը։ Եւ ինչ՞ Հիօրդիս կամքի ոյժով, համարեա աւանական եռանդով իր ետական ըրտ ցանկութիւններին է միայն ծառայում։ Ինչպէս տեսանք՝ նա բարբարոս է, նա անխիղճ է թէ իբրեւ մարդ, թէ իբրեւ մայր, թէ իբրեւ կին։ Նա չի խնայում ոչ սրբի—նչ էօրնութիւն, ոչ Դանյիլին, ոչ Թօրօլֆին, ոչ իր ամուսնուն, ոչ իր որդուն և ոչ նոյն իսկ Զիգուրդին։

Հիօրդիսի խստասիրտ, լպիրշ բնաւորութեան հակադասակերն է նաև Զիգուրդի կինը՝ Դանյին իր մեղմութեամբ և քնքոյ հեզութեամբ։—«Ես գիտեմ, որ Զիգուրդին յարմար կին չեմ, նա մեծահոգի է, այս մասին ինձ ոչինչ չէ յայտնում։ Բայց այսպէս չէ կարող շարունակուել... ես չեմ ուզում արգիլի լինել նրան»—այսպէս է մոտծում բարեհոգի Դանյին։

Իր մեծահոգութեամբ և ասպետական զգացմունքներով քրիստոնէական սկզբունքների մարմնացումն է նաև էօրնութիւն։ Մինչդեռ Հիօրդիս կծու ակնարկներով նախատում, վիրաւորում է պատկանելի ծերունուն՝ վերջինս անյիշաչար կերպով, վնասնձն

ներողամտութեամբ չտապում է անարժան կնոջ փոքրիկ որդու՝ էգիլի կեանքը փրկելու և ևս ինչ զուգադիպութիւն. այն բուպէին երբ էօրնուլֆի կրտսեր որդին՝ Թօրօլֆը զոհ է գնում Հիօրդիսի ստոր մեքենայութիւններին՝ կտրիճ ծերունին իր վեց հարսագահ ուղիների կեանքի գնով փրկում է Հիօրդիսի որդուն...

Իբրև հակաքրիստոնէական սկզբունքի ներկայացուցիչ հետաքրքիր տիպ է ներկայացնում զիւղացի Կօրէն՝ Գուննարդի, կամ աւելի ճիշտ՝ Հիօրդիսի թշնամին։ Սակայն տարբերութիւնը կայանում է նրանում, որ Կօրէն թող է, մեղկ և վախկոտ, հետեաբար զուրկ է Հիօրդիսի եռանդից, կամքի ոյժից և հետևողականութիւնից։

«Հիւսիսային զօրարշաւում» Իբսէն կրկին անգամ շօշափում է սիրոյ և ամուսնական ինդիքը, բայց այս անգամ աւելի խոր և նշանակալից կերպով։ Անկասկած է, որ երիտասարդ գրամատուրգը Զիգուրդի անձնութեան, բարի և մեծահոգի բնավորութեան հետ զուգընթաց՝ չէ դիմում մերկայնել նաև նրա աններկի «յանցանքը»։ Այս յանցանքը, ինչպէս վերև տեսանք, կայանում էր Հիօրդիսի այն յանդիմանական նկատողութեան մէջ թէ՛ «ամեն ինչ կարելի է գոհել հաւատարիմ բարեկամին, բայց ոչ սիրած կնիքը»։ Իսկ որովհետև Զիգուրդը յանձն առաւ այսպիսի զոհաբերութիւն՝ դրանով, ինչպէս գրամայի ընթացքում պարզուեց, որոշ չափով անբախտացրեց թէ իրան և թէ Հիօրդիսին, որովհետև թէ՛ մէկի և թէ՛ միւսի ընտանեկան-ամուսնական կեանքը դիմացկուն հիմքերի վրայ չէր դրուած, չէր բղխում փոխադարձ սիրուց։ Զիգուրդը սիրում էր Հիօրդիսին և ոչ Գանձիին, որի հետ նա ամուսնացաւ և որից նա սիրւում էր, իսկ Հիօրդիսը թէև սիրւում էր Գուննարդից, բայց սիրում էր ամենազօրեղին՝ Զիգուրդին։

Այս «յանցանքը», որ ներքին մի խոշոր հակասութիւն է ամփոփում իր մէջ՝ անշուշտ մի բնական հարցի և լուրջ խորհրդածութիւնների տեղիք պէտք է տայ ընթերցողին—մի՞թէ հնարաւոր է այս հակասութիւնը, մի՞թէ սրանով չէ հերքւում Զիգուրդի բարոյական բարձր գաւառանքը, մի՞թէ նա իր անձնութեան մէջ անսայթաք հետեողական չք պէտք է լինէր։ Այստեղ արդէն շօշափւում է այն փխրուն կապը, որ գոյութիւն ունի իսկական իդէալականութեան և անհատականութեան մէջ։ Այս կապը մի բարդ և ծանրակշիռ ինդիք է, որ Իբսէնին զբաղեցնող հիմնական պրօբլէմներից մէկն է կազմում գուցէ և ամենադժուարը, որ շարունակ երևան է զայլիս նրա բազմաթիւ գրամաներում, առանձնապէս վերջին և նախապերջին ստեղծագործութիւնների մէջ—«Եթէ մենք մեռածներս

սթափուկներ», «Ջոն Գարրիէլ Բօրկման»: Ինչպէս յետոյ կը տեսնենք՝ նա բաղմակողմանի կերպով քրքրել, արծարծել է այս խնդիրը՝ սակայն ոչ միշտ գրական և որոշակի լուծում տալու նրան:

Պարզ է, որ «Հիւսիսային զօրարչաւը» իր բովանդակութեամբ շատ ուժեղ է և միանգամայն յափշտակող: Դրսման լի է սուր և խիստ, կաշկանդող հակադրութիւններով, որոնք սակայն երբեմն շատ են նպաստում գրամայի առանց այն էլ հարուստ բեմական առաւելութիւններին: Իբեէն այս գրամայով յոյց տուեց իր թէ գրամատիկական խոշոր տաղանդը և թէ տեխնիկական նուրբ հոտառութիւնը, որոնք անպարտաւար աւելի լայն չափեր պիտի ընդունէին:

Բայց «Հիւսիսային զօրարչաւը» ըստ արժանոյն չը դնահատուեց՝ թէ հասարակութիւնից և թէ քննադատութիւնից սառն կերպով ընդունուեց: Նորվեգական աւանդութիւններ իսկական վերարտադրողը այդ ժամանակ համարուում էր Բեօրնսոն, որ և աւելի մեծ ժողովրդականութիւն էր վայելում: Հայրենակիցների այս վերաբերմունքը Իբեէնին կարող էր միայն գոռնայնել, որոշ չափով՝ նոյն իսկ խորթացնել, իսկ յուսահատեցնել — երբէք, նա շարունակում էր իր գրամաներում նոյն աւանդութիւնները վերակենդանացնել և նոյն հասարակութեան կեանքը բխրեղացնել: 1862 թուին լոյս տեսաւ նրա «Սիրոյ կասկեղեցիները», իսկ երկու տարուց յետոյ՝ «Գահաժառանգները»:

Այս վերջին գրամայում, որի նիւթը մասամբ վերցուած է XIII դարից մնացած նորվեգական թագաժառանգական մի աւանդութիւնից, Իբեէն նորից չօչափում է ալարուիդմի և էգօիդմի գաղափարը, միւս կողմից՝ իսկական և կեղծ հանճարի պրօբլէմը:

Ինչպէս ֆօն Վարդայցի որդին՝ Հօկօն Հօկօնսոն թագաւոր է ընտրուում: Ըսոյց հանդուցեալ անժառանգ թագաւորի ևղբայրը՝ զուրս Սկուլէն, որ մինչև Հօկօնի չափահաս գառնալը խնամակալի պաշտօն էր վարում՝ զանազան թակարդներ է լաբում վերջինիս դէմ և զահաժառանգական յաւակնութիւններ է աւանում: Այս թակարդների իսկական հեղինակը Նիկօլաս Լայխտպոս Արնէսսօնն է: Այս հոգևորականը մի նենդամիտ, խարդախ և խնորհգան անձնաւորութիւն է՝ իր չար ծրարներով մի հըսկայ, իսկ կարողութեամբ՝ մի թղուկ: Որովհետև նա ինքնաճանաչ էր, զգում էր իր ոչնչութիւնը՝ այդ պատճառով ամեն ջանք գործ էր դնում, որ Նորվեգիայի հորիզոնի վրայ ոչ մի արև չը փայլի, որպէս զի իր փոքրիկ անձնաւորութիւնը սառուերի

տակ չը թաղուի: Իսկ այս տեսակ արեւ էր երիտասարդ թագաւոր Հօկօն, որի շողերը վաղուց էին խայթել վատագի հողերէն: Բազմաթիւ անգամներ զոհեր էին տալիս իր իշխանութեան համար իր ժողովուրդին: Բայց երբ սմին ինչ անհետեանք է մնում, նոյն իսկ երկնային նշաններով հաստատուած է Հօկօնի արքայական իրաւունքը, այն ժամանակ նա մահուան անկողնում դործ է դնում իր վերջին հնարաղիտութիւնը—յայտարարում է, որ Հօկօն ինքայի իսկական զաւակը չէ, այլ մի հասարակ գիւղացու որդի: Կասկածամիտ և թերահաւատ Սկուլէին հէնց այս էր հարկաւոր. չը նայելով, որ իրաւաբանական և մինչև իսկ երկնային ապացոյցներով հաստատուած էր իր միջակայի իսկական դահածառանգ լինելը՝ այնուամենայնիւ նա տուելի է առաջ դնում իր յաւակնութիւնները մէջ: Հետեանքն այն է լինում, որ ծագում է դահածառանգական կոխ, որից Հօկօնը յաղթող է դուրս գալիս:

Պէտք է նկատել, որ Հօկօնի մասին միայն թուոյիկ ակնարկներ կային աւանդութեան մէջ, այն ինչ Սկուլէի և Նիկօլաս Կալիսկոպոսի տիպերը ամբողջովին Իւսէնի ստեղծագործութիւնն են կազմում: Հօկօն մի մարդասէր, ուժեղ կամքի տէր, կտրիճ և ինքնավստահ անձնաւորութիւն է: Նրա իդէալն է «նորվէգական թագաւորութիւնը վերածել նորվէգական ազգի»: Նա խորապէս դիտակցում է, որ «արքայական ծնունդը առաջ է բերում արքայական սլարտականութիւններ» և նա ձգտում է դէպի իշխանութիւնը միայն իր հպատակներին բախտաւորացնելու համար: Հօկօն այնքան ժողովրդասէր է, որ անմեղ արիւնհեղութեան տեղիք չը տալու համար՝ ինքնակամ կերպով առաջարկում է մինչև իսկ թագաւորութիւնը բաժանել Սկուլէի հետ, բայց վերջինս զրանով չէ բաւականանում. նա ուզում է միայնակ թագաւորել:

Ժողովրդի բարօրութեան համար նա չէ խնայում ոչ իր մօրը և ոչ իր սրտի սիրածին: Նա հրապարկում է վերջինիցս և ամուսնանում է Սկուլէի աղջկայ՝ Մարգրիտի հետ, որին սակաւ չէր սիրում: Հօկօնի կամքի ոյժը, կարողութիւնը և ուրիշ բարեմասնութիւնները այն աստիճանի են հասնում, որ նա չուտով գրաւում է իր կնոջը, մինչև իսկ ղրնում է նրան իր հօր դէմ:

Նիկօլաս Կալիսկոպոս Արնէսսօն միանգամայն Հօկօնի հակապատկերն է: Նա կոտորածի միջին իր ոսկորների ծուծը. նա չէ խնայում ոչ մի զոհաբերութիւն՝ և՛ հայրենիքի շահերը, և՛ ժողովրդի բարեկեցութիւնը—միայն թէ իր ստորաքարչ մտա-

դրութիւնը պատկուի՝ Հօկօնի հերոսութեան և փառքի ուղին խախտուի: Բայց նա փոքրոգի է և կարողութիւնից զուրկ: Օգտուելով Սկուլէի բնաւորութեան մի քանի թուլութիւններէ՝ նա նրան դարձնում է մի նպատակայարմար զէնք ընդդէմ Հօկօնի: Երբ նա նիւթապաշտ բարոյականութեան քարոզն է կարդում և երբ՝ ըստ էութեան բարի և լաւ ձգտումներով համակուած Սկուլէն վրայ է բերում—«Հապա իրաւունքը»—այն ժամանակ դաժան եպիսկոպոսը Նիչչէական ոգով պատասխանում է. «Իրաւունք ունի ամեն մէկը՝ ով որ ոյժ և ցանկութիւն ունի ապրելու... բառախաղութեամբ չը պէտք է զբաղուել: չը կայ ոչ բարի ոչ չար, ոչ վերև ոչ ներքև, ոչ բարձր ոչ ցածր: Այս խօսքերը պէտք է մոռանաք, եթէ ոչ երբէք ձեզ չի յաջողուի վերջին քայլը անել...»:

Ինչպէս Արնէստն ապականուած հողերաւանութեան՝ այնպէս էլ Սկուլէն անհանգիստ և խռովարար աղնուականութեան մարմնացումն է: Թոյլ, տատանուող, գործնական եռանդից զուրկ Սկուլէն իսկապէս թագաւորական հիւանդութեամբ ընկնում մի բախտախնդիր է: Նա թագաւորածին է, բայց Հօկօնի նման թագաւորական պարտականութիւնները զիտակցութեամբ չէ համակուած: Նա ուզում է թագաւոր դառնալ ոչ թէ ժողովրդի բարօրութեան, այլ առաւելապէս իր անձնական հաճոյքի համար: Նա գերադասում է «դահլի վրայ նստել և տաբալուսել (իր արքայական արժանաւորութեան մասին), քան ի՞նչ ներքև, ժողովրդի մէջ լինել և տարակուսել նրա մասին, որ վերեւն է բազմած» (ակնարկ Հօկօնի հասցէին): Եւ ահա երբ նա յուսահատուած, կռուելու կարողութիւնից միանգամայն ուժասպառ եղած՝ վանական պատերումն է դռնում իր վերջին ապաստանարանը—ինքնաճանաչ զիտակցութեամբ խռտովանում է իր քրոջ. «Կան մարդիկ, որոնք ծնուել են միայն մեռնելու համար: Իմ կեանքը ձգտում էր միշտ դէպի այնտեղ, ուր բացակայում էր ստտուածային մատը. այս պատճառով ես մինչև այս րոպէն անընդունակ եղայ իմ ուղին պայծառ աչքերով տեսնել»: Սակայն այս ինքնաճանաչութեան հետ միասին՝ նա վերջապէս ճանաչում է նաև Հօկօնին—«Զիդրիդ, թանկազին քոյրիկ, Հօկօն թագաւորին ողջունիր իմ կողմից և յայտնիր, որ մինչև այս ժամը ինձ դեռ անյայտ է՝ արդեօք նա թագաւորածին է թէ ոչ. սակայն մի բանում ես անդրդուելի կերպով համոզուած եմ, որ Ըս Աստուածանից ե բնտրուած»:

Ինչպէս Հօկօնը իր հսկառակորդից համարում է «Աստուածանից ընտրուած», այնպէս էլ նա, բոլորովին անկախ կեր-

պով, բայց մի խորհրդաւոր զուգադիպութեամբ, դժբախտ Սկուլէին անուանում է «Աստուծու մի խորք զաւակ»:

Այս խօսքերն արդէն առաջնորդում են մեզ դէպի դրամայի միւս պրօբլէմը.— ինչ է հանճարը, կամ ինչ է իսկական բախտաւորութիւնը: Իրսէն այստեղ, հանճարի անբացատրելի առեղծուածի առաջ կանգնած յիշաւ միտոիկական հակումներ է ցոյց տալիս, բայց դժուար է հաշտուել մի քանի քննադատների այն մեկնութիւններին՝ թէ նա դառնում է ճակատագրապաշտ, ընդունում է բարի և չար առողների գոյութիւն, որոնք և անխախտ կերպով տնօրինում են մարդկային բախտաւորութիւնը: Հօկօն, ճիշտ որ, հէնց առաջին տեսարանում նկատում է, «ես իմ մանկութիւնից արդէն թաղաւորացու էի», բայց սա դեռ չէ նշանակում, որ նրա բախտը անմիջ կերպով գործածուած էր ինչ որ բարի, լուսատու սաստղի վրայ: Ընդհակառակը, նա հէնց ինքն է լինում իր բախտի զեկաւարը, որովհետեւ նա զուրկ չէր հանճարեղ հակումներից, որովհետեւ նա զործունեայ էր, եռանդոտ, որովհետեւ նա ինքնաճանաչ էր, զգում էր իր սեփական մեծութիւնը: Այն ինչ Սկուլէն միշտ թերահաւատ դէպի իր սեփական ոյժերը, շարունակ տարակուսանքի ստուերներով պաշարուած՝ անդամահատում է իր կամքն ու կարողութիւնը, չեղում է իր նպատակից և դառնում է... դարձեալ մի հանճար, բայց այնպիսի հանճար, որի միակ փայլը տարակուսանքն է և կասկածը: Սկուլէն այնքան անկայուն, այնքան ողորմելի է, որ կասկածաբնական գամ նրան կասկածելի է քոււմ, որ նա նոյն իսկ տարակուսելու մէջ անխտան է, երկրուն: Նա իր կեանքում մի բախտաւոր րոպէ է միայն ապրում և դա նրա ինքնաճանաչութիւնն է, երբ նա ըմբռնում է մի կողմից իր կամքի և կարողութեան, միւս կողմից իր ցնորքների և իսկական կոչման մէջ եղած անդունդը: Այս ինքնաճանաչութիւնն է, որ մահուանից մի փոքր առաջ Սկուլէի խելօք և հեռատես քրոջ՝ Ջիզրիզին գրգռում է ուրախ սրտով հաշտուել իր եղբոր հետ.— «Գնան այժմ քո ճանապարհով, ով իմ արքայական եղբայր, տեսնում եմ, որ դու այլ ես ինձ կարիք չունես»: Այն ինչ, Սկուլէի կինը՝ Բայնիլդ մինչև վերջ կոյր հաստատվ էր վերաբերում դէպի իր ամուսնու հոգեկան կարողութիւնները, այդ պատճառով էլ պէտք է այժմ ծանր կերպով սուսօժէ:

Իրսէն ֆատալիզմ չէ քարոզում, այլ կենդանի դործ, եռանդ և որ գլխաւորն է՝ ինքնաճանաչութիւն: Առանց այս յատկութիւնների չէ կարող բեղմնաւորուել և ոչ մի հանճար, չէ կարող հարթուել և ոչ մի բախտաւորութեան ճանապարհ: Հօկօն, ինչպէս տեսանք, օժտուած է այս յատկութիւններով, ահա

այս է պատճառը, որ նա Իբսէնի ստեղծած առնական տիպերի շարքում, Զիգուրդի և զօկտօր Շտօկմանի հետ միասին, մի փայլուն տեղ է գրաւում:

«Գահաժառանգներից» առաջ Իբսէն գրել էր «Սիրոյ կասկեղզութիւնը»: Սա մի դրաղի-կօմէդիա է, որի մէջ հեղինակը փոխանակ անցեալից, աւանդական հում նիւթերից օգտուելու, տեղափոխուում է դէպի ներկան, դէպի ժամանակակից կեանքի նկարագիրը:

«Սիրոյ կատակերգութիւնը» մի կծու հեղինութիւն է, մի անխնայ ծաղր այն թռուցիկ կախարդանքի, որի անունն է «սէք», այն վաղաթառամ բանաստեղծութեան, որի հուրը շատ կարճատե է բորբոքում և չուտով մոխիրները տալին է թաղւում, որը ծնւում է այսօր, որպէս զի էդուլ՝ ամուսնութեան գրկում իր հոգեարքն ապրի: Պատօր Շտրօհման, որ արդէն 12 զաւակների տէր է—տասերեքերորդն էլ ճանապարհին է—վաղուց է մնաս բարով ասել կեանքի այդ գրաւիչ բանաստեղծութեանը. գրաղիը Շտիւբէրը՝ նոյն իսկ դեռ չամուսնացած, նշանադրութեան ամիսներին՝ արդէն ապրել է այդ հրաժեշտը. իսկ աստուածաբանութեան կանգիդատ՝ Լիւնզը, ինչպէս և օրիորդներ Շվանհիլդ և Սկէբէն՝ վաղանցուկ արքունիքից յետոյ՝ սահում են այդ նոյն ճանապարհով:

Շտրօհման մի ժամանակ եռանդուն քննադատ էր, հասկանում էր «նոր մօզայից», յափշտակում էր «երաժշտութեամբ», գրում էր «բանաստեղծութիւններ» և զղայուն ձօնով նսիրում «Իմ Մարէին». բայց նրա սէրը այժմ «տանձի ծառի է նման», որից հիւթալից պտուղներ են միայն վայր ընկնում: Բարեմիտ պատօրը այժմ իր ամբողջ էութեամբ դարձել է կեանքի մարդ և մի առանձին ինքնաբաւականութեամբ սիրում է սրբագործել իր գործնական աշխարհահայեացքը Աստուածաշնչի յայտնի աւսացումով—«տունը աւաղի վրայ չը պէտք է կառուցանել». իսկ Ս. Գրքի միւս խրատներն, ի հարկէ, գոյութիւն չունեն իր «Աւետարանում»: Նրա միակ հոգսը ապրուստի հարցն է—«մարդս չէ կարող ապրել այնպէս, ինչպէս շուշանը դաշտում»: Եւ երբ գաղափարական ոգևորութեամբ յափշտակուած բանաստեղծ ծաղկը իդէալներից է խօսում՝ նա մի անվրդով պաղարիւնութեամբ պատասխանում է.—«Ի՞նչ գործ ունեմ եւ իդէալների հետ, ամուսնացած մարդ եմ, ընտանիքի հայր, բազմաթիւ հօտերի հոգևոր խորհրդատու, ունեմ յաւելուածներ—մի մեծ կալուածք, պէտք է ցանկել, հնձել, կալսել, անասուններին կերակրել, պէտք է աղբը կուտել, կովերը կթել, կարագ պատրաստել—այսպէս մշտադրող գոմում կամ տանը՝ ժամանակ ու-

նեմ եւ իգէալների համար ապրելու: Ահա այս է պատճառը, որ երկու հասած աղջիկների տէր տիկին Հալմը պատուօր Շարօմանին համարում է մի «կատարեալ մարդ»:

Այս տեսակ «կատարեալ մարդկանց» շարքին է պատկանում նաև զրազիր Շտիւբէր: Նա էլ երբեմն յափշտակուել է ջերմ սիրով և զրազրութեան ժամանակ պաշտօնական նամակների հետ միասին՝ սիրային բանաստեղծութիւններ է գրել: Բայց այժմ նա ամաչում է այդ անցեալը մտաբերել: Իգէալներից նա համարեաւ նոյնքան հեռու է, ինչքան Շարօման. «ես սիրով կը նուիրէի իգէալական կոուի, եթէ միայն ազատ լինէի». նա նշանուած է, նա պէտք է տուն ու տեղ կազմէ և շատ լաւ զգում է, որ ծնուած է միայն զրասնենակի և ոչ թէ իգէալների համար: Այս տեսակէտից շատ բնորոշ է հետեւեալ խօսակցութիւնը, որ Շտիւբէրն ունենում է իր նշանածի՝ Սկէրէի հետ. «Այժմ մի քիչ ցնորքներով զբաղուենք», ասում է վերջինս, «տեսնում ես ինչպէս լողում է լուսինը»։—«Այո, տեսնում եմ. բայց ես պարտամուրհակների մասին էի մտածում»,—պատասխանում է «զրասնենակի մարդը»:

Նորաւարտ ուսանող Լինդը սիրում է իր տանտիկնոջ՝ Հալմի աղջկան՝ Աննային: Նա սիրում է երիտասարդական ամբողջ հոգեզմայլութեամբ. նա մի գեղեցիկ այլաբանութեամբ՝ իր բաժակը դատարկում է «մայիսեան հոտաւետ բողբոջների կենաց, որոնք առանց պտղի մասին մտածելու՝ շառագունում են». նա կարծում է, որ «բախտաւորութեան թիթիկներն» արդէն բոնել է, որ «ճակատագրի սանձը իր ձեռքին է» և երկրիս որ ծայրումն էլ կանգնելու լինի՝ ամեն տեղ «գանձեր են վիտում իր ոտների տակ»: Լինդը աստուածաբան է. ամուսնանալուց յետոյ մտադիր է գնալ Ամերիկա և նուիրուել միսիօներական գործին: Բայց նշանադրութիւնից յետոյ սկսում է նաև նրա իգէալների հոգեարքը: Որ նա «ապագայի» մասին է մտածում՝ այդ երևում է այն նախանշաններից, որ նա սկսում է իր ժամերը դասաւորել, կեանքի եղանակը կանոնաւորել: Այս արտաքին փոփոխութիւնն արդէն յուզում է նրա մտերիմ բարեկամին՝ Փալկին: Սակայն Աննայի մաշը աղակալանքները, «հօրաքոյր» և «մօրաքոյր» տիկիները, որոնց իգէալը պատուօր Շարօմանն է, ուրիշ մտադրութիւն ունեն. նրանք գէտ են, որ երիտասարդ ղոյզը ամուսնութիւնից յետոյ Ամերիկա գնայ և ինչ որ մարդասիրական գործի նուիրուի. նրանք գործ են գնում իրանց կանացի ամբողջ հնարագիտութիւնը և փորձառական կեանքի քարոզը՝ երիտասարդ Լինդի երազները յրուելու, նրան «գործնական» ճանապարհի վրայ բերելու: Երբ

Լինդը, որի մէջ զեռ առկայծում էին գաղափարական ոգևորութեան վերջին շողերը, դարձեալ իդէալներից և վերջապէս անհատական ձգտումներից է խօսում՝ Շաիւրէրի նշանածը, երբեմն բռնաճակով յափշտակուող օրիորդ Սկէրէն վրայ է բերում. «սեփական ձգտումներին հետեւում են մինչև այն ժամանակ, քանի ազատ են և ամուլի. բայց փեսան պէտք է հարսին հետևի». (սա չէ խանդարում, ի հարկէ, որ Սկէրէն մի այլ անգամ, եթէ ձեռնառու է, ընդհակառակն պնդէ—հարսը պէտք է հետևի փեսային)։ Պատուով Շարօման միւս կողմից՝ հետևողական կերպով, բայց շատ բնորոշ լինիզմով նկատում է թէ՛ Լինդը «իր պաշտօնին համաձայն ոչ թէ զոհ պէտք է բերի, այլ պէտք է ճշմունի»—անա ժողովրդակեր հողերականի տրամաբանութիւնը։

Սակայն Լինդը կարիք չունէր այս միօրինակ խրատներին նրա մէջ լինէն ըստ ինքեան արդէն աստիճանաբար տեղի էր ունենում փոփոխութիւնը։ Ամերիկա գնալու միտքը նա արդէն ծաղկել, անկիւնն է զրկել։ Նա պարզապէս յայտնում է Ֆալկին—«իրբն փեսայ ևս այժմ ունեւ իմ պարտականութիւնները». նա ուրախ է մինչև իսկ, որ այժմ «արթնացել, նորմալ է դարձել»։ Իսկ երբ Ֆալկը վրդովուած երեսմիւ է տալիս նրա նախկին ոգևորութիւնը, վերոյիշեալ բանաստեղծական արտայայտութիւնները—այն ժամանակ երկասարդ աստուածաբանը առանց կարմրելու նկատում է, որ այդ հին խօսքերը պէտք է cum grano salis հասկանալ։

Բոլորովին ուրիշ բնաւորութիւն է ներկայացնում երկասարդ բանաստեղծ Ֆալկը. նա բառի բուն նշանակութեամբ բանաստեղծ է, բանաստեղծ թէ կոչումով և թէ կեանքում. նրա կարծիքով սէրը այնտեղ է միայն արմատանում, աճում և ծիլեր արձակում, ուր «արեան մի ջերմ կաթիլ է եռում»։ Նա իր ամբողջ էութեամբ իդէալիստ է, հողով մաքուր և վճիտ, սրտով վառվառն և աշխոյժ. նա կարծում է որ կեանքի գարունը՝ սէրը մշտապես է և բոլոր «հաշիւներից» և «յարմարութիւններից» բարձր։ Սիրոյ անաղարտութեան և յաւիտենականութեան համար՝ նա պատրաստ է զոհել ամուսնութիւնը, բայց ինքնավստահ կերպով նա փորձում է սէրը և ամուսնութիւնը ներդաշնակել՝ ընդգէմ վերոյիշեալ «գործնական» զոյգերի, իդէալականութիւնը և սէրը ամուսնութեան մէջ վառ պահել։ Նա սիրում է Հալմի միւս աղջկանը՝ Շվանհիլդին, և այս սէրը ներսն աւելի է բորբոքում իր գաղափարական ոգևորութեան մէջ. նրա սէրը «կիրք է և ոչ գիտութիւն»։ Երբ ամենքը հեղնում կամ ջրում են Ֆալկի պաշտպանած իդէալիզմը՝

Շվանհիլդըն է միայն, որ հասկանում է նրան, փարւում է նրա կրծքին: Շվանհիլդը նայեալէս գանդաւում է «ժամանակակից բարոյականութեան» մասին—նոյ է մաքառում յանուն ճշմարտութեան, նոյ է պատրաստ անձնազոհութեան, նոյ է հերոսը: Ան նա Ֆալկի անձնաւորութեան մէջ գտնում է այս «հերոսը» ու դառնալով նրան՝ մատաղ թարմութեամբ և հրճուանքով երգում է. «Այժմ ծաղկում է իմ գարունը, իմ բախտը, որի սղփիւրը դու ես»: Բայց այս գարունը վաղաթառամ է լինում. միջավայրը, դարձնականութեան թոյնը, կամայ-կամայ վարակում է նաեւ Շվանհիլդըն: Նա էլ է «խելօքանում» և չէ քաշւում Ֆալկին բացարձակապէս յայտնել. «Ես մի ժամանակ երգում էի—հստատում եմ յաւիտենական սիրոյ դոյութեանը. իսկ այժմ—ես քեզ երբեմն սիրում էի»: Այս տարօրինակ յեղաշրջման սկանաւուն Ֆալկը զայրացած յետ է տալիս մատանին և ինքնակամ լուծում է նշանադրութիւնը: Շվանհիլդի յանկու թիւնն էլ հէնց այս էր. նա չունէր այն բարոյական ոյժը, հոգեկան կարողութիւնը, որ ընդունակ լինէր Ֆալկի հետ ձեռք ձեռքի տուած՝ ընթանալ դադափարական ճանապարհով: Նա թոյլ է, փոքրօգի, այդ պատճառով գերադասում է ամուսնանալ վաճառական Գօլդշտատի հետ:

Գօլդշտատը արագի-կօմէդիայի հետաքրքրական դէմքերից մէկն է. էմիլ Բայխի կարծիքով նրան կարելի է «սիրոյ կատակերգութեան» մէջ հէնց «խական բանաստեղծը համարել»: Նա սովորական առևտրականներից չէ. նա դործնականութիւնը ցինիզմի չէ հասնում. նա էլ է սիրելի, նա էլ է ոգևորուել երիտասարդական իդէալիզմով, բայց զրա հետ միասին նա նախաշում է եւ կեանքը: Նա թէն ոչ այնքան գեղեցիկ, բայց ճշգրիտ, պրաստիկական նկարագրութեամբ դէմ առ դէմ է դնում «սէրը» և «ամուսնութիւնը»: Նրա իդէալն է ոչ թէ բոցավառ և վաղանցուկ սիրոյ գինովութիւնը, այլ մշտաւուն, հանդարտ և տաք զգացմունքների ներդաշնակութիւնից առաջացած ամուսնական սէրը:

Թէ Գօլդշտատը այս տեսակէտից՝ Շվանհիլդի մէջ իր իդէալը գտաւ, ուս մեզ մի փոքր կասկածելի է թւում, որովհետեւ Շվանհիլդի սիրտը, այսպէս թէ այնպէս, պատկանում էր Ֆալկին:

Բայց Գօլդշտատի աշխարհայեացքը և բարեխառն տեմպերամէնտը շատ ազդու ներդրութիւն են ունենում Ֆալկի վրայ: Շվանհիլդից բաժանուելուց յետոյ նա արդէն քննական հայեացքով է վերաբերում դէպի անցեալը. նա մնում է նոյն իդէալիստը, կեանքի թռուցիկ մակերևոյթից վեր է սլանում, «դէպի բարձրերը», բայց զտում, լրջանում, զրական հիմքերի վրայ է դնում իր զաղափարական ոգևորութիւնը: Մի ժամանակ

Նա զգացմունքի ծովում լողալիս՝ ինքնամոռաց հրճումներով երգում էր. «Եթէ անգամ մակոյկս խորտակուի, այնուամենայնիւ հրաշայլ է լողալ»։ Իսկ այժմ—«Եթէ անգամ մակոյկս խորտակուեք, այնուամենայնիւ հրաշայլի եք լողալ»։ Նա Շարօմանի Շաիւբէրի, Լինդի և Շվանհիլդի պէս տիպերին համարում էր «երանութիւնը չափաւորելու ընկերութեան անդամներ»։ պէտք է նկատել, որ Ֆալին էլ որոշ չափով այժմ այդ ընկերութեան անդամն է դառնում։ միայն, ի հարկէ, բոլորովին տարբեր ուղղութեամբ—նա միանգամայն ազատ, ինքնակամ կերպով «ազատութիւնն» այն մտքով՝ ինչպէս Ֆալին էր հասկանում՝ «իր կոչումն զգալ և ըստ այնմ վարուել»—հրաժարում է Շվանհիլդից, չափաւորում է իր զգացմունքը՝ առանց սակայն մաղաչափ անգամ դոնելու իր ոգին։ Եւ ահա լուրջ, անյողդողդ Ֆալստաֆահայեացքով զինուած՝ բանաստեղծ-խղէալիստ Ֆալկը մտնում է կեանքը՝ մարդկութեան ծառայելու։

Իրան «սիրոյ կատակերգութեամբ», որ գրուած է ոտանաւորով և տեղ-տեղ վաշլում է լիրիկական ընտիր հատուածներով, սկիզբ դրեց իր քննադատական-մտրակողական ուղղութեանը։ Այս գրուածքով նա ցոյց տուեց նաև հեզնելու սուր և տաղանդաւոր մի ընդունակութիւն։

Բայց նրա հեզնութիւնը մակերեսովական չէ, զուարճացնող չէ, միանգամայն լուրջ և վերին աստիճանի խայթող. նրա ծաղրը նոյնպէս մի կռիւ է, նոյն իսկ կատաղի կռիւ. դա մի խորին զայրոյթի արտայայտութիւն է, այն տեսակ զայրոյթի, որ աւելի շուտ պէտք է հեկեկար՝ քան թէ հեզնէր և որը չէ լալիս միայն նրա համար, որովհետեւ արտասուք չէ գտնում... Ծաղրելով, հեզնելով Շարօմանին, Շաիւբէրին, Լինդին՝ նա միաժամանակ, անուղղակի կերպով, քննադատում է այն միջավայրը, որ ծնում է այդպիսի տիպեր, մասնացոյց է անում այն հողը՝ անտեսական-սոցիալական դրութիւնը, որից գուցէ ակամայ անուում են Շարօմանները, Շաիւբէրները, Լինդերը։

Իրան իր այս տրագիկ-կոմէդիայում ոչ թէ սէրը և ամուսնութիւնը իրար հակադրում է, ոչ թէ յանուն վերջինի՝ առաջինի դէմ արշաւանք է սկսում—ինչպէս կարծում են մի քանի քննադատներ—այլ ընդհակառակն ցոյց է տալիս նրանց չօչափման սերտ կէտը։ Նա ինչպէս կարող էր սիրոյ դէմ արշաւանք սկսել՝ քանի որ հէնց նախընթաց, ինչպէս և կը տեսնենք՝ յետագայ գրամաներում՝ ամուսնութեան ետևան հիմքը սերն է համարում։ Նա ծաղրում, անխնայ կերպով հեզնում է միայն թոռւկի, մակերեսովական, մանուսնոյ կեանքիցիօնել սէրը, որ

դոյութեան խնդրի ապահովութիւնից և զգայական հաճոյքից դուրս ոչինչ չէ ճանաչում:

«Սիրոյ կատակերգութիւնը» անագին աղմուկ հանեց Նոր-վէզիայում: Մոլեռանդ կրճատութիւնին անդուրեկան էր մանա-նաւանդ այն վերաբերմունքը, որ Իբսէնը ցոյց էր տալիս դէպի հողերական դասակարգը: Պատուօր Շտրօհմանի տիպը, անշուշտ, նրա պաշտօնակիցներից շատերի համար իբրեւ մի անախորժ հայելի կարող էր ծառայել:

1862 թուին «Նորվէգական թատրոնը» անանկանում և փակեւում է. այնպէս որ Իբսէնը անպաշտօն մնալով, նիւթա-կան ծանր ճգնաժամի է կենթարկուում: Նա իզուր է զիմում Նոր-վէզական կառավարութեանը «բանաստեղծների թուակից» մաս ստանալու—խնդիրքը անհետեւանք է մնում, որովհետեւ այդ թո-շակից Բեօրնսնն էր օգտուում այն ժամանակ: Իբսէն այն աս-տիճանի է հաւնում, որ հարկադրուած է մաքսային ծառայու-թեան մէջ մտնել: Բայց այս դրութիւնը երկար չէ տևում. վեր-ջապէս հանգամանքներն այնպէս են դասաւորում, որ նա այլ ևս անկարող է մնալ իր հայրենիքում: Իբրեւ «կամաւոր աքսո-րական» նա 1864 թուի գարնանը հեռանում է Նորվէգիայից: Երկու տարուց յետոյ նա ստանում է պատուաւոր թշակ և շարունակում է զեռ շատ երկար տարիներ մնալ հայրենիքից հեռու: Նա չորս տարի մնում է Հոտի, այնուհետեւ զնում է դէ-պի Միւնխէն, Դրէզդէն, ուր և հաստատւում է մի քանի տարի. 1869-ի ամառը այցելում է Ստոքհօլմ, իսկ հետեւալ տարին՝ Կօպէնհագէն: 1874 թուին կարճ ժամանակով վերադառնում է Նորվէգիա, ուր երիտասարդութիւնը առանձնապէս ուսանող-ները նրան մեծ ընդունելութիւն են ցոյց տալիս: Նա միայն 1891-ի ամառը վերջնականապէս վերադարձաւ իր հայրենիքը:

Արտասահմանում, անկասկած, Իբսէնի մտաւոր հորիզոնը պէտք է լայնանար, զիտողութիւնների պաշարը պէտք է ճոխա-նար. և ահա օտար երկնքի տակ՝ բեղմնաւոր դրամատուրգը գրում է, ի միջի այլոց, իր ամենախոշոր դրամաները—«Բրանդ» «Պեդգիւնս», «Կայսր Էւ Դալիլիացիներ»:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Կը շարունակուի)

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

5) Մարիա Կորեկի-Վի մանկան հոգու պատճառով, վկայի ոչ մանուկների համար. ռուսերենից թարգմանեց Տ. Վ., Վաղարշապատ, 1902, 354 էր. 80, գինը 1 ռուբլի:

Անցնող ամառ, խօսելով «Մուրճի» մէջ ֆարրարի «Քարոզ-ների» թարգմանութեան մասին, մենք ակոսողներ այն աշ-խատանքը, այն ծախսերը, որոնք գործադրուած էին մի այդպի-սի գիրք հրատարակելու համար: Էջմիածնի այժմեան վարիչ-ները մի ահագին ազմուկ բարձրացրին մեր այս նկատողու-թեան առիթով: Այսօր էլ շարունակուած է այդ ազմուկը և, երևի, դեռ էլի կը շարունակուի: Բայց մի կողմից կուրծք ծե-ծելով, օձիք պատռելով, էջմիածինը միւս կողմից մի աւելորդ փաստ էլ տուեց մեր ձեռքը, որ ազդեցականում է այն, ինչ մենք էինք ասել, այն, որ Հայաստանեայց եկեղեցու հարազատ զաւակ կոչուելու մենաշնորհը վայելող մարդիկ բոլորովին ան-ընդունակ են զրական փոքր ի չափէ կարգին գործ կատարե-լու: Այդ փաստը հէնց այն վէպիկն է, որի վերնագիրը գրինք վերեւումս եւ մենք, նախ քան այդ գրքի մասին խօսելը, պիտի կրկնենք այն, ինչ ասել ենք ֆարրարի «Քարոզների» առիթով. ափսոս աշխատանք, ափսոս ծախսեր...

Բանից դուրս է գալիս որ էջմիածնում կարելի է հրատա-րակել մի ամբողջ գիրք ոչ թէ այն պատճառով, որ այդ գրքի հարկաւորութիւնը չատ ակներե է, այլ միայն այն պատճառով, որ նրա մէջ մի քանի անատամ յարձակումներ կան էջմիած-նեցիների համար այնքան ատելի առաջադիմականների գէմ: Թարգմանութեան շարժառիթը այնքան բովանդակութիւնը չէ եղել, որքան գրքի ճակատին դրուած հետեւեալ նախաբանը, որ անգլիացի հեղինակը ուղղել է գիտութեան հաւատացող մարդ-կանց.

«Այս գիրքն ուղղում է այն մեծամիտ յառաջագիմականներին, որոնք թէ իրենց վարդապետութեամբ և թէ օրինակով նպաստում են մանուկներին անհաւատ կրթելու անաղին զործին, և որոնք, տարածելով Ֆրանսիայից փոխ առած անաստուածական դաղափարները—ձգտում են արմատիկ անել մանկական հոգուց տարրական դպրոցներում և միւս բոլոր դրաղիտութեան տեղերում Աստուծոյ ճանաչողութիւնը և սէր առ Աստուած, որ աղնիւ կեանքի միակ, ճշմարիտ հիմքերն են, որով պատճառ են դառնում մարդասպանութիւնից առաւել զարհուրելի յանցանքի»:

Կարդալով այս տողերը, ամենից առաջ մենք հարց կնք տալիս. որքան ուղիղ է հեղինակի ասածը մեզ, հայերիս, վերաբերմամբ: Ո՞վ է մեզանում այդպիսի մտքեր քարոզել, մանաւանդ ո՞վ և որտեղ է գործադրել «Ֆրանսիայից փոխ առած անաստուածական դաղափարները»: Եթէ մեզանում կայ մէկ ու կէս դպրոց, այդտեղ, փառք Աստուծու, հայ կղերականութեան շնորհիւ «աստուածաբան դաղափարները» այնպիսի առատութեամբ են մատակարարուում, որ աշակերտները սովորական աշակերտներ չեն, այլ տիրացուներ: Ի՞նչն է պակասում այդ դպրոցներում, աստուածաբանութիւն, կրօնի դասերը: Էլ ինչո՞ւ, ո՞ւմ համար է թարգմանուած այս գիրքը:—Հէնց այնպէս, առաջագիմականներին խայթելու համար: Այսպիսի երեխայական գործի համար՝ էջմիածնում գործողները ունեն և՛ միջոց, և՛ աշխատելու յօժարութիւն, իսկ աւելի լուրջ, կարգին, վայելուչ աշխատութիւնների վերաբերմամբ նրանք մասնուած են մի անկարողութեան և ամլութեան, որի նմանը միայն հայ վարդապետների մէջ կարելի է որոնել:

Երեխայական դործ ասացինք: Եւ իրաւ, անզլիացի հեղինակի այդ արտագրութիւնը, որի նպատակն է ոչնչացնել առաջագիմութիւնը և գիտութիւնը, ինքն ըստ ինքեան մի շատ պերճախօս ապացոյց է, որ բարեհոգի պահպանողականութիւնը միայն իր անկարողութիւնից և ապիկարութիւնից է իր հին ատամները կրճատացնում:

Թարգմանիչը—ի հարկէ, ոչ թէ հայ թարգմանիչը—անգլիացի հեղինակին անուանում է «յայտնի գրող»: Մենք չը գիտենք թէ որքան ճիշտ է այս տիտղոսը: Բայց «յայտնի գրող» խօսքերը դեռ շատ բան չեն ասում. յայտնի գրող էր, օրինակ, և Կապկովը: Մարիա Կորեւիլի միայն այս գործն ենք ահա կարգում. և եթէ նա «յայտնի գրողի» անուն վաստակել է այս տեսակ գործերով, պէտք է շատ ափսոսանք, որ այդպիսի թիւրիմացութիւններ էլ են պատահում գրականութեան մէջ:

Ջնջենք, գէն գցենք նրա նախաբանը. երեւակայէնք թէ նա չը կայ, չէ էլ գրուած: Ի՞նչ է Կորեւիլի վէպը իբրեւ մի գեղարուեստական գրուածք:

Եղել է չէ եղել Անգլիայում մի գազան մարդ, միստր Վելիսկուրտ անունով: Այդ մարդը գազան է ոչ թէ այն պատճառով, որ առհասարակ լինում են գազան մարդիկ, այլ սոսկ այն պատճառով, որ նա ահաստուած է, այսինքն հաւատում է միայն գիտութեան, քրիստոնեայ չէ: Եւ ահա այդ հանգամանքը ինչ է դարձրել այդ մարդուն, նա ետամոլ է, չէ սիրում բնութիւնը, չէ սիրում իր կնոջը, նոյն իսկ չէ հասկանում որ իր փոքրիկ երեխային հարկաւոր է հանգստութիւն, որ նրան չէ կարելի կեղեքել, տանջել, սպանել:

Լիճնէլ է այդ երեխայի անունը, տառն և մէկ տարին նոր մտած մի մանուկ, որի միջոցով հեղինակը կեղեքում է ընթերցողին, մորթում է նրան մի բութ դանակով: Ամբողջ պատմութեամբը այդ երեխայի դաստիարակութեան շուրջն է պտտում: Հայրը երեխային հեռու է պահում կրօնից, աւելի ճիշտ ասած, տալիս է նրան մի կրթութիւն, որ այդ 10 տարեկան խեղճին պիտի պարզ ու աշխարայ սովորեցնէ թէ սուտ է ամեն մի կրօն: Եւ ահա այդ դաստիարակութեան հետեւանքը, Լիճնէլը մի վտիտ, չորացած երեխայ է, հալւում մաշւում է օր օրի վրայ: Ո՛րքան սոսկալի է անհաւատութիւնը: Հեղինակը արտասուեք է թափում, Փրանսիայից է փոխ առնուած այս սպանիչ մեթօդը: Եթէ այսպէս է աստուածափախ, կրօնասէր Անգլիայում, ապա ի՞նչ պէտք է լինի Փրանսիայում, անաստուածութեան հայրենիքում: Օ՛, Մարիա Կորեկլին առանց այլևայլութեան, առանց գէս ու գէն նայելու ասում է որ Փրանսիայում մանուկները «գողեր, մարդասպաններ, անզգամներ» են դառնում (եր, 68): Խեղճ Փրանսիա, երբ միանգամից այդպէս է վկայում քո մասին «յայտնի գրող» անգլիացին և մանաւանդ երբ այդ «յայտնի գրողի» խօսքերը հայերէնի են փոխադրում Արարատի ստորոտում, Հայաստանեայց հարազատ դաւակի ձեռքով, դա արդէն մի պարզ ապացոյց է, որ դու միայն և միմիայն գողերի ու մարդասպանների հայրենիք ես: Տեսնում ես, Զօրաների, Բերտըլոնների, Բրնանների հայրենիք, տեսնում ես, մենք, տգէտ ասիացիներս անգամ, հասանք այն իմաստութեան, որ պէտք է վատաբանել քեզ, զգուշացնել քեզանից, քո կրթութիւնը, քո լուսաւորութիւնը թոյն է միայն, որովհետեւ գողեր և աւաղակներ է պատրաստում, մինչդեռ մենք, որ Մարիա Կորեկլի բեցեպտով ենք դաստիարակում, ո՛չ գող ունենք մեր մէջ, ոչ աւաղակ, մի հատ անգամ...

Զարմանալի անհաշտ է Մարիա Կորեկլին անհաւատների հետ: Գոնէ նա չնորհ անէր այդ անհաւատներից հէնց գոնէ մի հատին արտաքին չենք ասում զեղեցիկ, այլ փոքր ի չատէ

տանկի կերպարանք տալ: Ամենքը տգեղ, սե սատանաներ են. ագեղ է Լիօնէլի հայրը, տգեղ է նրա անաստուած «ուսուցչապետը», թէն վերջում հաւատացողի պէս մի բան է գառնում: Դրա փոխարէն ինչ պիտուն են հաւատացողները. կատարեալ հրեշտակներ: «Յայտնի գրողը», ինչպէս երեւում է, պատրաստ կը լինէր ըստը սնհաւատներին խորովել կրակի վրայ...

Բայց մենք հետեւենք Լիօնէլին: Այս տասնամեայ մանուկը միշտ պարտաւորուած է տանը նստել, պարապել անվերջ, որովհետեւ հայրը կամենում էր որ նա զիտութեան մարդ զառնայ: Հեղինակը քափու կրակ կտրած նկարագրուած է բնութեան սքանչելիքները, ամբողջ հովուերգութիւններ է գրում, որպէս զի ցոյց տայ թէ անհաւատ հայրը որպիսի զազանութեամբ էր վարւում իր որդու հետ, թոյլ չը տալով, իր անհաւատութեան պատճառով, որ երեխան հանգստանայ, բնութեան բարիքները վայելէ: Եւ Լիօնէլը սովորում է, անվերջ սովորում. այդ է պատճառը, որ նա մի կմախք է, մի կնիքանի մեռել: Ինչէր է նա սովորում: Նրեւակայել անգամ սարսափելի է: Դեռ նոր է նա մտել 11 տարեկան հասակը, բայց տեսէք թէ ինչ ծրագրով է նա սկսում սեպել:

1. Փթա և եղիպտական դիցարանութիւն.
2. Բրահմա, Վիշնու և հնդկական դիք.
3. Քաղցեական և փինիկեցոյ հատառայիքները.
4. Յունական և հռոմէական աստուածներ.
5. Բուդդա և բուդդայականութիւն.
6. Սոնֆուդիոս և չինական ազանդներ.
7. Մեկսիկացոյ դիցարանութիւն.
8. Օդին և սկանդինաւեան հաւատալիքներ.
9. Մահմեդականութիւն և Ղուրան.
10. Թալմուդ և հրէական աւանդութիւններ.
11. Քրիստոս և քրիստոնէական դիցարանութեան աստիճանաբար զարգացումը չունական և հռոմէական հեթանոսութեան աւերակների վրայ.
12. Դրական փիլիսոփայութիւն և անխառն բանականութիւն, ապագայանելով, որ այս բոլոր հաւատները ոչ մի զրական հիմք չունեն, այլ միայն մարդկութեան իմացական զարգացման խախտարար են հանդիսանում:

Եւ երեխան, ի հարկէ, պիտի տանջուի: Բայց տանջւում է նա ոչ թէ իր հասակին այդքան անհամապատասխան մի մտաւոր բեռի ծանրութեան տակ, այլ զլիտաւորապէս այն պատճառով, որ նրա մանկական հոգին որոնում է արեւելքի սահղծագործութեան պատճառը, այն էակը, որ ամեն ինչ այդպէս դարձնալի կերպով կարգադրել է: Հեղինակը ուղարկում է նրան մի հրեշտակ, որ բայ է անում նրա աչքերը: Դա զիւղի եկեղեցու սաղմոսաւանդի փոքրիկ աղջիկն է, մի, ինչ ասել կ'ուզի,

չատ գեղեցիկ զէմքով երեխայ: Լիօնէլը լսում է նրա և նրա ծերունի հօր խօսքերը երկնքում ապրող Աստուծու մասին և սկսում է կամայ-կամայ գտնել իր որոնածը: Շատ գեղեցիկ, թող այդպէս էլ լինի, թող 11 ամեայ փիլիսոփան իր մօքի մէջ զարգացնէ այդ նոր յայտնադործութիւնը, թող այդպէս մեծանայ, կրթուի և դառնայ հասարակութեան մի պիտանի անդամ:

Այդպէս էք դուք սպասում: Բայց այդպէս չէ վճռել հեղինակը: Տալով իր պատմութեան մի այդպիսի ընտկան ընթացք, ինչպէս նա կարող կը լինէր կախազան հանել գիտութիւնն էլ, անհաւատութիւնն էլ: Ուստի նա սկսում է կեղեքել իր Լիօնէլին և դուք սկանաւորեալք մի շարք արհեստական սարսափներ: Նախ և առաջ Լիօնէլի մայրը թողնում է ամուսնուն, թողնում է իր դուստրին և հեռանում է տանից: Բանից դուրս է դալիս որ այդ կնոջն էլ խելքից հանել է... Իրսէնը «ցիրսէնեան ժամանակ» կար, մի ժամանակ, երբ կանայք հաւատ ունէին: Այժմ ծնունդ է նեղը և զրա անունն է Իրսէն: Ահա այդ Նեոի զոհը դարձած մայրը ուզում է վերջին անգամ տեսնել իր երեխային: Տեսարանը ուղղակի զրուեցնող է. այդ մայրն էլ մի հրէշ է, նա տեսնում է որ խեղճ երեխան այս տան մէջ միայն իրան է սիրում, բայց ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում նրա վրայ, ընդհակառակն, լուսնի լոյսը ընկած է Լիօնէլի վրայ և մօրը թւում է թէ դա մի մեռած երեխայ է և այդպէս էլ ասում է. «Լիօնէլ, դու մեռածի նման ես»: Եւ դուրս է գնում, հեռանում, թէ և երեխան կանչում էր նրան:

Այնուհետեւ, Լիօնէլը տեսնում է մի մարդ, որ ինքն իրան խեղդել էր: Այնուհետեւ մեռնում է սաղմոսասացի աղջիկը: Այնուհետեւ Լիօնէլն էլ վճռում է իրան սպանել: Այնուհետեւ նա նամակներ է գրում հօրը և ուսուցչին. վերջինիս նա խնդրում է ուրիշ երեխաների հետ պարապելիս այնպէս անել որ նրանք հասկանան թէ կայ Աստուած: Այնուհետեւ նա մետաքսեայ ժապաւէնը կախում է առաստաղից և վիզը անցկացնելով նրա մէջ, խեղդւում է: Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ նրա հայրը, իբրև անհաւատ, իբրև գիտութեան նուիրուած մարդ, ոչինչ ցաւ չէ զգում, մի կաթիլ արտասուէք չէ կաթեցնում իր փոքրիկ երեխայի դիակի առաջ: Լիօնէլին թաղում են սաղմոսասացի աղջկայ կողքին և վէպը, ի մեծ թեթեւութիւն ընթերցողի, վերջանում է:

Վերջապաւ վէպը, բայց ինչ նա ցոյց տուեց: Հեղինակը, նրա նման մտածող մարդիկ հրճուանքի մէջ են. նրանք գիտեն որ անպատճառ ցոյց տուին թէ ինչ սոսկալի դժբախտութիւն է

առաջագիմութիւնը, մանաւանդ զիտութիւնը: Բայց այդ շին-
ծու, արհեստական պատմութիւնը, այդ դիտմամբ խտացրած
գոյները, այդ բարեպաշտական քարոզը ինչ կարող են ապա-
ցուցանել:—Միայն մի ֆանատիկոսական ատելութիւն գէպի
մարդկային առաջագիմութիւնը, և մենք, ճշմարիտ, չենք գըտ-
նում մի առանձին տարբերութիւն մեր բաղարներում զիտու-
թիւնը հայհոյող մի տգէտ ասիացու և անգլիացի «յայտնի գրո-
ղի» հետ:

Բաւական է մի թեթև քննական հայեացք, որ «յայտնի
գրողի» այս չէնքը փութի խաղաթղթերից կազմուած անակի
պէս: Մանկավարժութիւնը, խելացի, բնական դաստիարակու-
թիւնը, առողջապահութիւնը, մի խօսքով զիտութիւնը մշակել
և ծաղկեցրել են ոչ թէ սաղմոսասացները, ոչ նոյն իսկ քահա-
նաները, վարդապետները, անդամ եպիսկոպոսները, այլ այն իսկ
առաջագիմականները, որոնց աչքան անիծում է Մարիա Կո-
րեկին: Երեկոյի հողին հանելը, երեսային մեքենայ դարձնելը
այն իսկ սիստեմն է, որ հնարել և գործադրում էին սաղմոսա-
սացները և տիրացուները. մարդկային առաջագիմութիւնն էր,
որ ահազին ջանքեր գործ դնելով, մեծամեծ կոիւնք մղելով
ոչնչացրեց այդ սպանիչ սիստեմը, հաստատեց նրա տեղ ընդ-
թեան օրէնքներով կրթելու սիստեմը: Այդ դործը առաջ տանելը,
աւելի ևս լաւացնելը դարձեալ առաջագիմականներին է վերա-
պահուած և ոչ թէ սաղմոսասացներին: Այս մասին աւելորդ է
խօսելը. ամբողջ աշխարհը, ամբողջ պատմութիւնն է դրա
վկան:

Ձենք կարող ասել թէ միտոր Վելիսկուրտ չէ կարող լի-
նել: Ամեն դասակարգի և ամեն զիրքերի մէջ լինում են հրէշ-
ներ, այլասեռուած անհատներ. եղել են զրանից էլ վատթար
տիպեր ոչ միայն անհատների մէջ, այլ նոյն իսկ պապական
գահի վրայ: Հէնց այդ պատճառով էլ նա, այս գաղան մարդը,
ոչինչ չէ ապացուցանում: Բայց ահա Ալֆօնս Դօդէն իր
«L'Evangeliste» վէպի մէջ դուրս է բերել կրօնական ֆանա-
տիկոսութեան առաջացրած դաստիարակչական մեթօդը և մենք
չենք կարող սարսուռ չը զգալ այդ տեսարանի առաջ, որով-
հետև նա բնական է, որովհետև նրա մէջ ինքը կեանքն է
խօսում: Առաջագիմականներն էլ հէնց այդ վէպը կարող են
ցոյց տալ դաստիարակութեան մասին խօսելու յանդիմութիւն
ունեցող «հաւատացեալներին», կարող են Դիկկենսի գծադրած
հրաշալի պատկերները ցոյց տալ իբրև հին, բարի, հաւատա-
ցող ժամանակների կրթական իմաստութեան գոհարներ:

Կրկնում ենք, ում են հարկաւոր Մարիա Կորեկիի այս

անատամ բարեաջանքները առաջագիմութեան և լուսաւորութեան գէմը—Մեր հասարակութեան համար արանք բոլորովին անպէտք են, վնասակար են: Միայն էջմիածնի երկու ջուխտ աւ մի կէնտ աստուածաբանների հայր կաբող է փոքր ինչ իւզոտ զառնալ այդ ձրի զբալարտութիւններից: Հասկանում ենք պատճառը. երկխոսներին տնդամ յայտնի է դարձել որ առաջագիմութիւնը կեանք է. և միայն վարդապետներն են, որ զգում են թէ առաջագիմութիւնը մահ է իրանց համար, ուստի ուղում են մեռելութիւն և անշարժութիւն զնել աշխարհում, այնպէս որ նորից, ինչպէս հին ժամանակներում, վեղարը միայն համարուի փրկութիւն: Լաւ երազներ են, եթէ միայն կոտորուեն: Վիկտոր Հիւգօն ասում էր. առաջագիմութիւնը չէ կարող կանգ առնել, ինչպէս կանգ առնել չէ կարող աշխարհը:

Ահա թէ որքան անընդունակ են էջմիածնի վարիչները: Ահա թէ ինչ տեսակ մտաւոր պաշար կարող են նրանք տալ: Դառը իր պտուղից է ճանաչում. արա վրայ ոչինչ աւելացնել չէ կարելի:

Մենում է յիշատակել այստեղ մի հանգամանք: Գրքի արդիւնքը յատկապրած է «Եղրայրական օգնութեան»: Բայց այդ համակրելի նպատակը չէ կարող բռնել մեր ձեռքը և ծածկել այն պարզ իրողութիւնը, որ այդ գրքը մի անօգուտ, վնասակար հրատարակութիւն է: Նա անպէտք է իբրեւ քարոզութիւն, անպէտք է և իբրեւ գեղարուեստական գրուածք:

Լ.

(5) Dr. Paul Rohrbach: „Die Bagdad bahn“, mit einer Karte, Berlin 1902. (Դ-ր պ. Բօրրբախ «Բաղդադի երկաթուղին». 1 քարտեղով):

Արեան միջով է բարձրացել սուլթան Աբդուլ Համիդը իր կայսերական գահը, արեան միջով է ընթացել նրա երկարատեւ թագաւորութիւնը: Սակայն միայն արիւնն ու տեւածութիւնը չեն այդ թագաւորութեան բնորոշ կողմերը: Ոչ. Սուլթան Համիդը աշխատել է և այլ ուղղութեամբ: Նա, իբրեւ իսլամի խալիֆ, ձգտել է ազդեցութիւն ձեռք բերել ամբողջ մահմեդական աշխարհում. բայց զբառից նա աշխատել է իր երկրի հաղորդակցութեան միջոցները բարելոքել: Եւ այս վերջինը կատարուել է գլխաւորապէս եւրոպացիների ձեռքով, այն ևս չափազանց փոքր և դանդաղ քայլերով:

Այդ տեսակի ձեռնարկութիւնների շարքում «գլուխ դործոց» կարող է համարուել Բաղդադի շինուելիք երկաթուղին, որի մասին այնքան խօսուեց ու գրուեց և զեռ խօսուում ու գրուում է եւրոպական մամուլում: Տնտեսական աշխարհում դա ամենահրատապ հարցերից մէկն է դարձել: Պատճառը հասկանալի է: Երկաթուղու այդ գիծը միջուգգային մի նոր ճանապարհ պիտի բաց անէ դէպի Հնդկաստան: Շահագրգռուած են բոլոր եւրոպական պետութիւնները, բայց ամենից շատ Գերմանիան, որովհետեւ նրա ձեռքով պիտի իրականանայ այդ հսկայական գործը:

Դ-ր Բորբախ իր ներկայ գրութեանը աշխատում է պարզել, թէ գերմանացիների համար որքան ձեռնտու է այդ երկաթուղին շինելը: Նա երկու անգամ ճանապարհորդել է Թիւրքիայում—(1898 թ. և 1900/1901 թ.)—և զեռ անցեալ տարի գետեղել էր «Preussische Jahrbücher» ամսագրում իր ճանապարհորդական տպուէրութիւններն ու զիտողութիւնները: «Die Bagdadbahn» գրքայլը այդ յօդուածների համառօտութիւնն է, բայց այնու ամենայնիւ բաւականաչափ լուսարանում է չօշափած խնդիրները:

Առաջին գլխում, որ կրում է «Քաղաքական տեսակէտ» վերնագիրը, հեղինակը խօսում է առհասարակ Ռուսաստանի զինուորական ոյժի և քաղաքական ձգտումների մասին—Թիւրքիայի վերաբերմամբ: Նրա կարծիքով Բօսֆօրը թէեւ ունի մի քանի ամբողջիւններ, բայց ոչ այն չափով, որ կարողանայ Ռուսաստանի ուժեղ յարձակմանը դիմադրել: Վերջինիս նաւատորմը Սև ծովում բաւական ուժեղ է և կարող է 24—30 ժամուայ ընթացքում յանկարծակի հասնել Բօսֆօրի ջրերին և միանգամայն անսպասելի կերպով ուժակոծել նրա ամբողջիւնները: Դրանից յետոյ մնում է գարծանալ որ Թիւրքիան մինչեւ օրս հարկաւոր չափով չի ամրացնում Բօսֆօրի մուտքը:

Այդ տեսակէտից ոչ պակաս աննախանձելի պատկեր են ներկայացնում Փոքր-Ասիայի հիւսիսային ափերի ամբողջիւնները: Մնում է ցամաքային գիծը, սակայն այստեղ էլ Ռուսաստանի համար մեծ դժուարութիւններ չը կան: Թիւրքական սահմանադիւտում նա ունի Ղարսի համա մի անառիկ բերդ, որը երկաթուղու ցանցով միացած է ամբողջ Ռուսաստանի հետ: Բաւական է մի քանի օր, որպէս զի հարիւր հազարաւոր սօլդատներ ու կօզակներ թափուեն Ղարս և այնտեղից արշաւեն դէպի Հայաստանի խորքը: Ի՞նչ կարող է անել այդ դէպքում Թիւրքիան: Ղարսի հանգէպ նա ունի Էրզրումը, որը գրեթէ բոլորովին զուրկ է ուղղմական նշանակութիւնից, որովհետեւ չու-

նի համապատասխան աֆրութիւններ Երկրի խորքից մինչեւ պատերազմի դաշար զօրք հասցնելու համար նրան հարկաւոր են ոչ թէ օրեր, այլ չափաթան ու ամիսներ...

Այսպէս ուրեմն Ռուսաստանը հեշտութեամբ կարող է տիրել Բոսֆօրն ու հիւսիսային Փոքր-Ասիան Եւ ինչ կը լինի այն ժամանակ Բաղդադի երկաթուղու վիճակը: Նա կը մնայ պատերազմի դաշարից հեռու և ռուսները համար միանգամայն անձեռնմխելի: Հետեւապէս քաղաքական տեսակէտից գերմանացիները համար ոչ մի երկիւղ չը կայ, որովհետեւ նոյն իսկ ամենաժայթակղ դէպքում նրանց շահերը կը մնան անխախտ ու անփնտռ: Եւ գուցէ Ռուսաստանը երբեք չուզենայ մի այգալիսի մեծ արշաւանք գործել Թիւրքիայի դէմ:

Բայց այստեղ մի ուրիշ հարց է առաջ գալիս: Գերմանացիները համար ձեռնառու է արդեօք, որ Թիւրքիան մնայ «հիւանդ մարդու» զրութեան մէջ, որ նա խաղալիք լինի մեծ պետութիւնների ձեռքում—մ'չ, պատասխանում է պ. Բօրբախը: Բաղդադի երկաթուղին շինելու համար գերմանացիները պիտի ծախեն ամենաքիչը 480,000,000 մարկ, երկաթուղու շրջակայ դաւառներում նոր կուլտուրա, անտեսական նոր բարեփոխումներ մտցնելու համար պիտի տան նորից հարիւրաւոր միլիոններ, իսկ այգալիսի խոշոր գեւեմները դնել մի այնպիսի երկրի ծոցը, որ իր թոյլ կազմուածքով խաղալիք է օտարների ձեռքում—գա աւելի քան անստուծիւն է: Ուրեմն Գերմանիայի շահերի տեսակէտից Թիւրքիան ուժեղ պիտի լինի... Թոյլ Թիւրքիայի հաւմար—ո՛չ մի պէնսիզ, իսկ ուժեղ Թիւրքիայի հաւմար—սրբան ուղեկայ (եր. 16):

Այս հարցում էլ չափազանց լաւատես է պ. Բօրբախը: Նա կարծում է, որ Բաղդադի երկաթուղին կը նպաստէ ոչ թէ Թիւրքիայի բաժանմանը, ինչպէս ենթադրում են բարձրաստիճան թիւրքերից չատերը, այլ ընդհակառակը՝ նա կ'ուժեղացնէ նրան և դրանով կ'ապահովէ նրա գոյութիւնը: Հէնց այդ պատճառով էլ նա նպատակադարձար է համարում նաեւ միւս պետութիւնների մասնակցութիւնը թէ Բաղդադի երկաթուղու գործում և թէ առհասարակ այգալիսի խոշոր ձեռնարկութիւնների մէջ—Թիւրքիայում:

Դժբախտաբար հեղինակը այստեղ աւուղջ դատողութիւնը զոհ է բերում իր լաւատես հայեցակէտին: Եւ իսկապէս, միթէ մի երկաթուղու զիծ—որքան էլ որ մեծ լինի նա—կարող է ոյժ ներշնչել մի այնպիսի պետութեան, որը քայքայուած է տնտեսապէս, որ հազիւ շունչ է քաշում արհեստական կերպով: Յայտնի է, որ իւրաքանչիւր պետութեան ոյժը նրա ազգայնա-

կուլթիւնն է, որ իւրաքանչիւր երկրի արդիւնաբերական ոյժը նրա ժողովրդի ձեռքումն է: Իսկ Թիւրքիայի ազգաբնակչութիւնը միանգամայն կազմալուծուած է և նրա արդիւնաբերական ոյժը—ցամաքած, որովհետեւ չը կայ կեանքի և գոյքի ապահովութիւն, չը կան արտադրող աշխատանքին նպաստող պայմաններ: Մէկը աշխատուած է, իսկ միւսը թալանուած: մէկը արդիւնաբերուած է, իսկ միւսը—աւերուած: Եւ պետութիւնը իր ընթացքով նպաստում է չարիքի զարգանալուն: Այժմ մի այդպիսի երկրի միջով պիտի անցնի Բաղդադի երկաթուղին: Ի՞նչ կարող է անել նա, եթէ նոյն պայմանները, նոյն գրութիւնը չաբուսակուեն: Ի հարկէ ոչինչ: Միայն շոգեկաւքի չվոցը երբեք չէ կարող Թիւրքիայի սօցիալական չարիքը վերացնել և նրա տնտեսական քայքայումը ընշատել: Դրա համար անհրաժեշտ են հիմնական բարենորոգումներ: Պ. Բօրբախ աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէր, եթէ այդ հարցի վրայ էլ Գերմանիայի ուշադրութիւնը հրաւիրէր: Կարծում ենք դա աւելի կարեւոր էր, քան թէ Ռուսաստանի կենթադրելի արշաւանքների մասին դատողութիւններ անելը:

Գալով գերմանական գաղութներ հաստատելու հարցին, պ. Բօրբախ բացասական կարծիք է յայտնում, որովհետեւ նախ՝ կլիման աննպաստ է գերմանացիների համար և երկրորդ՝ Թիւրքիան խորթ աչքով կը նայէ այդ բանի վրայ: Այդ գաւառներից է նա հաւաքում իր զինուորների մեծ մասը, այդտեղ պիտի հաստատէ նա իր գահը, եթէ Եւրոպան նրան երբեւիցէ դուրս արտաքոյէ Բալկանեան թերակղզուց: Ուրեմն նրա համար ցանկալի չէ, որ այդ կողմերում օտար տարրը ուժեղանայ: Ահա այդ պատճառով պ. Բօրբախը խորհուրդ է տալիս մահմեդականներ ընակեցնել ազատ տեղերում: Գերմանացիները պիտի լինեն միայն զեկալարող ոյժ և ոչ թէ հասարակ աշխատաւորներ—երկրագործներ:

Գրքի մնացած երկու գլուխները նուիրուած են այն հարցին, թէ շինուելիք երկաթուղին տնտեսական որքան մեծ նշանակութիւն կարող է ունենալ թէ Գերմանիայի և թէ մանաւանդ Թիւրքիայի համար: Գիծը անցնում է այնպիսի գաւառների միջով, որոնք հին դարերում յայտնի են եղել իրանց ծաղկած գրութեամբ և խիտ ազգաբնակչութեամբ: Նրանք հիմա էլ կարող են այդ միւլենոյն աստիճանին հասնել, եթէ դորժ գրուեն որոշ ջանքեր: Անատոլիան, հիւսիսային Ասորեստանը և Միջագետքը կարող են նոյնքան հացահատիկներ արտադրել, որքան ամբողջ Ռուսաստանը, կարող են հարիւր միլիոնաւոր պուդ բամբակ հասցնել: Բացի դրանից նրանք իրանց ծոցում պարու-

նակում են նաև թի, քարածուխի հարուստ հանքերը, Հարկաւոր է միայն խելացի կերպով օգտուել բնութեան այդ առատ տուրքերից: Հին ժամանակներում մարդիկ այգալէս էին վարում և երկիրը ծաղկած դրութեան մէջ էր:

Հարուն ալ Ռաշիդի ժամանակներում (800 թ.) Բաբելոնում, Ասորեստանում և Միջագետքում ապրում էին մօտ 6,000,000 մարդիկ, իսկ այժմ միայն $1\frac{1}{2}$ միլիոն: Այդ ժամանակներում երկրի աթոռը եկամուտը հասնում էր 700,000,000 մարկի, իսկ այժմ միայն դրա փչրանքներն են ստացւում: Պատճառը, ի հարկէ, թիւրքական յետամնացութիւնը և վատթար բեմինն է: Պ. Բօրլախի կարծիքով Բաղդադի երկաթուղին և գերմանական ջանքերը պիտի կարողանան վերականգնեցնել այդ նախանձելի վիճակը: Գերմանացիները պիտի լինեն միջազգային այդ մեծ ճանապարհի շինութեան ու գործադրութեան ղեկավարը:

Ե. Թ.

7) ՄԱՆՏԻԳՍՅԱՆ.—«Կեղծաւոր դար»։ Թարգմանեց Մ. Վ. Մ., Ա. Երեսնորայով, 1901 թ., գինն է 25 կոպէկ:

Իտալացի բնագէտ և յայտնի դրող Պաօլօ Մանտեգացայի այս գրքովը, որ մօտ 15 տարի է արգէն լոյս է տեսել, պատկանում է հեղինակի հանրամատչելի աշխատութիւնների շարքին: Մանտեգացայի կարծիքը կեղծաւորութեան մասին, ինչպէս և «կեղծաւորութիւն» գաղափարի վերլուծումն ընդհանրապէս՝ դուրս է մի քիչ նորօրինակ, օտարոտի թուի, այնուամենայնիւ դա ունի իր ուսմանելի և խրատական կողմերը:

Հեղինակը հետեւում է կեղծաւորութեան արմատներին դեռ կենդանական աշխարհում: Կենդանիների թռչունների, կատուի, միջատների շրջանում կեղծաւորութիւնը արտայայտւում է «ձեռնալու», «նմանուելու» տրամադրութեամբ: Թշնամիներից հեշտութեամբ պաշտպանուելու համար՝ երբեմն միևնոյն կենդանին ընդունում է զանազայն գոյն: Հեղինակը «կենդանական Տարտիֆներ» վերաբերմամբ իր արած դիտողութիւններից հետաքրքիր փաստեր է հաղորդում մի որոշ տեսակի թրթուռի և թիթեռնիկի մասին. առաջինը նմանւում է ծառի կեղևին, իսկ երկրորդը՝ տերեւին:

Մարդկանց մէջ կեղծաւորութիւնն սկիզբ է առնում Ադամ ու Եւայից, որովհետև հէնց որ նրանք յանցագործութիւնից

յետոյ շտապեցին ծածկել իրանց մերկութիւնը՝ արգէն առաջին քայլն արին դէպի կեղծաւորութիւնը. եւան ձգտում էր «անկէ այն, ինչ կամենում է, բայց ծածկել այն, ինչ որ արուած է»:

Մարդկութեան այս նախնական զոյգից յետոյ՝ «կեղծաւորութիւնը քաղաքակրթութեան հետ զուգընթաց աճում է»։ Կեղծաւորութեան ոյժը հեղինակի կարծիքով կայանում է նրանում, որ դա ընդունակ է «չօչափել մարդկային բնութեան բոլոր բևեռները»։ Այսպէս օրինակ՝ համեստութիւնն անգամ նա համարում է մի առաքինութիւն «յաղեցած կեղծաւորութեամբ»:

Սակայն ոչ մի դարում կեղծաւորութիւնն այնպիսի լայնածաւալ չափեր չէ ընդունել, ինչպէս XIX դարում։ Նա այս դարն անուանում է «կեղծաւոր դար», «Տարտիւֆի դար», որովհետեւ մեզ չըջապատող օգը «ստութեան միջոցն է», իսկ ջուրը՝ «խաբէութեան ովկիանոս»։ Նա զանազանում է արտաքին և ներքին կամ փիլիսոփայական, բարոյական և մտաւոր կեղծաւորութիւն. կեղծաւորութիւն սրտի, կեղծաւորութիւն մարքի, կեղծաւորութիւն հասարակական և առօրեայ կեանքի իւրաքանչիւր քայլափոխում, մարդկային սերնդին զբաղեցնող ամեն մի ապարէզում։ Բայց հեղինակի ցանկութիւնն է ժողովրդի կրթութեան և զարգացման գործը այնպիսի առողջ հիմքերի վրայ դնել, որ հարիւր տարուց յետոյ «Տարտիւֆի դարին» յաջորդէ «Ճշմարտութեան, շիտակութեան դար»:

Ինչպէս առհասարակ «Սիրոյ բնախօսութեան», հեղինակի գրուածքներից շատերը՝ այնպէս էլ ներկայ գրքոյից գրուած է շատ սահուն և գեղեցիկ լեզուով։ Թարգմանութիւնը թէև տեղ տեղ զուրկ չէ անհարթութիւններից, այնուամենայնիւ ընդհանրապէս յաջող է:

Թարգմանիչը գրքին կցել է մի յաւելում, ուր ընդարձակ կամ համառօտ կերպով բացատրուած են մի քանի բառեր և անուններ:

Վ. Ն.

8) DR. L. GUMPOWICZ: «Nationalismus und Internationalismus im 19. Jahrhundert», Berlin, 1902. (Դ-ր Լ. Գումպովիչ. «Ազգայնութիւնը և միջազգայնութիւնը 19-րդ դարում»):

Նոր չէ ազգայնութեան հարցը։ Նա գոյութիւն է ունեցել դեռ շատ հին ժամանակներից սկսած, իր հետ միասին գոյութիւն տալով համապատասխան կարծիքների ու համոզմունքներին։ Սակայն նա ոչ մի ժամանակ այնպիսի սուր կերպարանք,

այնպիսի որոշ ձևակերպութիւն չէ ստացել, ինչպէս վերջին 19-րդ դարում Պատճառը հասկանալի է։ Սկզբում մարդիկ աւելի քիչ են նախադատութեամբ եղել, աւելի քիչ գիտակցութիւն են ունեցել՝ իրանց ընդհանուր-ազգային շահերը ըմբռնելու և համապատասխան միջոցներով պաշտպանելու համար։ Քաղաքակրթութիւնը ժամանակի ընթացքում զարգացրեց այդ գիտակցութիւնը և աւելի պնդացրեց ազգայնական գաղափարի տրամախնայը։

Տպագրական դիւտից առաջ իւրաքանչիւր ազգի գրականութիւնը միայն սակաւաթիւ ընտրեալների սեփականութիւնն էր կազմում։ Մեծամասնութիւնը նրա հետ առնչութիւն չուներ և նրա գոյութիւնը պահպանելու մասին չէր էլ մտածում։ Բայց յայտնուեց Գուտտենբերգը, գործածութեան մէջ մտաւ տպագրութիւնը և գրութիւնը բոլորովին փոխուեց։ Գրաւոր լեզուն օրէցօր ծաղկել սկսեց, իւրաքանչիւր ազգի գրականութիւնը ընդհանուր-ազգային սեփականութիւն դարձաւ, մի սեփականութիւն, որի համար մարդիկ պատրաստ էին ամենամեծ զոհաբերութիւններ անելու։

Այդպիսով պարզուեց ամենքի համար, որ մայրենի լեզուն ու գրականութիւնն է իւրաքանչիւր ազգի ինքնութեանութեան հիմնաքարը։ Եւ այդ գործոնները ամեն կերպ զարկ տուին ազգային գաղափարի զարգացմանը...

Վրայ հասաւ 19-րդ դարը։ Բռնկուած էր Փրանսիական մեծ յեղափոխութիւնը, մի յեղափոխութիւն, որի նշանաբանն էր՝ «ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» բոլոր մարդկանց համար։ Փրանսիացիները ոչնչացրին կայսերական դաշը, վրէժի հարուած տուին իշխող ազնուականութեանը և ապա առաջ շարժուեցին, որպէս զի հարեւան ազգերին էլ ազատութիւն չորհնէ։ Սակայն այստեղ նրանց հանդէպ, իբրեւ մի ամուր պատնէշ, կանգնեց ազգայնական գաղափարը։ Թէ՛ սպանացիները, թէ՛ իտալացիները, թէ՛ գերմանացիները և թէ՛ ռուսները բոլորն էլ ոտի կանգնեցին, որպէս զի իրանց ազգային ստացուածքն ու կարգերը պաշտպանեն։ Ոչ ոք չէր ուզում տեսնել ու լսել՝ «ազատութիւն, հաւասարութիւն ու եղբայրութիւն» խոստացող Փրանսիացիներին։ Նրանց համար աւելի թանկ էին ազգային կարգերն ու օրժանապատութիւնը։

Եւ ազգային գաղափարը յաղթեց։ Դրանից յետոյ այդ միեւնոյն գաղափարը շարունակեց իր ազգու գերը ամբողջ 19-րդ դարի ընթացքում։ Նա շատ արիւնահեղ ընդհարումների պատ-

ճառ դարձաւ, շատ զոհեր կլանեց, և միայն չափազանց փոքր չափով տեղի տուեց միջազգայնութեան գաղափարին:

Ահա այդ հետաքրքրաշարժ երեւոյթը, այդ ազգային մըրցման ու ընդհարումների համառօտ պատմութիւնն է տալիս յայտնի սօցիօլօգ Գումպլօվիչ: Մեծ չէ նրա գիրքը ծաւալով (66 երես), բայց հարուստ ու հետաքրքրական է բովանդակութեամբ:

Շօշափելով ազգայնութեան և միջազգայնութեան գաղափարները, հեղինակը խօսում է ընդհանրապէս եւրոպական բոլոր ազգերի մասին և առանձնապէս կանգ է առնում Աւստրօ-Հունգարիայի, Ռուսաստանի և Շվեյցարիայի վրայ, որովհետեւ ամենից շատ այդ երկրներում են ապրում բազմացեղ ազգեր, ամենից աւելի այդտեղ է աչքի ընկնում ազգային լեզուների մրցումը և ազգային գաղափարի կատարած դերը: Խօսելով այդ նիւթերի մասին, պ. Գումպլօվիչը դուրս է բերում, ի միջի այլոց, այն եզրակացութիւնը, թէ ինչ կուսակցութիւն էլ ուղում է լինի, նա կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ պաշտպան է հանդիսանում ազգային լեզուին ու առանձնայատկութիւններին: Իսկ միջազգայնութեան գաղափարը, չը նայելով քաղաքակրթութեան տուած բազմաթիւ ու բազմազան արդիւնքներին, հաղորդակցութեան հեշտ ու յարմարաւոր միջոցներին, դարձեալ չնչին դեր է կատարում:

Ե. Թ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵՒ
ՈՒՐԻՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ *)

ԳԼ. III.

Անասնապահութիւնից և կաթնատնտեսութիւնից ստացած եկամուտը բարձրացնելու միջոցներ. — Կրթական հիմնարկութիւններ. — Կաթի արտահանութիւնը գէպի քաղաքները. — Իւզադործութեան և պանրագործութեան կատարելագործած ձևեր. — Կապիտալիստական ձևի բացասական կողմերը. — Ընկերութիւնների և համայնական ձեռնարկութիւնների դերը տեխնիկայի և առևտրի զարգացման վերաբերմամբ. — Սիբիրիայի, Ամերիկայի և Դանիայի օրինակները:

Հոկտեմբեր ամսուամ թիֆլիսում կայացած Կովկասի անասնապահների և կաթնատնտեսների ժողովների նպատակներից մէկն էլ այդ խնդրի պարզելն էր, այսինքն ինչ միջոցներով կարելի է բարձրացնել ներկայումս անասնապահական ճիւղերից ստացած համեմատաբար չնչին եկամուտը: Թողնելով մի կողմ այդ ժողովներում խօսուածների մանրամասնութիւնները, առաջարկուած բոլոր միջոցները կարելի է բաժանել երկու կարգի՝ 1) ինչ միջոցներով տարածել տեխնիկական գիտութիւններ և 2) ինչ միջոցով բաց անել աւելի լայն շուկայ անասնապահութեան այլ և այլ մթերքների համար և զրանով բարձրացնել ստացուող մթերքների գները:

Առաջի հարցի մասին ես երկար չեմ խօսիլ: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ կաթնատնտեսութեան և անասնապահութեան շահերի պաշտպանութեան համար ժողովի կողմից ընտրուած յատուկ մարմնի կազմակերպելը, շրջող մասնագէտ-վարպետների նշանակելը՝ զսնազան տեխնիկական նորմուլութիւններ տարածելու համար, ինչպէս և ալպեան (լեռնային) փորձ-

նական-զիտական կայարանի բաց անկը Անդրկովկասի որ և է անասնապահական վայրում—չատ ցանկալի կը լինէր:

Բայց, մոռանալու չէ և նա, որ այդ հիմնարկութիւնները ուղիղ գիտէ դեռ երբ բացուեն. չինովիկական ձեռնարկութիւնները միշտ ունեն իրանց խոշոր թերութիւնները, որոնցից զուրկ չեն լինի և վերը նշանակուածները. միւս կողմից, անհերքելի է, որ մինչև օրս կատարուած փոփոխութիւնները կաթնասնատեսութեան մէջ առաջ են եկած շնորհիւ շուկայի պահանջի և մասնաւոր մարդկանց նախաձեռնութեան:

Անկասկած, այդ նախաձեռնութիւնը շուկայի լայնանալու հետ միասին կը խաղայ մեծ դեր և ապագայումս ինդիքը, ուրեմն, դալիս է նրան. թէ ինչ ձեռնարկութիւն և անասնապահական ճիւղ այս բոլորիս ամենաձեռնտուն և ամենաշահաւէտն է Անդրկովկասում:

Կաթի վաճառումը այդ տեսակէտից արժանի է լուրջ ուշադրութեան:

Թիֆլիսում (ինչպէս և միւս քաղաքներում) կաթի պուրը ծախուում է 2—1¹/₂—և ամենայամբ 120 ռուբլով:

Նոյն կաթը Կովկասի զանազան անկիւններում գնահատուում է 40—60 կոպ.: Անկասկած, այն բոլոր արօտ և խոտաբք ունեցող բնակիչները, որոնք 5—15 վերստի վրայ են, երկաթուղիներից, լաւ չափ կարող են ստանալ, եթէ զբաղուէին կաթի արտահանութեամբ դէպի քաղաքները:

Փոխադրութիւնը այդ դէպքում (հաշուելով և յատուկ մետաղեայ ամանները, և սառուցի պահելը, և երկաթուղու ծախքերը, և կորուստը) կը նստէր բաւականին արժան և ամեն մի պուրը կաթը կը տար զրանով զբաղուողին 20—30 կոպէկ ներկայիցս աւել:

Նամանաւանդ ստածիս իրագործուելը հեշտանում է նրանով, որ երկաթուղու վարչութիւնը կաթնեղէն և մրգեղէն փոխադրելու համար իր գնացքների մէջ մտցրած է յատուկ վազոններ, որոնք ձմեռը տաքացուում են իսկ ամառը սառցուում: Բացի այդ, շուտ փշանող մթերքները երկաթուղին տանում է մարդատար գնացքների հետ, փոխադրութեան վարձը վերցնելով ապրանքատար ցնացքի հաշուով:

Ուշադրութեան արժանի է այս հարցի վերաբերմամբ և նա, որ այս դէպքում կաթ արտահանող գիւղերին և մասնաւոր անձանց աւելի ձեռնտու կը լինի պահել շատ կաթ տուող, թէկուզ աւելի մեծ արժեք ունեցող կովեր: Ակադեմիկոս Միւրգեն-գորֆ*) հաշուած է որ 1000 ֆունտ (25 պուր.) քաշ ունեցող

*) Боталниъ, Справочная книга русского сельского хозяина.

լաւ կովը տալիս է մինչև 5000 ֆ. կաթ, սպառելով օրական 30-ական ֆ. ամենալաւ խոտ, կամ տարին 10,950 ֆ.:

Մի ֆունտ կաթ արտադրելու համար այս տեսակ կովը սպառում է ուրեմն 2 ֆ. խոտ: Այն ինչ փորձերը ցոյց են տուած, որ ամենալաւ կովերը 1 ֆ. կաթ տալու համար ուտում են միայն $1\frac{1}{2}$ ֆ. խոտ, իսկ վատ կովերը—մինչև 4 ֆունտ: Վախենալ, որ քաղաքները մեծ քանակութեամբ կաթ բերելով, կաթի գինը կ'ընկնի և այդ ճիւղը անձեռնտու կը դառնայ—սխալ է:

Թիֆլիս քաղաքի քիմիական լաբորատորիայի քննութիւններից երևում է, որ ծախսուող կաթի մեծ մասը խարդախուած է զանազան տնօնատնիկ և վեատակար նիւթերով (ալիւր, կաւիճ, ջուր, սալիցիլի և այլն). թէ ինչ աստիճանի է հասնում կաթի կեղծելը Թիֆլիսում—մենք ճշտօրէն չը գիտենք, բայց Մոսկուայում պրօֆ. Էրիսմանի *) հաշուով իւղի քանակութիւնը, իսկական կաթի $416 \frac{0}{100}$ -ի տեղ, շուկայում իջնում էր պատին 377 $\frac{0}{100}$ -ի, ուտիսին $256 \frac{0}{100}$ -ի, մանր խանութներում $245 \frac{0}{100}$ -ի, Խիտրովի հրապարակում $064 \frac{0}{100}$ -ի և այլն:

Ահա ինչու, երբ մի ոմն Չիչկին կաթի առևտուրը Մոսկուայում գրեց լայն, բայց աղնիւ հողի վրայ, կաթի գինը այնտեղ չիջաւ, իսկ սպառումը մի քանի տարում աւելացաւ երկու անգամ: Նոյնն է և Կովկասի քաղաքներում: Վախենալով կեղծիքից շատերը կամ չեն գործածում կաթը, կամ գործ են ածում շատ փոքր չափով. հէնց որ համոզմունք կայացաւ որ այս կամ այն գիւղերը, ընկերութիւնները, ֆիրմաները ծախում են անարատ կաթ—կաթի պահանջը կը բարձրանայ առանց սղդեղու գնքի վրայ, կամ նոյն իսկ բարձրացնելով վերջիններս...

Սրան կը նպաստէ և այն հանգամանքը, որ կաթի կեղծելու գէմ կուեղու համար ներկայումս մշակում են յատուկ պաշտօնական միջոցներ:

Առայժմ ես չեմ ուզում խօսել նրա մասին, որ երկաթուղուց հեռու վայրերը կարող են կաթը արտահանել կամ ենթարկելով նրան պատերի պաշտիայի (մինչև 60^0 տաքացնելու), կամ թանձրացնելով (մինչև $\frac{1}{4}$) և յատուկ կողմներում փակելով:

Երկրորդ ճիւղը, որ մեծ ապագայ է խոստանում Կովկասում—դա չվէյցարական և եւրոպական այլ պոնիրների պատրաստելն է: Թէև մենք չունենք մանրամասն հետազոտութիւն-

*) Молоко (Энциклопедия. словарь Эфрона).

ներ Կովկասի կովի կաթի յատկութիւնները մասին, բայց մի բան արդէն պարզուած է, որ մեր կովերի կաթը ընդհանրապէս աւելի խնոտ է, աւելի իւղ է պարունակում, քան եւրոպական կովերի կաթը:

Եւրոպայում կաթը պարունակում է	.	36 ⁰ / ₁₀	իւղ:
Եւրոպ. Ռուսաստանում	.	42 »	»
Սիբիրիայում (ամառ և ձմեռ)	.	5—6 »	»
Կովկասում	»	4—6 »	»

Բայցի այդ, շնորհիւ երեւի լեռնային ընտիր արօտների, մեր Կովկասից ստացւում է այն տեսակ ընտիր պանիր, որ անկարելի է լինում ստանալ Եւրոպական Ռուսաստանում: Այս պատճառով Կովկասի պանիրները Ռուսաստանի չուկայում միշտ 1—2 ռուբլով աւելի են գնահատուում Ռուսաստանի պանիրներից և տարէջ տարի աւելի ու աւելի լայն ասպարէզ են քացում իրանց սպառման համար:

Թէ ինչքան շահաւէտ է պանրագործութիւնը եւրոպական ձևով, կարելի է եզրակացնել նրանից, որ կովի անքաշ, քաշուած և ոչխարի անքաշ պանիրները տեղական ձևով պատրաստուած ժամանակ ծախւում են պուղը 3—4, 1¹/₂—3 և 4—5 ռուբլով, այն ինչ՝ նոյն քանակութեամբ կովից, նոյն քանակութեամբ ստացուած միայն եւրոպական ձևով պատրաստուած պանիրները (չվէյցարական, հոլլանդական, բոլֆօր) արժեն 2—12, 6—8 և 15—20 ռուբլի. այսինքն, եւրոպական ձևով պատրաստուած մթերքները երեք անգամ աւելի են գնահատուում, քան տեղական ձևով պատրաստուածները: Դա էր պատճառը, որ գիւղատնտեսական ճիւղերից և ոչ մէկը չի կրել Կովկասում (թէն շատ նեղ շրջանում) այն փոփոխութիւնը, որ կրել է պանրագործութիւնը և իւղ պատրաստելը եւրոպական ձևով:

Պանիր և իւղ եւրոպական ձևով պատրաստելու համար առաջի գործարանը շինած է Կովկասում Բարօն Ա. Ֆ. Կուչենբախը 1863 թուին: Կուչենբախի օրինակով միւս տարին բացուած է և Ալեքսանդրսգիլֆ գերմանական կոօնիայի համայնական գործարանը. 80-ական թուականներից, երբ Կովկասի պանիրները սկսուեցին արտահանուել Ռուսաստան, եւրոպական ձևով պատրաստուած պանրի գործարանները, կամ ինչպէս ասում են ժողովրդի մէջ, զաւօղները, ստացան մի առանձին զարկ: 1899 թուին*) պանրի գործարանների թիւը Անգրկովկասում հասնում էր 15-ի, իսկ պատրաստած պանրի քանակու-

*) Краткія свѣдѣнія о состояніи с. хоз. на Кавказѣ, Т. 1900 г.

Թիւնը—13500 պուգի: Հիմա (1901) գործարանների թիւը հասնում է 23-ի, որոնք պատրաստում են ոչ պակաս 18,000 պ. շվէյցարական պանիր:

Ամեն մի նոր գործարան և վերջի երկու տարուայ ընթացքում պատրաստուած պանրի քանակութիւնը աւելացած է $\frac{1}{3}$ -ով ($380/0$):

Պանրի գործարանները կենտրոնացած են Թիֆլիսի նահանգի Բօրչալուի գաւառի լեռնային մասում (Բաշքէշիթ և Լօռի), թէև մի գործարան կայ Կարսի շրջանում և մի ուրիշը Գանձակի նահանգում: Գործարանների մեծ մասը պատկանում են շվէյցարացիներին (Բերնի կանտոնից), որոնք սկզբում եկած են Կովկաս իրրև վարպետներ այս կամ այն արդէն գոյութիւն ունեցող գործարանը:

Վերջերս կատարեալագործուած պանրագործութեամբ սկսել են պարապել և տեղացի հայերը, ռուսները, թուրքերը, վրացիք: Գործարանների մեծ մասը գտնուում են (12—24 տարով) կապալով վերցրուած ագնուականների հողերի վրայ—մի հանգամանք, որ խոշոր արդեւք է հանդիսանում հողը հիմնականօրէն լաւացնելու համար (ջրելու, քարից մաքրելու, պարարտացնելու):

Գործարանները օգտուում են սեփական և վարձով վերցնող կովերի կաթով: Հին, աւելի հարուստ գործարանները ապահովուած են իրանց սեփական կովերով, նորերը կովերի $\frac{3}{4}$ — $\frac{1}{2}$ -ը վերցնում են վարձով զանազան տեղերից. 8, 10, 15, նոյն իսկ 18 ռուբլով 4—5 ամիս պանրագործութեան շրջանի ընթացքում:

Բոլոր գործարանները ձգտում են ունենալ կարելիին չափ կաթնատու կովեր: Դրա համար նրանք բերում են կովեր Ռուսաստանից (Ղրիմի գերմանական կոլոնիաներից), բայց աւելի յաճախ գերադասում են խառնուրդով ագնուայնել տեղական ցեղերը եւրոպական ագնիւ ծագում ունեցող ցուլերի միջոցով: 40 տարուայ ընթացքում պ. Կուչենրախին տեղական ցեղի և չվիցի ցուլերի խառնուրդից յաջուած է ստեղծել յատուկ կաթնատու ցեղ, որ իր խոշորութեամբ և կաթի առատութեամբ յետ չի եւրոպական կաթնատու ցեղերից: Կուչենրախից վերցրուած հորթերը, մողիները, ցուլերը ագնուայնում են և միւս գործարանների անասունների ցեղը:

Այն ժամանակ երբ Կովկասի գիւղերում միջակ կովի տուած կաթի քանակութիւնը կարելի է ընդունել 20 պուգ, պանրի գործարաններում միջակ կովը տալիս է մօտ 52 պուգ, իսկ

Կուչենբախի ընտիր կովերով գործարանում 100 պուդից ոչ պակաս:

Բոլոր գործարաններում կաթի առատ ժամանակ 4—4¹/₂ ամիս (մայիս—սեպտեմբեր) պատրաստում են պանիր, իսկ մնացած ժամանակ՝ կարագ իւղ: Կարագ պատրաստելու համար ամեն տեղ գործ են ածում սեպարատորներ և ամեն օր թարմ կաթից ստանում թարմ և քաղցր իւղ, որ մինչև քաղաք ուղարկելը (չաբաթը 1, 2 անգամ) պահում են սառնանոցներում: Պանիրը պատրաստում է կովի անքաշ թարմ կաթից. չվէյցարական (էմմենտալ անուանակալ) պանրի ձևով: Թարմ կաթը, 30—60 պուդ քանակութեամբ, մեծ պղնձէ կաթսայում մեղմ տաքացնում են և մերում մաքուր չիրգօնի մերանով (Եւրոպայից ստացւած): 1—1¹/₂ ժամից մակարդուած պանիրը մանր-մանր կտրտում են յատուկ գործիքներով, տաքացնում մօտ 20—30 րոպէ մինչև 60—70°, հանում կաթսայից (միանգամից) յատուկ գործուածքով, դնում կլոր դալիլի մէջ և քամում: Լաւ քամուելու համար պանրի գլուխը մի քանի անգամ շուռ են տալիս և 1—2 օրուայ ընթացքում դնում ծանրութեան (յատուկ պրեսսի) տակ:

Երբ պանրի գլուխը բաւականաչափ մղւում և ամրանում է, նրա վրայ աղ են անում և տանում տոաջի տաք պահեստը. պահեստում վառարան է վառւում կամ կրակ անւում, որպէս զի տաքութիւնը լինի 20—25° C.: Պանիրը մնում է այդտեղ մի քանի շաբաթ, ամեն օր 2 անգամ աղւում գրսից և ենթարկւում առաջի բուռն «սփին»: Տաք պահեստից պանիրը փոխադրում են ցուրտ պահեստը, ուր նա մնում է մի քանի ամիս և նոյն իսկ տարիներ: Ենթարկուելով երկրորդ աննկատելի «սփին», սկզբում աղում և սրբում են պանիրը ամեն օր, յետոյ աւելի ուշ-ուշ, շաբաթը, երկու շաբաթը մի անգամ. 10¹/₂ պուդ կովի կաթից ստացւում է 1 պուդ պանիր, որ հէնց առաջի աշնանը ծախւում է 9—13 ռուբլով:

Շվէյցարական պանրի վերջ բերուած պատրաստութիւնը ընդհանուր առմամբ նման է տեղական պանիրների պատրաստութեան: Չը նայած դրան, չվէյցարական պանիրը պահանջում է այնքան մաքրութիւն, այնքան նրբութիւն մանրամասնութիւնների մէջ, որ առանց հմուտ վարպետի նա փչանում է: Ահա ինչու բոլոր գործարաններում կան յատուկ վարպետներ, որոնք եփում և աղում են պանիրը: Վարպետների մեծ մասը կովկասում (ինչպէս և շատ ուրիշ տեղեր) չվէյցարացիք են, որոնք մասամբ կարծես ժառանգաբար են իւրացրել այդ արհեստը: Տարիների փորձառութեան շնորհիւ Կովկասի գործա-

քաններից մի քանիսում կան և տեղացի վարպետներ (թուրք, ուսա, վրացի): Յամենայն գէպս, նոր գործարանների համար անհրաժեշտ պիտի համարել հմուտ վարպետի ներկայութիւնը: Վարպետին տուած ուճիկը (600—1000 ռ.) կրկնակի կը վարձատրուի նրա տուած օգտով: Որ պանրագործութիւնը կատարելագործուած ձևով, չընայած իր մի քանի աւելորդ ծախսերի, ձեռնտու է Կովկասում, երևում է պ. Նիդիգէրի գործարանի հաշուից, որը ևս աւելորդ չեմ համարում այստեղ բերել:

80-ական թուականներին պ. Նիդիգէրը ծառայում էր իբրև վարպետ Կուչենբախի մօտ 350 ռ. ուճիկով: Տեսնելով ինչքան այդ ճիւղը արդիւնաւէտ է, 1884-ից նա սկսեց իր սեփական գործը և հիմա կարող է համարուել ապահով, նոյն իսկ հարստ մարդ: 1899—1900 թուականներին նա վարձում էր 1500 զ. հող (արօտ և խոտհարք, վճարելով 2500 ռ.), կթում էր 250 և 320 կով, ունէր բացի այդ մօտ 150 սուբաճ անասուն, մօտ 10 ձի, 15 խոզ (տան համար) սեփական շինութիւնների հետ միասին:

Նրա սեփականութեան արժէքի չափը համեմատ էր.

1) Շինութիւնների (ապրելու տուն, կաթնատուն, արօտ 400 ապր. համար)	20,000 ռ.
2) Անասուններ (320 կով 40 սուբլով, 150 սուբաճ 25 ռ., ձիեր)	17,250 »
3) Կաթսա և այլ գործիքներ	1,000 »
Ընդամենը	38,250 »

Նիդիգէրի տարեկան եկամուտը և ծախքերը կազմում էին. եկամուտ.

Պանիր 710—1000 պ., 11—12 ուրբով պուղը—7,810—12,000 ռ.	
Իւղ 200—150 » 17 » » 3,400—2,550 »	
Աւելացած, ծախուած, մորթուած անասուններ 3,000—2,450 »	
Ընդամենը 14,200—17,000 »	

Միջին թուով 156 հազ. ուրբի:

Մախէր.

Հողավարձ	2,500 ռ.
Վարպետին և մշտական բանուորներին	1,200 »
Հովիւներին (20 հոգի, 100-ական ռ.)	2,000 »
Կով կթողներին (ամառը 35 կին, ձմեռը 15)	400 »
Խոտի պատրաստութեան ծախս—մշակներին, նրանց սնունդը	5,600 »
Վառելիք և այլ մանր ծախքեր	300 »
Ընդամենը	12,000 »

Զուտ արդիւնք ստացւում է 3600 ռուբլի, որ կազմում է կապիտալի մօտ 10⁰/₀:

Եթէ ասածիս վրայ աւելացնել և այն որ մի քանի գործարաններ սկսել են իրանց խոտհարքները ջրել, աղբել, քարից մաքրել, լաւացրել են պանրագործութեան տեխնիկան,—անկարելի կը լինի ուրանալ, որ չվէյցարական պանրագործութիւնը ունի ահագին նշանակութիւն երկրի համար: Բայց ամենագլխաւորը ի հարկէ անասնապահութիւնից ստացուած նկամութի աւելանալն է:

Կատարելագործուած պանրի ու իւղի պատրաստելը պանրի գինը բարձրացնում է 2—4 ռուբլուց մինչև 10—12, իւղինը 8—10-ից մինչև 13—18, իսկ միջակ կովի տուած կկամուտը 15—20-ից մինչև 35—40 ռուբլին:

Զարմանալի չէ, որ այս պայմաններում չվէյցարացի հասարակ պանրագործներն ու չօբանները 10—20 տարուայ ընթացքում զիջում են տասնեակ հազարներ:

Դժբախտաբար պանրի ու իւղի պատրաստելը կատարելագործուած ձևով ու խոշոր ծաւալով ներկայ պայմաններում ունի և իր բացառական կողմերը: Լինելով այն տեսակ ճիւղ, որ տալիս է խոշոր եկամուտ, բայց որի մասին տեղացի ազգաբնակիւթիւնը չունի գաղափար—չվէյցարական պանրագործութիւնը հանգիստնում է նոր միջոց հարուստների ու գիտունների ձեռքին կեղեքելու ու ճնշելու համար տղէտ և աղքատ ժողովուրդը: Առաջարկելով հողատէրերին աւելի ձեռնտու պայմաններ, «գալօղչիկները» հեռացնում են հողից գիւղացի ազգաբնակիւթիւնը, ցորենի ու գարու արտերի տեղ բուսցնում են խոտ. հասնում են այն հետեանքին, որ միևնոյն տարածութեան վրայ ապրում է աւելի քիչ մարդ, թէև աւելի շատ կով: Վերջ յիշուած Նիդիգէրի գործարանի տեղը 80-ական թուականներին գտնւում էր Փոքր-Ղամարլու գիւղը, որի մէջ ապրում էին 24 ընտանիք թուրքեր (մօտ 100—120 հոգուց բաղկացած): Այդ ընտանիքներից ամեն մէկը պահում էր տաւար, ունէր լծկան. գիւղի ոչխարի հօտը հասնում էր մի քանի հարիւրի. ամեն ընտանիք վարում էր ազատ, ապահով կեանք, անասնապահութեան հետ միասին անելով և մի քանի օրավար ցանքաւ Երբ Նիդիգէրը վարձեց Փոքր-Ղամարլուի հողերը և սկսեց իր գործարանը, կարճ զիմադրութիւնից յետոյ, գիւղացիք կամաց-կամաց ստիպուած էին յետ քաշուել, կրճատել իրանց անտեսութիւնը, իսկ յետոյ և բոլորովին թողնել հողագործութիւնը և հայրենի գիւղը: 80-ական թուականներին Ղամարլուում ապրում էր 24 անկախ ընտանիք 100—120 հոգուց. 88 թուին մնացել էր միայն 12 ըն-

տանիք (50 հոգի), որոնցից շատերը չունէին ոչ կով, ոչ ձի, ոչ եղջ: 1900-ին տեղացիներէից մնացել էին միայն 6 ընտանիք, որոնք 2 կովից աւել իրաւունք չունէին պահելու: Տղամարդիկ Նիզիպէրի հովիւներն էին, իսկ կանայք կթում էին նրա կովերը և ստանում ամիսը $1\frac{1}{2}$ —2 ուրլի:

1884 թուից առաջ 1500 դեռ. հողի վրայ ապրում էր 24 ընտանիք 100—120 հոգուց. 20 տարի յետը, գործարան չինւելուց յետոյ, նոյն հողի վրայ ապրում է միայն 40 հոգի, որոնցից 2 ընտանիք չվէյցարացի աղաներ են, իսկ 6 ընտանիք տեղացի նօթարներ... Առաջ մի ջանի վրայ հաշւում էր 15 դեռ. հող, գործարան չինւելուց յետոյ՝ 375 դեռ.:

Նոյն բանը մենք տեսնում ենք և միւս կապիտալիստական հողի վրայ գրուած գործարաններում: Բարձն ֆօն Կուչենբախի գործարանի տեղը առաջ գտնւում էին Բօդադ-Քեսասան և Մամուլթիի գիւղերը: Հաշուելով (հարեան գիւղերի համեմատ) ջանի վրայ 5 դեռ., մենք կը ստանանք որ զավօղի տեղը (2500 դեռ. վրայ) ապրելիս պէտք է լինէին այսօր մօտ 500 հոգի կամ 80—100 գիւղական ընտանիք. իսկ հիմա, այդտեղ ապրում են՝ 1 բարձնի ընտանիքը, 5 գերմանացի ծառայողների և 32 ընտանիք թուրք նօթարներ, ընդամենը 177 հոգի: Մի անձի վրայ հաշւում էր 5 դեռ. հող, իսկ գործարան բացելուց յետոյ—14:

Պարզ է որ կապիտալիստական հողի վրայ գրուած կաթնատնտեսութիւնը, իբրեւ հողագործութիւնից աւելի էքսպէնզիւ (նահապետական) կուլտուրա, չի հաշուում ժողովրդի աճման մարքի հետ: Նոր-Բայազէթի դաւառում 1894 թուին պետական գիւղացիների միջակ անձի վրայ հաշւում էր 190 դեռ. հող, որից 097 դ. վարելու ու խոտհարք, իսկ 1 դեռ. արօտ: Այդ տարածութեան հողից գիւղացին ստանում է 365 ու. և կամուտ և ապրում: Ներկայ խոշոր կապիտալիստական պանրագործարաններում մի մեծատաւար պահելու համար հարկաւոր է մօտ 3 դեռ., որից 1 դեռ. խոտհարք վարելահող և 2 դեռ. արօտ. այդ տարածութեան վրայ մէկ կովի եկամուտը հասնում է 35—40 ուրլիու. այսինքն ամեն մի մեծատաւար պահելու համար գործարաններում աւելի հող է բռնւում, քան պէտք է հողագործական լեռնային շրջաններում մի անձաւորութեան համար. իսկ միջակ դեռետինը տալիս է՝ համեմատական պայմաններում 192 ու. և կամուտ, գործարաններում 117—133 ուրլի: Եթէ Նոր-Բայազէթի գաւառի հողերը պետական չը լինէին, այլ մասնաւոր, և կապիտալիստներին յաջողութեւն դարձանել այնտեղ խոշոր պանրագործութիւնը, մի անձնաւորութեան վրայ

այնտեղ հաշուելու էր 14—375 դեա. հող և 5567 հազ. դեա. տարածութիւն ունեցող գաւառում 125 հազ. բնակիչների տեղ կարող էր ապրել միայն 38—16 հազար...

Բայի այս, կապիտալիստական պանրագործները զրկելով գիւղացիներին հողից և զարձնելով նրանց գործարանի չօրան և կթող, այսինքն գիւղական պրօլետարիներ, ստեղծում են այն տեսակ չարքաշ պայմաններ, որ ժողովուրդը զարգանալու տեղ դնում է գէպի յետ, նոյն իսկ չէ աճում:

Դրան ապացոյց կարող է լինել նա, որ Բօրչալուի գաւառի պանրի գործարանների շրջանում զանազան կարգի գիւղերում նկատուում է ժողովրդի աճման շատ սարբեր-տարբեր աստիճաններ:

Այն ժամանակ, երբ հարուստ Ալեքսանդրազիլֆ կօլօնիան և դուխօբօրների Բաշքէլիթ գիւղում վերջի երեք տարին ժողորդի բնական աճումը հաւասար էր 45—35 0/0-ի, հայ Տաշբաշ, վրաց Գօմարէթ, յոյն Յինդկարօ և թուրք Օրուզման միջակ գիւղերում աճումը 3—20/0 էր, իսկ աղքատ մասնաւոր սեփականատէրերի հողի վրայ ապրող հայ Շիշթափա և պանրի գործարանների թուրք Ղամարլուի հասարակութեան մէջ ժողովրդի աճումը չէր հասնում մի տոկոսի և նոյն իսկ ազգաբնակչութիւնը պակասում, ոչնչանում էր...

Ահա ինչու, խօսելով կատարելագործուած ձևով պանրագործութեան մասին, մենք օգտակար պիտի համարենք միմիայն այն տեսակ ձեռնարկութիւնները, որոնց մէջ մասնակցում են իրանք գիւղացիք: Դա կարելի է անել կամ ընկերութիւններ կազմակերպելով գիւղացիներից կամ բացելով համայնական գործարաններ:

Այդ տեսակ գործարան կովկասում կայ. դա Ալեքսանդրազիլֆ (Ծալկա) գերմանական գիւղի համայնական գործարանն է: Սկզբում ծալկեցիք ստանում էին տէրութիւնից վարպետ, չվէյցարական ցուլեր, իսկ հիմա գործը տանում են իրանց պատասխանատուութեամբ ընտրուած յանձնաժողովի միջոցով: Գործարանը ունի վարպետ (օգնականների հետ), որը ամեն մէկից ստանում է կաթը (նշանակելով առանձին տետրակների մէջ), պատրաստում պանիր, իւղ և այլ մթերքներ: Գիւղի կողմից ընտրուած վարչութիւնը ծախում է պանիրը, իւղը և ամեն ամսուայ ու տարուայ վերջը տեսնում ընդհանուր և ամեն ընտանիքի հաշիւը: Սկզբում գործարանը աշխատում էր միայն ամառը, չվէյցարական պանիր պատրաստելիս, բայց վերջի տարիները գիւղը օգտակար է համարած գործարանին յանձնել բոլոր տանը չը գործածուող կաթը, որից

գործարանը պատրաստում է իւղ, հում սեր (сметана), թան (творог) և չալաթը մի անգամ ուղարկում Թիֆլիս: Գործարանի հաշիւները ենթակայ են ամենախիստ ըննութեան, տանում են չափ մաքուր կերպով: Աւելորդ չեմ համարում բերել այստեղ մի քանի թուեր այդ գիւղի մասին, որը կարող է տեղացիներին ծառայել իբրև օրինակ:

Սկսած 1887-ից մինչև 1900-ը համայնական գործարանի անտեսութիւնը առաջ է գնացած այս չափով.

	1887 թ.	1900 թ.
Ընտանիքներ	54	78
Կովեր	2	1,010
Ամառը ստացուած կաթը (թունդի)	50,045	92,738
Պատրաստուած պանիր պուդ	1,036	2,005
Պանրից ստացուած դրամ ու	11,385	22,181
Մի թունդի կաթի արժէքն է հան. իւղ	23,66	25 ⁶⁸

1896 թուից, ինչպէս վերև յիշուեց, գործարանը բացի պանրից սկսել է մշակել գիւղի ամբողջ կաթը իւղի, հում սերի և թանի համար, ուստի միջոց կայ հաշուելու և այդ ձեւերի (ձմեռուայ ամիսների) եկամուտը, որ հաւասար էր.

	1896 —	1899
Կաթ (թունդի)	75,400	74,000
Իւղ (պուդ)	675	525
Հում սեր »	354	422
Թան »	1,176	720

Ընդամենը ուրբի 14,031 17,029

Հաշուելով և այս գումարը, պանրից ստացած եկամուտի հետ, մենք կը ստանանք որ Ալեքսանդրոպոլիսում միջակ կովը տալիս է 927 (պանրի չրջանում) և 75 (ձմեռուայ չրջ.), իսկ ընդամենը 168 թունդի (42 պուդ) կաթ:

Այդ քանակութեան կաթից պատրաստում է 202 պ. չվէյ-ցարական պանիր, 06 պ. կարաք իւղ, 06 պ. հում սեր և 10 պ. թան:

Այս ամենը գնահատում է ամառուայ չրջանում 222 ու., ձմեռուայ 170 ու., իսկ ամբողջ տարուայ 392 ու.: 2ը հաշուած կովերի տուած հորթը, կաթնատեսութիւնից ստացուած եկամուտը մի անձի վրայ հաւասար է 784 ոտւրու, իսկ միջակ ընտանիքի 5030 ու.:

Գերմանացիք Ալեքսանդրոպոլիսում տարէց տարի հարըստանում են: Նրանք լայնացնում են ոչ միայն անասնապահու-

Թիւնը այլ և հողագործութիւնը. ունեն մօտ 10 դեա. այգի (խնձոր, տամբուլ), նոյնքան բօստաններ, ուր բայի կարտովիլից մշակում են և տակեր՝ ձմեռը կովերին կերակրելու համար: Բացի պետական հողերից (2126 դեա.), համայնքը կապալով վերցնում է հողեր և հարկանքներից (մօտ 2500 դեա.), պահում է 15-ից աւել ցուլեր ազնիւ կաթնատու ցեղերից: Բացի հնձի մշակներից, կօլօնիստները ունեն 15 տարեկան նօքարներ (թուրք, վրացի, հայ) և 8 հոգի չօբան համայնքի հօտերի արածայնելու համար...

Գիւղացիների ապրուստը, տան կահկարասիքը, յիշեցնում են քաղաքացի ապահով արհեստաւորներին և վաճառականներին: Բնական աճումը 1898—1900 թուերին հասնում էր 45—70/0-ի. գիւղը ունի երկսեռ դպրոց, երգեցիկ խումբ, որը տօն օրերը հանդէսներ է ունենում:

Ահա ինչ հետեանքների է հասցնում կատարելագործուած տնտեսութիւնը, կազմակերպուած ժամանակի պահանջի ու ոգու համեմատ:

Եթէ մեր լեռնային գիւղերում զարդանայ կատարելագործուած պանրագործութիւնը ու իւղ պատրաստելը, մեր ժողովրդի կաթնեղէններից ստացած եկամուտը, 564 ո. ջանի վրայ (45¹² ո., ընտանիքի) կը բարձրանայ մինչև 1123 » »

» (904 » ») և աւելին: Դա դժուար չէ անել, որովհետև գիւղացիք ունեն պատրաստի կաթը, պատրաստի գոմեր և կեր անասունների համար, ունեն հմտութիւն և սէր գէպի անասնապահութիւնը ու կաթնատնտեսութիւնը: Մնում է նրանց զիտակցութիւն, ազնիւ ղեկավարներ, նոյն իսկ մի ղեկավար և մօտ 2000 ո.՝ գործիքների և կաթնատուն չինելու համար.

Մեր գիւղացիք, հարկաւ, գերմանացիներ չեն, բայց... նրանք շատ լաւ հասկանում և ըմբռնում են իրանց շահը և ղեկավարների հետ ձեռք ձեռքի տուած հեշտութեամբ կարող են իրագործել այն, ինչ որ անում են առաջադէմ ազգերը: Տարբերութիւնը կը լինի միայն աստիճանի մէջ: Եթէ կուտուրապէս բարձր, կրթուած, լաւ հասարակական կարգեր ունեցող ազգերը անում են տարին 4—5 քայլ դէպի առաջ, մենք կ'անենք 3, 2 քայլ: Մեզ համար սա էլ յաջողութիւն է: Յարուցուած հարցերի տեսակէտից առաջադէմ ազգերից կաթնատնտեսական, ինչպէս և այլ արդիւնաբերական ընկերութիւնների կազմակերպելը կարևոր և անհրաժեշտ է և մի այլ տեսակէտից. ինչպէս յայտնի է ընդհանրապէս և ինչպէս տեսնում ենք մենք

մեր նեղ շրջանում, վերջերս արագ կերպով զարգանում է հաղորդակցութիւնը և սրա հետ միասին վաճառականութիւնը:

Եթէ 100 տարի առաջ կովկասցի գիւղացին իր սպառած մթերքներից 10/0—էր ստանում դրսից, իսկ 990/0 պատրաստում տանը, 50 տարի առաջ դրսից առնուող մթերքները կազմում էին նրա սպառելիքի 100/0, իսկ հիմա կազմում են 20,30,400/0: Շատ հաւանական պիտի համարել որ 20,50,100 տարուց յետ մեր գիւղացու դրսից առնուելիք մթերքների տոկոսը կը բարձրանայ մինչև 50,70,900/0...

Աշխատանքի բաժանումը առաջ է գնում այնպիսի արագ քայլերով, որ հեռու չէ այն ժամանակը, երբ ամեն աշխատող կը զրազուի միայն մի նեղ ճիւղով, ծախելով իր արտադրած մթերքների 50,80,900/0-ը ուրիշներին և ստացած զուամբով դրսից առնելով իրան անհրաժեշտ պիտույքների 50,80,900/0-ը:

Ահա ինչու միջնորդ, վաճառական գասակարդի գերը տալից տարի մեծանում է և այդ գասակարդը օգտուելով և արտադրողից և սպառողից գիղում է չը տեսնուած հարստութիւն...

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ և արդիւնաբերողի և սպառողի շահերը պահանջում են հաստատել միմեանց մէջ անմիջական կապ, դուրս վանել մէջ տեղից վաճառական գասակարդը և վերջինիս ստացած եկամուտը բաժանել միմեանց մէջ:

Այս հարցը կազմում է ներկայ տնտեսական պայմանների լուծելիք պրօբլեմներից մէկը և զրա համար աշխատում են շատ և շատ ոյժեր:

Բայց ով չը գիտէ, որ վաճառականական կապեր հաստատատելու համար հարկաւոր է խոշոր գործ, հարկաւոր են հմուտ և բանիմաց մարդիկ, հարկաւոր է կատարելագործուած տնտեսութիւն: Ներկայումս մեր արդիւնաբերութիւնները, մանաւանդ գիւղացիների, այնքան փոքր են, որ նրանք անկարող են սեփական առևտուր սկսել. այդ ձեռնարկութիւնների ելեմուտքը ունի այնքան ծաւալ, որ նրանք չեն կարող զիմանալ ոչ մի շօշափելի ծախսերի, այս կամ այն կատարելագործութիւնը մշտցնելու համար. մասնաւորապէս կաթնատնտեսութեան և անասնապահութեան վերաբերմամբ պէտք է համարել պարզ որ 5—10 կով ունեցող գիւղացին չի կարող 50—100 ու., արժէք ունեցող սեպարատոր, խնոցի և այլ կատարելագործուած գործիքներ առնել կարագ պատրաստելու համար: Դա ձեռնտու է անելի 20—30 կով ունեցողին. իսկ 20—30 կով ունեցողը, որ կարող է պարապել կարագ պատրաստելով, չի կարող զբաղուել չվէյցարական պանիրի պատրաստութեամբ, որովհետև վերջինիս

համար պահանջուում է ամենաքիչը 30—40 պուգ կաթը, որ կարելի է ստանալ միայն 100—150 կովից. չվեյցարական պանիր պատրաստելու համար սնհրաթեշտ է 600—1000 ու. ստացող վարպետ, յատուկ շինութիւններ և այլն: Մի քանի հարիւր կով ունեցողը (ընկերութիւն, համայնք կամ մասնաւոր մարդ) կարող է պատրաստել և իւղ, և պանիր չվեյցարական ձևով, բայց անկարող է մենակ զբաղուել մսի առևտուրով, որովհետև վերջինս լաւ գնելու համար հարկաւոր են հարիւրաւոր տաւարներ: 100 մասցու կամ 1000 ոչխար ունեցողը կարող է սկսել սեփական մսի առևտուր որեւէ դաւառական քաղաքում, բայց ոչ Թիֆլիսում: Վերջինիս համար պահանջուում է օրական մորթել 5—10 մեծատաւար, 20—30 ոչխար, մի քանի խոզ և այլն: Բայց սա էլ բաւական չէ. հաղարաւոր գլուխ ապրանք ունեցող Թիֆլիսի չօդարները կարող են սեփական առևտուր ունենալ Թիֆլիսում, բայց նրանք չեն կարող մանկ վաճառականական յարաբերութիւնների մէջ Ներոպայի (Մարսէյի, Լօնդօնի, Համբուրգի) հետ: Լօնդօնի հետ կապեր հաստատելու համար չի կարելի նաւով 50, 100 ոչխար ուղարկել. նաւերի սառնանոցները պահանջում են միս հարիւրաւոր, հաղարաւոր, տասնեակ հաղարաւոր պուգերով: Արտասահմանի հետ առևտուրը կարող է յաջող գնալ միայն այն ժամանակ, երբ նա կատարւում է ոչ թէ մէկ, երկու, տասը անգամ, այլ սրբերաբար, տարիների ընթացքում:

Քանի խոշոր է ձեռնարկութիւնը, այնքան նա աւելի է տանում կատարելագործութիւնների համար սնհրաթեշտ ծախսեր, նոյնքան պակաս է լինում ընդհանուր ծախսերը, այնքան աւելի հեշտ և ձեռնառու է այդ ձեռնարկութեան առևտուրը գնել շահաւէտ հողի վրայ: Այդպէս է միջազգային շուկայի և ներկայ տնտեսական պայմանների պահանջը:

Դրան հսկատակուել ենք և մենք... Դժբախտաբար մենք չենք կարողանում գեռ ևս օգտուել վերջերս առաջ եկած լայն միջազգային յարաբերութիւնների զիւրութիւնից: Մենք արտադրում ենք միջազգային շուկան նաւթ, մետաքս, հում կաշի — այն մթերքները, որ արտադրում էին և մեր պապերը: Բայց մեր ահագին արժէք ունեցող փայտեղէնը, մեր հիանալի համ ունեցող ոչխարը, խոզը, մեր չնչին գին ունեցող միսը — միում են միմիայն մեր քաղաքացիների համար և ծախւում չնչին գնով:

Օդեսայից (կամ Բաթումից) մեծ քանակութեամբ գարի, ցորեն և սիմինդր ուղարկելիս Մարսէյ, Համբուրգ, Լօնդօն,

պուղը նստում է 9—11 կողէկ^{*)}։ Նոյն ջնշին զնով կարելի էր արտասահման փոխադրել և մեր միսը, իւղը, կաթնեղէնները։ Այն ժամանակ այդ բոլոր մթերքների զները մեր երկրում կը կրկնապատկուէր և կ'եռապատկուէր։ Դրա համար հարկաւոր է միայն պատրաստել ապրանք միջազգ. շուկայի պահանջի համեմատ, սակզծել խոշոր վաճառականութիւն արտասահմանի հետ, մանաւանդ կազմակերպուած ընկերական հոգի վրայ։ Հարկաւ, միանգամից այս ամենը չի լինի, բայց թող զարդանան մեզ մօտ մանր ընկերակցութիւնները ու համայնական ձեռնարկութիւնները և մենք կը տեսնենք ինչպէս մօտ ապագայում մեր մթերքները Լճնդօնում և այլ տեղեր մրցում են Դանիայի, Կանադայի, Աւստրալիայի և այլ առաջադէմ երկրների մթերքների հետ։

Ընկերութիւնները միջոց կը տան զնել գործերը խոշոր հոգի վրայ և մտցնել տեխնիկական կատարելագործութիւններ, օգտուել մասնագէտների հմտութիւնից, ընկերութիւնները կ'ազատեն մեր ժողովուրդը միջնորդների ճանկերից, միջոց կը տան մեզ բանալ նոր, անսահման շուկաներ, որով զգալի չափով կը բարձրացուի մեր աղքատ ժողովրդի բարեկեցութիւնը։

Թող օտար երկրները փորձը լինի մեզ օրինակ։ Մի քանի տարի առաջ Ռուսաստանի հիւսիսային նահանգները պահիր ու իւղ էին պատրաստում միայն ներքին շուկայի համար, այսինքն Ռուսաստանի քաղաքների։ Բայց ահա երևան եկան շվեդացի և ֆինլանդացի կաթնատնտեսներ, որոնք սկսեցին պատրաստել կարագ իւղ այնպէս, ինչպէս պահանջում է Անգլիայի շուկան և այդ ճիւղը տարէց տարի ստանում է աւելի և աւելի մեծ ծաւալ։ Սիբիրիայի երկաթուղին անցկացնելուց յետոյ պետութիւնը նշանակեց այդ շրջանի համար յատուկ իւղ պատրաստող վարպետներ, երկաթուղու մէջ մտցրեց յատուկ վազօճներ և գործը արագ քայլերով սկսեց առաջ գնալ։

Պ. Աւետ. Քալանթարի ասելով 1900 թուին Սիբիրիայից Անգլիա է արտահանուած 12 միլ. ռուբլու կարագ իւղ, 1901-ին մօտ 20 միլ. ռուբլու իւղ, իսկ եկող 1902 թուի համար սպասւում է որ արտահանուելիք իւղի արժէքը կը հասնի մինչև 30 միլ. ռ.¹

Անցած ամառ շատ անգամ պատահել է, որ երկաթուղին ստիպուած է եղել կազմակերպել յատուկ գնացքներ (5—7 վա-

*) Касперовъ, Хлебная Торговля.

դօնից) միմիայն կարող փոխադրելու համար: Ասում են, երկաթուղու վարչութիւնը նորից պատուիրել է կառուցել 200 վադօն կարագի փոխադրութեան համար:

Սիբիրիայի սհազին տարածութիւնը մի կողմից, իւղագործութեան տեխնիկայի զարգացումը միւս և, որ ամենագլխաւորն է, սպահով Անդլիայի շուկան երրորդ կողմից գրաւական են, որ Սիբիրիայի արտահանութեան համար իւզը կը խաղայ առաջնակարգ տեղ:

Դրա հետեանքները հիմա էլ արդէն նկատուում են. առաջ կաթի պուզը Սիբիրիայում ծախւում էր 20—30 կոպէկով, իսկ հիմա արժէ 40—50 կոպ. Ասել է, ժողովրդի եկամուտը կաթնաատնտեսութիւնից վերջի մի քանի տարուայ ընթացքում Սիբիրիայում կրկնապատկուել է...

Մեծ քայլեր, ինչպէս առհասարակ, նոյնպէս և կաթնատնտեսական և անասնապահական ճիւղերում, արել են վերջերս Ամերիկայի Միացեալ-Նահանգները:

«Բամբակի մշակութիւնը Միացեալ-Նահանգների հարաւային մասում—ասում է նորերս Ամերիկայից վերադարձած գիւղատնտես Տարատընովը իր նախնական ղեկուցման մէջ»*)—վերջի 15 տարուայ ընթացքում ոչ միայն բռնել է աւելի մեծ տարածութիւն և աւելացրել բերքը, այլ և ստացել առաջուանից շատ աւելի կարեւոր նշանակութիւն: Սրա պատճառը նա է, որ բայի մաքուր բամբակից, այս մշակութեան մէջ շատ կարեւոր տեղ են սկսել բռնել սերմը, որից ստացւում է գեղեցիկ ձէթ, կոպտոնը և նրանից ստացած ալիւրը իբրեւ լաւագոյն և արժան «կեր» անասունների համար և վերջապէս բամբակի սերմի կեղեր—իբրեւ խտին փոխարինող լաւ սուրբօգտ:

Վերջերս ընդունուած ճշմարտութիւն է համարւում, որ բամբակ արտադրող նահանգները Ամերիկայում հանգիստանում են միաժամանակ և անասնապահութեան նահանգներ, այն ինչ առաջ «կերի պակասութեան պատճառով» այս նահանգներում անասնապահութեամբ համարեա չէին պարապում: Բամբակի մշակութեան զարգանալու հետ միասին առաջ եկաւ լաւ և արժան «կերի» մեծ քանակութիւն, որի պատճառով հարաւում արագ կերպով զարգացաւ անասնապահութիւնը և կաթնաատնտեսութիւնը: Բամբակից ձէթ հանող գործարաններից շատերում պահւում են մսացու և կաթնատու ապրանքից ահագին հոտեր: Մի ֆունտ կոպտոնի ալիւրին խառնում են առհասարակ 4—5 ֆ. սերմի կեղի. անասունները սնուելով այս կերպով, արագ

*) Торгово-Промышленная Газета.

կերպով մտի են դալիս և չաղանում... Անասունների համար լաւ կեր ամերիկացիք ստանում են և սիմֆինդրի (կզիպտացորենի) բնից, որը յատուկ մեքենաներով մանրացնում են: Հարաւային նահանգներում ամեն տեղ զարգանում է խոտացանքսը և անասնապահութիւնը:

Ինչպէս պետական ու մասնաւոր փորձնական ագարակները, նոյնպէս և օրինակելի մասնաւոր ագարակները զբաղուած են այն կարևոր հարցով, թէ ինչպէս վերականգնել հողերի առաջուայ ոյժը, որ սպառուած է շնորհիւ միատեսակ բոյսերի անընդհատ մշակութեան: Սրա համար գիմում են թիթեռնակերպ խոտերի ցանքսի («հարաւի երեքնուկ» և այլն) խորը և մաքուր վարի ու մշակութեան, պարարտացման ամենալայն ծաւալով...

Բոլոր փորձնական կայարաններում և լաւ ագարակներում ներկայումս ամենալուրջ ուշադրութիւն է դարձրուած բամբակի, սիմֆինդրի, հացահատիկների նոր տեսակներ առաջ բերելու վրայ: Սա անուում է և լաւ, տեղական պայմաններին համապատասխան սերմեր ջնկելով և մի քանի տեսակների փոշիները խառնելով արհեստական միջոցով»...

Ահա ինչն Միացեալ-Նահանգները կաթնեղէններ արտահանում և ներմուծում էին *)

1889—93	209 միլ. ո.	27 միլ. ո.
1894—98	160 » »	31 » »

Այն ինչ Միացեալ-Նահանգներից համարեա երկու անգամ աւելի մեծ Ռուսաստանը արտահանում և ներմուծում էր կաթնեղէններ՝

	արտահանում	ներմուծ.
1883—87	32 միլ. ո.	20 միլ. ո.
88—95	48 » »	20 » »
93—97	41 » »	14 » »

Նոյն անազին տարբերութիւնը մենք տեսնում ենք մտի ու այլ անասնապահութեան միջերջների վերաբերմամբ:

1896 թուին Ռուսաստանից արտահանուած էր արտասահման **). 98 միլ. ուռլու կենդանի անասուններ, 135 միլ. ո. թարմ և աղած ու չորացրած միս, 34 միլ. ո. պանիր և իւղ, ընդամենը 267 միլ. ուռլու, կամ 22 կոպէկի կայսրութեան միջակ անձնաւորութեան վրայ:

*) Раддигъ, Скотоводство и Молочное хов-во въ разныхъ государствахъ.

**) Энциклопед. словарь Эфрона, «Россія».

1891—92 թուականներին Ամերիկայի Միացեալ-Նահանգների արտահանութիւնը անասնապահութեան և կաթնատնտեսութեան մթերքներով հաշոււմ էր *).

Մեծատաւար	640	միլ. ո.
Միս տաւարի	650	» »
» խոզի	102	» »
Սուջուղ (մսի)	173	» »
Ճարպ .	785	» »
Իւղ և մարգարին	51	» »
Պանիր	156	» »

Ընդամենը 2557 միլ. ուղւոյ, կամ մի անձնաւորութեան յիշին թուով 406 ուղւի: Կարծեմ աւելորդ է յիշել այստեղ, որ այդ անագին տարբերութեան ամենագլխաւոր պատճառը Միացեալ-Նահանգների և Ռուսաստանի կուլտուրական, տնտեսական և հասարակական պայմանների տարբերութեան մէջն է...

Եւ ճիշտ, այդ երկու երկրներում, 90-ական թուականներին հաշոււմ էր **).

	Ռուսաստան.	Ամերիկայի Միաց.-Նահ.
Աղգարնակութեան թիւ, հազարներով	116,100	62,982
Ամեն 10,000 հոգուց դպրոց յաճախող	237	1,293
» 1,000 » անդրագէտներ	708	0
Պարբերական հրատարակութ. ընդամ.	705	16,319
Հում երկաթ, ընդամ. ցիստներ	746	8,413
Քարածուխ » »	6,208	143,137
Բամբակեղէն մանելու համար իլիկներ		
հազար	3,828	13,400
Երկաթուղի (քիլոմ.) ամեն 10,000 ք.		
քիլոմ. տարած.	58	302
Բոլոր ապրանքների ներմուծում միլ. ո.		
(1890)	674	1,729
Բոլոր ապրանքների արտահանութիւն		
միլ. ո. (1891)	1,142	1,777
Պետութեան եկամուտը միլ. ո.	1,436	909
» ծախսը » » »	1,564	859
» պարտքը » » »	6,703	3,246

*) Prof. Juraschek. Geographisch statistische Tabellen 1992 j.

**) Ibid,

Թուերը շատ պերճախօս են:

Ներմուծման և արտահանութեան վերաբերեալ թուերը պարզելու համարը անհրաժեշտ է միայն յիշեցնել, որ ինչպէս և տղքատ անհատներ, իր պարտքերի համար Ռուսաստանը տալիս է ուրիշներին մօտ 500 միլիօնի միլերքներ աւել, քան ստանում է: Նոյն կուլտուրական տարբերութիւնը ունի ահագին նշանակութիւն և նրա վերաբերմամբ, որ առաջագէտ և կուլտուրապէս աւելի բարձր Ամերիկան ու միւս երկիրները աւելի արագ են կատարում իրանց տնտեսական զարգացումը, քան դա նկատուում է աւելի յետ մնացած Ռուսաստանում և Կովկասում:

Մեր շօշափած հարցերի նկատմամբ առանձին ուշադրութեան արժանի է Դանիան: Վերջին 25 տարուայ ընթացքում վերջինիս գիւղատնտեսութիւնը կրած է անհաւատալի փոփոխութիւն *) : Դեռ մօտ անցեալում Դանիան ապրում էր հացով և հողագործութիւնը այդ երկրում խաղում էր իշխող դեր: Վերջի տարիները գիւղատնտեսական կրիզիսը (հայի գնի իջնելը) ստիպեց դանիացոյ մտածել գիւղատնտեսական փոփոխութիւնների մասին: Օգտակար համարուեց հացահատիկների տեղ ոյժ սալ խոտի ցանքսին և անասնապահութեան: Այդ համոզմունքի հետևանքը եղաւ նա, որ 1876 թուից սկսած հացահատիկների բռնած տարածութիւնը պակասած է Դանիա երկու անգամ և սրա համեմատ լայնացած սիրի-սիրիի, եօնջիի, տակերի բռնած տարածութիւնը, որոնք այսօր բռնում են երկրի $\frac{1}{3}$ մասը: Սրա հետ միասին 35 տարուայ ընթացքում 560/0-ով աւելացաւ տաւարի թիւը: Ոչ մի երկիր Եւրոպայում անասնապահութեան վերաբերմամբ չի տուել այսչափ արագ զարգացում:

Անասնապահութեան զարգացումը արհեստական պարարտացնող նիւթերի հետ միասին ունեցաւ այն հետևանքը, որ 25 տարուայ ընթացքում հացահատիկների բերքը Դանիա բարձրացաւ՝ ցորենի 250/0, խրքուկի 170/0, կարտոփի 590/0, իսկ խոտերի 180/0:

Աւելի զարմանալի են այն միջոցները, որոնցով Դանիան հասաւ այդ հետևանքի: Կուլտուրական բարձրութեան հետ միասին այդ երկիրը ներկայացնում էր մանր հողատիրութեան վայր. ժողովրդի $\frac{2}{3}$ մասը ունի 10 դեա. պակաս հող:

*) Պրօֆ. Չուպրով. Изъ заграницы, „Русскія Вѣдомости“, 1901, № 172.

Գիւղական ազգաբնակչութեան 400/0 պահում է	1—3 կով.
29 » »	3—9 »
27 » »	10—59 »
4 » »	30 և աւել.

Մի քանի անձնուէր չրջող գիւղատնտեսներ մտածելով ինչ միջոցներով օգնել գիւղացիներին, եկան այն եզրակացութեան որ կաթնատնտեսութեան համար անհրաժեշտ մեքենաները, ինչպէս և այդ միջոցների առևտուրը յաջողակ կարելի է տանել միայն այն ժամանակ, եթէ գիւղացիք համախմբուեն ընկերութիւնների:

Գիւղատնտես Ֆիօրդի և ընկերների քարոզը զուր չանցաւ: Առաջին ընկերական կաթի գործարանը բացեց 1882 թուին տնտեսապահ Անդերսօնը: Գործարանի գործերը գնացին յաջող և շուտով Անդերսօնը ունեցաւ հետևողներ: 1899 թուին Գանիան հաշւում էր 1013 ընկերական և 260 համայնական կաթնատներ (գործարաններ): Ամեն մի գործարանի վրայ միջին թուով հաշւում էր 800 կով: Գործարանները ունեն ամեն տեսակ յարմարութիւններ՝ սեպարատորներ, պաստերիզացիի (չը փշանալու համար) ենթարկող մեքենաներ և այլն: Այդ պատճառով կաթնատները նստել են բաւականին թանգ (4000—20,000 ռ.):

Որովհետև այդ ծախսերի մեծ մասը կատարուած է պարտք վերցրուած դրամով (4—50/0-ով), ամեն կովի վրայ այսօր պարտք է հաշւում 17 ռուբլի:

1898 թուին գործարանների անգամ էր հաշւում 148,000 ծխատէր 842,000 կովերով: Մի կովը միջին թուով տարին տալիս էր 135 պուգ կաթը, որի ամեն մի 265 պուգից ստացւում էր մի պուգ իւղ: Ընդամենը գործարանները ստանում էին 46 միլ. պ. իւղ: Այդ իւղի ամենամեծ մասը փոխադրւում է Անգլիա: Որպէս զի այդ փոխադրութիւնը ստանայ աւելի լայն ծաւալ, դանիացիք էլի գիմեցին ընկերութիւնների: 1887 թուին կազմուեց առաջի ընկերութիւնը իւղի արտահանութեան համար, որին մասնակցեցին 84 կաթի ընկերական գործարաններ, 1899-ին այդ ընկերութեան տարեկան ելեմուտքը հասնում էր 14 միլ. ռուբլու:

1895-ին կազմուեց երկրորդ խոշոր ընկերութիւնը իւղի արտահանութեան համար, իսկ յետոյ ուրիշ աւելի մանրերը:

Սկսուած գործը զարգացաւ աւելի և աւելի: 1887-ին Գանիա կազմեց առաջի ընկերութիւնը միա արտահանելու համար, միև տարին կազմուեցին 7 նոյնանման ընկերութիւններ:

ներկայումս մօխ արտահանութեան ընկերութիւնների թիւը հասնում է 25-ի 56,000 անդամներով, որոնք 1899-ին արտահանութեան համար մտրթած են 730,000 խող, 22,500 մեծատաւար, 17,000,000 ու արժողութեամբ:

Ընկերութիւններին անհրաժեշտ կապիտալը վերցրւած է տոկոսով և ապահովուած անասունների թուի համեմատ: Բոլոր ընկերական սպանդանոցները կապուած են Կոպէնհագէնի կենտրոնական միութեան միջոցաւ, որը մշտական յարաբերութեան մէջ է արտասահմանի հետ և հաղորդում է անդամներին տեղեկութիւններ պահանջի և գների մասին:

Ընկերական սկզբունքը մտած է Դանիա և... ձուի առևտուրի մէջ: 1895 թուին երկու գիւղական ուսուցիչներ (Եօրդենսօն և Մելլէր) սկսեցին գիւղացիների մէջ քարոզել որ արտահանուող ձուերի ժողովելը և ծախելը հարկաւոր է գնել աւելի ագնիւ և կանոնաւոր հողի վրայ և կաղմեցին առաջի ընկերական միութիւնը Մելլէրի նախադասութեամբ: Ընկերութիւնը բացեց ճիւղեր գիւղերում, որոնց անդամները պարտաւորուեցին տալ միայն նոր ածած ձուեր: Զուերը ժողովում են չաբաթը մի անգամ և հսկողութեան համար ձուի վրայ նշանակուած է անդամի և ճիւղի համարը: Ամեն մի հին ձուի համար նշանակուած է տուգանք $2\frac{1}{2}$ ուրլու չափով: Անգլիայում Դանիայի թարմ ձուերը գնահատուած են ամենաբարձր գնով: Ընկերութիւնը սկսեց իր գործը 6 ճիւղերով 2000 հոգու անդամակցութեամբ, իսկ հիմա, հինգ տարուց յետոյ, ունի 365 տեղական ճիւղ 22,000 անդամներով...

Բացի վերը բերած արտահանող ընկերութիւններից Դանիայում արագ կերպով զարգանում են և սպառող ընկերութիւնները, որոնց թիւը այսօր հասնում է 837-ի 130,000 անդամներով: Կոպէնհագէնի կենտրոնական սպառող ընկերութիւնը միացնում է 530 տեղական ընկերութիւններ և նրա կառարած ելիմուտքը 1899-ին հասնում էր 4,400,000 ու:

Եթէ զուամրկլ բոլոր ընկերութիւնների անդամների թիւը, մենք կը ստանանք 370,000, որ նշանակում է թէ Դանիայի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը մասնակից է սպառող և արտադրող խոշոր ընկերական միութիւնների տուած օգուտներին:

Ինչ մեծ ազդեցութիւն ունի ընկերութիւնների զարգացալը և նրանց տուած օգուտը Դանիայի անտեսական գրութեան վրայ—մենք ճշտօրէն չը գիտենք: Յամենայն դէպս պարզ է, որ իննայողական զբամարկողներին մասնակցողների թիւը, ինչպէս և մասնակցութեան գումարը որոշ չափ պարզում է

զանազան երկրների բարեկեցութեան չափը: Եթէ դա այդպէս է, անկասկած պիտի համարել, որ Դանիան այդ կողմից բռնում է առաջնակարգ տեղ: Պարիզի ցուցահանդէսում այդ կողմից համեմատութիւն էր դրուած կուլտուրական ազգերի մէջ: Այդ համեմատութիւնից երևում էր, որ ամեն մի 100 հոգուց խնայողական ընկերութիւնների մէջ մասնակցում էին՝ Դանիա 46, Գերմանիա 26, Ֆրանսիա 25, Եւրոպ. Ռուսաստան 3 հոգի: Խնայուած դրամի չափը ամեն մի անձնաւորութեան վրայ հասնում էր՝ Դանիա 135 ռ., Գերմանիա 69 ռ., Ֆրանսիա 41 ռ., Եւրոպ. Ռուսաստան 7 ռ.:

«Եթէ յենուել այս թուերի վրայ,—վերջացնում է իր խօսքը պրօֆ. Չուպրովը,—դուրս է գալիս որ ոչ թէ միայն մեր հայրենիքը, այլ և տնտեսական զարգացման ճակատին կանգնած երկիրները նախանձելու և օրինակ են վերցնելու փոքրիկ Դանիայից և նրա համեստ հողադորձներից»...

Ս. ԶԱԻԱՆԵԱՆ

Ն. Վ. Գ Օ Գ Օ Լ

(Նրա մահուան յիսնամեակի ունիքով)

Ռուսաց քննադատութեան մէջ մինչև այսօր էլ չեն դադարել վէճեր, թէ ով պիտի համարուի ռուսաց նորագոյն գրականութեան հիմնադիր, Պուշկինը թէ Գօգօլը: Յամենայն դէպս, նոյն իսկ Պուշկինի մոլեռանդ երկրպագուները չեն կարող գրժել, որ Գօգօլի ազդեցութիւնը հազարաւոր գործիչներէ վրայ եթէ բացառիկ չէ եղել, գոնէ այնքան խոր է եղել, որ դրա հետքերը կարելի է նշմարել 50-ական և 60-ական թուականների ամեն մի՝ քիչ թէ չատ աչքի ընկնող բանաստեղծական երևոյթի մէջ: Անկասկած, չնորհիւ այդ ազդեցութեան ռուսաց մատենագրութիւնը անդամնալի կերպով կանգնուէ է ինքնուրոյնութեան և ռեալական նկարագրութեան ճանապարհի վրայ և այն պատկառելի անդն է բռնում համամարդկային մտքի գրաւոր արտայայտութեան մէջ, որ այժմ գրաւած է: Քանի աւելի ենք հեռանում XIX դարի ռուսաց գրականութեան աղբիւրներից, այնքան աւելի է մեծանում մեր աչքում Գօգօլի գեղարուեստական գործունէութեան նշանակութիւնը, և այժմ, երբ նրա մահուան օրից (1852 թ. փետրուարի 21-ին) անցել է յիսուն տարի, հնարաւոր է արդէն այդ նշանակութեան բաղմալիւ կողմերը պարզել:

Զարմանալին հէնց այն է, որ Գօգօլը կարողացել է իր ստեղծագործութիւնները բարձրագոյն կատարելութեանը հասցնել զրեթէ բացառապէս իր քնատուր ձիրքերի չնորհիւ, զրեթէ առանց որ և է օտարազգի ազդեցութեան: Հէնց առաջին փորձերի հրատարակութեան օրից այդ տաղանդը առնչեցնում էր Պուշկինի պէս մարդուն իր ոգեւորութեան անկախութեամբ և արուեստագիտական մտքի ազատութեամբ:

Շատ հետաքրքրական են մի այլպիսի հանճարեղ գրողի հայեացքները բանաստեղծութեան էութեան և նպատակի վրայ,

մանաւանդ որ նրա վիպական և թատերգական հեղինակութիւնները լաւագոյն կողմերը բացատրուում են հէնց այդ էստետիկական տեսութիւններով: Հայերիո համար էլ մի ակնարկ ձգել այդ տեսութեան հիմնական կէտերի վրայ հազիւ թէ աւելորդ բան լինի, քանի որ մեր հասարակական հասկացողութեան մէջ դեռ չարժարժուած են միտում շատ և շատ գեղարուեստագիտական խնդիրներ, իսկ և՛ թէ արժարժուած են, դո՛ւնէ չեն մշակուած ցանկալի ամբողջութեամբ:

Երբ 1828 թ. Նիկօլայ Վասիլևիչ Գօգօլ-Եանովսկին (ծնւում է 1809 թ. մարտի 19-ին Պօլտաւայի նահանգում), աւարտելով Նէժինի լիկէօնը, շտապում էր Պետերբուրգ, նրա մտքով չէր էլ անցնում նուիրուել գրական գործունէութեանը: Ուղիղ է, գեռ աշակերտական նստարանի վրայ նա միշտ արհամարհանքով էր նայում իր այն ընկերներին, որոնց համար կեանքում ոչ մի վեւեմ նպատակ չը կար, և երազում էր սպառնայ փառքի մասին, բայց նա հաւատացած էր, որ այդ փառքը ձեռք է բերելու մի ինչ-որ անձնանուէր ծառայութիւն մատուցանելով հասարակութեանը կամ պետութեանը: Պետերբուրգ հասնելուն պէս նա գէս ու գէն ընկաւ քարձր պաշտօն ստանալու համար, որպէս զի առանց յապաղելու կարողանար իր հայրենասիրական ձգտումները իրագործել: Բայց յայտնի չուտով օչ ցնդուեցին ֆչրուած յայտերով, մալօրօսիական ծննդավայրի կարօտից մաշուելով, նա երևակայութեամբ ուղեց տեղափոխուել իր հայրենի գիւղը, իր Ուկրաինան և գրեց իր «Երեկոներ Դիկանայի մօտ» ազարակում» երկը:

Այստեղ նա իրար վրայ դիգեց այն բոլոր ծիծաղաշարժ միջնագէպերը, սլատկերները, տեսարանները, որոնց մասին սիրում է պատմել մալօրօսը, և ստեղծեց մի այնպիսի չը տեսնուած գրուածք, որը ծիծաղութու թուլացրեց Պուշկինին և ամբողջ Ռուսաստանը: Բայց այս վէպիկները չէին ներչնուած լուրջ նկատումներով: «Ինքս ինձ ցրուելու համար—ասում էր Գօգօլը վերջը իր այս առաջին ստեղծագործութեան մասին—ևս հնարում էի՝ ինչ ծիծաղաշարժ բան որ կարողանում էի հնարել: Հնարում էի ամբողջովին ծիծաղաշարժ դէմքեր և բնաւորութիւններ, ամենամիծաղաշարժ գրութիւններ, ասանց հոգ տանելու այն բանի մասին, թէ ինչի համար է այդ, ո՞ւմն է այդ օգուտ բերելու»:

Մալօրօսիական կեանքից վերցրած վէպիկները մտերմացրին Գօգօլին ժուկովսկու և Պուշկինի հետ: Սրանց չըջանում նա սկսեց գնահատել իր տաղանդը և ձեռք բերեց վսեմ հասկացողութիւն բանաստեղծական կոչման մասին: Պուշկինը ասում էր բանաստեղծի բերանով. «Ոչ թէ աշխարհային յոյգերի, ոչ էլ շա-

հոխնդրութեան և կռուի համար—մենք ծնուած ենք ողորութեան, քաղցր հնչիւնների և աղօթքների համար: Նրա աչքում ստեղծագործութիւնը—նուիրական քրմութիւն էր: Այս հայեացքը յանկարծ յեղաշրջում է Գօգօլի ամբողջ վերաբերմունքը դէպի դրական կոչումը: Նրա համար էլ բանաստեղծը դառնում է Աստուծոյ ընտրեալ և «տաղանդը՝ Աստուծոյ ամենաթանկագին պարգև: Աստուածային, երկնաւոր դրախտի ակնարկ է պահուած մարդու համար գեղարուեստի մէջ և հէնց միայն այս պատճառով գեղարուեստը ամենից բարձր է, և ինչքան անգամ խորհրդաւոր հանդիստը բարձր է ամեն աշխարհային յոյզից, ինչքան անգամ չինարարութիւնը բարձր կործանումից, անքան անգամ՝ աշխարհիս երեսին եղած ամեն բանից բարձր է արուեստի վսեմ ստեղծագործութիւնը: («Պատկեր»): Այսուհետեւ նա բանաստեղծութիւնը մի վեհ կոչում է համարում, որին արժէ ամբողջ կենսքը նուիրել, միայն թէ իր ծառայութիւնը բոլորովին ուրիշ կերպ է հասկանում, քան թէ Պուշկինը: Վերջինս երեսը դարձնում էր ամբողջից, որը իրանից խրատ և բարոյական առաջնորդութիւն էր պահանջում, և արհամարհանքով, նրան եւ էր մղում իրանից, ասելով՝ «Կորէք հեռու, ինչ գործ ունի խաղաղ պօէսը ձեզ հետ: Անուակուլեան մէջ քարայէք համարձակ—չի կենդանայնիլ ձեզ քնարի ձայնը: Ձեր լիմարութեան և չարութեան համար դուք մինչև այսօր մտրակներ, բանտեր, կայքներ էք ունեցել—այս էլ բաւական է ձեզ, անմիտ ստրուկներ»:

Պուշկինը ուզում էր ծառայել միմիայն զուտ գեղարուեստին, ոչ թէ ժողովրդի բարոյական շահերին: Գօգօլի բնութիւնը բողոքում էր այս քրմութեան դէմ: Գեղարուեստը նրա համար ոչ թէ մի եսական պաշտամունք էր, այլ մի շնորհ, որ երկիր է ուղարկուած երկրի համար, մարդոց համար: Նա ամբողջ էութեամբ դիմում էր մարդկային անձնաւորութեան ընկած վիճակը ժամանակակից պարագաների մէջ և հնարաւոր էր համարում վերածնել մարդուն և հասարակութիւնը գեղարուեստի օգնութեամբ: Նրան այդ ժամանակամիջոցում լաւ ճանաչողներից մէկը, Աննենկովը ահա ինչ է գրում՝ նրա անձնական հակումների և բնաւորութեան մասին: «Ամեն տեղ, իր բարեկամական շրջանների մէջ Գօգօլը մի միտք էր բերում, թէ ինչ սարսափելի վնաս է պատճառում ստորաքարշութիւնը, ծուլութիւնը, չարին խրախուսանքը, մի կողմից, և բիրտ ինքնագոհութիւնը, պարծենկոտութիւնը և բարոյական սկզբունքների ոչնչութիւնը, միւս կողմից: Նրա՝ մարդկային խաւար յատկութիւնների հաւաքածման մէջ կար մի կիրք, որ նրա ճշմարիտ բարոյական պատ-

կերն էր կազմում»։ Որոշելով վերջնականապէս ծառայել զրականութեանը, Գոգօլը այժմ թողնում է աննպատակ ծիծաղը և ծիծաղում է կեանքի այն պայմանների վրայ, որոնք մարդու հոգեկան ձգտումները մանրացնում են («Շինէլ»), ամենազուգահեռ զգացմունքներին, բարեկամութեանը, տալիս են այլանդակ կերպարանք («Թէ ինչպէս Իվան Իվանովիչը խռովեց Իվան Նիկիֆորովիչի հետ»), մարդկային ցանկութիւնները սահմանափակում են բուսական կեանքի պահանջներով («Հնադարեան կալւածատէրեր») և այլն։ Եւ այս ծիծաղի միջից օրէց օր աւելի ու աւելի հնչում է ողբ ու կոծ մարդկային սոսնհարուած արժանաւորութեան վրայ։

Գրուածքները խոր տպաւորութիւն էին գործում ընթերցողների վրայ, և հեղինակը ամրապնդւում էր իր համոզմունքի մէջ, որ «իր նրկերը ստեղծելով, ինքը հէնց այն պարտքն է կատարում, որի համար են արուած իրան ընդունակութիւններն և ոյժերը, և որ այդ պարտքը կատարելով, նա միաժամանակ այնպէս է ծառայում իր պետութեանը, կարծես թէ իսկապէս պետական ծառայութեան մէջ լինէր»։

Յիշելու արժանի կէտն այն է, որ Գոգօլի կարծիքով ժողովուրդն է զրական ուսումնասիրութեան հիմնական առարկան և բանաստեղծը պիտի աշխատի բարոյապէս ազդել հէնց ինքն ժողովուրդի վրայ։ Նա «կէս կեանք մտածում էր այն բանի մասին, թէ ինչպէս գրէ ճշմարիտ օգտաւէտ գիրք հասարակ ժողովուրդի համար»։ Մեր օրով էլ մի ուրիշ ոուս հանձարեղ վիպասան, Լև Տոլստոյը, հրաժարուելով իր նախկին գործունէութեան հոչակ ստացած ձեւերից, կամեցաւ լինել պարզ ժողովրդական ուսուցիչ և ժողովուրդի համար գրել Բազմախորհուրդ զուգադիպութիւն։

Մինչև Գոգօլը բանաստեղծական միտքը, նոյն իսկ այն ժամանակ, երբ սնդում էր թէ «կեանքն ու բանաստեղծութիւնը մէկ են», չէր կարող առանց սիրային ընդհարումների հիւսել գրուածքը, նա առաջինն էր, որ հակառակեց այս միակողմանի բովանդակութեանը և գիտէր հետաքրքրական դարձնել իր ստեղծագործութիւնները, բոլորովին չը դիմելով սիրոյ նկարագրութեանը։ Նա ասում էր, որ մարդկային կեանքի մէջ գործել, կռուել, մրցել գրգռում է ոչ միայն սէրը, այլ սիրուց աւելի ուրիշ, շատ ուժեղ նկատումներ, ինչպէս՝ ձգտում դէպի բարձր պաշտօն և փարթամութիւն, շահախնդրութիւն, սնափառութիւն և այլն։ Հասարակական և անհատական կեանքի ամեն երևոյթ կարող է դառնալ բանաստեղծական վերարտադրութեան նիւթ, հաւասարապէս կարող է ծառայել գեղարուես-

տաղէտի վսեմ նպատակին: Գրականութիւնը ստանում էր հասարական, լայն բովանդակութիւն:

Գանի որ հարցը այսպէս էր դրւում, ակներև էր որ պիտի փոխուէր և ստեղծագործելու եղանակը: Միայն ողբերգութեան վրայ յոյս դրած գրել—անհնարին էր: Հասարակութեան խիղճն ու միտքը առաջնորդելու յաւակնութիւն ունեցող հեղինակը պիտի լուրջ վերաբերուի իր զործին, համբերութեամբ քննելով ամեն ինչ, «ամեն ինչ նուաճելով վրձինին» Վառ հոգւով տաղանդը պիտի խորասուզուի ամբողջ էութեամբ իր աշխատանքի մէջ և՛ չը ջրուելով աշխարհային վայելքներով, անձնատուր լինի բնութեան, մարդկային կեանքի և առաջնակարգ հանճարների ստեղծագործութիւնների ուսումնասիրելուն: Այս սկզբունքին հաւատարիմ մնալով, Գօգօլը շատ դանդաղ էր մշակում իր երկասիրութիւնները: Նա ամենայն մանրակրկտութեամբ հաւաքում էր նիւթեր, դիտելով, անձամբ հարց ու փորձ անելով կամ նամակներով տեղեկութիւններ ինչորեւից ծանօթներից և բարեկամներից, հետաքրքրւում էր ամեն մի՝ ըստ երևույթին ամենաանշան մանրամասնութիւնով, անթիւ անհամար տպաւորութիւնները կարգի էր բերում և գրում էր առանց շտապելու երբեմն եօթը ութը անգամ սրբագրելով և կրկին ու կրկին արտադրելով ձեռագիրը: Նա մէկ տարուց աւելի էր աշխատում իր «Քննիչ» (Ревизоръ) կատակերգութեան վրայ և այնուհետև, առաջին ներկայացումից յետոյ, էլի մօտ եօթը տարի անդադար ուղղում էր բնագիրը: Իր «Մեռած հոգիներ» (Мертвые души) հոշակաւոր վիպասանութեան առաջին հատորը նա մշակում էր վեց ու կէս տարի: Միայն այսպէս վերաբերուելով գրական ստեղծագործութեանը, նա աջողում էր իր պատկերներին ու պատմութեանը հմայիչ ուշադրանքով—ճշգրտութիւն տալ: «Իմ նիւթս էր—գրում է նա իր «Հեղինակի խոստովանանքի» մէջ—ներկան և կեանքը իր այժմեան վիճակի մէջ, գուցէ նրա համար, որ իմ միտքս միշտ հակուած է գէպի էականը և գէպի աւելի շօշափելի օգուտը: Ես մտածում էի, որ այժմ աւելի, քան երբ և իցէ, պէտք է լոյս աշխարհ հանել ամենը, ինչ որ Ռուսաստանի խորքումն է, որպէս զի մենք ղգանք, ինչպիսի բազմաթիւ տարբեր տարրերից է կազմուած մեր հողը, որի վրայ մենք բոլորս ձգտում ենք ցանել: Պէտք է որ ոռոս ընթերցողը իսկ և իսկ զգայ, որ դուրս բերուած անձնաւորութիւնը չլինուած է հէնց նոյն այն խմորից, որից և ինքն է ստեղծուած, որ այդ կենդանի և կարծես թէ իր սեփական մարմինն է: Սրա համար հարկաւոր են այն անթիւ մանրամասնութիւնները, որոնք վկայում են, որ վերցրած անձնաւորութիւնը իրաւ որ

ապրել է աշխարհիս երեսին, այլապէս նա կը լինի մտայածին, կը լինի զուհատ և ինչքան առաքինութիւն էլ որ վաթաթեւ վրան, միշտ կը լինի չնչին»:

Գօգօլի կարծիքով, բանաստեղծութիւնը, լինի նա մարդու և հասարակութեան դրական թէ բացասական կողմերը արտայայտող,—նախ և առաջ պիտի հաւատարիմ մնայ ճշմարտութեանը:

Բայց այսքան լայն կերպով հասկանալով դեղարուեստական վերարտադրութեան սահմանները, նա միւս կողմից, խոր համոզուած մարդու մոլեռանդութեամբ, դէմ էր իրականութեան կոյր ընգօրինակման: Միթէ բնութեան ստրկական, բառալի նմանողութիւնը արդէն յանցանք է: Կամ եթէ առնես առարկան անտարբեր կերպով, ասանց նրա հետ զգացմունքով ապրելու, նա անպատճառ կը ներկայանայ միայն իր սարսափելի իրականութեամբ, չը լուսաւորուած՝ մի ինչ-որ անհասկանալի ամեն ինչի մէջ թաղնուած մտքի լոյսով: Ստեղծագործելու ձիրքով օգտուած զորով պիտի զուր չաշխատի: Պէտք է որ նրա ստեղծագործութեան մէջ կեանքը մի քայլ դէպի առաջ անէ: Նա պիտի գիտնայ գտնել ստեղծագործութեան ներքին իմաստը և ամենից աւելի՝ ըմբռնել նրա վեհ գաղտնիքը: Երանի այն ընտրեալին, որը ձեռք է բերել ստեղծագործութեան այս ներքին իմաստը—նրա համար օտար առարկայ չը կայ բնութեան մէջ: Զգուելիի մէջ նրա համար զգուելի բան չը կայ, որովհետեւ աներևոյթ կերպով այդ զգուելիի միջով թափանցում է ստեղծագործողի գեղեցիկ հոգին, և զգուելին արդէն ստացել է վսեմ արտայայտութիւն, որովհետեւ անցել է նրա հոգու զտարանի միջով: Միայն երբ այսպէս իրական պատկերները անցել են բանաստեղծի հոգեկան—բարոյական աշխարհի միջով, միայն երբ այսպէս լուսաւորուել են «ամեն ինչի մէջ թաղնուած մըտքով»,—միայն այն ժամանակ արուեստը կարող է ծառայել իր խակական նպատակին—գեղեցկին և վսեմին: Նա երբէք չէ կարող անբարոյականացնող լինել—նա ձգտում է անպատճառ բարիին—դրական կամ բացասական ճանապարհով, թէ ցոյցի է հանում մարդուս մէջ եղած ամեն լաւագոյնի գեղեցկութիւնը և թէ ծաղրում է մարդու մէջ եղած վատագոյնի անգեղութիւնը: Եթէ ցոյցի հանես մարդուս մէջ բուն զրած ամբողջ կեղտոտութիւնը, և կը հանես այնպէս, որ հանդիսականներէջ ամեն մէկը լիակատար խորշանք կը զգայ դէպի այդ կեղտոտութիւնը—միթէ այդ՝ ամեն լաւագոյնի ջատագովութիւնը չէ, միթէ այդ բարիի դոկասանքը չէ: Տաղանդի ձեռքին ամեն ինչ կարող է

գեղեցկի միջոց դառնալ, եթէ միայն տառջնորդւում է գեղեցկին ծառայելու վսեմ գաղափարով»։

Այս տեսակէտով Գօգօլի համար ծիծաղը նոյնպիսի մի ոյժ է, ինչպիսինն է հիացմունքը։ Նրանից առաջ ոչ ոք ուստայ գրականութեան մէջ նրա պէս բարձր չէր դասած ծիծաղի նշանակութիւնը։ Նրա ընտանուր ձիրքը—հեգնութիւնն էր, և նա ծառայում էր իր այս կոչման ազնուութեամբ և այս պատճառով քաջ պաշտպան էր հանդիսանում բանաստեղծական այդ նոր զօրութեանը։ «Ո՛չ—ասում էր նա—ծիծաղը աւելի նշանաւոր է և խոր, քան թէ կարծում են,—ոչ այն ծիծաղը, որը ծնւում է ժամանակաւոր զրգուծից, մաղձից, բնաւորութեան հիւանդոտ տրամադրութիւնից, նոյնպէս և ոչ այն ծիծաղը, որը ծառայում է մարդկանց պարապ զուարճութեանը և վայելչութեանը—բայց այն ծիծաղը, որը դուրս է թռչում մարդու ջինջ բնութիւնից—դուրս է թռչում, որովհետեւ այդ բնութեան յատկում գետեզուած է նրա յաւիտեան բղիտ աղբիւրը։ Ոչ, ծիծաղել բարի, պայծառ ծիծաղով կարող է միայն խորին կերպով բարի հոգին։ Այդ ծիծաղը ծնուել է սիրուց գէպի մարդը»։ Ճշմարիտ կատակերգուն դիտում է ամբողջ լայն սահող կեանքը, դիտում է աշխարհի աչքին երևելի ծիծաղի և նրա համար աներևոյթ, անյայտ արտասուքների միջոցով»։ Գօգօլը, որ պատասխանատու էր համարում զրոգին ամեն մի արտասանած խօսքի համար և պնդում էր, թէ «վտանգւոր է հանաք անել խօսքի հետ», շատ լաւ տեսնում էր, որ ծիծաղի հետ էլ պէտք է չափազանց զգոյշ լինել, մանաւանդ որ «նա վարակիչ է, և բաւական է որ նա, ով աւելի սրամիտ է, ծիծաղէ դործի մի կողմի վրայ, որ արդէն նրան հետեւելով՝ և նա, ով որ աւելի բթամիտ է և յիմար, ծիծաղէ դործի բոլոր կողմերի վրայ»։

Լուրջ ծիծաղի բնաւորութիւնը որոշելուց յետոյ, Գօգօլը կանգ է առնում նրա նշանակութեան և ազդեցութեան վրայ և գտնում է որ «ծիծաղը խորացնում է առարկան, լոյս աշխարհ է բերում պայծառ կերպով այն, ինչ որ խոյս կը տար աչքից. ստանց ծիծաղի թախանցող զօրութեան՝ կեանքի մանրութիւնն ու դատարկութիւնը այնպէս չէին վախեցնիլ մարդուն, զգուկին և չնչինը, որի մօտով մարդս ամեն օր սնտարբեր հողով անցնում է, չէր ածիլ նրա տառջ այնպիսի ահռելի, գրեթէ չափազանցրած ոյժով, և նա չէր բացականչիլ սարսափահար. «Միթէ կան այսպիսի մարդիկ», մինչդեռ, իրան որ խոստովանեցնես, լինում են աւելի վատ մարդիկ»։ «Ոչ, անարդար են նրանք, որանք ասում են, իբր թէ ծիծաղը չէ աղղում նրանց վրայ, որոնց գէտ ուղղուած է, որ այն անղղամբ առաջինը

կը լինի, որ կը ծիծաղի բեմի վրայ դուրս բերուած անդգամի վրայ—յետնորդ անդգամը կը ծիծաղի, իսկ ժամանակակից անդգամը չի ծիծաղիլ. նա տեսնում է որ ամենքի մտքում տպաւորուել է անդիմադրելի պատկերը, որ մի ստոր շարժում բաւական է իր կողմից, որպէս զի այդ պատկերը դառնայ իր յաւիտենական անունը, իսկ ծաղրից վախենում է մինչև անդամ նա, ով որ ոչնչից չէ վախենում աշխարհիս երեսին»։ Ծիծաղը արթնացնում է հասարակական միտքը, թոյլ չէ տալիս նենջել խելքին, որը «գտնում է վսեմ միջոցների յանկարծակի աղբիւր» մտորուս համար ստույթեան և անարդարութեան խորութիւնից դուրս գալու։ «Առանց ծիծաղի կենդանարար զօրութեան աշխարհը կը քնէր, կ'անդգայանար կեանքը, բորբոսով և տիղմով կը ծածկուէին հողիները»։

Այսպիսի կրթիչ նպատակով և լայն հասկացած աղգասիրութեամբ Գօգօլը մի կոյտի մէջ հաւաքեց, «ինչ որ Ռուսաստանում զեղծում գիտէր, բոլոր անարդարութիւնները, որոնք գործում են այն տեղերում և այնպիսի զէպքերում, որտեղ ամենից աւելի է մարդուց պահանջում արդարութիւն, և մէկ անգամից ծիծաղել այս ամենի վրայ»։ Այս ցանկութեան արդիւնքն է «Բնինիչ» կատակերգութիւնը։ Նոյն ձգտումը նրան զբաղեց յետոյ ընտրել «Մեռած հողիներ» վիպասանութեան համար մի այնպիսի հերոս, որի մասին բոլոր տիկիւնները, երեսը շուտ տալով, կ'ասեն. «Ֆիլ, ինչ վատն է»։ Նա չէ կարող հերոս վերցնել առաքելի մարդուն, որովհետեւ «Ժամանակ է վերջապէս դադար տալ խեղճ առաքելի մարդուն, որովհետեւ ձի են շինել այդ առաքելի մարդուն, և մի զրոգ չը կայ, որ չը հեծնէր նրա վերայ, որովհետեւ չեն յարգում առաքելի մարդուն։ Ո՛չ, ժամանակ է վերջապէս, լծել և խաբեբային»։

Գօգօլի այս փորձը զարհուրելի տպաւորութիւն գործեց հասարակութեան վրայ։ Նրա գլխին թափուեցին ամեն տեսակ մեղադրանքներ—և թէ մարդասէր չէ, և թէ աղգատեսաց է, և թէ քանդում է ռուսաց հասարակական կեանքի և պետութեան հիմքը։ Այս զրպարտանքները ապշեցրին երդիծարանին, և նա վշտանում էր, թէ ինչո՞ւ հիացմունքով են վերաբերում կեանքի գրաւիչ կողմերը նկարագրող հեղինակին և զայրոյթով՝ մարդկային ստորութեան և մանրութեան պատկերահան կատակերգուին։ Եւ նա գրում էր. «Երջանիկ է այն հեղինակը, որը, անցնելով տաղտկալի, զգուշի բնաւորութիւնների քովից, մօտենում է մարդուս վսեմ արժանաւորութիւնը ապացուցող բնաւորութիւններին, որը ամեն օր վիտոզ պատկերների մեծ խառնարանից ընտրել է միայն փոքրաթիւ բացառութիւնները,

որը երբեք չէ դաւաճանել իր քնարի վեհ լարուածքին և՛ չը դիպչելով գետնին, ամբողջովին տարուած է իր՝ երկրից հեռու պոկած վեհ պատկերներով: Հեռու և ազմկալի տարածւում է նրա փառքը երկրիս երեսին, մեծ, համաշխարհային պօէտ ևն անուանում նրան: Հաւասարը չը կայ նրան զօրութեամբ, — նա Աստուած է: Բայց այսպէս չէ և ուրիշ է այն հեղինակի ճակատագիրը, որը յանդգնել է երևան հանել այն ամենը, ինչ որ ամեն բոլորէ աչքերի առջևն է և ինչ որ չեն տեսնում անտարբեր աչքերը — մեր կեանքը խճողող մանր-մունր հոգսերի ամբողջ ահռելի, զարհուրելի տիզմը, սառն, բեկուած, ատօրեայ, վիտուղ բնաւորութիւնների ամբողջ խորութիւնը, և պայծառ որը յանդգնել է այս ամենը դուրս բերել կտրուկ կերպով, հրապարակական աչքերի առջև: Նա չի արժանանալ ժողովրդական ծափահարութիւնների, նա չի խոյս տալ ժամանակակից դատաստանից, որը չնչին և ստոր կ'անուանի նրա փայփայած ստեղծագործութիւնները և նրան տեղ կը յատկացնի՝ մարդկութիւնը անարդող հեղինակների շարքում, կը դրժի նրա մէջ և՛ սիրտ, և՛ հոգի, և՛ տաղանդի աստուածային բոցը, որովհետեւ չէ ճանաչում ժամանակակից դատաստանը, որ վսեմ, հոգեզմայլ ծիծաղը արժանի է դասուելու վառ քնարերգական զգացմունքի կողքին:

Դառնութիւն և միայնակութիւն էր զգում Գօգօլը իր սկսած ասպարէզի վրայ, բայց արդեօք չափազանցութիւն չէր այս: Նրա գործունէութիւնը պախարակողների շարքը, ուղիղ է, խիտ էր, բայց և երկրպագուների թիւը մեծ էր, և սրանց մէջ կային այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս քննադատ Բէլինսկին, Մայկովը և մի խումբ նոր սկսնակ տաղանդներ, որոնց յետոյ վիճակուեց 50-ական և 60-ական թուականներում շարունակել նրա սկսած գործը:

Մայկովը այսպէս է բնորոշում Գօգօլի գրուածքների ազդեցութիւնը. «Խորին հետաքրքրութիւն, որ արծածել էին «Մեռած Հոգիները» գէպի ժամանակակից կեանքի ուսումնասիրութիւնը, դրդեց ամեն մէկին հասարակ և խելացի գործունէութեանը դիմելու: Ամենքը սկսեցին փորել և քանդել իրանց՝ մինչ այդ նիրհող և ծոյլ կեանքի տակ: Միայն չորս տարի է անցել «Մեռած Հոգիների» առաջին հրատարակութեան օրից — և դեռ ևս ոչ մի հնարաւորութիւն չը կայ որ և է ողջամիտ, կենդանի դադափար զարգացնել, չը յիշելով տասնեակ հատուածներ ժամանակակից կեանքի հասկացողութեան այդ աննման բանալիից: Ամեն մէկը դուրս է բերել Գօգօլի գրքից գոնէ մէկ կենդանի խօսք, որ և շարունակ կրկնում է, անհանգստութիւն

զգալով այդ խօսքից, իբրև մի իրողութիւնից, որից կախուած է իր դիրքը աշխարհիս երեսին, իր բարոյական պատկերը: Եւրեան եկաւ զարմանալի փոփոխութիւն ոչ միայն գրականական հասկացողութիւնների մէջ, այլ ևս խօսակցական լեզուի մէջ և նոյն իսկ ներկայ հասարակութեան կէսի կենցաղավարութեան մէջ»:

«Անկախ, քննադատող, բողոքող անձնաւորութեան ոյժը ոտքի կանգնեց կեղծիքի, տապալուութեան դէմ, ընդդէմ այն կեղծ-ընդհանուրի, սխալ-օրինականացրածի, ինչ որ խելացի իրաւունքներ չունէր անձնաւորութիւնը իրան ընկճեցնելու»: (Տուրգենև): Այսպէս դիւթիչ ազդեցութիւն ունեցաւ Գօգօլի ծիծաղը և երգիծանքը առաջագէմ և մատաղ մտքերի վրայ, որոնք արթնացած քննադատական հոգով մօտեցան կեանքի ամեն երևույթին և սկսեցին խորտակել այն, ինչ որ կաշկանդում էր հասարակական և անձնական առողջ զարգացումը: Բայց այս ուղղութիւնը սարսափի մէջ գցեց նրա սկզբնապատճառ եղող հեղինակին, որը տեսնում էր, թէ ինչպիսի կոիւ է յայտարարւում ճորտութեան, դատաստանական անարդարութեան, դատակարգային անհաւատարութեան, իրաւագործութեան և այլ այսպիսի տխուր երևույթների դէմ նոր «առաջագէմ» կոչուած ոյժերի կողմից: Գօգօլը վախենում էր այս կուռի անսպասելի ընթացքից: Միաժամանակ նրա հոգեկան աշխարհի մէջ տեղի էր ունենում արմատական փոփոխութիւն, որը աւելի ևս հեռացնում էր նրան ռուսաց կեանքի նորագոյն հոսանքներից: Այն միտքը, թէ մի բան ծաղրելուց առաջ պէտք է լաւ ուսումնասիրել մարդկային հոգին, որպէս զի ծիծաղելով մեր ընտելութեան պակասութիւնների վրայ, ծաղրի չենթարկենք յիստամաք և այն, ինչ որ կազմում է նրա արժանաւորութիւնը — այս միտքը նրան զրգեց աւելի կենտրոնանալու հոգեկան ինդիւիդների վրայ, և նա աննկատելի կերպով եկաւ Քրիստոսի մօտ, մանաւանդ որ մանկութիւնից արդէն, մօր ազդեցութեան չնորհիւ, միշտ աչքի էր ընկնում բարեպաշտական հակումներով: Այժմ նա կեանքի բարդ երևույթները գիտութեան օգնութեամբ լուսաբանելու փոխարէն, այն համոզմունքն է կաղմում, որ մաքուր յաւիտենական գրուածք ստեղծելու համար պէտք է նախ և առաջ մաքրել հոգին ամեն աշխարհային ունայն ցանկութիւնից ու մեղքից, և իր կամքի ամբողջ զօրութիւնը ուղղեց այս կէտերի վրայ, նոյն իսկ գնաց Պաղեստինէ, Երուսաղէմ, կարծելով որ այնտեղ տեղի է ունենալու իր ներքին կեանքի վերջնական զտումը: Այսպիսի վիճակի մէջ նա ձգտում էր հաշտութիւն քարոզել ռուսաց կեանքի հետ, և նրա

գեղարուեստական հայեացքների մէջ նկատուում է մի նոր և տարօրինակ հնչիւն: Նա ասում էր. «Ամենքին հանգստացնելու և հաշտեցնելու համար է աշխարհ իջնում գեղարուեստի վսեմ ստեղծագործութիւնը»: Առաջ նա նկարագրում էր մարդկային մանրացած բնաւորութիւնները, կեանքի աղտոտութիւնները և հեգնութեան ոյժով քողը պոկում էր այն հաղար ու մի մանր ձգտումներից, շահերից և զգացմունքներից, որոնք իսկապէս կազմում են մեր ամենօրեայ կեանքը: Նա պատկերացնում էր մի որևէ մոռացուած աշխարհի ծերունի կալուածատէրերին, որոնց ցանկութիւնները աւելի հեռու չէին թռչում, քան թէ իրանց տունը չըջապատող ցանկապատն էր, և որոնց բոլոր մտքերը միայն ուտել խմելու վրայ էին կենտրոնացած: Նա ներկայացնում էր մանր աստիճանաւորի, մի յետին գրագրի հոգեկան աշխարհ, ուր նոյն իսկ մարդկային վեհագոյն յատկութիւնը, անյագ ձգտումը դէպի իդէալը և անձնանուէր ծառայութիւնը գաղափարին, ստանում է այլանդակ կերպարանք, դառնալով մի վերարկուի շուրջը: Գաւառական քաղաքի ծառայողների կաշառակերութիւնը, շահամոլութիւնը, կեղեքումները՝ օրէնքի սրբութեան և աղգասիրական խօսքերով քողարկուած, արգարութեան և ամենայն մարդկային արժանաւորութեան արհամարհանք—հաւ Գօգօլի հռչակաւոր «Բննիչ» կատակերգութեան նիւթը: Յետոյ «Մեռած Հողիների» մէջ նա անցաւ նահանգական քաղաքի պաշտօնեաներին և ռուս կալուածատէրերին, այդտեղ ևս չեչտելով այն պակասութիւնները, որոնք վիրաւորական են մարդու բարձր կոչման համար: Այսպիսի պատկերներով նա միայն կարող էր գրգռել հասարակական անշարժացած միտքը և քարացած խիղճը, հրաւիրելով ներքին վերածնութեան և հասարակական կարգերի փոփոխութեան: Իսկ երբ այս քարոզութիւնը սկսեց հասնել նպատակին, ամեն տեղ արծարծելով քննադատական ոգի, նա թողեց հին ուղղութիւնը, անուանելով նրան մեղսնչական, և ձեռնամուխ եղաւ կեանքի այնպիսի երևոյթների նկարագրութեանը, որոնք պիտի հաշտեցնէին ներկայի հետ: Նա ուղեց «Ուրիշ խօսքերի որոտը որոտացնել», ստեղծելով՝ «աստուածային առաքինութիւններով օժտուած տղամարդու կամ հրաշալի ռուս աղջկայ վեհ պատկերը, աղջկայ, «որի նմանը չի գտնուի աշխարհիս երեսին, որը՝ չքնաղ գեղեցկութեամբ հանդերձ, ամբողջովին վեհանձն ձգտում է և յափշտակութիւն»: Բայց այսպիսի պատկերներ նա պիտի ստեղծէր իրանից համապատասխան գծերը չը գտնելով՝ չըջապատող իրական կեանքի մէջ—և ի հարկէ այս ճիգը ապարդիւն պիտի անցնէր, միայն կեղծիք ծնելով: Անտարակոյս, Գօգօլի հանճա-

ըը մեծ ծաւալ ունէր: Դեռ պատանեկական հասակում նրա մէջ ընկերակիցները նկատում էին «մարդուն ամբողջովին իմանալու ձիրքը, իմանալու, ինչ է նա ասելու այս և այն դէպքում, պահպանելով նրա մտածողութեան նոյն խիղձը ու եղանակը»: Պուշկինն էլ զարմանում էր Գոգոլի այն բացատրիկ ընդունակութեան վրայ, որով նա «մարդու ծուծն էր հասկանում և մի քանի գծերով պատկերացնում էր նրան, կարծես կենդանի»: Ինքն էլ լաւ ճանաչում էր իր խօսքի պատկերական նկարչականութիւնը, հայեացքի առիւծային զօրութիւնը, քնարական զգացմունքի բարձրացնող ոյժը, հեգնութեան ապշեցնող ոյժը և հասկանում էր որ իր գծած պատկերները այնպէս ամուր և խորն են նստում գլխի մէջ, որ քննադատները ոչնչով նրանց այնտեղից չեն քշել»:

Բայց, միւս կողմից, Գոգոլը ինքը խոստովանւում էր, որ երբեք ոչինչ չէ ստեղծել երեւակայութեան մէջ, որ իր զրչի տալից միայն այն է լաւ գուրս եկել, ինչ որ վերցրած է իրականութիւնից, իրան յայտնի փաստերից: Մարդուն իմանալ նա կարող էր միայն այն ժամանակ, երբ իր առաջ կանգնած էին նրա արտաքինի բոլոր ամենափոքր մանրամասնութիւնները: Նա երբեք չէ գրել պատկեր, իբրեւ լոկ ընդօրինակութիւն. նա ստեղծում էր պատկեր, բայց ստեղծում էր բանականութեան, ոչ թէ երեւակայութեան օգնութեամբ բաւական էր որ մի քանի մանրամասնութիւն բաց թողնէր, աչքի չառնէր, և կեղծութիւնը նրա մօտ աւելի պայծառ էր նշմարւում, քան թէ ուրիշի մօտ:

Զարմանալի բան է ուրեմն, որ երբ Գոգոլը կամեցաւ թողնել իր՝ կօմիական հեղինակի կոչումը և հաշտութիւն ու խաղաղութիւն մտցնել հասարակական բորբոքուած մտքի մէջ, նա չէր կարող իր նպատակին հասնել: Նրա իդէալական, հրապուրիչ կերպարանքները գուրս էին գալիս չինծու, կկանքի մէջ նա չէր գտնում բաւականաչափ տպաւորութիւններ այդ օրինակ մաքուր բնաւորութիւններ ստեղծելու—գոնէ նրա աչքը ի բնէ սովոր էր և ընդունակ էր աւելի բացասական կողմերը նշմարելու—և «Մեռած Հոգիները» երկրորդ հատորը, ուր պիտի տեղ գտնէին այդ նկարագրութիւնները, շարունակ չէր գոհացնում հեղինակի ճշմարտասէր ճաշակին. նա երկու անգամ այրեց իր վիպասանութեան այս մասի՝ տպագրութեան պատրաստ ձեռագիրը:

Այսպիսով սկսած 1842 թ. տասը տարի, մինչև մահը,—կանգ առաւ նրա ստեղծագործական տաղանդի արդիւնաբերութիւնը: Նրա գեղարուեստը լռած էր հասարակութեան համար—

Լոյս տեսած «Նամակագրութիւնը ընկերների հետ» արդէն գեղարուեստական արտադրութիւն է, այլ մի կրօնական-հասարակական քարոզչութիւն, խրատական յաւակնութեամբ:

Բէլլինսկին և ամբողջ ընթերցող հասարակութիւնը տեսան, որ Գօգօլը դաւաճանել է իր նախկին նշանաբանին և որ նրա մէջ մի այնպիսի հոգեկան յեղափոխութիւն է տեղի ունեցել, որ սպառել է նրա ստեղծագործական ոյժը, և Գօգօլը թէև կենդանի արդէն իջել է գրական ասպարէզից: Նրանք իրանց զայրոյթը չը ծածկեցին և բացարձակ կերպով, հրապարակօրէն յայտնեցին իրանց կսկիծը և ցաւը: Բայց հէնց այդ ժամանակ մատաղ տաղանդների մի ամբողջ խումբ խլեց Գօգօլից այն դրօշակը, որը սկսել էր նրա ձեռքին տատանուել, և աւելի բարձր պահելով, համարձակ առաջ դնաց, չը վախենալով կոռոււլուց և այն ամենը քանդելուց, ինչ որ արմատից փտած էր և նեխուած:

Գօգօլի արտասահման եղած ժամանակ (1836-ից յետոյ) ուստայ հասարակական մտքի զարգացման մէջ տեղի ունեցան մեծ յեղաշրջումներ: Այդ միջոցին վերագարձան արտասահմանից երիտասարդ գիտնականներ, որոնք մէկ անգամից կենդանացրին համալսարանական դասատուութեան բոլոր ճիւղերը և գիտնական նոր եղանակներ գործ դրին Ռուսաստանի տնցեալն և ներկան ուսումնասիրելու համար: Միւս կողմից, անկախ այս մտաւոր հոսանքներից, եւրոպական փիլիսոփայութեան և հասարակական տեսութիւնների ազդեցութեան ներքոյ, կազմուեցին ուսանձին գրականական շրջաններ, որոնց նախատէր էր ոչ միայն սրարդարանել գեղարուեստի ընդհանուր հարցեր, այլ և մշակել որոշ հասարակական աշխարհայեցողութիւն: Առաջացան Ստանկեւիչի և Բէլլինսկու, Հերցէնի և Կաւօնասէրների շրջաններ, որոնք իրանց տարբերութեամբ հանդերձ՝ մի բանի մէջ մօտենում էին իրար—այն բանի մէջ, որ բոլորն էլ ձգտում էին գիտակցօրէն վերաբերուել հայրենիքի կեանքի հասունացած խնդիրներին, ինչպէս էին օր. դասակարգների փոխադարձ յարաբերութիւնը, պետութեան վարչական ոյժը, ճորտերի ազատութիւնը, մամուլի վիճակը, դատարանի անկախութիւնը, տեղական ինքնավարութիւնը և այլն: Գօգօլը դուրս մնաց այս շարժումներից, մասամբ այն պատճառով որ երկար ժամանակ ապրում էր հեռու, արտասահմանում, մասամբ էլ հոգեկան, ճիւղաւորական յեղափոխութեան պատճառով, որի շնորհիւ գրականութիւնը այժմ նրան թւում էր աշխարհային ունայնութեան նոր ձև. բայց գլխաւոր պատճառն այն էր, որ նա սկզբից եւեթ շատ քիչ գիտնական նախապատրաստութեան

տէր էր և այս պակասութիւնը ինքը միշտ զգում էր ու լաւ հասկանում էր, որ անհրաժեշտ է «լրթութիւնը լրացնել և վերածնունդ, իբրեւ սեփական երկրի քաղաքացի»:

Զարգացող կեանքը նրա առաջ դնում էր նոր պահանջներ և պէտք էր հարցերը լուծել ոչ միայն ընդհանուր մարդասիրական բնազդների օգնութեամբ, այլ բազմակողմանի ուսումնասիրութեամբ, որի համար հարկաւոր էր զիտութիւն. իսկ Գօգօլը, հասարակական, հոգեբանական, իրաւաբանական և այլ այսօրինակ զիտութիւններին զիմելու փոխարէն, ուրիշ տեղ էր որոնում մտքի լուսաւորում, յայտնութիւն—ներքին բարոյական, ճշնաւորական ինքնակատարելութեան մէջ: Վերջերքը նա այն գաղափարի էր, որ բանաստեղծը նման պիտի լինի այն նկարչին, որը հեռացաւ անապատ, «որպէս զի մենակ մնայ»: Այնտեղ նա ուտում էր միայն արմատներ, քարեր էր տեղափոխում մի տեղից միւսը, կանգնում էր արեւի ծագելուց մինչև մայր մտնելը միևնոյն տեղի վրայ դէպի երկինք պարզած ձեռներով, կարդալով անդադար աղօթքներ և մաշելով իր մարմինը և միևնոյն ժամանակ ամրացնելով նրան աղօթքի կենարար զօրութեամբ: Եւ ապա նա վրձինն առաւ և ստեղծեց մի հրաշալիք».. Այս ճանապարհով փորձեց դնալ ինքը Գօգօլը և հեռացաւ իրականութիւնից, կորցնելով ստեղծագործական ոյժի զիւրըմբռնողութիւնը:

Բայց այնուամենայնիւ նրա նախկին տեսական հայեացքները և առաւել ևս նրա գեղարուեստական երկերը դեռ չէին կորցնում իրանց ահագին նշանակութիւնը նոր հանդէս եկած գրական գործիչների համար: Տուրգենևիւի, Դոստօևսկու, Գրիգորովիչի, Օստրովսկու, Նեկրասովի, Տօլստոյի սուղին հեղինակութիւնների մէջ կարելի է ցոյց տալ անհամար հետքեր Գօգօլի գաղափարների և ուղղութեան ազդեցութեան: Դոբրօլուբովը, հէնց Գօգօլի մահուան թուականին, 1852-ին, այսպէս է գրում իր ժամանակակից գրականութեան մասին. «Գօգօլից սկիզբն է առնում ամբողջ այն բաղմատեսակ, աւելի կամ պակաս աջողակ բազմակողմանի վերլուծութիւնը առօրեայ, մեզ չըջապատող իրականութեան երեւոյթների, որին անպատճառ ձգտում է ներկայ գրականութեան զարգացումը. ամենը, ինչ որ կենդանի բան կայ ժամանակակից գրականութեան երկերի մէջ, ամենը այստեղից է իր սկիզբն առնում»: Հասկանալի է թէ ինչո՞ւ Տուրգենևիւն, ստանալով Գօգօլի մահուան լուրը, գրում էր. «Գօգօլը մեռել է:—Ո՞ր ոուս հոգին չի սարսի այս երկու բառերից: Այո՛, նա մեռել է, այն մարդը, որին մենք

այժմ ունենք իրաւունք, դառն իրաւունք, որ մահն է մեզ տալիս, անուանել մեծ. մարդը, որը իր անունով կոչեց մեր գրականութեան պատմութեան մի շրջան. մարդը, որով մենք հպարտանում ենք, որպէս մեր փառքերից մէկով»:

Եւ Տուրգենեւը իրաւունք ունէր հպարտանալու: Գօգօլի վեղարուեստական հայեացքներն ու ստեղծագործութիւնները օգնեցին ոռոսաց գրականութեանը ինքնուրոյն ընթացք բռնելուն հասարակական նոր ոյժ դառնալու. մի ոյժ, որ հայրենի երկրի ու ժողովրդի անձնանուէր սիրով ներշնչուած՝ իր վրայ է առել հասարակութեան բարոյական վերածնութիւնը:

ՍՏ. ԼԻՍԻՃԵԱՆ

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Մեր ժողովրդի սնոտիահաւատութիւնը.— Ու՛ր է մեզատրը.— Երկրաշարժի հիմնական պատճառը. — Նախազգուշական միջոցների նշանակութիւնը.— Բժիշկների VIII Պիրօղովեան համաժողովից մի քանի տեղեկութիւններ.— Ինքնավարութեան դերը ժողովրդի կեանքում.— Փոքրիկ ինքնավարական սաղմեր՝ ծուխ, հոգարարձութիւն.— Ժողովրդի ինքնավար իրաւունքների պաշտպանութիւնը մեզանում.— † Ստ. Իւզըաշեան.— Բէալիստների մուտքը Բժշկական ակադէմիա.— Լուսաւորութեան միփաստի հրամանը Մոսկուայի համալսարանի ուսանողական անկարգութիւնների առիթով:

Յունուարի 31-ին տեղի ունեցած երկրաշարժը զգացուեց Անգրկովկասի ամբողջ արեւելեան մասում. Թիֆլիս, Բաղու, Դերբենդ, Շուշի—ահա այդ շարժի շրջանագիծը որոշող կէտեր, եթէ կենտրոնը համարենք Շամախին:

Այս համարի «Գաւառական» բաժնում ընթերցողը կը ծանօթանայ ընտելեան հասցրած այդ վնասների մանրամասնութիւնների հետ, որոնք անշուշտ արդէն յայտնի են լրագրներից. մենք կը ցանկայինք այստեղ միայն կանգ առնել մեր ժողովրդի երկու բացասական առանձնայատկութիւնների վրայ, որոնք այնքան որոշ կերպով արտայայտուեցին բնական արհաւիրքի դիմաց: Այդ առանձնայատկութիւններն են՝ սնոտիապաշտութիւնը և փատուլիզմը:

Ժողովրդի մէջ պտտող սնհեթեթ սնոտիապաշտութիւնների մասին զաղարիար են տալիս «Новое Обозрение» լրագրում բերուած մի քանի նմուշները: Իսկապէս զարմանալու ոչինչ չը կայ, եթէ սարսափահար կզած ժողովուրդը, չունենալով ճիշտ գիտութիւնից ոչ մի տեղեկութիւն, իր խաւար ուղեղում և անասնձ երեւակայութեան մէջ աշխատում է գերբնական բացատրութիւններ գտնել երկրի անթափանցելի խորքերում, սանդարամետում, կատարուած երեւոյթների համար: Ժողովուրդը մեղաւոր չէ, եթէ նա անմաս է մնացել քաղաքակրթութեան

ամենամեծ բարիքից՝ լուսաւորութիւնից: Ծաղրի արժանի են այն բոլոր մարդիկ, որոնք արդարացի և բնական են համարում որ համամարդկային բարիքից—լուսաւորութիւնից—օգուտում են միմիայն մի խումբ առանձնաչնորհեալներ: Դատաւիտութեան արժանի են այն հանգամանքները, որոնք արգելք են եղել դիտութեան ճառագայթների առատ և ազատ թափանցման ազդարնակութեան բոլոր խաւերի մէջ: Իսկ այժմ դպրոցազուրկ, անգրագէտ մասսայից ինչ էք պահանջում: Միթէ նա է մեղաւորը:

Մարդուս առողջ դատողութիւնը,—իսկ այդ յատկութիւնը ժողովրդի մարդու, մի Սանխօ-Պանչօի մէջ, յաճախ աւելի է զարգացած, քան շատ ինտելիգէնտների մէջ,—երբէք աւելի հասկանալի, խելքին աւելի մօտ բացատրութիւնը թողած չի ընկնիլ անհեթեթութիւնների յետևից: Ինչո՞ւ, օրինակ, այժմ էլ հիւանդութիւնը այլ ևս չեն բացատրում դեւերի, չար ողիւների գործունէութեամբ—Որովհետեւ աւելի պարզ, աւելի հասկանալի գիտական բացատրութիւնները բաւականաչափ ընդհանրացած են ժողովրդի գիտակցութեան մէջ: Նոյնը կը լինի նաև ամեն մի բնական երեւոյթի նկատմամբ, եթէ գիտական բացատրութիւնները տարածուեն ժողովրդի մէջ: Ոչ ոք չի սկսիլ «երկնային նախագգուչութեամբ», «Ալլահի բարկութեամբ» և այլ գերբնական միջամտութիւններով մեկնել, օրինակ, տենդը, դսղոյը, երբ մի չնչին վնաս, քիմիքը, զօրութիւն ունի ամբողջ «երկնային» ցասումները... Երկրագնդի զոյգի կամ սասանումների ժամանակ էլ հանգիստ կը թողնեն Ալլահին էլ, ճակատագիրն էլ, եթէ տգէտ մարդկանց յայտնի լինեն այդ երեւոյթների բնական պատճառները:

Բարեբախտաբար դիտութիւնը միանգամայն անգէտ չէ երկրաշարժների հարցում, ուստի «դիտութեան մոանկութեան» մասին չարախնդաց ակնարկները պէտք է զուր կտրչեն... Ի հարկէ, դիտութիւնը չի քաշուում առաջուց յայտնել որ նա միայն հաւանական և ճշմարտութեան շատ մօտ է համարում իր տուած բացատրութիւնները և նա միաժամանակ չի զաղարում նորանոր հետազօտութիւններով աւելի ևս պարզել դեռ մութ մնացած կէտերը, բայց և այնպէս այն՝ ինչ որ իմացել է մարդկային միտքը բնութեան այդ զաղտնիքից, բոլորովին բաւական է չանհանգստացնելու համար «երկնային» անյայտ զօրութիւնները...

Աշխատենք ընդհանուր սխեմատիկ զաղափար տալ դիտութեան տուած բացատրութեան մասին:

Մեր երկիրը մի քանի տասնեակ միլիօն տարիներ առաջ՝

սովորելով իր մայր-ծնող արեգակից, մի հրագունդ էր, ամբողջապէս հալուած նիւթերի մի զանգուած: Պտտելով մայր-ծնողի շուրջ, մանուկ երկրագունդը կամայ-կամայ սկսեց սառչել, իր տաքութիւնը ճառագայթելով անհուն տարածութեան մէջ: Այդպիսով միջատեղային սառն տարածութեան մէջ դարերի ընթացքում այնքան առաջ գնաց երկրի պաղումը, մինչև որ նրա մակերեւոյթը սառչելով ծածկուեց քարային կեղեւով: Այդ հողային կեղևը քանի գնում հաստանում էր, որովհետև աւելի և աւելի էր սառչում երկրագունդը: Բայց յայտնի է որ տաք մարմինները պաղելով սեղմւում են և աւելի փոքր ծաւալ ստանում: Ուրեմն, սառած կեղևի տակ գտնուող երկրի տաք միջուկը պաղելով պէտք է աստիճանաբար փոքրանայ իր ծաւալով: Արդ, դժուար չէ երեւակայել թէ ինչ պէտք է լինի երկրի քարացած կեղևի հետ, երբ նրա տակ գտնուող կենտրոնական զանգուածը կծկուի, սեղմուի: Ի հարկէ, կեղևն ևս պէտք է յարմարուի այդ կծկումներին. իսկ ինչ հետեւանքներ պէտք է ունենայ քարային հաստ կեղևի այդ կծկումը. անշուշտ պէտք է երկրի մակերեւոյթի վրայ առաջանան ծալքեր, կնճիռներ. երկրի վիթխարի շերտերը տեղ-տեղ պէտք է ճեղքուեն, առաջացնելով սոսկալի պայթումներ, որոնց արձագանքը պէտք է հասնի կեղևի մակերեւոյթի վրայ սպրողներիս իբրև ստորերկրեայ հարուածներ և որոտումներ...

Երկրի կեղևը ամեն տեղ, ի հարկէ, միևնոյն հաստութիւնը, միևնոյն տաքութիւնը և հանքային կազմութիւնը չունի. ծովերի, ովկիանոսների եզերքներում հաւանական են աւելի անկայուն շերտեր. այդ է պատճառը որ պառաւոզ երկրի երեսին կնճիռներ կամ լեռնաշղթաներ են զարգանում որոշ գծերով: Երբ երկրի կեղևի ճեղքուածքները խոր են լինում՝ այդ պատուածքներից դուրս են ժայթքում լաւայի նման երկրի խորքերում ճնշուած տաք զանգուածները և մենք ստանում ենք հրաբուխներ, ինչպէս տեղի ունեցաւ այդ և Շամախու երկրաշարժի ժամանակ:

Այսպէս, ուրեմն, երկրաշարժի հիմնական պատճառը երկրի աստիճանաբար պաղելն է, որից նրա կենտրոնական մասսան կծկւում է և առաջացնում վերևի ամուր շերտերում զանազան յեղաշրջումներ:

Աւելի սակաւ է տարածուած երկրաշարժը մի այլ պատճառից. երբեմն երկրի խորքերում ստորերկրեայ ջրերի չրջանառութիւնից գոյանում են լուծուած հանքերի տեղերում խոռոչներ, քարանձաւներ, որոնց փլումից ևս կարող են առաջանալ ցնցումներ, երկրաշարժ: Բայց այդ պատճառից առաջացող եր-

կրաշարժները երբեք մեծ ծաւալ չեն ստանում: Աւելի տարածուած և երկրազնդի կեանքի մշտական մի պրօցեսս է այն ցնցումը, որ առաջանում է մեր մոլորակի աստիճանական պաղումից: Երկրաբանները առանձին գործիքներով (սէյսմոմետր) միշտ զիտելով երկրի տատանումները հաստատում են, որ ամեն օր, ամեն ժամ նկատուում են երկրի զանազան մասերում թեթև տատանումներ, իսկ մարդիկ ուշադրութիւն են դարձնում միայն արտակարգ ցնցումների վրայ: Այսպէս, օրինակ, մեր մարմնի տաքութիւնը ևս օրուայ ընթացքում տատանումների է ենթարկւում, սակայն մենք ուշադրութիւն ենք դարձնում մեր մարմնի տաքութեան վրայ միայն այն ժամանակ, երբ նրա տատանումները արտակարգ են դառնում:

Մեր նպատակից դուրս է աւելի մանրամասն խօսել երկրաշարժների մասին, մենք միայն ուզում էինք ցոյց տալ, որ զիտութիւնը երբեք մտադիր չէ զինաթափ լինել նոյն իսկ ամենաանհղ երևոյթների առաջ: Ուսումնասիրելով երևոյթը, նա իր յոյսը չի կորցնում՝ ժամանակով հասնել այնպիսի կատարելութեան, որ մօտալուտ աղէտի գուշակումը հնարաւոր դառնայ: Աւելին կ'ասենք. զիտութիւնը կարող է սովորեցնել մարդկանց՝ այնպիսի նիւթերից և այն ձևով տներ կառուցանել, որ ամենամեծ ցնցումներին անգամ ղոհերի թիւը չնչին լինի:

Ինչու խօսերան և ժանտախտը այժմ չեն համարձակւում առաջուայ նման արշաւանքներ կատարել Եւրոպայում—Որովհետև մարդը այլ ևս երկնքի պատուհաս չի համարում համաճարակները և լայ ու կոծի, աղօթքի փոխարէն գործադրում է դեպինֆեկցիա, բժշկական միջոցներ. որովհետև նա սանիտարական, նախազգուշական միջոցներ է ձեռք առնում: Միթէ զժուար էր երկրաշարժի դէպքումն էլ որ եղած փորձերից խրատուելով մեր շամախեցիները, փոխանակ ճակատագրի վրայ յոյս դնելու, մի կողմ թողնէին «աթաղան-բաբաղան» մնացած սովորութիւնը՝ քար ու ցեխից խարիտու տներ շինելը, և սովորէին փայտ ու երկաթից, մասնագէտների ցուցմունքների համեմատ, տներ կառուցանել:

Այդ մասնագէտներին՝ ճարտարապետներին և ինժեներներին՝ մնում է մի քիչ էլ ժողովրդի մասին մտածել. զրանք իրանց մասնագիտութիւնը մինչև այժմ գործադրում էին միմիայն յօգուտ կապիտալիստներին: Այդ կողմից մեր տեխնիկները մի առանձնացած դիրք են գրաւել միւս մասնագէտների համեմատութեամբ: Մենք սովոր ենք լսել ժողովրդին՝ բժշկական, իրաւաբանական, գիւղատնտեսական, կրթական օգնութիւն մա-

տակարարելու մասին, իսկ երբեք՝ «տեխնիկական օգնութիւն» հասցնելու մասին: Կեանքը այժմ այդ պահանջն էլ է դնում ինտելիգէնցիայի առաջ. սովորեցրէ՛ք, ինժեներ պարոններ, թէ մեր գիւղացին և քաղաքացին, երկրաշարժների ենթարկուած շրջաններում, ինչ նիւթերից և ինչ ձևի տներ շինեն:

Եւ հասարակութեան համար էլ աւելի ձեռնտու է ըստ կարելոյն գործել այդ ուղղութեամբ և նախազգուշական միջոցներով աղէտների առաջն առնել, քան ամեն անգամ օղնութեան ձեռք մեկնել այն ժամանակ, երբ բանը բանից անցել է և զոհերի ու թշուառացածների թիւը սոսկալի չափերի է հասել:

Այդ նախազգուշական եղանակը վաղուց դնահատել է բժշկութիւնը. նա աւելի խելացի է համարում վաղօրօք սանիտարական, առողջապահական միջոցներ գործադրել հիւանդութիւնների առաջն առնելու նպատակով, քան սպասել որ հիւանդութիւնը սկսուի և ապա միայն հարերի և միջբնակների ոյժը փորձել...

Թէ ինչ ահադին նշանակութիւն ունեն բժշկական նախազգուշական միջոցները ազդերի կեանքում, այդ երևում է նրանից որ, մինչդեռ Արեմտեան Եւրոպայում, օրինակ, Շվեյցարիայում և Նորվեգիայում մահացումների թիւը 16¹/₂% է առ հազարն, Ռուսաստանում 36⁰/₀ է: Իսկ մի ժամանակ Շվեյցարիայում և Նորվեգիայում էլ մահացուների տոկոսը ահալին էր. բայց չնորհիւ գործ դրած սանիտարական միջոցների և ազգաբնակչութեան կուլտուրական մակերեսի ընդհանուր բարձրացման, այժմ ահա այդպիսի մեծ տարբերութիւն կայ երկու հարևան երկրների մէջ:

Թէ ինչ ողորմելի դրութեան մէջ է Ռուսաստանում ժողովրդի առողջապահական դրութիւնը, այդ պարզ երևաց յունուարի սկզբում Մոսկուայում կայացած «Բժիշկների VIII Պիւրօգովեան համաժողովում» կարգացած մի շարք զեկուցումներից: Սոսկալի է մանաւանդ մանուկների կոտորածը: Ինչպէս ցոյց տուեց բժիշկ Դօլթենկօվ, մինչդեռ Նորվեգիայում 1000 նորածիններից մինչև մի տարեկան հասակը մեռնում են 96 հոգի, Ռուսաստանում 6—7 անգամ աւելի է այդ թիւը: Եւ այդպիսով Ռուսաստանը իւրաքանչիւր տարի թաղում է 1¹/₂ միլիոն մանուկներ: Դրա, ինչպէս և ամեն մի հասարակական չարիքի դէմ մաքառելու համար՝ անհրաժեշտ է, ի հարկէ, ի միջի այլոց, գործունէութեան ազատութիւն: Այդ ապացուցւում է ոչ միայն Արեմտեան Եւրոպայի օրինակով, այլ և Ռուսաստանի, ուր զեմստվական նահանգների ժողովրդի դրութիւնը անհա-

միմաս աւելի լաւն է ոչ-զեմատականներէյ: Իսկ տեղական ինքնավարութիւնից (զեմատիօ) ղեռ զուրկ են 55 նահանգներ մօտ 62 միլիօն ազգաբնակչութեամբ:

Հետաքրքրական էին և պրօֆէսօր Կապուստինի բերած թուերը Ռուսաստանի բժիշկների մասին: 1899 թուականի վիճակագրութեամբ Ռուսաստանի 12,482 բժիշկներից քաղաքներում ապրում էին՝ 9,422 հոգի և միայն 3,060 հոգի գիւղերում, ի հարկէ, գլխաւորապէս զեմատիօյական նահանգների գիւղերում: Քաղաքում մի բժիշկն ընկնում է միջին թուով 1,700 մարդ, իսկ գիւղերում 36,000 մարդ: Քաղաքային բժիշկը միջին թուով օրեկան ընդունում է 4 հոգի, իսկ գիւղականը 98 հոգի: Եթէ ամեն մի հիւանդի վրայ գործ դնել $\frac{1}{4}$ ժամ, գիւղական բժիշկը պէտք է աշխատէ օրը 24 ժամ... Գիւղերի համար հարկաւոր են ղեռ 62,000 բժիշկ, որպէս զի բժշկական օգնութեան կողմից գիւղերը հաւասարուն քաղաքայիններն: Այդքան «անձնաղոհ» մարդիկ սրտեղից դաժնել, եթէ չը ստեղծել պայմաններ գիւղերում բժշկութիւն անելու համար: Իսկ որն է այն ոյժը, որ լուծի այդ հարցը, եթէ ոչ տեղական լայն ինքնավարութիւնը, որ ժողովրդի կեանքի ամեն կողմերի համար մի կատարեալ բարիք է:

Այդպիսի ինքնավարական բարիքից օրէնքով զուրկ չէ հայ ժողովուրդը իր ներքին մի քանի հարցերում. ծուխը եկեղեցական-ազգային խնդիրներում կատարելապէս մի ինքնավար մարմին է ճանաչուած ղեռ Պօլսթէնիայով: Բայց արիւք տեսե՞ք թէ ինչ հնարներ են գործ դնում մեր «ժողովրդասէր» կղերականները ժողովրդից կողոպտելու համար նրա այդ փոքրիկ բարիքն անդամ Կոնսթատտրիաներում նստած անդրապէտ տէրտէրներ և իշխանաւորական տենչով կուրացած «աստուածաբաններ» ամենազղուելի կամայականութեամբ ձգտում են կրճատել, ոչնչացնել, անուանակոս դարձնել ժողովրդի ինքնավարական իրաւունքները: Դժբախտաբար այդ վայրենի բռնութիւնների դէմ մղւածները համար ժողովուրդը չատ քիչ հասկացող պարագլուխներ ունի: Այդ է պատճառը որ առանձին երախտագիտութեան արժանի են այն սակաւաթիւ անհատները, որոնք ընդհանուր անտարբերութեան, ստրկական համակերպումների ժամանակ՝ չեն լքանում և, յենուելով օրէնքի վրայ, մաքառում են կղերական ոտնձգութիւնների և փաշայականութեան դէմ:

Ժողովրդի իրաւունքների այդպիսի համոզուած սղաշտպաններից մէկն էլ Թիֆլիսում փետրուարի 8-ին վախճանուած, շուշեցիներին քաջ յայտնի փաստաբան Ստեփան Իւզբաչեանն էր: Իրրե Շուշուայ թեմական դպրոցի հոգաբարձու

նա երկար ժամանակ մաքառել է տխրահոգակ Կարապետ եպիսկոպոս Այվազեանի և դրա շաւղով ընթացող յաջորդների քմահաճ և միանգամայն ապօրէն արարքների դէմ, աշխատել է խել զպրոցի հարուստ կալուածները աւաղակաքարոյ կղերի ձեռքից, պաշտպանել է զպրոցի կանոնադրութեամբ հոգարար-ձութեան յատկացրած իրաւունքները, և, տեսնելով որ այլևս ոչինչ չի կարողանում անել տիրող կղերական բեժիմի դէմ— գերադասել է հրաժարուել ժողովրդի ներկայացուցչութիւնից, քան մնալ և կօմպրօմիսներով վաճառել այդ իրաւունքը մի ոսպէ ճաշի գնով... Հարց է. կօմպրօմիս անող մեր երեկելի «փոլիթիկոսները» ի՞նչ շահեցին վերջ ի վերջոյ...

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Րէալիստների մոտքը Բժեկական ակադէմիա.

Թագաւոր Կայսրը, ժողովրդական լուսաւորութեան մի-նիստրի ամենահպատակ զեկուցման համեմատ, Բարձրագոյն բարեհաճեց, որ թոյլ տրուի, որպէս փորձ, հինգ տարի ժամա-նակով, Կայսերական զինուորական բժշկական ակադէմիայում ընդունել, զիմնադիւաներում ուսումնի աւարտողների հետ հաւա-սար իրաւունքներով, բէալական եօթ դասարանն աւարտած երիտասարդներին, եթէ նրանք, ակադէմիան մտնելու ժամա-նակ, կամ ակադէմիայում լինելու առաջին տարին, լատիներէն լեզուից լրացուցիչ քննութիւն կը տան զիմնադիւան չորս դասարանի դասընթացքի ծաւալով:

Լուսաւորութեան մինիստրի հրամանը Մոսկուայի համալսարանի ուսանողական անկաւոգութիւնների առիթով.

Հրատարակուած է ժողովրդական լուսաւորութեան մի-նիստրի հրամանը. «Փետրուարի 9-ին առաւօտեան Մոսկուայի համալսարանի բազում սկսեցին հաւաքուել այս համալսարանի ուսանողները, որոնց մէջ կային կանաք և մայրաքաղաքի ուրիշ բարձրագոյն դպրոցների ուսանողները: Անյարմար համարելով թողնել ուսանողներին բազում, համալսարանի բէկտօրը թոյլ տուեց նրանց մտնել ակաի դահլիճը և այնտեղից ցրուել աները: Ամբողջը, բաղկացած աւելի քան 400 հոգուց, դահլիճից ներս խուժեց համալսարանական միւս բնակարանները, և այդ ժա-

մանակ կոտորուեցին դրսի դռները և ակտի դահլիճի ու աուդիտորիաների եօթ դռները: Ամբոխի մի մասը բարձրացաւ երրորդ յարկը, ուր կոտորեց այն դռները, որոնք տանում են իրաւաբանական սեմինարիայի կառավարիչ պրիվատ-դօցէնտ Ջիստեակօվի բնակարանը, և հարկադրելով Ջիստեակօվին հեռանալ, մնաց այդ բնակարանում, ոչնչացրեց ուտեստի բոլոր պաշարը, կոտորեց պահարանը և ոչնչացրեց Ջիստեակօվի շատ իրերը: Այս ամբողջ ժամանակ ամբողջը պահում էր իրան ազմկալի և երգեր էր երգում: Մի քանի պատուհաններից, որոնք նայում են Նիկիտսկայա փողոցին, կախեցին կարմիր դրօշակներ: Չը նայած ուսումնարանական իշխանութեան մի քանի անգամ կրկնուած առաջարկութեան՝ անյապաղ հեռանալ համալսարանից, ամբողջը, բացառութեամբ ոչ շատերի, չէր ցրւում, յայտարարելով, թէ կը մնայ այդ տեղ գիշերելու: Եւ որովհետեւ կատարելապէս անհնարին էր կարգը վերականգնել սեփական միջոցներով, ուսումնարանական իշխանութիւնը դիմեց քաղաքացիական իշխանութեան աջակցութեան, որի կարգադրութեամբ գիշերուայ մօտ 12-ին համալսարանի շինութիւնը մտցրուեցին ոստիկանութիւն և զինուորներ: Նրանք, որոնք ինքնիշխան ներս էին խուժել համալսարան, առանց առանձին զիմադրութեան նրանց կողմից, բոլորն էլ կալանաւորուեցին և ուղարկուեցին մանէժ: Ամբողջը հեռացնելուց յետոյ, համալսարանական սենեակները զննուեցին և, բացի յիշուած միասներից, երևաց, որ կոտորուած են նստարանները, աթոռները, սեղանները, գրասեղանները, նրանց մէջ պահուող թղթերը ոչնչացրած են: Յատակի վրայ դտնուած են փալատով փաթաթած կշեռքի քար, ֆիննական դանակներ, մի երկար ձեռնափայտ, և համալսարանական ցանկապատի վանդակից կոտորած երկաթէ ճիւղոտներ: Մի քանի կալանաւորուածներին խուզարկելու ժամանակ խլեցին ֆիննական դանակներ, կաստէտներ և բէվօլվէրներ: Շատ տեղերում չինուած են բարրիկադներ: Վերոյիշեալ ամբողջ գէպը վկայում է, որ անկարգութիւնների մէջ մասնակցութիւն ունեցած ուսանողները համարում են համալսարանի շինութիւնները նշանակուած ոչ թէ խաղաղ ուսումնարանական պարապմունքների համար, այլ ապօրէն համախմբումների համար, և թոյլ են տալիս իրանց այնպիսի արարքներ, որոնք յատուկ են ոչ թէ օրինաւոր կրթութեամբ երիտասարդներին, այլ խռովարար, սանձնարձակ ամբոխին, որ մոռանում է ամեն մի յարգանք գէպի կարգը և ուրիշ սեփականութիւնը, — ուստի դտնում եմ, որ այդպիսի երիտասարդներին չէ կարելի տեղ տալ բարձրագոյն դպրոցներում, այդ պատճառով առաջարկում եմ Մոսկուայի շրջանի հոգաբարձուին

անկախ այն պատիժներից, որոնց կարող են ենթարկուել մեղաւորները ընդհանուր օրէնքների հիման վրայ, անյապաղ արձակել համալսարանի ուսանողների թուից բոլորին, որոնք կալանաւորուած են փետրուարի 10-ի գիշերը համալսարանի շինութեան մէջ: Գործադրել այդ միջոցը և ինձ ենթարկուած ուսումնարանական հաստատութիւնների այն ուսանողների վերաբերմամբ, որոնք կալանաւորուած են համալսարանի ուսանողների հետ:

Մոսկուայի ոստիկանութեանը արուած հրամանի մէջ յայտարարուած է. «Խախտելու համար փետրուարի 9-ին 1901 թուի մարտի 17-ի որոշումը և նրա լրացուցիչ մասերը 1902 թուի յունուարի 23-ին, բանտարկութեան են ենթարկուած՝ երեք ամսով—Մոսկուայի համալսարանի 7 ուսանողներ, տեխնիական դպրոցի 10 ուսանող, ինժեներական դպրոցի երկու ուսանող, գիւղատնտեսական ինստիտուտի 1 ուսանող, Պետերբուրգի համալսարանի 1 ուսանող, մէժէվոյ ինստիտուտի 20 ուսանող, նկարչութեան դպրոցի երեք աշակերտ, Ֆիլարմոնիական դպրոցի 3 աշակերտ, կոնսերվատօրիայի 1 աշակերտ, մանկաբարձական կուրսերի 1 ուսանողուհի, մանկավարժական կուրսերի 2 ուսանողուհի, ատամնաբուժական դպրոցի 1 ուսանողուհի, մանկաբարձական ինստիտուտի 1 ուսանողուհի, երկու ազնուականներ և ագրօնօմի մի կին. երկու ամսով—համալսարանի 97 ուսանող. ամսով—զանազան կոչման 55 անձինք. 15 օրով—Սարօգանօվեան դպրոցի 7 աշակերտներ, 7 օրով—զանազան կոչման 2 անձինք: Փետրուարի 10-ի նոյն որոշումները խախտելու պատճառով բանտարկութեան են ենթարկուած՝ երեք ամսով—1 ծառայող նահանգական գէմստօփ վարչութեան մէջ, մէկ ամսով—համալսարանի 8 ուսանող, ինժեներական դպրոցի 5 ուսանող և զանազան կոչման 5 անձինք»:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Աղէտներ.—Յունուարի 31-ը.—Շամախու աներումը.—Դժբախտութեան չափերը.—Տեսարաններ.—Պատմական տեղեկութիւններ Շամախում եղած երկրաշարժերի մասին.—Վնասուած գիւղեր.—Հասարակական օգնութիւն.—Շամախու ապագան.—Մտաւոր առաջադիմութեան դործը մեր դաւառներում.—Համակրելի երևոյթներ.—Ժողովրդի անօգնականութիւնը
Գիւղական փոխառութիւնների հարցի տոյթով:

Տարի չէ անցնում, որ մեր զաւառական կեանքի տարեկորութիւնների մէջ չը մտցնէ մի կամ մի քանի աղէտալի էջեր: Քիչ յետ նայելով, աչքի առաջ բերելով մեր երկրի վրայով անցած-գնացածը, համեմատ ենք այն եղբայրացութեան որ, կարծէք, սովորական երևոյթներ են դասնում այն ժողովրդական սարսափելի դժբախտութիւնները, որոնք կլանում են հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը և պահանջում են հասարակական արտակարգ բարեգործութիւն լայն չափերով:

Աղէտները, ի հարկէ, բնական պատահարներից են առաջանում: Եւ այդ պատահարներից շատերը այնպէս են, որ մարդը, մանաւանդ անպատրաստ, գիտութեան զէնքը իր վրայ չունեցող մարդը, ոչինչ չէ կարող անել իր կեանքը, իր բարեկեցութիւնը պահպանելու համար: Անցեալ տարի Ախալքալաքի գիւղերը մտոցել էին առանց հացի և մամուլը փող էր հաւաքում սովածներին կերակրելու համար: Եւ դա այն իսկ պատճառն էր, որ մի տարի առաջ աւերուել էր զարհուրելի երկրաշարժից, անօգնական, երկնքի տակ թողնելով հազարաւոր մարդիկ, որոնք անշուշտ կորած կը լինէին, եթէ հասարակութեան առատաձեռն օգնութիւնը չը լինէր:

Անցեալ տարուայ բնական պատահարներից բաւական խիստ վնասներ կրել էին և մեր մի քանի գիւղերը: Այսպէս, զաշտային միւնները, կարկուտը փչացրին շատ տեղերի ցանքները և, օրինակ, Շուլաւէրի պէս մի մեծ ու հարուստ գիւղ այս ձմեռ մատնուած է սաստիկ կարօտութեան և աղքատութեան:

Բայց այդ բոլոր աղէտները մոռացնել տուեց յունուարի 31-ի օրը:

Այդ օրը ամբողջ արեւելեան Անդրկովկասում, սկսած Կովկասեան լեռնաշղթայից մինչև Արաքս գետը, տեղի ունեցան երկրաշարժի ահաւոր ցնցումներ: Երկրաշարժը սկսուեց ցերեկուայ մօտ ժամի մէկին և կրկնուեց զրանից յետոյ էլ թէ նոյն օրը և թէ հետեւեալ օրերը, սարսափ պատճառելով ազգաբնակչութեան: Սակայն երջանիկ կը լինէր մեր երկիրը, եթէ միայն վախը լինէր երկրաշարժի հետեանքը: Դժբախտաբար, ստորերկրեայ ոյժերը աւերմունքներ էլ գործեցին, և աւերուողը, քարուքանդ դառնողը այս անգամ էլ, ինչպէս և ուրիշ շատ անգամներ, Շամախին էր իր գաւառով:

Նորից կործանուեց Շամախին. և այս անգամ նրա կործանումը աւելի սաստիկ էր, աւելի աղէտալի, քան նախընթաց մի քանի անգամներում: Շամախու այս նոր դժբախտութեան առաջ նսեմանում են Ախալքալաքի և Երզրումի երկրաշարժները (վերջինս, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ անցեալ տարուայ վերջերում): Մի ամբողջ քաղաք և տասնեակ գիւղեր աւերակների կոյտեր դարձան, հազարաւոր մարդիկ գերեզման գտան այդ աւերակների տակ, իսկ հազարաւոր մարդիկ դժբախտացան կորցնելով իրանց ամբողջ կարողութիւնը:

Լրացրական թղթակցութիւնները այսպէս են ներկայացնում այդ չը տեսնուած ժողովրդական դժբախտութիւնը.

Յունուարի 31-ին Շամախու բնակիչները իրանց սովորական պարապմունքներին էին նուիրուած. ոչ ոք, ի հարկէ, չը գիտէր որ դժբախտ քաղաքի վեջին օրն է: Օրը հինգշաբթի էր. քաղաքի բաղնիսները լցուած էին թուրք կանանցով, որոնք սովորաբար այդ օրն են գնում լուացուելու, որովհետև հետեւեալ օրը, ուրբաթ, թուրքերի կիրակին էր: Փողոցներում պարապմունքներն էին շարունակուում. հայոց եկեղեցում պատարագ կար, մեռել էր քաղաքի յայտնի հայերից մէկը և թաղման հանդէսին ներկայ էր հայերի մի մեծ լաղմութիւն, ինչպէս ասում են, մօտ 300 հոգի: Ահա այդ խաղաղ քաղաքային կեանքի ընթացքը յանկարծ խանգարուում է ստորերկրեայ սոսկալի հարուածը: Այսպէս է նկարագրում այդ հարուածը մի ականատես՝ «Каспий» լրագրում.

«Ժամը 12-ին ես գնացի իմ ընկեր ժամագործի մօտ, որի խանութը գտնուում է ներքին լազարում: Յանկարծ 12 ժ. 50 րոպէին (հեռագրներում ասուած է 12 ժ. 40 րոպէ, բայց իմ ընկերի արհեստանոցում ժամացոյցները կանգ են առել 12 ժ. 50 րոպէի վրայ), լսուեց ստորերկրեայ թնդիւն և մենք, հաս-

կանալով թէ բանը ինչու՞ն է, հազիւ դուրս վազեցինք փողոցները մեր ետեւում փուլ եկաւ խանութի պատը: Գետնի երեսունները այն աստիճան աստիճակ էին, որ անկարելի էր ոտքի վրայ կանգնած մնալ. ես մի քանի անգամ վայր ընկայ և միայն իմ ընկերի ջնորհիւ էր, որ ինձ կոխ չը տուեց մեր ետեւից և կող ամրոխը: Լացը, մարդկանց աղաղակները, քանդուող տներից բարձրացած աղմուկը, որոնցից բարձրացել էր այնպիսի սարսափելի փոշի, որ անկարելի էր աչք բաց անել—այս բոլորը խառնուած էր մի աներեւակայելի քաօսի մէջ: Կանայք և երեխաները, որ կարողացել էին ժամանակին դուրս փախչել տներից, ջնորհակալութիւն էին յայտնում Աստուծուն իրանց փրկուածեան համար, մոռանալով իրանց աղգականներին, որոնց վիճակը նրանց դեռ յայտնի չէր: Մենք շարունակում էինք վազել բազարի լայն փողոցով և մեր աչքերին ներկայանում էին մէկը միւսից սոսկալի տեսարաններ. մի քանի տկոյր կանայք դուրս վազեցին բաղնիսից, որի փլատակների տակ նրանք թողել էին մօտ 150 հոգի իրանց ընկերուհիներին. հայոց եկեղեցուց, ուր այդ ժամանակ պատարագ կար, դուրս վազեց զգեստաւորուած քահանան, իսկ նրա ետեւից ամբողջ ժողովուրդը, մէկը միւսի գլխով թռչելով, թողնելով ննջեցեալին եկեղեցում, եւ մի շարք ուրիշ տեսարաններ, որոնց յիշելուց անգամ բիզբիզ են կանգնում գլխիս մազերը: Մի բռնիցի աւել շարունակուեց առաջին աւերիչ հարուածը, նրան անդադար հետեւում էին աւերի թեթիւ հարուածներ. եւ շտապում էի քաղաքի վերին մասը, ուր ապրում էի իմ մօր հետ, և կարող էք երեւակայել, որքան ես ուրախացայ, տեսնելով նրանց ողջ և առողջ: Մայրս պատմեց, որ ցնցումի ժամանակ ինքը սենեակումն էր և ուղեց դուրս վազել, բայց դուռը բաց անել անհնարին էր և եթէ չը լինէր այնտեղ մեր մի ազգականը, մօրս դրութիւնը վատ կը լինէր: Պէտք է ասել, որ բնակիչների մեծ մասը այս իսկ պատճառով չը կարողացաւ աներից դուրս փախչել:

«Գետնի երեսունները շարունակւում էին ամբողջ գիշերը և միւս օրը, մինչև իմ հեռանալը: Նրկու գիշեր եւ ստիպուած էի մնալ բակում, բաց երկնքի տակ, և խոստովանում եմ, ամենափոքր ցուրտ չէի զգում, մի բան, որ զարմանալի չէ, եթէ նկատի առնենք այն յուզմունքները, որ պատում էր ինձ և ամենքին՝ գետնի ամեն մի երկրման ժամին: Նրկու օրից յետոյ եւ հեռացայ Շամախուց, թողնելով աւերակների տակ իմ ամբողջ ունեցած-չունեցածը»:

Առաջին մեծ հարուածը, ինչպէս պատմում են, կէս ժամի տևողութիւն ունեցաւ: Անցաւ այդ կէս ժամը և քաղաքը ար-

դէն ներկայացնում էր աւերակների մի անվերջ դաշտ: Գետնի հետ հաւասարուել էին մօտ 4000 տներ, անվնաս մնացած տները մի քանի հատ են: Ամենից շատ աւերուել է թուրքերի թաղը, ուր քար քարի վրայ չէ մնացել: Զումայ-մէշլոյ անունով մզկիթը, որ ութ հարիւր տարուայ հնութիւն ունի, նոյնպէս քանդուեց, թէև իր կեանքում շատ էր տեսել երկրաշարժներ: Քանդուեց նաև ոռոտաց եկեղեցին, համեմատաբար քիչ է վնասուած հայոց եկեղեցին. դրսից նա համարեա ամբողջ է և միայն ներսից է փլուել: Այն հանդամանքը, որ երկրաշարժի ժամանակ այդտեղ պատարագ կար, աղատեց շատ և շատ հայերի կեանքը:

Հասկանալի է թէ ինչ զարհուրելի սպաւորութիւն պիտի թողած լինի աւերմունքի այդ ահեղ պատկերը բնակիչների վրայ: «Բացուեց մի սարսափելի տեսարան,—գրում է մի այլ թղթակից:—Այնպիսի փոշի բարձրացաւ, որը օդը մթնեց և դէս ու դէն ընկնող մարդիկ, շփոթուած, զլււխ կորցրած, չէին կարողանում ճանաչել միմեանց: Ընդհանուր խառնաշփոթութեան մէջ ամեն մէկը աշխատում էր աղատել իրան և իրաններին, բայց երկիւղից և յուսահատութիւնից ինքնակորոյս եղած, հաշիւ չէր տալիս իրան, թէ ինչ է անում: Դա մի սարսափելի, տարերական թշուառութիւն էր: Մարդիկ փախչում էին ամեն ուղղութեամբ, աղաղակում էին և օղնութեան էին կանչում, կենդանիները ունում էին, թռչունները զարնում էին ցանկերին և պարիսպներին, իսկ այդ ժամանակ տները, խանութները և մըղկիթները խորտակուում էին, քանդուում էին թնդլաններով, հարիւրաւոր մարդիկ կենդանի թաղելով իրանց տակը: Նրեկոյեան մօտ, երբ խառնաշփոթութիւնը մի փոքր դադարեց, իւրաքանչիւրը սկսեց որոնել իր մերձաւորներին, մանուկներին, կանանց, եղբայրներին, քոյրերին. քաղաք վերադարձան նրանք, որոնք ազատուել էին փախչելով չրջակաները: Տանջանքների պատկերը աննկարագրելի է, ամբողջ քաղաքում բարձրացան հեծեճանքի, օգնութեան կանչող ձայներ: Ազգականների, բարեկամների բացականչութիւնների մի ընդհանուր վայնասուն, փլուած տների տակից հրաշքով ազատուած մանուկները, հեծկլտալով և լալով, անպիտակցաբար հարցնում էին անցորդներին իրանց ծնողների մասին»:

Աղէտի լուրը իսկոյն տարածուեց ամեն կողմ. Շամախուն ամենից շատ մօտիկ է Բագու քաղաքը: Այդտեղ ապրում է շամախեցիների մի մեծ բազմութիւն, որ տեղափոխուել է նախկին երկրաշարժներից յետոյ: Իրանց հայրենի քաղաքի կործանման լուրը ահադին յուզմունք առաջացրեց շամախեցիների մէջ. ամեն մէկը ունէր այնտեղ բարեկամ, ազգական, ամեն մէկն ու-

դուժ էր տեղեկութիւն իմանալ: Տեղական հեռադրատունը լըցուեց անազին բազմութեամբ, բայց ոչ մի հնարաւորութիւն չը կար ամենքի պահանջները կատարելու, Շամախու հեռագրատունն էլ փնասուած էր և անկարելի էր ուղարկել հեռագիրների այն անազին քանակութիւնը, որ թափոււմ էր հեռադրատուն: Բագուն իսկոյն օգնութեան հասաւ իսկոյն մարդիկ ուղարկուեցան աղէտի տեղը, երկաթուղով անկարելի էր գնալ չատերի համար, որովհետեւ Գիւրգամիր կայարանից Շամախի գնալու համար ձի գտնել չէր կարելի, չատերը ուղղակի Բագունից կառքեր վարձեցին և գնացին Շամախի հին ճանապարհով: Եւ ինչ էին տեսնում դժբախտ քաղաքի այդ առաջին այցելուները:

Ով գոնէ մի անգամ տեսել է Շամախին, նա այժմ կարող է զարհուրել այն աւերմունքից, որ գործել է այս թշուառ քաղաքում յունվարի 31-ի երկրաշարժը: Քաղաքի թուրքական ընդարձակ մասը, իր երկար շուկայով, այժմ այլ ևս չը կայ: Մի քանի հազար տներ, այգիների, շաղրուանների, մեծ քարվանսարայի, խանութների շարքերի, մզկիթների, մահմեդականների ուսումնարանների և բազմաթիւների հետ միասին, փոխաբիւնուել են քարակոյտերի մի անազին բլրով, որի միջից տեղտեղ յցուած երեսւմ են գերանների և տախտակների կտորներ կամ տեսնուում են ծառերի փոշոտած կատարներ: Փողոցներում,—եթէ միայն այդ անունը կարելի է առաջարկել և զանազան կտորտանքներով ծածկուած նեղ տարածութիւններին,—տեղաւորուած մարդիկ գործում են ոչ Անդրկովկասեան ամենահին քաղաքներից մէկի բնակիչների տպաւորութիւն, այլ օտար տեղերից եկած պանդուխտների, որոնք չար բախտից հալածուած դէպի աւերակների այս աշխարհը, չը գիտեն, թէ ինչ անեն լուռ և անհիւրընկալ նոր հայրենիքում: Վայրենու նման նայելով իրանց չորս կողմը, այս թշուառները դեռ ևս չեն կարողանում ուշքի դալ, և եթէ երբեմնապէս վայրկենաբար ուշքի էլ են գալիս ու աշխատում յիշել որ և է բան իրանց գլխով անցածից, այդ գիտակցութիւնը աւելի ևս ծանր կերպով է ներգործում նրանց առանց այն էլ զրգուած հոգեկան դրութեան վրայ: Հլու խոնարհութեամբ նայելով հայրենի քաղաքի աւերակների վրայ, որ այնքան բազմաթիւ գոհեր է կլանել իր հարապատ որդիներից, տանջանքների և սարսափի անջնջելի զգացմունքներով լցուած այդ արարածները անկարող են դնահատել ոչ միայն այն, որ իրանք կենդանի են մնացել, այլ և չեն գիտակցում, որ այժմ կան և ապրում են: Նրանք այժմ չեն ապրում և նրանց ճակատագրական անտրտունջ հայեացքները և քթացած զգացմունքները բոլորովին համապատասխանում են

Նրանց տները սուերակները վրայ թափափող գերեզմանական խորհրդաւորութեանը:

Ի հարկէ, հարց ու փորձ անել մարդկանց, որոնք այսպիսի զարհուրելի դրութեան մէջ են գտնուում, որ և է բանի մասին անհնար է, որովհետեւ տանջանքների մրուրը քամած այս թշուառականները պէտքական են, այն էլ ոչ բոլորը, բժշկութեան համար միայն, որպէս ծանր հիւանդներ: Ահա թէ ինչու անհրաժեշտ է շուտափոյթ անմիջական բժշկական օգնութիւն հասցնել, առանց որի կենդանի մնացածները կարող են զոհ դնալ նրանց տիրած սարսափին և ընդհանրապէս հոգեկան զօրեղ յուզմունքներին:

Օգնութեան հասնողների առաջին գործը պիտի լինէր հաց հասցնել ամեն ինչ կորցրած ժողովրդին և փոքիլ աւերակները, թաղել այնտեղ մնացած դիակները: Բազում կազմուեց մասնաւոր կօմիտեա, որ սկսեց եռանդով նուիրատուութիւններ հաւաքել և առաջին օգնութիւնը հասցնել: Ժողովուրդը ապրում էր բաց երկնքի տակ, վախ կար թէ համաճարակ հիւանդութիւններ կը դարդանան: Բժշկական օգնութիւն հասցրուեց, հաց և ալիւր ուղարկուեց, ժամանակաւոր ապաստանարաններ շինուեցին թաղիքից, բրէզէնդից: Այս բոլորը օգնութիւն էր, բայց աննշան օգնութիւն, համեմատած ազէտի չափերի հետ: Օգնութեան գործը շատ կը դժուարանար, եթէ ժողովուրդը չը սկսէր շրտել զանազան կողմեր: Գաղթականութիւնը հէնց առաջին իսկ օրերից ընդունեց մեծ չափեր. ով փոքր ի շատէ միջոցներ ունէր, շտապում էր հեռանալ սուերակ քաղաքից, գաղթականների մեծ մասը, ինչպէս և նախկին երկրաշարժներից յետոյ, ուղևորուեց դէպի Բագու:

Աւելի դժուար էր աւերակները փորելու գործը: Առաջին օրերում այդ գործը կատարում էր Շամախու զօրագունը, որ թէն նոյնպէս սաստիկ մեծացել էր երկրաշարժից, բայց չը մոռացաւ ժողովրդին օգնելու պարտքը: Փորող ձեռքերը քիչ էին, ուստի Թիֆլիսից էլ ուղարկուեց մի բատալիօն զօրք և գործը աւելի եռանդով առաջ տարուեց, մանաւանդ որ բնակիչներն էլ օգնում էին և մերձակայ գիւղերից եկածները, ստանալով լաւ վարձ, աշխատում էին աւերակների վրայ:

Պեղումները սիրա կսկծեցնող տեսարաններ շատ բաց արին: Գտնուեցան մի քանի տաանակ մարդիկ, որոնք կենդանի էին մնացել փլատակների տակ, և եթէ փորուածքները հէնց սկզբից եռանդով առաջ տարուէին, կարելի էր աւելի մեծ թուով մարդիկ ազատել: Զոհերի մեծ քանակութիւն, ինչպէս ասացինք, քաղնիսներն էին տարել: Ահա մի մայր, նրա երեխան կպած է

Նրա ծծին. մի ձեռքով մայրը երեխային է պահում, միւս ձեռքով իր մազերն է սանրում: Մահը այդ դրութեան մէջ էլ վրայ է հասել և անչնչացրել խեղճերին: Ահա մի աղջիկ. նա դեռ կենդանի է. հայրը, որ փորոզների թւումն է, ճանաչում է նրան և վրայ է վազում որ մի բույէ առաջ դուրս հանէ նրան գերեզմանից, բայց այդ միջոցին փլուում է շինութեան մի մասն էլ և երկուսը—հայր և աղջիկ—մահանում են այնտեղ: Մի փոքրիկ աղջիկ կենդանի էր մնացել փլատակների տակ ամբողջ ութ օր: Մի թուրք կին բաղնիսի մէջ ուշքի եկաւ, նոյն իսկ սկսեց պատմել թէ ինչպէս ինքը և իր ընկերուհիները մնացին բաղնիսի կամարների տակ, ինչպէս չորս կողմը փլուկուեց յետոյ նրանք քնի մէջ ընկան, սաստիկ ծարաւ էին զգում: Բայց խեղճը չը կարողացաւ շարունակել իր պատմութիւնը. սա մեռաւ մի քանի բույէից յետոյ:

Հրաշալի ազատութեան դէպքեր էլ են եղել: Հայոց զըպրոցում ուսուցիչը պարապում էր երեխաների հետ, երբ երկրաշարժի առաջին ցնցումը տեղի ունեցաւ: Ուսուցիչը աշակերտների հետ դուրս վազեց, բայց փողոցում տեսաւ որ երկու փոքրիկ երեխաներ չը կան. անշուշտ նրանք մնացել էին դասարանում, որ փլուել էր: Երկու-երեք ժամից յետոյ սկսում են եռանդով փորել փլուածքը և գտնում են երկու փոքրիկներին ողջ և առողջ. նրանք երկրաշարժի ժամանակ թափնում են նստարանի տակ, որ և պահում է նրանց: Մի հայ կին, որ յղի էր, դուրս քաշուեց փլատակների մէջից. նա երեխայ ծնեց և զթութեան քոյրերը, որոնք Բագուից էին ուղարկուած, վերցրին նրան իրանց մօտ, խնամեցին, այնպէս որ թէ ծննդականը և թէ նորածինը կենդանի մնացին:

Բոլոր թաղուածներին անկարելի եղաւ հանել աւերակների տակից և հողին յանձնել. քարուքանդ քաղաքում տարածուեց դիակների սաստիկ հոտ, այնպէս որ բժիշկները, հիւանդութիւնների առաջն առնելու համար, հարկադրուած եղան կիրածիկ տալ փառղ դիակների վրայ և տեղն ու տեղը թաղել նրանց:

Ամենամեծ վնասները կրել են թուրք բնակիչները, որոնք Շամախու աղդաբնակութեան ահագին մեծամասնութիւնն են կազմում: Հայերը, որոնց թիւը հասնում է մօտ հինգ հարիւր տան, համեմատաբար քիչ կորուստ ունեցան. հայերից մեռածների թիւը 31 է. մինչդեռ թուրքերից սպանուած են, ինչպէս կարծում են, մօտ երկու հազար հոգի: Աւելի ճիշտ թուանշաններ դեռ չը կան, ցուցակագրում են վնասուածները և այդ հաշուից երևաց, որ 2561 ընտանիք, բաղկացած 14,300 հոգուց, կորցրել

են 882 հոգի: Այդ թուի մեծ մասը երեխաներն են: Առհասարակ, երկրաշարժը սաստիկ աղէտալի է եղել կանանց և երեխաների համար: Կոտորուած երեխաների թիւը այս ցուցակագրութեամբ հասնում է 500-ի: Ցուցակագրութիւնը դեռ չարունակուած է և երբ գրական ու ճիշտ թուեր կը հրատարակուեն, մենք էլ կը բերենք մանրամասնութիւնները:

Այժմ խօսենք երկրաշարժից վնասուածների օգտին հաւաքուող նուիրատուութիւնների մասին: Թագաւոր Կայսրը նոյնիկ 50,000 ու, խոշոր նուիրատուութիւններ արին և Կայսերական Լնտանիքի միւս անդամները: Վեհ. Կաթողիկոսը նոյնիկ 3,000 ու. փետրուարի 10-ին Կովկասի կառավարչապետ Իշխան Գօլիցին գնաց այցելելու Շամախին: Իշխանը սիրտ տուեւ զբաւտներին, խոստացաւ օգնել նրանց, նա և նրա ամուսինը նոյնիկ վնասուածներին 2,000 ու: Իր տեսածի մասին իշխան կառավարչապետը հեռագրեց ներքին գործերի մինիստրին, որ այդ մասին ղեկուղում ներկայացրեց Թագաւոր Կայսրին: Կայսրը հրամայեց որ վնասուածների պէտքերի համար բաց թողնուի, բացի վերոյիշեալ 50 հազար ուրբուց, էլի 100,000 ու:

Մասնաւոր նուիրատուութիւնների մէջ առաջին տեղը բռնում է Բագուն: Մինչև այժմ այնտեղ հաւաքուել է մօտ 80 հազար ուրբի: Թիֆլիսը համեմատաբար շատ աննշան դոմար տուեց: Լրագիրների հաւաքած գումարները հազիւ մի 6—7 հազարի համենա: Բայց յոյս կայ որ դժբախտ շամախեցիներին օգնելու համար աւելի խոշոր գումարներ կը հաւաքուեն: Դատելով Ռուսաստանի զանազան կողմերից ստացուող տեղեկութիւններից, Շամախու աղէտը արձագանք է գտել համարեա ամեն տեղ և նուէրներ են հաւաքուած: Նախաձեռնող է հանդիսացել և ուսաց Կարմիր խաչի ընկերութիւնը:

* * *

Երկրաշարժը միայն Շամախում չը գործեց աւերմունքներ: Շամախու դաւանն էլ սաստիկ վնասուեց: Վնասուած գիւղերի թիւը հասնում է 34-ի: Դրանց թւումն են հետևեալ հայաբնակ գիւղերը, Մաղրասա—680 տուն, Զարփարսն—160, Հընդար—126, Սաղեան 151, Բահլիան 63, Քեարքանջ 200, Դարա-Քեարքանջ և Խանիչէն 100, Արփուղ 30, Մէյսարի 80, Զարխու 21 և Քեաւանդի 190 տուն: Մնացածները թուրքաբնակ են:

Մարզկային զոհեր գիւղերում շատ քիչ են եղել, որովհետև ժողովուրդը երկրաշարժի ժամանակ զրսումն էր գտնուած, զբաղուած իր դաշտային աշխատանքներով (մինչև երկրաշարժը ամեն տեղ կատարեալ զարմանային եղանակ էր տիրում): Բայց

գիւղերի վնասներն էլ շատ մեծ են. նրանցից շատերը բոլորովին աւերակ են դարձել: Քեարքանջ հայ գիւղում վնասուել են բոլոր տները, եկեղեցին քանդուել է, Մաղրաս հայ գիւղում բոլորովին քանդուել են 75 տուն, վնասուել ու անքնակ է դարձել մնացածների կէսը, միւս կէսը կարելի է վերանորոգել: Քանդուել են Սաղեանի վանքի շինութիւնները, բայց ինքը վանքը անվնաս է մնացել:

Գիւղական ազգաբնակչութիւնն էլ սաստիկ կարօտ է օգնութեան: Առ այժմ նպաստող կօմիտեաները իրանց գլխաւոր ուշադրութիւնը դարձրել են Շամախու վրայ: Վնասուած գիւղացիները հաղարներով թափուում են Շամախի իրանց դժբախտ կացութիւնը նկարագրելու և օգնութիւն խնդրելու համար:

Կը կարողանայ արդեօք հառարակական բարեգործութիւնը ոտի կանգնեցնել սոսկալի երկրաշարժից վնասուածներին, միջոց տալ նրանց շարունակել իրանց ապրուստը:—Հաղիւ թէ: Վնասները ահսելի չափերի են հասնում: Միայն Շամախու վրնասները հաշոււմ են մօտաւորապէս 15—20 միլիօն ոտբլի: Իսկ 34 գիւղերինը: Այսքան վնասներ չէ կարող վերադարձնել ոչ մի բարեգործութիւն: Այնպէս որ յունուարի 31-ի երկրաշարժի բերած իրականութիւնն այն է, որ մեր երկրի մի նշանաւոր մասը, մօտ 50—60 հազար ազգաբնակչութեամբ, հասցրուած է չքաւորութեան վերջին աստիճանին:

Սա մի շատ խոշոր դժբախտութիւն է ամբողջ Անդրկովկասի համար:

*
* *

Երկրաշարժը Շամախում և նրա զաւառում մի մշտական երեւոյթ է: Գիտնական Աբելի ենթադրում է, որ Շամախին գտնուում է այն տեղի մօտ, ուր ստորերկրեայ հրաբղիային ոյժերի, այսպէս ասած, գլխաւոր քուրան է գտնուում: Եւ իրաւ, Շամախու հօղը միշտ երեւում է այդ ոյժերից: Հին ժամանակների մասին շատ տեղեկութիւններ չը կան. յայտնի է միայն որ 1668 թուին եղաւ սոսկալի երկրաշարժ, որ կոտորեց, ինչպէս ասում են, մօտ 8000 մարդ:

Տասնիններորդ դարի ընթացքում եղած նշանաւոր երկրաշարժները յայտնի են մի առ մի: Դրանք կազմում են մի երկար շարք: Ասում են որ համարեա չէ անցնում տարի, երբ Շամախու հօղը ցնցումների չենթարկուի: Աղէտալի հետեանքներով հարուստ երկրաշարժ եղել է Շամախում 1859 թուականին: Քաղաքի մեծ մասը քանդուեց, մի քանի հարիւր մարդիկ մահ գտան աւերակների տակ: Այդ ժամանակ Շամախին նա-

հանգական քաղաք էր. հարց յարուցուեց քաղաքը մի ուրիշ տեղ փոխադրելու մասին: Ազգաբնակութիւնը խնդրեց որ պետական գանձարանը մի քանի միլիոն ոտւրլի փոխ տայ իրան, բայց այդ խնդիրքը անհնարին եղաւ կատարել. քաղաքը մնաց իր տեղը, միայն նահանգական հիմնարկութիւնները տեղափոխուելին Բագու:

Միւս սաստիկ երկրաշարժը տեղի ունեցաւ Շամախում 1872 թուականին: Այդ ժամանակ էլ քանդուեց քաղաքի մի նշանաւոր մասը, բայց կոտորուած մարդկանց թիւը համեմատաբար շատ մեծ չէր: Բնակիչների, մանաւանդ հայերի, մի խոշոր մասը տեղափոխուեց Բագու:

Ներկայ ալէսը իր չափերով գերազանցում է երկրաշարժի յիշած երկու դէպքերը: Եւ այժմ, երբ այդքան ահռելի դժբախտութիւններ են կուտակուել Շամախու աւերակների վրայ, նորից հարց է ծագում՝ պէտք է թողնել Շամախին իր տեղում թէ փոխադրել մի այլ տեղ, ուր երկրաշարժների վտանգ չը կայ: Լրագիրները հաղորդեցին որ իբրեւ թէ կայացել է վճիռ Շամախին փոխադրելու մասին, բայց յետոյ այդ լուրը չը ձշտուեց:

Մենք չենք կարող ասել հաստատապէս թէ ինչ մտադրութիւններ ունի կառավարութիւնը դժբախտ Շամախու մասին: Բայց կարծում ենք որ ներկայ Շամախին ոչնչացնելու և մի ուրիշ Շամախի կառուցանելու հարցը շատ ծանր ու բարդ հարց է: Նախ և առաջ հրապարակ է տալիս անտեսական հարցը. ինչպէս ամայի և սննդակ թողնել մեր սակաւահոգ երկրում այն տարածութիւնը, որ գրաւում է Շամախին իր չրջականներով: Եթէ խնդիրը մարդկանց երկրաշարժի աղէտներից ազատ պահելն է, այն ժամանակ պէտք է նկատի առնել ոչ միայն Շամախի քաղաքը, այլ և նրա գաւառի գոնէ մի մեծ մասը, որ նոյնպէս ենթարկուած է աւերումների: Բայց ուր տանել թէ քաղաքը և թէ այնքան գիւղերը, մեր երկրի ո՞ր կողմերում այժմեան արկածեալները կարող են գտնել կլիմայական այնպիսի պայմաններ, այնպիսի բերրի հող, ինչպէս Շամախու գաւառում: Վերջապէս տեղափոխութիւնը կարող է գլուխ գալ, եթէ ահագին զրամական միջոցներ գործադրուեն: Իսկ ճորտեղից վերցնել այդ միջոցները:

Ահա ինչ անյաղթելի դժուարութիւններ են կապուած այդ տեղափոխութեան հարցի հետ: Միւս կողմից կանգնած է ազգաբնակութեան կեանքի և մահուան հարցը: Աւելի լաւ չէ որ ժողովուրդը ջաք ու ջրիւ գառնայ, ապրէ աւելի անձեռնտու

տնտեսական պայմանները մէջ, բայց ապահովուած լինի յանկարծակի կոտորածներէց և աւերումներէց:

Բանը հէնց այն է, որ երկրաշարժը, լինելով բնական մի ահուելի աղէտ, այն աստիճան մը աստկար լինել չէ կարող, եթէ ժողովուրդը յարմարութիւն ունի, եթէ կարողանայ ապրել այնպէս, ինչպէս կարելի է ապրել մշտական երերումների ենթարկուած հողի վրայ: Այդպիսի հողի վրայ ապրում են մարդիկ՝ Օրինակ, Նապօնիան: Այնտեղ երկրաշարժները սովորական երևոյթ են, և սակայն անբնակ չեն դարձնում երկիրը: Աղգարնակութիւնը սովորել է երերումներին, սարսափ չէ զգում նրանցից, ընդհակառակը, շարունակում է իր կեանքը անխռով: Հաստատուած իրողութիւն է, որ երկրաշարժի աղէտները կարելի է շատ փոքրացնել, շատ աննշան դարձնել յարմար, թեթեւ բնակարանների միջոցով: Այսպէս է Նապօնիայում, այսպէս է և ուրիշ շատ տեղերում:

Մեղանում դեռ Ախալքալաքի երկրաշարժի ժամանակ յայտնի դարձաւ թէ որքան սարսափելի վտանգաւոր բնակարաններ են մեր հին ձի տները, որոնք ունեն հաստ հողէ կտուրներ, հաստ քարէ պատեր: Նոյնը երևան եկաւ և Շամախում: Թուրքերի թաղը, ուր, ինչպէս յայտնի է, քար քարի վրայ չէ մնացել, տները ծանր կտուրներ ունեն, իսկ պատերը կաղմուած են քարերից, հասարակ ցեխով կպցրած միմեանց: Հասկանալի է, որ այսպիսի «ճարտարապետութիւնը» չէր դիմանայ երկրաշարժի հարուածներին: Փայտէ, ամուր չլինած տները ամենից լաւ են դիմանում երկրաշարժին. սա նկատուած է ամեն տեղ: Շամախու դաւառում շատ քիչ մնացած է և մօլոկանների զիւղերը, որովհետև այս ուսում դաղթականները աւելի լաւ գիտեն բնակարաններ կառուցանել, քան բնիկները:

Այսպէս ահա, այս դէպքում էլ մեզ մնասողը, մեր տունը քանդողը մեր կուլտուրական յետամնացութիւնն է, մեր ասիական անշարժութիւնը: Քանզում, կոտորւում ենք, որովհետև տղէտ ենք:

Թող, ուրեմն, գոնէ այս սարսափելի աղէտները խելքի բերեն մեզ: Թող զիտութիւնը ժողովրդի թե ու թիկունքը դառնայ, տայ նրան անվտանգ, յարմար բնակարանների ձևեր և այժման դժբախտ արկածեալները նորից սկսեն չէնայնել իրանց աւերակները, նորից քրտինք թափեն իրանց բարեկեցութիւնը հաստատ հիմքերի վրայ դնելու համար: Ինտութիւնը մեզ պատ-

ժողով է, բայց միևնույն ժամանակ և խրատներ է տալիս: Եւ միթէ միշտ կոյր ու խուլ պիտի մնանք մենք:

Ա.

Գիւղական փոխառութիւնների հարցի առիթով

Մեր ժողովրդի ահագին մեծամասնութիւնը ապրում է գիւղում՝ պարապելով գիւղատնտեսական այլ և այլ ճիւղերի մշակութեամբ, կերակրուելով իր հողի արգիւնքով, իր ձեռքի աշխատանքով:

Վերջին երկու տասնամյակների շրջանում մեր երկրագործ դասի տնտեսական դրութիւնը այնպիսի փոփոխութիւններ է կրել, այնպիսի քայքայման է հասել, որ այսօր մենք ակնհասեա ենք այն տխուր երեւոյթին, թէ ինչպէս գիւղացին կտրուելով գիւղից, թողնելով իր արտն ու արօրը, վարն ու ցանքը, դիմում է դէպի քաղաք, դէպի բանտորական կենտրոնները, այսպիսով քաղաքներում կազմելով սեփականազուրկ մի դասակարգ— պրօլետարիատ: Այս երեւոյթը այժմ նկատելի է մանաւանդ Երեւանի մի քանի լեռնոտ մասերում, այն է՝ Նոր-Բայազէթի, Դարաչիչակի և Աբարանի գաւառաբաժիններում:

Այդ երեւոյթի պատճառները բազմաթիւ են և բազմատեսակ:

Պատճառներից մէկը և գլխաւորը հողի սակաւութիւնն է: Ազգաբնակութիւնը գնալով աճում է և այն էլ մեծ չափերով, իսկ մշակուող հողերի քանակութիւնը մնում է նոյնը:

Մեր երկրի զանազան մասերում կան բազմաթիւ անմշակ հողեր, որոնց մշակելի դարձնելու համար անհրաժեշտ է արհեստական ոռոգումն: Իսկ դրա համար անհրաժեշտ է դրամագլուխ:

Փոքր քանակութիւն հողից աւելի մեծ եկամուտ ստանալու համար անհրաժեշտ է, որ գիւղատնտեսական պարապմունքների տեխնիկայի մէջ կատարելագործութիւններ մտցնուեն. ուրեմն դարձեալ անհրաժեշտ է դրամ:

Տարուայ մէջ մեր գիւղացին ունի երկու օր, որոնք այսպէս թէ այնպէս նրան մղում են դէպի վաշխառուի գիրկը: Այդ հարկերի վճարումն է, որ կատարւում է երկու նսւազով, որովհետեւ գիւ-

ղական հարկերը պահանջուած են երկու անգամ, մի մասը աջան, այն է՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, և միւս մասը դար նան, այն է՝ ապրիլ և մայիս ամիսներին: Հարկերի ժամանակ չատ քէչ գիւղացիներ կը լինեն, որ չը դիմեն վաշխառուին, մանաւանդ գարնան նուագում, երբ գիւղացու ունեցածը ամբողջապէս սպառուել է: Այդ երկու միջոցներին գիւղացին ի վաճառ է հանում այն բոլորը, ինչ որ ունի, այն է՝ ցորեն, գարի, իւղ, պանիր կայլն, բայց քանիւր կարելի է գտնել ամեն մի գիւղում, որոնք կարողանան ցորենի, գարու, իւղի, պանրի վաճառքով հարկաւոր դրամը հայթայթել. մեծ մասամբ գիւղացին ստիպուած է դիմել վաշխառուին:

Մարգար աղա, մի 15 մանէթի ձեռք բռնիր, հարկը պահանջում են, փող չունեմ», դիմում է գիւղացին գիւղի վաշխառուին:

— Ինչո՞ւ չէ, Յովակիմ, աշխարհ ենք եկել մէկու մէկու օգնելու համար, եթէ դու քո հախին դուզ ըլնես, ինչո՞ւ պիտի խնայեմ, պատասխանում է բարերարի փքունութեամբ Մարգար աղան:

«Ի՞նչ ժամանակ ես իմ հախին դուզ չեմ էլել և քո առջ պարզ երես չեմ դուրս էկել», պատասխանում է Յովակիմը. պահանջիր, ինչ որ քէֆդ կ'ուզի, խաղող, բամբակ, որը կամենաս, բոլորը քեզ փէշքաշ, միայն մի 15 մանէթի ձեռք բռնի, հարկս տամ, աղատուեմ:

— Յովակիմ, քեզինց աւել չեմ ուզի. 15 մանէթ կը տամ, բաղքաղին քեզինց կ'առնեմ երկու խալվար լաւ խաղող:

«Իմ աչքիս վրայ, քո մարդը թող մանի բաղս և սրտի ուղածը թող ջուկի, քաշի վերցնի»:

— Բայց իմացիր որ դու քո արաքով կը բերես իմ դռան և իմ զանթարում քո ձեռքով կը քաշես:

«Էտ էլ աչքիս վրայ, Մարգար աղա— երախտագիտական զգացմունքով յայտնում է իր պատրաստականութիւնը Յովակիմը: Ապա Յովակիմը ստորագրում է մի թուղթ, որով ծախում է դեռ ես չը ծաղկած վազների ապագայ պտուղը:

Մտնում է մէկ ուրիշը, նա էլ ստանում է իրան հարկաւոր եղած գումարը և դուրս է գնում, թողնելով մի ստորագրութիւն, որով պարտաւորում է ժամանակին տալ այսքան լիզր կորիզով բամբակ:

Երրորդը վաճառում է ցորեն, գարի և այսպէս չորրորդը, հինգերորդը և այլն մինչև որ գիւղի ապագայ բերքը ամբողջապէս անցնում է Մարգար աղաների իրաւունքին: Հետաքրքրա-

կան է հաշուել այդ փոխառութեան մէջ աղայի վերցրած տոկոսները:

Համարուի չըջանում (երևանի գաւառ) խաղողը սեպտեմբերի վերջին կանխիկ փողով վաճառում է 14—15 ուրլի—յաճախ նոյն իսկ 18 ո., այն ինչ վերև բերած օրինակում, Մարգար աղան 15 ո., գնել է երկու խալվար: Ուրեմն 15 ո. ապրիլից մինչև սեպտեմբերի վերջը, այլ խօսքով, 6 ամսուայ ընթացքում, դարձել է 30 ո., այսինքն վաչխառուի փողը բերել է 200⁰/₀:

Սուրմալուի չըջանում, առաջուց փող տալով խօսում են կորիզով բամբակի լիդրը՝ 12 ֆնտ.—50—60 կ.: Երեք լիդր կորիզով բամբակից ստացւում է մի լիդր մաքուրը—ուրեմն մաքուր բամբակը առնում են 1 ո. 20 կ. կամ պուզը 4 ուրլի, այն ինչ մաքուր բամբակը արժէ 8, նոյն իսկ 9 ուրլի. ուրեմն դարձեալ 200⁰/₀:

Նոր-Բայազէթի կողմերում հարկի ժամանակ գիւղացին փող բաժանելով իւղի լիդրը խօսում են 1 ո. 80 կ.—2 ուրլի, աչնան ստանալու պայմանով, մինչդեռ իւղը արժէ 3—50 կ. մինչև 4 ուրլի. ուրեմն դարձեալ 200⁰/₀:

Այս ձևով վաճառում է դարին, ցորենը և այլ բերքեր: Ուրեմն թող դարմանալի չը թուայ կանխիկ դրամի վաչխառուական 50⁰/₀ տոկոսը:

Այդպէս ահա եթէ կառավարութիւնը գիւղական տարրին պաշտպանութիւն ցոյց տալու նպատակով վաչխառուների դէմ հրատարակեց խիստ պատիժներ, սրանք էլ այդ պատժից խուսափելու համար ստեղծեցին վաչխառութեան մի այլ, աւելի անխիղճ ձև, որով գիւղացու բերքը ձեռքից խլում են չնչին գնով:

Այս սոսկալի չարիքից ժողովրդին աղատելու միակ ելքը լինելու է զրամական փոխառութիւնը, գիւղական փոխառութիւնայողական գանձարանների միջոցով: Այսպիսի գանձարաններ գոյութիւն ունեն ոչ միայն Ռուսաստանի ներքին նահանգներում, այլ և Քուլթայիսի նահանգում: Պէտք է մեր ինտելիգէնտ ոյժերը օրինակ ցոյց տան. եթէ հիմնուի դէթ մի հատ այդ ձևի գիւղական բանկ, իսկոյն օրինակ կը վերցնեն շատ գիւղական հաստատութիւններ: Միայն սկսող, նախաձեռնող պէտք է լինի:

Բայց այդ, մենք գիտենք, որ փոխառութիւններ բայ է թողնում գիւղացիներին նոյն իսկ պետական բանկը գիւղական հասարակութիւնների երաշխաւորութեամբ: Այժմ Դարաշիշակի

մի երկու մալական հասարակութիւններ մի քանի հաւատարմատարների միջոցով վերցնում են պետական բանկից փոխառութիւններ, գիւղական կարիքները հոգալուց և իւրաքանչիւր գիւղացու դրամով նպաստելուց յետոյ ժամանակին հաւաքում են այդ գումարը և վճարում: Ահա այս ձևի փոխառութիւնը հնարաւոր է իւրաքանչիւր գիւղական հասարակութեան համար, եթէ դարձեալ ինտելիգէնտ մարդիկ առաջնորդէին մեր գիւղացիներին և յոյց տային ճանապարհը: Ի հարկէ, փոխառութեան դիմելով, պէտք է կանոնաւորել նաև վճարման խնդիրը:

Վ Ի Կ Տ Օ Ր Հ Ի Ի Գ Օ

Փետրուարի 13-ից Ֆրանսիան սկսեց տօնախմբութիւնների մի շարք իր ամենամեծ որդիներից մէկի, Վիկտոր Հիւգօի ծննդեան հարիւրամեակի առիթով: Պարիզում այդ օրը բացուեց մեծ բանաստեղծի արձանը:

Անուաններ կան, որոնք հաւասարապէս սիրելի են աշխարհի բոլոր ազգերին: Դրանք այն մարդկանց անուններն են, որոնք գործել են ամբողջ մարդկութեան օգտին, որոնց կեանքի ամբողջ նշանաբանը եղել է ամենալայն մարդասիրութիւնը, բոլոր մարդկանց և բոլոր ազգերի եղբայրութիւնը: Վիկտոր Հիւգօն այդ համաշխարհային սիրելիների թւում մի առանձին գեղեցիկ տեղ է գրաւում: Նրան տուած էր հանձար՝ գրչով բարձրացնելու մարդասիրութեան, ընդհանուր եղբայրակցութեան և ազատութեան յաւիտեան անմահ զաղափարները:

Վիկտոր Հիւգօն մեծ բանաստեղծ էր: Բայց այդքանը դեռ բաւական չէ: Նա մեծ մարդ էլ էր: Եւ տալով մեր ընթերցողներին այդ մեծ մարդու համառօտ կենսագրութիւնը, մենք կատարած կը լինենք մեր մարդկային պարտականութիւնը մի այնպիսի տօնի առիթով, որ լոկ ֆրանսիական տօն չէ, այլ և համաշխարհային:

Վիկտոր Հիւգօն մեզ էլ դաստիարակել է իր հրաշալի գրչով: Նրա «Թշուառները», «Նօտր-Դամ Պարիզի»-ն, «Կլօդ Գէօն», «Մահապարտի վերջին օրը» թարգմանուած են հայերէն: «Թշուառները» երկու անգամ են տպագրուել մեղանում (Զմիւռնիա և Կ. Պօլիս) և այժմ անկարելի է գտնել այդ վէպը մեր գրական հրապարակում: Թարգմանուած են, որքան յիշում ենք, և մի քանի կտորներ Վիկտոր Հիւգօի բանաստեղծութիւններից: Եւ սա զարմանալի է: Հիւգօն անմահների կարգն է անցել իր բանաստեղծութիւններով: Արժէր որ այդ բանաստեղծական զոհարներն էլ թարգմանուէին մեր լիզուով:

I

Վիկտոր Հիւգօն ծնունդ է Ֆրանսիայի Բըզանսօն գաւառական քաղաքում 1802 թուականի փետրուարի 13-ին: Նրա հայրն էր գեներալ Լէօպօլդ Հիւգօ, Նապօլէօն Մեծի զօրապետներից մէկը:

Հիւգօների առհմը Ֆրանսիական ազնուական դասից էր: Զինուորական ծառայութիւնը հարկադրում էր գեներալ Հիւգօին շուտ-շուտ տեղափոխուել զանազան տեղեր. ընտանիքը, այդ թափառական կեանքից ազատուելու համար, բաժանուեց հօրից և մշտական բնակութիւն հաստատեց Պարիզում: Այդտեղ, ահագին քաղաքի մի խաղաղ անկիւնում, գեներալի կինը կրթում էր իր երեք որդիներին: Այդտեղ իր մանկութիւնն անմեղ խաղերի մէջ անց էր կացնում փոքրիկ Վիկտորը, զասկեր էր առնում մի ծերունի քահանայից: Դա մի սրամիտ, ուշիմ երեխայ էր:

Ահա ինչպէս է նկարագրում Հիւգօն իր մանկութեան օրերը.

«Այդ տան մէջ առաջին կայսրութեան *) ժամանակ մեծանում էին երեք փոքրիկ եղբայրներ. Նրանք խաղում էին և աշխատում միասին, դեռ նոր սկսելով կեանքը, դեռ անգէտ՝ ապագայի մասին, կեանքի և բնութեան զարնան քաղցրութիւններն էին վայելում, լցուած ուշադրութեամբ դէպի գրքերը, ծառերը, դէպի ամպերը, ականջ դնելով թռչունների ծլվող խմբերին, հովանաւորուած մայրական քաղցր ժպտի տակ: Աստուած քեզ օրհնէ, մայրիկ:

...«Այդ տունը այժմ **) գոյութիւն ունի միայն ինչպէս մի թանկագին և սրբազան յիշողութիւն եղբայրներից փոքրի համար... և ապրում է նրա հոգու մէջ, ինչպէս մի գեղեցիկ—մառախլապատ և անբնակ ու լուռ բան: Այնտեղ, վարդերի մէջ, արեղակի ճառագայթների վայլի տակ, երեխայի մէջ կատարւում էր ոգու խորհրդաւոր աճումը»...

1811 թուականին Հիւգօի ընտանիքը տեղափոխուեց Սպանիայի մայրաքաղաք Մադրիդը: Ֆրանսիացիները պրաւել էին Սպանիան և գեներալ Հիւգօն նշանակուած էր Մադրիդի նա-

*) Նապօլէօն Մեծի կայսրութիւն:

**) 1875 թուին:

հանգստանալու Այգտեղ Վիկտորը սովորում էր ագնուականների դպրոցում: Բայց շուտով թողեց այդ դպրոցը, հետևեալ տարին 1812-ին, ֆրանսիացիները հարկադրուած էին դուրս գալ Սպանիայից: Գնե՛րալ Հիւզօն առաջնորդում էր նահանջող զօրքը, չը կարողանալով դիմադրել սպանիացիներին, որոնք հերոսաբար պաշտպանում էին իրան անկախութիւնը: Նապօլէօնի աստղը մարում էր: Նա յաղթուած էր և Ֆրանսիայում ուղքի էին կանգնել Բուրբօնները, նախկին թագաւորական տան ժառանգները: Եւրոպական պետութիւնները դաշնակցութիւն էին կազմել Նապօլէօնի դէմ և երբ նրանց զօրքերը Ֆրանսիա մտան, կայսրը փախաւ Էլբա կղզին: Դաշնակցութիւնը երկրի օրինաւոր թագաւոր էր ընդունում Բուրբօնների տոհմը և սրանց իշխանութիւնը վերականգնելու համար՝ կոիւ էր մղում Նապօլէօնի զօրքի մնացորդների դէմ: Գնե՛րալ Հիւզօն կայսերական մի զօրաբաժնի հետ պիտի պաշտպանէր Տիօնվիլ բերդը. բայց երկար չը կարողացաւ դիմանալ պաշարման և հարկադրուած եղաւ բերդը յանձնել գերմանական զօրքին: Այնուհետև գնե՛րալի պատիւն ընկաւ. նա համարւում էր Բուրբօններին դաւաճանող մի մարդ:

Այն թշուառ ժամանակները Հիւզօի ընտանիքն ապրում էր Պարիզում, չարունակելով իր վաղեմի խաղաղ անվրդով կեանքը: Նապօլէօնի - կայսրութիւնը կործանուեց, մտցնելով Հիւզօի ընտանիքի մէջ երկպառակութիւն: Բանն այն էր, որ տիկին Հիւզօն ասում էր Նապօլէօնին և սրտանց համակրում էր նախկին թագաւորական տան. այդ պատճառով կայսրի փախուստը ուրախացրեց նրան, այն ինչ ամուսինը՝ գնե՛րալ Հիւզօն, մեծ գծախտութիւն էր համարում այդ փախուստը: Երկու ամուսինների քաղաքական տարբեր համոզմունքները ընտանեկան բաւական մեծ գծտութեան առարկայ դարձան և միշտ վրդովում էին Վիկտորին: Վերջ ի վերջոյ մարդ ու կնիկ բաժանուեցան միմեանցից: Երեխաները մնացին մօր մօտ:

Բայց Նապօլէօնի համար դեռ բախտի մի փոքրիկ ժպիտ էլ էր պահուած: Նա Էլբա կղզուց Ֆրանսիա եկաւ, նորից իրան կայսր հրատարակեց. հաւատարիմ զօրականները չըջապատեցին իրանց հռչակաւոր զօրապետին և սկսուեց մի կարճատև կայսրութիւն, որ պատմութեան մէջ յայտնի է «Հարիւր օր» անունով: Գնե՛րալ Հիւզօն, ի հարկէ, նորից նշանակութիւն և զիջք ստացաւ. նա զործ գրեց իր ազգեցեցութիւնը և իր երեխաներին ընդունել տուեց Կօրգիէի գիշերօթիկ դպրոցում:

Այգտեղ է Վիկտօր Հիւզօն սկսում իր զրական փորձերը: Այդ ժամանակ նա դեռ 13 տարեկան էր, բայց շուտով յայտնի

դարձաւ իր ուսուցիչներին ու ընկերներին իբրև մի տաղանդաւոր երեսայ: Նա դրում էր ոտանաւորներ, որոնք պարգևի էին արժանանում:

Քսան տարեկան հասակում նա իր բանաստեղծութիւնները համար ստանում է Լիւդովիկոս Թադաւորից տարեկան 2000 ֆրանկ թոշակ: Պէտք է ասել, որ նա այդ ժամանակ Թադաւորի կուսակցութեան մարդ էր:

Գինեւրալ Հիւգոն շատ դժգոհ էր, որ որդին ընտրել է գրական ասպարէզը: Նա շատ աշխատեց հեռացնել նրան այդ ասպարէզից, մտցնել ուրիշ պաշտօնի մէջ և այդ մտքով մինչև անգամ զրկեց որդուն դրամական օգնութիւնից: Բայց Վիկտորը հաւատարիմ մնաց իր կոչման, իր անձը նուիրեց գրականութեան: Նրա մայրը մեռաւ. նա շուտով պսակուեց և պսակուելուց յետոյ հրատարակեց իր առաջին վէպը՝ «Հան Իսլանդացի» վերնագրով: Քննադատները քաղցրութեամբ ընդունեցին այդ վէպը: Բայց նկատուի էր մի բան, որ նորութիւն էր և որ շատ անաշուղդութիւններ պիտի պատճառէր հեղինակին: Այդ բանն ուղղութիւնն էր: Մինչև այդ ժամանակ տիրում էր կեղծ-կլաւսիկական ուղղութիւն, իսկ Հիւգոն հետևում էր բոմանտիկական ուղղութեան: Գրականութեան և գեղարուեստի մէջ հաստատուած կարգերի և օրէնքների դէմ մի յանդուգն յանցանք էր համարւում այդ, Վիկտոր Հիւգոի գրական թշնամիները օրէցօր բազմանում էին:

Մի անգամ Թատրոնի կառավարիչը առաջարկեց նրան գրել Թատրոնական պիէս: Նա ուրախութեամբ յանձն առաւ. բայց նրա առաջին պիէսը, որի անունն էր «Կրօմիլը», կարելի չեղաւ ներկայացնել, իսկ երբ հրատարակուեց, կլաւսիկները սկսեցին աստամ կրճատեցնել:

Բայց, չը վախենալով դժգոհութիւններից, Վիկտորը քսան և չորս օրուայ ընթացքում գրեց «Մարիօն Դելօրմ» անունով դեղնեղիկ պրաման: Մինչդեռ դրա ներկայացման պատրաստութիւններն էին տեսնում, կառավարութիւնը արգելեց այդ պիէսը. միւսիստրներն անգամ հակառակ էին Հիւգոի ուղղութեան: Հեղինակը դնաց Թադաւորի մօտ, խնդրեց թոյլտուութիւն. բայց Թադաւորն էլ չը կարողացաւ մի բան անել և երկար ժամանակ «Մարիօն Դելօրմ»-ը ճնշուած մնաց արգելքի տակ: Անխոնջ հեղինակը, սակայն, չը յուսահատուեց դրանով: Թադաւորն առաջարկեց մի քանի թեթիկ փոփոխութիւններ անել պիէսի մէջ, բայց նա չը համաձայնուեց մի տառ անգամ ջնջել, և երբ Թադաւորը կամեցաւ վարձատրել վշտացած բանաստեղծին, սա հպարտութեամբ բացասեց այդ վարձատրութիւնը և սկսեց նո-

րից աշխատելու Շուտով նա պատրաստեց «Էրնանին» անունով գրաման:

Այդ պիէսն առաջին անգամ ներկայացրին 1830 թուականին: Բայց մինչև ներկայացումը մամուլը ահագին աղմուկ ու աղաղակ հանեց: Գրական թշնամիները ծաղրում էին Հիւզօին, ծաղրում էին նրա «Էրնանին» և աշխատում էին որ հէնց առաջին անգամից պիէսը տապալուի, հեղինակը խայտառակութիւթաբորոնական գործիչները խորհուրդ էին տալիս վարձել ծափահարողներ, հաւատացնում էին որ առանց այդ վարձկան ծափահարողների աջողութիւն չի լինի: Բայց Վիկտոր Հիւզօն չէր ուզում որ իր գործը գնահատեն վարձկանները. նա համաձայն էր որ պիէսը խորատակութիւթ, միայն թէ ինքը անազնիւ գործ չանէ: Հակառակորդների կատաղութիւնը օրէցօր սաստկանում էր. և ահա այդ կատաղութեան ընդդիմադրելու համար հաւաքւում է երիտասարդութիւնը, այն թարմ տարբը, որ ուզում էր տեսնել մայրենի գրականութեան մէջ ուղղութեան փոփոխութիւն և հէնց այդ պատճառով ճանաչել էր Հիւզօին և շատ յարգում էր նրան: Առաջին ներկայացումը աջող անցաւ. թատրոնի դահլիճը լցուած էր Ֆրանսիական բարձր դասակարգի մարդկանցով. մի տեղ անգամ դատարկ չէր մնացել, տոմսակներ ճարելը շատ դժուարացել էր: Հեղինակը սրտատրոփ սպասում էր մինչև վերջը. աջողութիւնը ակներև էր: Բայց միւս օրը սկսուեց լրագիրների կատաղի արշաւանքը. ծաղր, հայհոյանք, լուրջ քնննադատութիւն. ամեն ինչ խառնուել էր միասին՝ Հիւզօին դրական հրապարակից փախչնելու համար: Եւ այդ արշաւանքը աջողութիւն գտաւ. «Էրնանին»-ի երկրորդ ներկայացումը կատարեալ խայտառակութիւն էր. չը նայած, որ երիտասարդութիւնը դարձնաւ հաւաքուել էր թատրոն՝ իր սիրած հեղինակին պաշտպանելու համար, բարձր դասակարգը սկսեց հռհռալ, լսուելին չվճցնել: Դրանից յետոյ պիէսը քառասուն և հինգ անգամ ներկայացրին և ամեն անգամ նոյն խայտառակութիւնն էր կրկնւում: Մամուլն էլ կծու խօսք չէր գտնում հեղինակին և նրա հեղինակութիւնը կշտամբելու, ծաղրելու, ցնխտելու համար: Հիւզօի կիւնը սպասում էր, որ մի անգամ հանդիսատես հասարակութիւնը կը յարձակուի բեմի վրայ, ներկայացման ժամանակ վարագոյրը ցած կը ձգէ և կը հարկադրէ, որ այլ ևս այդ «Էրնանին» չը դնեն բեմի վրայ: Ամեն անգամ, երբ Հիւզօն վերադառնում էր թատրոնից, նրա կիւնը հարցնում էր թէ ինչ դառաւ, դերասաններին բեմից չը վճնդեցի՞ն. և ստանալով բացասական պատասխան, շատ դժգոհ էր մնում. այնքան սաստիկ էր խայտառակութիւնը, որ նա սբտով ցանկանում էր, որ հա-

սարակութիւնն այդպէս անէ և «Էրնանին» այլ ևս չը ներկայացնուի։ Մինչև անգամ ուզում էին Հիւգօին փողոցում ծեծել և երիտասարդութիւնն էր նրան պաշտպանում։

«Էրնանի»-ի խայտառակ ներկայացումների ժամանակ Վիկտոր Հիւգօն մոռացել էր, որ մի պայման ունի կատարելու։ Մի հրատարակիչ գնել էր նրանից մի վէպ, որ դեռ չէր գրուած։ Պայմանաժամն անցել էր, բայց նա դեռ մի տող չէր գրել։ Հրատարակիչը սպառնում էր դատաստանի դիմել։ Հիւգօի բարեկամները միջնորդեցին, հրատարակիչից նորից հինգ ամսուայ ժամանակ ստացան։ Հիւգօն գնաց մի չիշ թանաք և գործի նստեց։ Նա անդադար գրում էր այդ վէպը, որի անունն էր «Նօտր-Դամ դը Պարի»։ Այնքան այդ աշխատութիւնը գերել էր նրան, որ նա ամիսներով տանից դուրս չէր գնում, գրում էր օր ու փշեր, փակուած իր սենեակում։ Եւ որպէս ղի հնարաւորութիւն չունենար փողոց դուրս գալու, նա իր նոր շորերը փակել իր պահարանում, իսկ ինքը հագել էր մի վերնազգեստ, որ միայն տանը կարելի էր հագնել։ Նա միանգամայն մտել էր իր նկարագրած ժամանակի, հերոսների աշխարհը և շատ դժուարութեամբ էր կարողանում ընդհատել գործը, յոգնութիւն, ցուրտ նա չէր զգում, դեկտեմբեր ամսին նա գրում էր բաց պատուհանի առաջ։ Վէպը նշանակած ժամանակին վերջացաւ։ Վերջին խօսքը գրելիս վերջացաւ և մի չիշ թանաքը։ Կրիտիկան աւելի ևս խիստ յարձակուեց այդ հանճարեղ վէպի վրայ, բայց ընթերցող հասարակութիւնը ուշադրութիւն չը դարձրեց և գրքի տպագրութիւնը կարճ միջոցում սպառուեց։ Այդ մի մեծ նշան էր, որ հնութեան երկրպագուների օրհասական ժամն է։

1841 թուականին Վիկտոր Հիւգօն ընտրուեց ազգային Ակադեմիայի անդամ։ Այդ փառքին հասնելու համար նա շատ էր աշխատում և դրանից յետոյ սկսւում է նրա հասարակական գործունէութիւնը, որ գրական գործունէութիւնից պակաս փառաւոր չէ։

Հիւգօն իր գրուածքների մէջ մի գերող, յափշտակող ոճով, ամենահաստատ հաւատով և սուրբ համոզմունքով քարոզում էր՝ մարդասիրութիւն, ազատութիւն, հայրենասիրութիւն։ Այս պաշտելի գաղափարներին նա խնկարկում էր ոչ միայն գրասեղանի մօտ նստած, գրիչը ձեռքին, այլև հասարակութեան առաջ բաց ճակատով կանգնած, խօսքերով, աննման, համոզիչ ճառերով։

1848 թուականի յեղափոխութիւնը կործանեց Լիւդովիկոս Փիլիպպոս թագաւորի գահը և նրա տեղ հաստատեց հան-

րապետութիւն: Վիկտոր Հիւզօն իր այրական հասակում հանրապետական գաղափարներն ամենից ղեղեցիկ համարեց և թողնելով իր նախկին, երիտասարդական համոզմունքը, մոլեռանդութեամբ նուիրուեց կառավարութեան այն ձեին, որ Ֆրանսիայում հաստատուում է մեծ յեղափոխութիւնից յետոյ:

1848 թուի յունիսի 5-ին նա 86,965 ձայներով ընտրուեց ժողովրդի ներկայացուցիչ: Նա ոչ մի կուսակցութեան հետ չը միացաւ, այլ վճռեց գործել այնպէս, ինչպէս իր խիղճն ու համոզմունքն են թելադրում: Նրան ընտրեցին Օրէնսդրական ժողովի անդամ: Այդտեղ, այդ ժողովում, որ ամբողջ երկրի բախտն էր վճռում, նա առաջադաս մարտնչող էր յանուն արդարութեան, յանուն մարդասիրութեան: Նա խօսում էր ազատ ու համարձակ. նա այնպիսի համեմատութիւններ էր անում, որոնք աղմուկ էին հանում ժողովականների մէջ: Մի անգամ նա պահանջեց օրէնք աղքատութեան դէմ, մի օրէնք, որ պիտի բռնէր աղքատի թիւից, պիտի բարձրացնէր նրան: Հակառակ կուսակցութիւնը կատաղեց նրա դէմ, թէն նրա հակաճառութիւններից զինաթափ էր եղել:

Մի ուրիշ անգամ քննուում էր արդարադատութեան միջնխտրի առաջարկած աքսորման օրէնքի նախագիծը, որ շատ խիստ էր. Վիկտոր Հիւզօն սաստիկ ընդդիմացաւ այդ օրէնքին, խօսեց և իր ամբողջ ընդդիմութիւնը ամփոփեց այս խօսքերի մէջ.

—Նրա մարդիկ ստեղծում են անարդար օրէնք, Աստուած արդարութիւն է դնում նրա մէջ և հէնց այդ օրէնքով է պատժում նրանց, որոնք օրէնք են հնարել:

Միւս օրը ստորագրութիւն բացուեց այդ ճառը ամբողջ Ֆրանսիայում տարածելու համար:

Բայց Վիկտոր Հիւզօն քաղաքական գործունէութեան աչքի ընկնող շրջանն այդ չէր: Ֆրանսիական հանրապետութեան այդ ժամանակուայ նախագահն էր Լուի Նապօլէօնը, Մեծ Նապօլէօնի ժառանգներից մէկը: Այդ մարդը չէր բաւականանում նախագահի սահմանափակ դիրքով և ձգտում էր ստեղծել մի նոր կայսրութիւն, որի գլուխը, ի հարկէ, ինքը պիտի լինէր: Հէնց այդ պատճառով նա կազմում էր իրան հաւատարիմ զօրեղ կուսակցութիւն և օրէնքօր աշխատում էր սահմանափակել ժողովրդական ներկայացուցիչների իրաւունքները, մամուլի ազատութիւնը: Հիւզօն իր ամբողջ կարողութեամբ ընդդիմադրում էր այդ ոտնաձգութիւններին: Մանաւանդ նա պաշտպանում էր մամուլը, ազատ խօսքի իրաւունքը: «Իսկական կառավարութիւնն այն է միայն», ասում էր նա իր ճառերի մէջ:

որին չէ մնասում լուսաւորութեան տարածուելը և որը չի վախենում ժողովրդի անելուց»:

Այդ չէր զլխաւոր վտանգը. Հիւզօն պարզ տեսնում էր, որ այդ արարքները ետեւում ծածկուած է կառավարութեան գլուխ կանգնածների իրական նպատակը: Եւ նպատակը շուտով լոյս աշխարհ եկաւ. ժողովին առաջարկուեց վերաքննել ազգային սահմանադրութիւնը, փոփոխել Սկսուեց կռիւը: Հիւզօն ազմուկ պատճառեց իր համարձակ, սուր խօսքերով:

«Եթէ մենք ունեցել ենք Մեծ Նապօլէօն, միթէ այժմ հարկաւոր է ունենալ Փոքրիկ Նապօլէօն», ասաց նա դաւանալով ժողովրդին: Կայսրութեան կողմնակիցները անհնարին ազմուկ ու աղաղակ բարձրացրին: Սմին կողմից լսուած էին յիշոցներ, ամենքը բոռնչք էին սեղմում, զոռում, բղաւում էին: Իսկ Հիւզօն անվրդով էր:

«Ես չարունակում եմ», ասաց նա, երբ փոթորիկը մի բուսէ հանդարտուեց.— «Ո՛չ, Մեծ Նապօլէօնից յետոյ ես Փոքրիկ Նապօլէօն չեմ ուզում»: Խառնակութիւնը նորից սկսուեց. սպասում էին թէ անա կը սկսուի սարսափելի ձեռնամարտը: Բայց նիստը վերջացաւ, ժողովը Հիւզօնի առաջարկութիւնն ընդունեց, սահմանադրութեան վերաքննութիւնը չը կայացաւ:

Այնուամենայնիւ, կայսրութեան գաղափարը պիտի յաղթէր: 1851 թուի դեկտեմբերի 2-ին Լուի Նապօլէօնը հասաւ իր նպատակին. հանրապետութիւնը ջնջուեց: Հիւզօն թախանձում էր իր բարեկամներին գէնք վերցնել. Նա շրջում էր փողոցներում և երիտասարդութիւնը ողջունում էր նրան ոգևորուած, ինդրում էր խորհուրդ՝ թէ ինչ անել:

—Պատուեցէք ապստամբի հրովարտաճիւղները, կանչեցէ՛ք՝ «Կեցցէ՛ սահմանադրութիւն» և յարձակուեցէ՛ք Նապօլէօնի վրայ, պատասխանեց Հիւզօն:

Ամբոխը պատրաստ էր հետեւել նրան, իսկ նա ուզում էր առաջնորդել ամբոխը, բայց բարեկամները համոզեցին նրան սպասել: Նա այդ բարեկամների հետ գնաց մի տուն և թելադրեց հետեւալ տողերը, որոնք ուղղած էին Ֆրանսիական աղ-գին.

«Լուի Նապօլէօն—դաւաճան է:

«Նա ոսնակոխ արաւ սահմանադրութիւնը:

«...Թող ժողովուրդը իր պարտքը կատարէ: Ժողովրդի ներկայացուցիչները կ'առաջնորդեն նրան:

«Ի՛ գէն: Կեցցէ՛ սահմանադրութիւնը»:

Մի ուրիշ կոչ էլ գրուեցաւ, ուղղած զօրքին: Բայց այդ միջոցին մէկը ներս մտաւ, յայտնեց, որ զօրքը եկել է, Նապօ-

լէօնի կողմն է: Միաձայն վճռուեց կռուել զօրքի դէմ: Ամենը փողոց գնացին, ճառեր էին ասում, յորդորում էին ընդդիմանալ զօրքին: Այդ յուզիչներից ամենաեռանդոտը Վիկտոր Հիւզօն էր: Նրա գլուխը գնահատուած էր. կառավարութիւնը 25,000 ֆրանկ էր խոստանում այն մարդուն, որ կամ կը բռնէ, կամ կը սպանէ նրան: Պատմական իրողութիւնը կատարուեց. այլ ևս ոչինչ չէր կարելի անել, բռնութիւնը յաղթող էր հանդիսացել *): Վիկտոր Հիւզօն հարկադրուած էր թաղնուել մի տան մէջ. իսկ ղեկտեմբերի 12-ին նա ծալտուած փախաւ Ֆրանսիայից, գնաց Բէլգիա Բրիւսսէլ մայրաքաղաքը: Այնտեղ էին փախել կայսրութեան միւս հակառակորդները:

Բրիւսսէլում բանաստեղծը գրեց «Փոքրիկ Նապօլէօն» անունով գիրքը, որի մէջ Նապօլէօն III-ի ոչնչութիւնն էր դուրս բերել: Բէլգիական կառավարութիւնը, վախենալով Նապօլէօնից, առաջարկեց բանաստեղծին հեռանալ իր մայրաքաղաքից և այդպիսով ոտնակոխ արաւ երկրի օրէնքները: Հիւզօն գնաց Անգլիա, բայց այնտեղ էլ չը մնաց, տեղափոխուեց Ջէրսէյ կղզին:

Այդտեղ նա ապրում էր իր ընտանիքի հետ իրրև արքայական: Բայց չէր լռում. այդտեղից էլ նա շարունակում էր գրչով կռուել բնութեան դէմ: Նա հրատարակեց «Պատիժ» անունով գիրքը, որը կարգում էր ամեն մէկը, չը նայած որ խիստ արգելուած էր. կարգացողը վշտի արտասուք էր թափում, լցւում էր անբուականութեամբ: Նապօլէօն Գ.-ը խիստ վիրաւորում էր այդ մտրակող երգիծաբանութիւնից, ուստի և համոզեց Անգլիայի Վիկտորիա թագուհուն աքսորել հեղինակին Ջէրսէյ կղզուց: Այդ էլ կատարուեց. բանաստեղծը նորից սքսոր գնաց Գերնսէյ կղզին: Բայց արքայազայրերը չէին կարող փոխել այն մեծ հոգին, որի մէջ նստած էր ազատութեան, մարդկային իրաւունքի դադափարը: Նոր արքայազայրում նա վերջացրեց «Թշուառներ» անունով իր աշխարհահռչակ վէպը: Այդ գործը դեռ 1848 թուին էր սկսուել, բայց քաղաքական հանգամանքները թոյլ չէին տուել շարունակել նրան: Եւ ահա մեծ բանաստեղծը 1862 թուին, հեռու արքայազայրից, իր հայրենիքին ուղարկեց գթասրտութեան, մարդկայնութեան ամենամեծ գաղափարի և սիրոյ հրաշալի խօսքը: Վէպը միանգամից յայտնի դառաւ ամբողջ աշխարհին. նա միաժամանակ հրատարակուեց Պարիզ, Բրիւսսէլ, Լայպցիգ, Լօնդօն, Միլան, Մադ-

*) Դեկտեմբերի 2-ի և հետեւող օրերի ղեպքերը Հիւզօն նկարագրեց իր՝ «Մի ցանցանքի պատմութիւն» գրքի մէջ:

քիդ, Բօտտերդամ, Վարչալա, Պեչտ և Բիօ-ժանէյրօ քաղաքներում, առաջին տարածութիւնը բաղկացած էր 7,000 օրինակներից և սպառուեց կրկու օրում:

Մի այդպիսի անօրինակ աջողութեան պատճառն ինքը, գրուածքն էր: «Թշուառներ»-ի մէջ կրեւում է Վիկտօր Հիւզօի ամբողջ տաղանդը, որ իր զարգացման ամենաբարձր կէտին էր հասել. դա դժբախտների պաշտպանութիւնն էր, որի մէջ բանաստեղծը գրել է իր ամբողջ հոգին:

Թշուառների այդ մեծ պաշտպանը, բնականաբար, շատ ընդգէմ էր մահուան պատժին: Նա իր հանճարի ամբողջ ոյժով մաքառում էր այդ չարիքի դէմ, որ դեռ այժմ էլ գոյութիւն ունի լուսաւոր Եւրոպայում և Ամերիկայում: Դեռ 1834 թուին Վիկտօր Հիւզօն գրել էր «Կլօդ Գէօ» անունով մի չքնադ վէպիկ, որով նա բողոքում էր մահով վերջացող պատժի դէմ, բողոքում էր ջերմ, ազգու խօսքերով: Նա շատ և շատ անգամ է ինդրել թագաւորներին ներել այս կամ այն յանցաւորին, չը մոռցնել նրան: Շատ անգամ է գիմել մինիստրներին, կառավարչական բարձր պաշտօնեաներին և ամեն անգամ փաստերի քաղցր և համոզիչ լեզուով հաստատել է, որ մարդկութեան պատուին անվայել է մարդ սպանել, որ յանցաւորին պէտք է կեանք շնորհել, զրստել, սովորեցնել լաւ մարդ դառնալ: Այդ առիթով նա հրատարակել է և մի այլ հեղինակութիւն՝ «Մահապարտի վերջին օրը», որ սարսուռ է պատճառում ընթերցողին: Խեղճերի, մահուան դատապարտուածների այդ մեծ դատը նա պաշտպանում էր մանաւանդ իր աքսորի ժամանակ. նրա գրած նամակները, յօդուածները մարդկային սիրտը յափշտակող գեղեցկութեամբ ևն պաշտպանում այդ գործը:

Եւ ոգևորուած բանաստեղծը չէր լռում, անխոնջ աշխատում էր. աքսորի ժամանակ նա հրատարակեց մի քանի հեղինակութիւններ, որոնց մէջ յայտնի են «Ծովի բանուորներ», «Մարդը, որ ծիծաղում է». գրանք ամբողջ աշխարհում աջողութիւն գտան:

1867 թուին Պարիզում բացուեց համաշխարհային ցուցահանդէս: Այդ ժամանակ Նապօլէօնի կառավարութիւնը յիշեց մեծ աքսորականին: Գեղարուեստի մինիստրը յայտնեց Նապօլէօն Գ.-ին, որ ամեն կողմից Պարիզ հաւաքուող մարդիկ կը զարմանան, տեսնելով թէ որքան է ընկել ֆրանսիական թատերագրութիւնը, քանի որ բոլոր թատրոններում ներկայացնում են միջակ և յիմար գրուածքներ: Նապօլէօնը ստիպուած եղաւ զիջանել և թոյլ տուեց, որ Հիւզօի մի քանի պիէսները ներկայացնեն: Ներկայացումները մեծ աջողութիւն ունեցան. ֆրանսիական

ամենայն դրագէտները նամակ գրեցին տարագիր հեղինակին և յայտնեցին իրանց ջաւը նրա բայակալութեան առիթով: Նապօլէօնի այդ շնորհը, սակայն, չը կաշտուց հեղինակին: Հէնց այդ ժամանակ նա հրատարակեց մի նոր բանաստեղծութիւն, որի մէջ պախարակում էր Նապօլէօնին և Հռոմի Պիոս պապին: Իտալիայի վրայ գործ դրած ճնշման և Գարիբալդիի դէմ կոիւ սկսելու առիթով: Նապօլէօնի կայսրութիւնը նորից սկսեց վախել այդ մարդուց և նորից արգելեց նրա պիէսները:

Անցնում էին տարիներ, Վիկտոր Հիւգօն ծերանում էր օտար երկրում, նրան տոչորում էր հայրենիքի կարօտը, բայց և այնպէս, նա չէր կամենում հայրենիք վերադառնալ, թէև Նապօլէօնը ներումն էր շնորհել աքսորւածներին: Նա չէր ընդունում, որ Նապօլէօնը ունենայ ներկու, այն էլ անմեղ մարդկանց ներկու իրաւունքը:

1868 թուին, աքսորաւայրում, միուաւ բանաստեղծի կինը: Այդ մահը մեծ վիշտ պատճառեց «Թշուառներ»-ի հեղինակի մեծ սրտին:

Բայց մօտենում էր ժամանակը, երբ հայրենիքը պիտի իր գիրկն առնէր ծերացած, հոշակաւոր որդուն:

Վաթսունական թուականների վերջում Նապօլէօնի կայսրութիւնը քայքայուելու վրայ էր Դժգոհութիւնն օրէցօր շատանում էր, առաջագէմ մամուլը ամեն յարմար դէպքում խայթում էր կառավարութիւնը: Գահի խախուտ ոտներն ամբայնելու համար Նապօլէօնը մտածեց զօրքի յաղթութիւններով զբաւել Ֆրանսիայի սիրտը: Նա մի ջնշին պատճառով, 1870 թուականին, պատերազմ հրատարակեց Գերմանիայի դէմ: Բայց այդ պատերազմ միայն փութացրեց կայսրի անկումը: Սեղան բերդի մօտ Նապօլէօնը գերի ընկաւ գերմանացիների ձեռքը. Փրանսիական կայսրութիւնը ջնջուած հրատարակուեց:

Այդ ժամանակ միայն Վիկտոր Հիւգօն կարելի համարեց Ֆրանսիա վերադառնալ:

Տասն և իննամեայ աքսորից յետոյ նա պիտի տեսնէր իր պաշտած հայրենիքը մի այնպիսի ժամանակ, երբ թշնամին աւերում էր երկիրը, գրաւում էր քաղաքներ, հալածում էր Փրանսիական ջարդուած զօրքերը:

Ֆրանսիայի յայտնի գրող Ժիւլ-Կլարետին այսպէս է նկարագրում մեծ բանաստեղծի վերադարձը.

«Երկուշաբթի, 1870 թուի սեպտեմբերի 5-ին, կայսրութեան անկման միա օրը, Վիկտոր Հիւգօն, որ Բրիւսսել էր գտնուում, մօտեցաւ երկաթուղու կասսային, ուր Ֆրանսիա գնացողներին տոմսակներ էին վաճառում:

և ասաց մի ձայնով, որ ակամայ զողում էր յուլմունքից. «ճոմսակ մինչև Պարիզ»:

«Ես հիմա էլ տեսնում եմ նրան... Թաղիքի կակուղ ղլխարկը գլխին, կաշեպաշտակով ուսով զցած՝ նա գունատ էր, յուղում. մօտենալով կասասլին, ակամայ նայեց ժամացույցին, կարծես, ուզում էր բողբոլվին ճիշտ խմանալ այն լուպեն, երբ վերջանում էր իր աքսորը:

«Քանի՜ տարի—տասն և ինն տարի էր անցել այն օրից, երբ նա թողեց այդ Պարիզը, որ նուաճում էր՝ նրա հանճարով, թողեց և այն ամենը, ինչ որ նրա կեանքն էր—բնակարանը, որին նա սովորել էր, սիրած զբոսը, կահ-կարասիքը և մինչև տնդամ վեց հատ դեռ չը չորացած թերթիկները, որոնց վրայ նրա վերջին ոտանատրոսներն էին գրուել:

«Այժմ ամեն ինչ վերջացավ Այժմ ոչ թէ ամիսներով, այլ լուպեն-բով պէտք էր հաշուել այն ժամանակը, որ բաժանում էր նրան այն իսկ վայրկեանից, երբ նա կարող կը լինէր բացականչել. «Ահա՜ Ֆրանսիան»:

«...Ներկաթուղու գնացքը շարժուեց. Բանաստեղծը նստել էր իմ և Անտոնին-Պրոտսի հանդէպ և նայում էր պատուհանին, սպասելով այն լուպենին, երբ սահմանը կ'անցնենք և նա կը տեսնէ հայրենիքի ծառերը, մարգերը, հողը, օդը և երկինքը: Ես երբեք չեմ մոռանալ այն ցնցող տը-պատորոթիւնը, որ զործեց այդ 68 տարեկան աքսորական ծերունու վրայ Ֆրանսիական առաջին պատահած զինուորի տեսքը:

Դա պատահեց Լանդերսիում: Վինուալի զօրաբաժնի ղեկավարը նա-հանջում էին Մեյլիէրից դէպի Պարիզ. խոհուկ զինուորները չողնած, փո-շեթաթախ, ցեխոտ գունաթափ, վհատած նստոտած էին կամ պառկած, եր-կաթուղու գծի վրայ: Նրանք հեռանում էին գերմանական առաջ արշա-տող զօրքերից և աշխատում էին մօտենալ Պարիզին, որ զոր չը դառնան մի այնպիսի աղէտի, որը Սեղանի մօտ Ֆրանսիական վերջին բանակը գերմանական բերդերի բաժին դարձրեց:

«Նրանց աչքերի մէջ կարելի էր կարդալ պարտութիւն. նրանց ամ-բողջ արտաքինը խօսում էր բարոյական ծանր չողնածութեան մասին. լինելով լուս, բթացած, ջարդուած, նրանք չիշեցնում էին քարերի այն բեկորները, որոնց անձրին հեղեղները փոթորիկներից չետոյ առաջ են մղում լեռնային ճանապարհներով: Բայց և այնպէս, դրանք մեր Ֆրանսի-այի զինուորներն էին, դրանց վրայ մայրենի սիրած նշանազգեստը կար... Նրանք իրանց հետ ամբողջ էին տանում եռագոյն դրօշները, նրանք էին ազատիւ այդ դրօշները այդ կործանման մէջ: Արտասուների խոշոր կա-թիլներն իսկույն ցոլացին Վիկտոր Հիւգօի տխուր աչքերում:

«Վախ ընկնելով վագօնի պատուհանից, ծերունին գոչեց ինքն իրան կորցրած, մի բարձր և զողոթնուն ձայնով. «Ենցե՜ Ֆրանսիան, կեցցե՜ զօրքը, կեցցե՜ հայրենիքը»:

«Զինուորները չողնածութիւնից ճնշուած նայում էին գնացքին մի մահացած և բուրժ տեսքով, չէին հասկանում:

«Նա շարունակեց գոչել խրախույսներ.

«Ո՛չ, ո՛չ այդ ձեր մեղը չէ, դուք ձեր պարտքը կատարել էք»:

«Ես երբ գնացքը շարժուեց, արտասուները դանդաղ կերպով հոսեց նրա՝ թշերով, կորչելով սպիտակ միրուքի մէջ:

«Տերնիէում—ահա մի ուրիշ չիշողութիւն, որով ես հպարտանում եմ —Վիկտոր Հիւգօն առաջին անգամ ճաշեց Ֆրանսիայում:

«... Սենք մտանք սեղանատունը. համարեա թէ ոչինչ չը կար-Քիչ հաց ու պանիր կերանք, գինի խմեցինք. այդ էր մեր ճաշը: Ես խն-

դրեցի Վիկտոր Հիւգօին, որ ինձ պատիւ անէ և հայրենիքում կերած այդ առաջին ճաշը ինձնից ընդունէ: Նա համաձայնեց և ես տեսայ թէ ինչպէս նա յուզուած իր գրպանը կոխեց մի կտոր այն հացից, որով նա առաջին անգամ կշտացաւ նորից դատած հայրենիքում:

—Ճաշ դեռ ինձ մօտ է, ձեր հացի կտորը, ասում էր նա յետոյ:

Ճաշ ճիշտ որ միշտ պահեց Տերնիէի այդ հացի կտորը:

Պարիզի հիւսիսային վտակալում ապաստում էին նրան:

—«Կեցցէ՛ Վիկտոր Հիւգօն. կեցցէ՛ Վիկտոր Հիւգօն», գոչում էին դիմաւորողները...

—«Պարոններ, կամաց, լսնդրում եմ ձեզ»,— ասաց զլխաւոր վիրաբոյժներից մէկը.—«չստեղ վիրաւորուածներ կան: Եւ նա ցոյց տուեց վիրաւորուած զինուորներ² վտխալեղով վազօնները, որոնցից արիւն էր կաթում երկաթուղու վրայ:

«Վիկտոր Հիւգօն նշան արաւ Ամենքը՞լեցին»:

Տեղ հասնելուց մի քանի օր յետոյ, գերմանական զօրքը մօտեցաւ Պարիզին, սկսեց պաշարումը: Վիկտոր Հիւգօն ֆրանսերէն և գերմաներէն լեզուով մի թուղթ գրեց գերմանացիներին, որի մէջ նա համոզում էր նրանց վերջացնել այդ պատերազմը, որ սկսել էր Նապօլէօնը: «Առաջ քան ցոյց կը տաք աշխարհին մի այսպիսի տեսարան, մտածեցէ՛ք... Գերմանացիները, որոնք վանդալներ են դառել... բարբարոսութիւն, որ ոչնչացնում է քաղաքակրթութիւնը... Գիտէ՛ք, ինչ կը լինի ձեզ համար այդ յաղթութիւնը.—անպատուութիւն»:

Բայց գերմանացիները չը լսեցին. նրանց մամուլը թշնամական դոգոյներով պատասխանեց մեծ բանաստեղծի այդ մարդասէր խօսքերին: Մի գերմանացի հրապարակախօս գրեց. «Կախեցէ՛ք բանաստեղծին կայմից»:

Այն ժամանակ Վիկտոր Հիւգօն գրեց մի կրակոտ հրաւեր ֆրանսիական ազգին. նա բոլորին կանչում էր պաշտպանել հայրենիքը: Նրան ինդիկային չըջել ամբողջ ֆրանսիան և այդպիսի ճառեր կարդալ, բայց նա մնաց պաշարուած մայրաքաղաքում և ինքն էլ կամաւոր զինուոր գրուեց:

Պարիզի պաշարման ժամանակ նրա բոլոր հեղինակութիւնները ժողովրդական սևփականութիւն դարձան. դրանց վաճառումից կամ բեմի վրայ ներկայացնելուց գոյացած ամբողջ արդիւնքը գործ էր ածւում թնդանօթ, զէնքեր դնելու, աղքատ զրազէտներին և այլ քաղցածներին օգնելու համար:

Պաշարուած, սովի սարսափներին մատնուած Պարիզում Վիկտոր Հիւգօն յօժարութեամբ տանում էր այն բոլոր տառապանքները, որոնք մի էին բոլորի համար: Նա երբեմն իր սուռնը ճաշի էր կանչում իր բարեկամներին, միմիստքներին և ազգային պաշտպանութեան համար կազմուած կառավարութեան անդամներին:

— Էգուց ճաշին ինձ մօտ եկէք, ես ձեզ համար խնճոք պիտի սարքեմ, ասում էր նա:

Բայց ինչ խնճոք: Սեղանի վրայ մատուցանում էին ամեն տեսակ կենդանիներ— ձիու, մկան, կատուի, շան մսեր:

Նա առոյգ էր, ուրախ և զուարթ իր բարեկամների չըրջանում: Բայց երեկոներն ու գիշերները նա քնից զրկուած, ախուր ու արտում երկար թափառում էր պաշարուած քաղաքում և մտքում յօրինում էր «Սոսկալի տարի» անունով աշխատութիւնը:

Պարիզի պաշարման վերջանալուց յետոյ Վիկտօր Հիւգօն ընտրուեց Ազգային Ժողովի պատգամաւոր, բայց այս անգամ երկար չը մնայ այդ պաշտօնում: Նա համաձայն չէր, որ յաղթուած Ֆրանսիան հաշտութեան դաշինք կապէ Գերմանիայի հետ, նա համաձայն չէր, որ ֆրանսիական երկու նահանգները — Ալզաս և Լօրէն յանձնուին Գերմանիային: Սակայն նրա պահանջները չընդունեցին և նորից սկսուեց թշնամութիւնը նրա դէմ: Այդ ժամանակ միտաւ նրա կրտսեր որդի Շարլը և նա ախրած՝ նորից հեռացաւ հայրենիքից, զնայ Բրիւսսէլ: Ֆրանսիայում նոր կազմուած կառավարութեան մարդիկ այնքան հակառակութիւն ցոյց տուին, որ բէլգիական թագաւորից պահանջեցին հեռացնել բանաստեղծին Բրիւսսէլից: Նա հեռացաւ այդ տեղից, սկսեց ճանապարհորդել. միայն 1877-ին վերադարձաւ Պարիզ: 1874 թուականին հրատարակուեց նրա վերջին վէպը՝ «Իննսուն և երրորդ թուական» վերնագրով:

Եւ այնուհետեւ նա մինչև մահ մնաց հայրենի քաղաքում: Նրա վառըր համաշխարհային էր դառել, նրա հանճարին պատկառանքով գլուխ էին տալիս ամեն դասակարգի մարդիկ: Պատմում են, որ մի անգամ Բրադլիիայի կայսր Դօն-Պեդրօն այցելեց բանաստեղծին. սենեակը մանեկուն պէս կայսրը այնքան շփոթուեց, որ ասաց.

— Ինձ սիրտ տուէք, պ. Վիկտօր Հիւգօ, ես քիչ շփոթւում եմ:

Բայց Հիւգօն այնպիսի մարդ չէր, որից կարելի լինէր վախել. թէև ծերացած, նա հոգով և մարմնով առոյգ, միշտ խօսող, ծիծաղող, ուրախացնող մի մարդ էր: Մանաւանդ նա անսահման, մոլեռանգութեան հասնող սէր ունէր դէպի մանուկները: Նա մինչև անգամ մի գիրք հրատարակեց՝ «Պապ դառնալու արուեստը» վերնագրով: Թէև այդ գրքի առիթով շատերն էին մեղադրում հեղինակին, բայց բանաստեղծն իր մեծ, մարդասէր սրտի զգացմունքն այսպէս էր բացատրում. «Խոստովանում եմ— իմ գործը չէ խիստ լինել: Այդ վարդերը փշեր ու-

նեն, ասում էք դուք... Ոչնչացրէք փշերը, իսկ ես վարդերի հոտն իմ ներշնչումն:

Եւ իրաւ: Նա պաշտում էր իր երկու թոռներին—Ժօրժին և Ժաննային:

—Տեսնում ես, ասում էր նա իր ծնկան վրայ նստած թոռան.—պապն էլ մի բանի պէտքական է. նրա վրայ կարելի է նստել:

Եւ մոռանալով, որ ինքն ունի մի մեծ, պատկառելի անուն, մոռանալով այդ անունն հետ կապուած փառքը, բանաստեղծը խաղ էր անում մանուկների հետ, տիկնիկի հարսանիքներ, տօներ էր սարքում: Իսկ երբ ծնողները պատժում էին երեխաներին, փակում էին նրանց առանձին սենեակում, պապը մոռանից քաղցրեղէններ էր վերցնում և կամայցուկ մըտնում էր բանտարկուածների մօտ, նրանց էր տալիս այդ քաղցրեղէնները: Նա իր ծանօթներին խնդրում էր, որ իրան այցելելիս բերեն իրանց երեխաներին: Մի անգամ մի գրող իր ութ տարեկան որդուն բերեց նրա մօտ: Հայրը որդուն բացատրել էր թէ ինչքան մեծ պատիւ է ընդունուած լինել հանճարեղ բանաստեղծի մօտ. և հէնց այդ պատճառով խեղճ երեխան սառած էր մնացել, չէր շարժւում և զօռաբովանակում էր շունչ քաշում: Վիկտօր Հիւգօն ասաց հօրը.

—Սիրելիս, ձեր որդին անկասկած հիւանդ է:

—Ո՛չ, հաւատացնում եմ ձեզ, պատասխանեց սաստիկ դարմայած հայրը:

—Ի՞նչպէս չէ. նա մօտ կէս ժամ այստեղ է և դեռ մի բան չէ կոտրել:

Բայց չը նայած, որ բանաստեղծն այնքան սիրուած էր ֆրանսիայում, այնքան հռչակուած էր աշխարհում, հանրապետական կառավարութիւնն անգամ արգելել էր նրա պիէսների ներկայացումը: Վերջապէս, 1877 թ. նոյեմբերին, աշխարհըռչակ Սառա Բերնարը ներկայացրեց «Էրնանին»: Իսկ 1880 թուականին ֆրանսիական թատրոնում տօնում էին այդ պիէսի յիսնամիակը: Ժողովուրդը ողբերգուած՝ «չատ տարիներ» էր կանչում հեղինակին:

Նոյն 1880 թուականին Վիկտօր Հիւգօն հրատարակեց իր բանաստեղծութիւնների ժողովածուն, որոնք գրուած էին 1818 թուականից մինչև հրատարակութեան օրերը: Մի պատկառելի թիւ են կազմում այդ ոստանաւորները, որոնք գրուած են զանազան ժամանակներ և պարունակում են իրանց մէջ ոչ միայն բանաստեղծական ներշնչման աննման զոհարներ, այլ և մի քա-

ղաքական գործիչի, ազատութեան համար մարտնչողի ամբողջ թափը, հոգու կրակը:

Այսպէս, օրինակ, «Արեւելեան Մօտիւններ» ընդհանուր վերնագիրը կրող ոտանաւորներից մի քանիսը նուիրուած են այն հերոսական կռիւներին, որ մղում էին յոյները 1820-ական թուականներին թիւրքերի դէմ՝ իրանց հայրենիքը ազատելու համար: «Դարերի Լեդենդաները» կրգում են զանազան հին պատմական անցքեր և աւանդութիւններ: «Պատիժ» վերնագրի տակ ոտանաւորները մի երկար շարք դատապարտում է Նապօլէօն III-ին՝ 1852 թուի դեկտեմբերի 2-ին կատարած յեղափոխութեան պատճառով: Այդտեղ հանրապետական Հիւզօն իր սրտի ամբողջ դառնութիւնն է թափել այն մարդու վրայ, որ խլաց Ֆրանսիայից ազատութիւնը, որ թափեց ժողովրդի աքիւնը իր փառամոլ նպատակների համար: «Սոսկալի տարի» վերնագրով ոտանաւորները, ինչպէս ասացինք, ֆրանս-պրուսական պատերազմի և Պարիզի պաշարման ժամանակներն են նկարագրում: Այդտեղ Վիկտոր Հիւզօն հանձարը վառ հայրենասիրութեան հետ ներկայացրել է մի յաղթուած ազգի բաքոյական ոյժը, հպարտութիւնը և պատերազմի սարսափները, մարդկային վայրենութեան արհաւիրքները:

Խորին ծերութեան էր հասել Հիւզօն, բայց շարունակ աշխատում էր, չէր յոգնում: Նա ընտրուած էր Ֆրանսիական Սենատի անդամ, միշտ յաճախում էր նրա նիստերին, խօսում էր, գործում: Իսկ տանը նա էլի գրում էր: Եւ ամեն տեղ—թէ Սենատի ժողովում, թէ հրապարակում, թէ իր տանը գրելիս՝ նա մի և նոյն Վիկտոր Հիւզօն էր, նրա մտքերը մինչև նրա վերջին շունչը մնային մի և նոյնը—մարդասիրական, բռնութեան անհաշտ թշնամի:

1881 թուականի փետրուարի 27-ին Ֆրանսիան տօնեց իր բանաստեղծի ծննդեան ութսունամեակը: Դա ազգային ամենամեծ մի տօն էր: Պարիզ էին հաւաքուել բազմաթիւ մարդիկ ոչ միայն Ֆրանսիայի քաղաքներից, այլ և ամբողջ Եւրոպայից: Նախընթաց օրը, 26-ին, մինիստրների խորհրդի նախագահ Ժիւլ-Ֆերրին իր քարտուղարի հետ գնաց ծերունի բանաստեղծի բնակարանը, անձամբ շնորհաւորեց յօբելեարին և Ֆրանսիական կառավարութեան կողմից մի թանկագին ընծայ տուեց նրան:

Միւս օրը սկսուեց անօրինակ տօնը: Պարիզի ճարտարապետը բանաստեղծի ամբողջ տունը զարդարել էր անհամար ծաղիկներով, որ ամեն կողմից հանձարի յարգողներն էին ուղարկել: Մօտ հինգ հարիւր հազար հոգուց բաղկացած ժողովուրդը հանդիսով անցաւ բանաստեղծի տան մօտով, ցոյցեր ա-

րաւ: Անթիւ պատգամաւորներ բերում էին պսակներ, չնորհաւորական ուղերձներ:

Ամենից առաջ բանաստեղծին ներկայացաւ փոքրիկ աղջիկների պատգամաւորութիւնը: Այդ խումբը կրում էր կապոյտ և վարդագոյն դրօշակ, որի վրայ գրուած էր. «Պապ դառնալու արուեստին»: Պատգամաւորութիւնը մտաւ հիւրասենեակը. Վիկտոր Հիւզօն բոլորի փոխարէն համբուրեց ամենից փոքրին: Յետոյ այն մանուկը, որ կրում էր կապոյտ և վարդագոյն դրօշակը, կարդաց այդ օրուայ համար գրած մի բանաստեղծութիւն: Վիկտոր Հիւզօն արտասուելու չափ յուզուեց:

Քաղաքային խորհրդի պատգամաւորութեան բանաստեղծն ասաց. «Ողջունում եմ Պարիզը: Ողջունում եմ սհագին քաղաքը, ողջունում եմ նրան ոչ թէ իմ կողմից, որովհետեւ ես ոչինչ եմ, այլ այն ամենի կողմից, որ ապրում է, դատում է, մտածում է, սիրում է և աշխարհի վրայ յոյս ունի»:

Ամբոխը գոչում էր. «Կեցցէ Վիկտոր Հիւզօն, կեցցէ բանաստեղծը»:

Կարելի է ճշմարտապէս ասել, որ ոչ մի մարդու—կենդանութեան ժամանակ—այնքան ոգևորուած չեն տօնել, ինչպէս Վիկտոր Հիւզօն, և ճշմարիտ էր մի ֆրանսիացի, որ ասում էր. «Նա կենդանի ժամանակ անմահացաւ»:

Անցաւ այդ օրից չորս տարի:

Մայիսեան մի գիշեր, մի ահազին ամբոխ, չը նայած վատ եղանակին, խմբուած էր բանաստեղծի տան առաջ, տեղեկութիւններ էր պահանջում հիւանդի մասին, որի դրութիւնը, վերջին օրերում, յուզում էր ամբողջ Ֆրանսիան: Ժամանակ առ ժամանակ տնայիւններից մէկը փողոց էր դուրս դալիս, հաղորդում էր ամբոխին տեղեկութիւն, որ իսկոյն կայծակի նման թռչում էր քաղաքի բոլոր անկիւնները:

Օրը լուսացաւ, մայիսի 22-ը: Նրբ տունը չըջապատած հաղարուոր մարդկանց յայտնեցին, որ մեծ բանաստեղծը, մեծ մարդը այլ ևս չը կայ, լուսեցաւ բարձրաձայն հեծկլտանք: Մահը վրայ էր հասել 1885 թ. մայիսի 22-ին, կէսօրուայ 1 ¹/₂ ժամին: Տխուր լուրը կայծակի արագութեամբ թռաւ ամեն կողմ և համարեա ամբողջ Պարիզը հաւաքուեց բանաստեղծի տան մօտ:

Թաղումը վճռուած էր կատարել ամբողջ ազգի հաշուով, որովհետեւ ամբողջ Ֆրանսիան խորապէս զգում էր այդ կորուստը: Պատգամաւորների ժողովը 20,000 ֆրանկ նշանակեց թաղման համար: Թաղման օրը ազգային սուգի օր հռչակուեց. բոլոր հասարակական տեղերը, ուսումնարանները փակուած էին այդ

օրը. պատգամաւորները ժողովը, Սենատը ի նշան սուգի՝ փակեցին իրանց նիստերը: Մի և նոյնն արաւ և Ակադեմիան. այս վերջին պատուին դեռ ոչ ոք Ֆրանսիայում չէր արաժանացել:

Հանգուցեալի զմոսած գիակը մի օր ու գիշեր գրած էր Ելիսեան դաշտի յաղթական կամարի տակ. և ամեն մէկը, ծեր թէ երիասարդ, գիտնական թէ անգրագէտ, հարուստ թէ աղքատ, կարծես, ուխտ էր գնում այդ դագաղի մօտ և երկրպագում էր անշուշտ գիակին:

Հանրապետութեան նախագահ Ժիւլ-Գրեվին մի նամակ գրեց բանաստեղծի հարսի երկրորդ ամուսնուն և այդ նամակի մէջ յայտնում էր իր խորին յաւակցութիւնը:

Վիկտօր Հիւգօն իր կտակի մէջ խնդրել էր, որ իրան թաղեն այնպէս, ինչպէս թաղում են աղքատներին, մի եղևնեայ հասարակ դագաղի մէջ: Այդ խնդրքը կատարուեց. դագաղը տարան Պանթէօն, ուր շատ քիչերին է վիճակում թաղուել, այն խղճուկ զիակառքում, որ միշտ կրում էր խեղճերի գիակները: Բանաստեղծը իր գրչով աշխատել էր հինգ միլիօն ֆրանկ. այդ հարստութիւնից 1¹/₂ միլիօն նա կտակել էր աղքատներին, իսկ մի միլիօն նշանակել էր աղքատ երեխաների ապաստարան շինելու համար:

Մի հրաշալի արև օր էր, 600,000-ից աւելի մարդիկ ճանապարհում էին հանգուցեալ բանաստեղծին յաւիտենական հանգստի տեղը: Երբեմն-երբեմն որոտում էր թնդանօթը: Պարիզի բոլոր տները զարդարուած էին սգի սև դրօշակներով:

Եւ այսպիսի հանդիսով Ֆրանսիան թաղում էր ոչ թէ մի «աշխարհակալ հերոսի», որ ամեն տեղ մահ և աւերումն էր տարածել, այլ մի «ծեր բանաստեղծի», որ իր կեանքի սկզբից մինչև վերջը ձգտում էր հասցնել մարդկութիւնը խելաւի, ազատ, վայելուչ կեցութեան:

Նոյն այդ «ծեր բանաստեղծի» ծննդեան հարիւրամեակն է, որ այսօր տօնում է Ֆրանսիայում իբրև աղգային տօն:

Եւ երախտագէտ հայրենիքը դեռ էլ շատ առիթներ կ'ունենայ իր հիացմունքի և ոգևորութեան ցոյցերով յարգելու իր մեծ զաւակի անմահ յիշատակը: Երանի այն հայրենիքին, որ այսպիսի պարտականութիւններ է կատարում...

Լ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիական կուսակցութիւնների վերաբերմունքը դէպի հաշտութեան հարցը.—Լօրդ Բոզրէրիի Լիվերպուլեան ճառը.—Անգլո-եապոնական դաշնակցութիւն.—Գերմանիան Մերձաւոր Արեւելքում.—Բաղդադի երկաթուղին.—ձուխ հաչրենիք և իրաւադուրկ աղագրնակութիւն.—Մի հակապատկեր դրան.—Իսլանդիայի ինքնավարութեան ընդարձակումը։
Սանասարեան զայրոյցի տեղափոխութիւնը։

«Ես կարծում եմ որ արտայայտած կը լինեմ համարեա ամբողջ ազատական կուսակցութեան կարծիքը, եթէ ասեմ թէ խաղաղութիւնը կարող է հաստատուել միայն յօժարակամ հաշտութեան ճանապարհով և ոչ բռնութեամբ, բանակցութիւններով և ոչ ստրկացմամբ, և թէ միայն յիշած ձևով կնքուած խաղաղութիւնը կարող է հիմք լինել՝ վերականգնելու բարեսոյակամ յարաբերութիւններ բրիտանական և հօլլանդական ցեղերի մէջ Աֆրիկայում»։ Այսպէս ձևակերպեց իր կարծիքը ազատական կուսակցութեան պարագլուխ Հէնրի Կեմպբէլլ-Բաններման, վերջերումս արտասանուած իր մի ճառում։ Սակայն այլ կերպ են մտածում պահպանողականները։

«Բօէրներին չը պէտք է թողնել անկախութեան նոյն իսկ նշոյլը, ասաց Սօլսբերին. բօէրները պէտք է խաղաղութիւն խնդրեն, որովհետև նրանք սկսեցին պատերազմը։ Երբ նրանք խաղաղութիւն կը խնդրեն, մենք այն ժամանակ կը թելադրենք նրանց մեր պայմանները»։ Չեմբերլէնն էլ համայնքների ժողովում յայտնեց. «Մենք ուզում ենք հաշտութիւն, սակայն հաստատ հաշտութիւն, իսկ դրա համար անհրաժեշտ է որ յաղթուած ազգութիւնը խոստովանի իր պարտութիւնը։ Այդ բնաւ ստորեցուցիչ չի լինի նրա համար։ Կառավարութիւնը զնախատում է բօէրների արիութիւնը ու դիմացկանութիւնը և ոչ մի վրէժխնդրական զգացումներ չէ տածում դէպի նրանց։ Նա պատ-

րաստութեամբ կը քննի բօէրների խնդիրքի բոլոր առաջարկութիւնները և, հաշտութիւնը կնքելուց յետոյ, կ'աշխատի գործադրել ներուսն ամենալայն չափերով. սակայն կառավարութիւնը չի անի ոչ մի բան, որ կարող լինի համարուել թուլութիւն կամ տատանում:

Այդպէս էին խօսում ներկայ կառավարութեան ղեկավարները և, երբ Հօլլանդիան առաջարկեց իր բարեկամական միջնորդութիւնը Անգլիայի և բօէրների մէջ, Չեմբերլէնը պատասխանեց թէ Հօլլանդիայում ապրող բօէր առաջնորդները չունեն լիազօրութիւն՝ հաշտութեան համար բանակցելու: Այդ հարցում համակարծիք չէ կառավարութեան տեսակէտին ազատական-իմպերիալիստների պարագլուխ լօրդ Բօլբէրին. քննադատելով ներկայ կառավարութեան պատերազմ մղելու միջոցները, դատափետելով լօրդ Կիտչենէրի յայտնի կոչը, նա կարծում է, որ կարելի էր պատերազմը վերջացնել դեռ մի տարի առաջ և այժմ սխալ է մերժել Հօլլանդիայի միջնորդութիւնը, արդարանալով որ խաղաղութեան բանակցութիւններ իբրև թէ կարելի է սկսել միայն բօէրների այն առաջնորդների հետ, որոնք կուռում են Հարաւային Աֆրիկայում:

Իր հինգամեայ մեկուսացած դրութիւնից կրկին քաղաքական ասպարէզ գտնու գալով, լօրդ Բօլբէրին ուզում է մի նոր ծրագիր. նա պահանջում է որ ազատական կուսակցութիւնը «ջնջի տախտակի վրայ գրած հին գրերը» և նորերը գրի...

Լիվերպուլում արտասանած իր ճառում, ի միջի այլոց, նա ասաց հետևեալը. «Հինգ տարիների ընթացքում, երբ ես քաղաքականութիւնից հեռու էի կանգնած, շատ բան փոխուեց, առաւելապէս իրլանդական դործը բոլորովին այլ կերպարանք ստացաւ: Հօմբուլը թաղուած է: Իրլանդացիները կտրեցին կապը ազատական կուսակցութեան հետ: Միւս կողմից պահպանողական կառավարութեան մէջ իրլանդական քաղաքականութեան նկատմամբ նոր հոսանք մտաւ: Իրլանդիան ստացաւ ինքնավարութիւն դեմօկրատիական հիմունքներով և այդ կողմից կանգնեց Շօտլանդիայի և Ուէլսի հետ մի մակերեսովի վրայ: Նրա դրութիւնը նոյն իսկ աւելի նպաստաւոր է այն կողմից, որ նրա ներկայացուցիչների թիւը պարլամենտում անհամապատասխանօրէն մեծ է: Բացի այդ, իրլանդացիները վերջին տարիներս ընդունել են դործելու նոր եղանակ, որ բացայայտ կերպով թշնամական է գէսլի Անգլիան: Իրլանդական պարագլուխները ուղղակի յայտնում են, որ իրլանդացիների ղինումը ապստամբութիւնը Անգլիայի դէմ միայն բարեպատեհ վարկածն է: Այն բանից յետոյ, երբ հա-

բաւ-աֆրիկական պատերազմի ժամանակ իրանդացիները Անդ-լիայի թշնամիների կողմն էին, այլ ևս անկախ իրանդական պարլամենտը (հոմրուլ) չի կարող տեղ դնել անգլիական կուսակցութեան ծրագրի մէջ»:

Այդ խօսքերից շատ պարզ է, որ լօրդ Բօլդէրին իր հայեացքներով բոլորովին մօտենում է ունիօնիստներին, որոնք Գլադստօնի ժամանակ բաժանուեցին ազատական կուսակցութիւնից հոմրուլի հարցի պատճառով: Այդպէս ահա վիհ է այժմ բաժանում ազատական-իմպերիալիստների և գլադստօնեան իդէալներին հաւատարիմ մնացած ազատամիտների մէջ: Թէև պաշտօնապէս դեռ ընդդիմադիր (ազատական) կուսակցութիւնը անջատուած չէ համարւում երկու մասի, սակայն դա ժամանակի հարց է, արուեստական կերպով անկարելի է կապել տարբեր աշխարհայեցողութիւն ունեցող գործիչներին:

Մինչ չարունակւում է Հարաւային Աֆրիկայում պատերազմը, Անգլիան ձգտում է դուրս գալ իր առանձնացած զիւրքից և դաշնակիցներ գտնել, ապագայ միջազգային բարդութիւնների ժամանակ մենակ չը մնալու նպատակով: Մի տարի առաջ նա, ինչպէս յայտնի է, զաղտնի համաձայնութիւն էր կայացրել Գերմանիայի հետ Հեռաւոր Արեւելքում: Այժմ խօսւում է մօտ ապագայում Էդուարդ VII և Վիկտօր էմմանուէլի տեսակցութիւնների մասին Կաննում: Երեւի այդ բարեկամութեան ճանապարհը հարթելու համար էր Չեմբերլէնը յետ վերցնում մալտացիներին և իտալացիներին զժողովութիւն պատճառող իր այն հրամանը, որով Մալտա կղզու վրայ անգլիկներէնը դառնում էր սլաւոնական լեզու, փոխարէն իտալերէնի:

Գուշակւում էր, իսկ այժմ իրողութիւն դառաւ արդէն անգլո-եապօնական դաշնակցութիւնը, որի նպատակն է՝ պահպանել Չինաստանի և Կօրէայի ամբողջութիւնն ու անկախութիւնը: Գլխաւոր պարտաւորութիւնը, որ փոխադարձաբար վերցնում են իրանց վրայ Անգլիան և Եապօնիան, կայանում է ներանում, որ զրանք պահպանելու են խիստ չէզոքութիւն այն դէպքում, եթէ մէկը իրանցից պատերազմի բռնուի, և պարտաւորւում են իրար օգնութեան դալ այն դէպքում, երբ ընդհարում պատահի իրանցից մէկի և աւելի քան մէկ պետութեան մէջ: Այդպիսով Հեռաւոր Արեւելքում Եապօնիան և Անգլիան ուղում են կանգնեցնել Հիւսիսային Հսկայի, Ռուսաստանի, ընդարձակումը ի հաշիւ Չինաստանի և Կօրէայի: Այդ հարցում շահագրգռուած է Խաղաղ ովկիանոսի վրայ իշխող և մի այլ պետութիւն—Միացեալ-Նահանգները, որ հաշտ աչքով չէր նայում Ռուսաստանի քայլերին Մանջուրիայում: Ռուսաստանի ձգտու-

մը՝ ստեղծել իր համար Մանջուրիայում արտօնեալ դրութիւն՝ համարում է ամերիկական այդ մեծ հանրապետութեան կողմից հակառակ «բաց դռների» քաղաքականութեան, որ ընդունուած է բոլոր մեծ պետութիւններից Չինաստանում:

Հեռաւոր Արևելքում յիշած պետութիւններին համակիր է երևում և Գերմանիան, որը սակայն աւելի գործնական է համարում իր բաները չտկել դեռ Մերձաւոր Արևելքում, Թիւրքիայում: Գերմանիան այդ «հիւանդ մարդու» բնական հարբստութիւնների ժառանգն է համարում իրան: Վատթար կառավարութիւնից թշուառացած այդ երկրի անբաւ բնական հարստութիւնները լաւ ապրուստ են խոստանում Գերմանիայից, հզօր աճողութեան չնորհիւ, դաղթող Միլիէլների համար: Դժուար չէր հիւանդ մարդուն համոզել, որ ռազմադիտական տեսակէտից անհրաժեշտ է ասիական իր ստացուածքի ամբողջ տարածութեամբ երկաթուղու գիծ անցկացնել, որովհետև այդ երկաթուղին միջոց կը տայ սուլթանին, ապագայում, Փոքր-Ասիային հիւսիս-արևելքից սպառնող արշաւանքի առաջ արագութեամբ զօրաբանակներ դուրս բերել: Ահա, երևի, այն գլխաւոր շարժառիթը, որով սուլթանը համաձայնեց Անատոլիի երկաթուղու գերման ընկերութեան 99 տարով էլ Բաղդադի երկաթուղու գծի արտօնութիւնը աւել: Եթէ իսկապէս երկրի «անտեսական բարգաւաճումը» մօտ լինէր կարմիր սուլթանի սրտին, նա հրով և սրով քար ու քանդ չէր անիլ իր տէրութիւնը և չէր ստիպիլ իր ամենաաշխատասէր և խաղաղ ժողովրդին՝ հայերին, թողնել տուն, տեղ և գաղթել հեռու, օտար երկիրներ:

Բաղդադի գիծը պիտի սկսի Կոնիայից. իսկ մինչև այդ կէտը գոյութիւն ունենա՞ չայգար-փաշա—Իզմիր—Էսկի-Շէհիր—Կոնիա երկաթուղին, որ Պոլսից սկսած հարաւ-արևելեան ուղղութեամբ է գնում և շարունակելով մինչև Կարաման՝ բաւական մօտենում է Միջերկրական ծովի եզերքին: Այնուհետև ուղղւում է դէպի արևելք, անցնում է Կիլիկիայով, հասնում Ադանա, որ արդէն երկաթուղով կապուած է ծովեզերեայ Մերսինի հետ: Ապա Ադանայից դիմում է հիւսիս-արևելք Ջիհան գետի հովիտը (Սիսից ոչ հեռու), հասնում է Քիլիս (Հալէպից հիւսիս), անցնում Եփրատի վրայով, ուղղւում հայր Աբրահամի ժամանակից յայտնի Խառան քաղաքը, կտրում պատմական Մծբինը (Նիսիբին) եւ դիմում Տիգրիսի վրայ գտնուող Մօսուլը: Յետոյ, Տիգրիսի ձախ եզերքը քերելով դիմում է հարաւ՝ Բաղդադ, անցնում Քերբէլա և Նէջէֆ իսլամական ուխտատեղիներով մինչև Բասրա և ապա՝ Պարսից ծոց: Այդ գլխաւոր զիծը պէտք է ունենայ մի քանի մասնագէտեր ևս,

օրինակ, դէպի Եդեսիա, Հալէպ և այլն, այնպէս որ գլխաւոր դիժը մասնագծերով 2500 քիլօմետր *) երկարութիւն պիտի ունենայ, Ամբողջ դիժը մասնագծերով միասին 200 քիլօմետրանոց հատուածների է բաժանած: Շինութիւնը պէտք է սկսի ութ կէտերից և աւարտի 8 տարուայ ընթացքում: Գիժը այնպէս պէտք է յարմարեցրած լինի որ արագընթաց զնաքքով Պօլսից Բաղդադ կարելի լինի հասնել 55 ժամում: Արտօնատէր ընկերութիւնը իրաւունք ունի շահագործելու գծի երկու կողմը, 20 քիլօմետր լայնութեան սահմանի մէջ, բոլոր հանքերը, հաստատելու կղիմինտրի, աղիւսի գործարաններ և այլն: Այդ դիժը այնքան մօտեցնում է Հնդկաստանը Լօնդօնին, որ անշուշտ այնուհետև Լօնդօն—Բրինզիզի (Խաալիայում)—Սուէյ—Բօմբայ ուղղութիւնը փոխուելու է և դառնայ Լօնդօն—Պօլս—Կօնիա—Մօսկւ—Բաղդադ—Շատէլ—Արաբ—Բօմբայ դիժը:

Եւրոպացիներն առհասարակ շատ են օգտուելու այդ նոր երկաթուղուց: Հարց է. ինչ պէտք է շահեն բնիկները, մնալով ենթարկուած ամենավատթար բեփմի անիրաւութիւններին: Այդ պայմաններում բնիկները վաղ ուշ կը դառնան՝ դրամազլխով, գիտութեամբ և սեփական օրէնքների հովանաւորութեամբ գերազանց դերմանացիների և այլ եւրոպացիների համար միայն աշխատող պարիաներ կամ, լաւագոյն դէպքում, իրաւադուրկ իւօտներ, ինչպէս հին Յունաստանում...

Աւելի լաւ է, որ օսմանցու հայրենիքը շատ աւելի պակաս ճոխ լինէր բնական հարստութիւններով, թէկուզ հէնց՝ խոնաւ, ցուրտ, մշուշապատ Իսլանդիային նմանէր, միայն թէ տաճկաստանցին այդ բնութեան մէջ վայելէր աղատութիւն և ստրկի օրեր չը տեսնէր:

Հեռու հիւսիսում, Ատլանտեան ուկիանոսի սառն ալիքներով չըջապատած է այդ Իսլանդիան կամ Սառցաերկիրը: Զիւնի ծածկը մինչև յուլիս ամիսը չի հեռանում նրա մակերևոյթից, ձմեռը մի քանի ամիս արեգակի երևալ չի տեսնում նա, հացահատիկները չեն աճում այնտեղ, բայց տեսէք թէ ինչպէս է սիրում մի բուռն իսլանդական ժողովուրդ (70 հազար) իր այդ անհիւրընկալ հայրենիքը, որ ընտրել էին նրա քաջ նախնիքը, գաղթելով դեռ IX դարում՝ Նորվեգիայից, «որովհետև այնտեղ աղատ չէր կեանքը արքաների և այլ կեղեքիչների բռնութիւնների չնորհիւ», ասում են իսլանդական սիւլդիների (աշուղներ) երգերը...

Սակայն բռնակալները այդ հեռու կղզու վրայ էլ հանդիստ

*) Քիլօմետր=469 սաժէնի, վերստից փչ պակաս:

չը թողին ազատասէր մարդկանց. Իսլանդիան XIII դարում նուաճուեց Նորվեգիայից, իսկ XIV-րդ դարում անցաւ Դանիայի ձեռքը: Միայն 1874 թուին իսլանդացիները ստացան լայն սահմանադրութիւն, որ սակայն չէր գոհացնում նրանց: Նրանք պահանջում էին առանձին, իսլանդերէն իմացող և իսլանդիայում միշտ ապրող, սեփական մինիստր: Իսլանդական ազգային ժողովը (ալտինգ) պահանջում էր նաև մի քանի փոփոխութիւններ՝ մտցնել սահմանադրութեան մէջ, որով ընտրողական իրաւունքը աւելի դեմօկրատիական և արդար դառնար: Այժմ, ինչպէս երևում է լրագրական տեղեկութիւններից, Դանիայի թագաւորը համաձայն է իրազօրծել իսլանդացիների այդ պահանջները և նրանք կ'ունենան առանձին մինիստր, որ կ'իմանայ իսլանդերէն լեզուն և միշտ կ'աղբի իսլանդիայի գլխաւոր քաղաքում, Րէյկիավիկում: Նըջանիկ մարդիկ...

Իսկ իսեղծ օսմանցի հպատակներն իրանց հարուստ երկրում չունեն անդամ անձի, գոյքի և պատուի ապահովութիւն. — բարիքներ, որոնց ապահովումը թիւրքիայի քրիստոնեաների համար այնքան մեծ պետութիւններ յանձն էին առել արար աշխարհի տուաջ:

Լ. Ս.

«Բիւզանդիոն»-ի № 1626-ում տպուած է հետեւեալը Սա- նասարեան դպրոցի տեղափոխման մասին.

«Ինչպէս երէկ գրեցինք, Սանասարեան Խնամակալութիւնն զբաղեցնող նոր զործն է Վարժարանին մօտալուտ տեղափոխումն ի Խարբերդ: Յայտնի է և ժամանակին ծանուցուած է ազգային լրագիրներուն մէջ թէ ալս տեղափոխումն արտօնող կաշսերական բարեհաճ Իյտտէն շնորհուած է արդէն Այսպիսի տնօրինութիւն մը կանխաւ ընելու պէտքն զգացած էին Վոսիլախատարն ու Խնամակալութիւնը, որովհետև Վարնոյ քաղաքին մէջ իսկ պատշաճ մեծութեամբ չէնք մը կառուցանելու յարմար գետին չէին կրցած որոշել, թէպէտ այդպիսի շինութեան մը պէտք եղած զրաքն ալ ապահոված է Բարերարը: Բաղմամարդ թաղերու մէջ չէին ուղեր հաստատել զիշերօթիկ վարժարան մը, որ ամէնէն աւելի մաքուր օդի կը կարօտի, և պարտէղի, որուն և բանջարանոցին մշակութեան գործն ալ տեսակ մը ուսում պիտի ըլլար աշակերտներուն: Իսկ բերդաքաղաքին պարիսպէն դուրս շինութիւնն ալ բացարձակ մեկուսացում պիտի ըլլար Հաստատութեան համար, այցելուններուն և մանաւանդ ուսուցիչներուն երթելովը զժուրագնելով: Այն ատենէն հետամուտ եղան ուրիշ կուսակալանիստ կարեր կենդոնի մը մէջ տեղ մը ճարելու, և հանդուցեալ Բարերարին երեք սաներէն Վարժարանին մնալուն ուսուցիչ Սօլիկեան Սարգիս էֆ. բնիկ Խարբերդցի ըլլալով, մատնանիշ ըրաւ Խարբերդ քաղաքին

շատ մօտիկ Սորսորի Վանքին սքանչելի դիրքը, մաքուր օդն ու ջուրը, մշակելի հողերը, քաղաքին մօտ և միանգամայն ապահով և ամեն կերպով չարմար դիրքը՝ Վարելի է օգտուիլ Վանքին շինություններէն, և միանգամայն անոր ընդարձակ շրջափակին մէջ կառուցանել նոր ռոճով շէնք մը։ Խարբերդ նաև իմացական կենդրոն մ'է, ուր մրցելու ասպարէզ կալ Սանասարեանց համար, քանի որ Խարբերդի մէջ զպրոցներն ի վաղուց անտի յառաջադէմ եղած են, և Սմերիկայի և Վատինք կանոնաւոր հաստատութիւններ ունեցած են հոն։ Վերապա Քոլէճը մանաւանդ այն կողմերուն համար ամէնէն բաժնի զպրոցն է տարինէն ի վեր, և Սանասարեանք հոն կրնան յուսով նոր աշակերտներ ունենալ, որք չեն յօժարիր զալ Վարին։ Իսկ Վարնոյ քաղաքին մէջ հաստատուած, երբէք գոհունակութիւն չէր պատճառած տեղւոյն աղջկային վարիչ մարմիններուն, որք միշտ դանդաղած են թէ այս պիշերօթիկ ու ցերեկօթիկ Հաստատութիւն արգելք է Աղջկային Դպրոցին յառաջդիմութեան, քանի որ Վարնեցի հարուստներն իրանց տղաքը լիաթողակ տուած են Սանասարեանին, և Աղջ. Դպրոցը, աղքատիկ ծնողաց զաւակներուն միայն յատկանալով, իր եկամուտի կարեւոր միջոցէն զուրկ մնացած է։ Սորսորի Վանքին հաստատուելով, Սանասարեանք կրնայ մրցիլ Խարբերդի պիշերօթիկ օտար վարժարաններուն դէմ, ինչ որ պէտք է ընէ, լայց ո'չ աղջկային դպրոցներուն դէմ, ինչ որ պէտք է։

Այս հիմնաւոր նկատողութիւններուն վրայ այս օրերս աւելցած է սա նոր պարագան որ Սանասարեանց զրաւած շէնքն Աղկին պէտք է, երկրաշարժի երեսէն ուրիշ աղջկային շէնքերու ծանրապէս քնատուելուն պատճառաւ։ Աղկին Դպրոցն ալ կը կարօտի Սանասարեաններուն վարձու տրուած շէնքին, Առաջնորդարանն ալ Յայտնի է թէ Սանասարեան Վարժարանին շէնքը Վարնեցիք կառուցելու էին իրենց Դպրոցն ըլլալու համար, լայց երբ Սանասարեան Վարժարանի համար մնացուն շէնք մը կ'առուցանելու նիւթական դժուարութիւնն երևան եկաւ, Բարեբարին շնորհապարտ ըլլալու իրիկ յաշտարար նշան, Վարնեցիք առժամապէս 100 լիւրա տարեկան վարձքով փոխ տուին իրենց շէնքը, և ինչպէս կ'ըստի. «իրենց համար նեղ ըրին, Սանասարեանց համար տեղ ըրին»։ Բայց տեսնելով որ այս առժամանակեային վերջը զալիք չունի, քանիցս խնդիր ըրին, և թէ՛ Վտակակատարէն, թէ՛ Վեդր. Աղջ. Վարչութիւնէն խնդրեցին որ Աղկին շէնքն իրեն վերադարձուի, և Սանասարեանք իրենց փարայովն ո'ւր որ կ'ուզեն հոն երթան հաստատուին։ Արդի Առաջնորդն ալ, իր նախորդն ալ միշտ նոյն խնդիրքին ուժ տուին։ Միայն Սանասարեան երեք ուսուցիչները, Բարեբարին սաները, փոթ չէին ընել վերջերս, որովհետև հանգիստը գտած էին քաղաքին մէջ իսկ, և մինչև իսկ իրենց բնակութեան համար շէնքի յաւելուածներ ալ եղած էին։ Իրենց ընտանեկան ու բարեկամական յարաբերութիւններն ապահովելու համար, և նիւթական տեսակէտով ալ շահարեք կացութիւն մը յաւերժացնելու համար, աւելի չարմար տեղ մը չէին կրնար երևակայել։ Ուստի, անտարբեր կը գտնուէին տեղափոխութեան զաղափարին։ Բայց հիմա կ'երևի թէ անոնք ալ կը հասկանան որ վերջ մը պէտք է տրուի այս առժամեայ զրոթեան, և Աղկին շէնքն իրեն պէտք է վերադարձուի։ Մնաց որ, քառորդ դարէ մի վեր պիտի ըլլան ըստական գոհացուցած ըլլալով Վարնեցիները, ամէն կերպով քաջալարմար է որ քիչ մալ ուրիշ գաւառային կենդրոն մը մտաւորապէս, բարոյապէս և անտեսապէս լուսաւորելու, շէնցնելու և զարգացնելու հոգ տանին այսուհետև։

† 0. Կ Ա Ր Ր Ի Է Ր

Յունուարի 14-ին Պարիզում վախճանուեց յայտնի հայագէտ Օ. Կարրիէր, որ Արեւելեան կենդանի լեզուների վարժարանում (Ecole des langues orientales vivantes) քսան տարի շարունակ բռնում էր հայոց լեզուի ամբիոնը:

Օ. Կարրիէրը ծնունդ է հիւսիսային Ֆրանսիայի Նորմանդի դոշում զաւաստում 1838 թուին: Սկզբում նա պարապելիս է եղել սեմիտական լեզուներով, ապա ծերացած Դիւլօրիէի մօտ սկսել է ուսանել հայերէն լեզուն, դառել է նրա օգնականը, իսկ իր ուսուցչի մահից յետոյ, 1881 թուականին, բռնել է նրա տեղը:

Իր մի շարք քննական հետազօտութիւններով Կարրիէրը աշխատել է որոշել Մ. Խորենացու «Պատմութեան» աղբիւրները, նրա արժանահաւատութիւնը, հեղինակութեան ժամանակը եւ այլն: Քննադատական ոգույ զուրկ և անինքնուրոյն մեր հայկաբանների չըջանում նրա կարծիքները չնցող տպաւորութիւն էին թողնում. նրա չօչափած հարցերի շուրջը տաք բանակոխ էր ծագում և այսպէս թէ աճապէս առաջ էր մղում քննադատական հետազօտութիւնը մեր հին պատմական աղբիւրների նկատմամբ: Ֆրանսիացուն յատուկ վիայուն, սրամիտ, աշխոյժ խառնուածքը տալիս էր նրա դիտական մերկացումներին առանձին հրապօյր ու կենդանութիւն:

Կարրիէրի կաթեղրան բռնեց երիտասարդ հայագէտ Մէյէն:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Օձի թոյնը և հակաթոյնական շիճուկը.—Մի հազուադիստ օպերացիա.—Թունաւորումն մազերի ներկով.—Վարակումն ափսէների, բաժակների, դանակի, սրտառաքաղի և գդալի միջոցով.—Ծխախոտի պատմութիւնից:

Օձի բոյնը եւ հակաթոյնական ժիճուկ.—Ամենքը լսած են, որ ջերմ երկրներում ահագին քանակութեամբ զարհուրելի թունաւոր օձեր են ապրում, որոնց խայթոցը համարեա միշտ մահացու է:

Զարհուրելի օձերը վիտում են Հնդկաստանում ու աֆրիկայում, հասարակածի երկրներում ու կղզիների վրայ ու ամեն տարի անթիւ զոհեր տանում:

Պաշտօնական տեղեկութիւններին նայելով միմիայն անգլիական արևմտեան կօլօնիաներում տարեկան 22,000 մարդ են մեռնում օձերի խայթոցից, բայց այս միայն պաշտօնական տեղեկութիւններն են, քանիմանքը անյայտ են մնում:

Գուցէ ամբողջ հողագնդի վրայ հարիւր հազարների համար այդ զոհերի թիւը:

Բիւրաւոր տարիներ բժշկութիւնը անգոր է եղել խայթուածին օգնելու: Ամենաազդու միջոցը համարւում է կծած տեղը կրակով այրելը, բայց այդ էլ ընդհանրապէս չէր փրկում զոհին և մարդիկ շարունակում էին կոտորուել:

Սարսափելի է խածուածի զրութիւնը. նա մի սուր ցաւ է զգում խածած տեղում, և համարեա անմիջապէս այդ կէտում սկսւում է փտումն: Փտումն այդ կէտից արագ աւարժւում է վէրքի շուրջը և հիւանդն զգում է, որ կտրած է: Շնչառութիւնը դժուարանում է, բուզը սեղմւում է, ատամները կրճտում են ու քերանք փռելւում է: Բարեբախտաբար այս տանջանքները երկար չեն տևում, և հիւանդը շուտով ուշը կորցնում է ու մեռնում թունաւորութեամբ:

Մի ֆրանսիական բժշկի էր վիճակուած օձի թոյնի հակա-
թոյնը գտնելը:

Բժշկութեան մէջ հակաքոյն (antitoxine անտիտօքսին) կոչ-
ւում է այն հեղուկը, որը մտնելով արեան մէջ ոչնչացնում է
առաջուայ թոյնի զօրութիւնը:

Հակաթոյնը ստացւում է հետեւեալ կերպով.

Թոյնից (օրինակ օձի թոյնից) մի աննշան քանակութիւն
հալեցնում են որոշ քանակութեամբ ջրի մէջ ու սրսկում են
ձիու մարմնի մէջ: Սկսում են շատ թոյլ խառնուրդից և համաց-
կամաց աւելացնում են թոյնի քանակութիւնը, որովհետեւ ձիու
օրգանիզմը սովորում է թոյնին և չի մեռնում: Այս ձևով կա-
րելի է կենդանուն ընտելացնել և նրա մարմնի մէջ լցնել այն-
չափ թոյն, որը կարող է 200 չը սովորած ձի սպանել:

Այսպիսի (սրսկումներից յետոյ) ձիու արիւնը արդէն պա-
րունակում է մեծ քանակութեամբ հակաքոյն, որից և օգտւում
են հետեւեալ կերպով.

Ձիու մի երակը ծակում են ու հանում մի քանի լիտր
արիւն. այդ արիւնից դատում են շինուկը (արիւնը բաղկացած
է շիճուկից) որը անգոյն հեղուկ է, և արեան գնդակներից,
որոնք և կարմիր գոյն են տալիս արեանը) ու լցնում փոքրիկ
սրուակների մէջ ու բերանները խցում ու դժուարով ծածկում,
որպէս զի օդ չը մտնի մէջը:

Այս սրուակներից մէկը բաց են անում ու միջի շիճուկը
առանձին սրսկիչով սրսկում խայթածի կաշու տակը: Այս սր-
ուակները մեծ քանակութեամբ ուղարկւում են օձաշատ
երկրները և արդէն 5—6 տարի է գործածութեան մէջ են և հա-
զարաւոր մարդկանց կեանք են փրկել:

Այժմ Հնդկաստան, Աֆրիկա ճամբորդողները իրանց սլայ-
ուսակի մէջ ունեն այս սրուակներից և մի սրսկիչ: Այդ եր-
կրների մեծ կենտրոններում այդ միջոցը շատ ժողովրդականա-
ցած է:

Այս հակաթոյն շիճուկի դիւտը արել է բժ. Կալմիտ, որը
լիւ քաղաքի Պաստէօրեան Ինստիտուտի դիրեկտօրն է (տնօրէն):
Ինչպէս յայտնի է նոյն ձևով ստացւում են և ուրիշ հիւան-
դութիւնների դէմ շիճուկներ՝ դիֆտերիտի, ժանտախտի, իսկ նո-
րերս նաև տիֆի ու քութէշի (սկարլատինի) և մի քանի ու-
րիշ հիւանդութիւնների:

Իր լաբօրատօրիայում բժ. Կալմիտը պահում է այդ նպա-
տակով ամեն տեսակ թունաւոր օձեր, ինքը կերակրում է նրանց
ու թոյնը հաւաքում:

Կերակրելը զօռով է լինում, որովհետեւ այդ սողունները

յօժարակամ ոչինչ չեն ուտում, երբ փակուած են վանդակում, այս պատճառով մէկը սեղմում է վիզները և ձու լցնում բերանները: Թոյնի հանելը կատարւում է այսպէս: Ինչպէս յայտնի է, թոյնը զոյանում է առանձին զեղծերի մէջ, որոնց արտադրիչ խողովակը բացւում է որոշ ստամանների մէջ, այնպէս որ խածելիս թոյնը աստաթի միջից իսկոյն լցւում է վերքերի մէջ. բժ. Կալմիտը առանձին կապով ամրացնում է օձի գլուխը տախտակի վրայ և այսպիսով անվնաս դարձնում օձին, յետոյ սեղմում է թոյնաբեր պեղծը ու թոյնը դուրս ծորեցնում ապակու կտորի վրայ: Այսպէս ստացած թոյնը իսկոյն չորացնւում է ու նրանից վերև յիշած խառնուրդները չինւում:

Մի հազուադիւս օպերացիա.—Ռօզիկան և Դօօդիկան երկու փոքրիկ հնդիկ աղջիկներ են, որոնք իրար կպած էին ծնւած (երկուորեակ) և անբաժան ապրել էին 12 տարի:

Թիֆլիսեցիք կը յիշեն այս համակրելի դէմքով երեսաներին, որոնց ցոյց էին հանել այստեղ երկու-երեք տարի առաջ:

Այս բոպէիս նրանք բաժանուած են և բժշկւում են Պարիզում:

Պարիզում նրանք հիւանդանում են և բժիշկները որոշում են բաժանել նրանց միմեանցից, որպէս զի կարողանան գոնէ մէկին փրկել:

Պարիզի յայտնի խիրուրդ Դուայէն, որը զարմանալի վարպետութեամբ ու արագութեամբ ամենադժուար օպերացիաներ է անում, յանձն է առնում այդ հազուադիւս հատումը կատարելու:

Այս ձևի օպերացիաները չափազանց հազուադիւս են զիտութեան մէջ: Առաջինն արել է Կիօնիդը 1689, 1866-ին Բէօմը բաժանեց իր երկուորեակ աղջիկներին, որոնցից մէկը կենդանի մնաց, 1882 այդպիսի մի օպերացիա արուեց Շվէյցարիայում, մէկն էլ 1900 թուականին արեց բժ. Պրիւօն:

Բժ. Դուայէնը մեծ հմտութիւնով, համարեա առանց արինհոսութեան, բաժանեց երկու երեսաներին: Պէտք էր կտրել կաշին կպածի երկարութեամբ, պէտք էր բանալ փորը, կտրել միացնող «կամուրջը», յետոյ կարել ամեն ինչ առանձին-առանձին:

Օպերացիան չատ յաջող եղաւ, բայց ջաւակցաբար երեսաները վարակուած են տուբերկուլօզով, այսինքն համարեա բոլոր գործարանների և թոքերի մէջ գտնուել են տուբերկուլօզի (թուքախտի) նշաններ, և խեղճերը գուցէ երկար չապրեն, չը նայելով յաջող օպերացիային:

Թուեաւորումն մագերի ներկով:—Պարիզում երկու բժիշկ երկար ժամանակ անյաջող կերպով բժշկում էին մի տիկնոջ, որը տանջւում էր սարսափելի գլխացաւից, սրտխառնութիւնից, փսխումից. նա քանի գնում, նիհարում էր, ուժասպառւում էր և ոչ մի հնար չէր լինում նրան օգնելու:

Բժիշկները տարակուսուած էին, չէին հասկանում հիւանդութեան պատճառը և չը գիտէին ինչին վերագրեն այս հիւանդութեան տոկոննութիւնը, ու միանգամայն յուսահատուած էին, երբ մէկ օր նրանց զարմացնում է հիւանդ տիկնոջ մագերի արտասովոր սևութիւնը և փայլը, որը անբնական էր մի 50 տարեկան կնոջ վրայ: Իսկոյն կասկած ծագեց, որ հիւանդը ներկ է բանեցնում և անդադար թունաւորում է իրան, որովհետև յայտնի է, որ մագերի բոլոր ներկերը մէջ թոյն կայ:

Յրանախայում սև ներկը չափազանց շատ տարածուած է, ծախւում է 50,000 շիշ: Այս ներկը քսում են մագերին և, որ աւելի երկիւղալին է, տորոում են գլխի կաշււ մէջ, որպէս զի մագերի արմատներն էլ ներկուին: Այսպիսի կանանց գլխի մաշկը բորբոքւում է, պղուկներ է տալիս, քոր է ընկնում և այլն:

Այս ներկի թունաւորիչ ազդեցութիւնը ուսումնասիրելու համար երկու բժիշկ փորձեր արեցին շների վրայ: Շները ոռնում էին, փսխում անդադար, աչքի կոպերը ուռչում էին, կարմրում, և խեղճ կենդանիները նիհարում էին, հիւժուում և վերջը սատկում: Նւ երբ բժիշկները հատում էին նրանց ներքին գործարանները, տեսնում էին, որ թոքերը, փայծաղը, լերդը և միւս գործարանները սև էին ներկուած:

Վարակումն ափսեների, բաժակների դանակի, գլխի ու պատառափաղի միջոցով.—Յայտնի պրօֆ. Էսմարխի արած մի քանի փորձերը միանգամայն ապացուցեցին, որ այս առօրեայ գործածելի իրերի միջով շատ հեշտ կարող են տարածուել վարակիչ կոչուած հիւանդութիւնները: Նա փորձեր է արել յատկապէս թոքախտի հետ: Յայտնի է, որ վարակիչ հիւանդութիւնների պատճառը որոշ բակտերիաներ (միկրօբներ) են, որոնք անցնելով հիւանդից առողջին, տարածում են չաւը:

Էսմարխը պատառաքաղի վրայ աճեցնում է թոքախտի միկրօբները (բացիլները) և ապա մի բոպէ պահում է եռման ջրի մէջ ու շորով լաւ սրբում: Այնուամենայնիւ բացիլներից մնում են պատառաքաղի վրայ ու կարող են կերակրի հետ ներս գնալ: Այստեղից պարզ է, որ վարակուած (հիւանդին ծառայած) իրերը լուանալով ու սրբելով աղտաղերծ չեն դառնում. նրանց

վրայ մնում է ու զարգանում է վարակիչ թոյնը, և կարող է վարակել նրանց դորձ ածողին:

Այս հիման վրայ հիւանդի իրերը լաւ մաքրելուց յետոյ էլ պիտի թունաւորուած համարել և առանձին պահել ու առանձին էլ լուանալ: Սակայն պրօֆ. Էսմարխի փորձերից երևում է, որ այդ իրերն էլ կարելի է աղտազերծ անել մի քանի բոպէ սօղայի խառնուրդի մէջ պահելով, որը պիտի տաքացնել (աւելի լաւ է եռացնել): Իսկ խառնուրդը պէտք է լինի 2 մաս սօղա 100 մաս ջուր (մի գդալ սօղա մի բաժակ ջրի մէջ):

Ծխախոտի պատմութիւնից. — Ծխախոտը առաջին անգամ երևում է Սպանիայում (1559-ին) և այնտեղ սկսում է մշակուել: 1561-ին Փրանսիայի ժան Նիկօտի ջանքերով և Եկատերինա Մեղիչիի թոյլտուութեամբ ծխախոտը սկսւում է ներմուծուել Ֆրանսիա «Նիկոտիանա» անունով: Ծխախոտի գործածութիւնը անգլիացիք սովորեցին ամերիկացիներից: XVII դարի կիսում ծխելու սովորութիւնը ահագին ծաւալ ստացաւ. ծխում էին նաև կանայք, օրիորդները և նոյն իսկ մանուկները: Մայրերը երեխաների ձեռք չէրուէս ու ծխախոտ էին տալիս և դպրոց ու դարկում, որովհետև ծխելու գիտութիւնն էլ դպրոցական պրօգրամի մէջ տեղ էր բռնում: Ամենքը ծխում էին, և ուր որ լինէր՝ և կեղեցում, պարլամենտում: Նոյն դարում ծխախոտի գործածութիւնը մտնում է Ռուսաստան:

XVIII դարում մօզան անցնում է և ծխելը մինչև անգամ ամօթալի սովորութիւն է դառնում, սակայն ժողովուրդը միաթարում էր իրան քթափուշի գործածելով և ծխախոտ ծամելով: Սիգարի գործածութիւնը սկսուել է Եւրոպայում Ղրիմի պատերազմից յետոյ, որի միջոցին Ֆրանսիայի և Գերմանիայի զինուորները սովորեցին նրանց ծխելը տաճիկ զինուորներից:

Վ. Ա.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Քաղմալէպ», փետրուար 1900-
սեւով Կիլիկիայի կաթողիկոս ըն-
տրուած Երիցեան եպիսկոպոսի հրա-
ժարականի մասին: Միթարեան
ամսագիրը իրաւացի կերպով շեշ-
տում է այն հանգամանքը, որ աղիւ-
ցաղնական անձնազոհութիւնն է
պակասում մեր եկեղեցական գոր-
ծիչներին: Ուրիշ կերպ վերաբեր-
ուել Երիցեան եպիսկոպոսի հրա-
ժարականին, մեր կարծիքով, ան-
կարելի է: Մեղանից իւրաքանչիւրը
լաւ գիտէ թէ Կիլիկիայի կաթողի-
կոսութեան հարցը վերջին տարի-
ներում որքան ծանր և վտանգաւոր
կերպարանք էր ընդունել Թիւր-
քիայում, սուլթանի կառավարու-
թեան չարուցած դժուարութիւնների
և արդելքների պատճառով: Հազիւ
հազ կարելի եղաւ վերացնել այդ
դժուարութիւնների զոնէ մի մասը
և ընտրութիւն կատարել,— և ահա և.
Պալի փափկասուն եպիսկոպոսների
յատուկ հրաժարականը մէջ տեղ է:
Ուրեմն, նորից ընտրութիւն, նորից
դժուարութիւններ: Բայց սա նոր բան
չէ, որ թիւրքահայ եպիսկոպոսները
չեն սիրում հեռանալ Բոսֆորի գեղա-
նկար արեւրից, գաւառ դնալ, հարիւ-
րաւոր փաստեր կան, որոնք յոյց են
տալիս թէ ոչ միայն աղիւցաղնական
անձնազոհութիւնն, այլ և հասարակ
բարեխղճութիւնն սղախել թիւրքահայ
ազերապատիւներից: դժուար է—
նոյն խմբադրական չօդուածը մատ-
նացուց է անում այն հանգամանքը
որ մեզանում առանձին գրքեր չեն

հրատարակում և մեր գրականու-
թիւնը ամբողջովին ամփոփուել է
պարբերական հրատարակութիւն-
ների մէջ: Էջրատարակչական գոր-
ծերնիս բոլորովին երախտական
է, մեր մէջ չը կայ յառաջագիմու-
թեան իրական սէրն սա ճիշտ է.
բայց այդ գանգատը մենք լսում ենք
և ուրիշ աղգելից: Կարծում ենք հա-
մաշխարհային իրողութիւն է որ
գրական հրապարակի տէրը լրա-
գրական թերթն է դառնում, որ
նոյն իսկ ամսագիրը կորցրել է իր
նշանակութիւնը: Մենք, ի հարկէ,
չենք ասում թէ լաւ է ներկայ մեր
դրութիւնը, ո՛չ, մենք ինքներա
պատրաստ ենք խոստովանելու որ
մտաւոր խեղճութեան նշան է այն,
որ գիրք չէ տպւում մեզանում: Մի
ազդի մտաւոր հարստութեան չափը
նրա գրականութիւնն է. իսկ մենք
մի առանձին գրական հարստութիւն
չենք տեսնում նոյն իսկ մեր մա-
մուլի մէջ, որքան էլ նա կլանած
լինի իր մէջ գրական բոլոր ճիւղե-
րը: Հրատարակչական գործի բացա-
կալութիւնը մեղանում, ինչպէս
նկատում է ամսագիրը, ունի այն
պատճառը, որ դրողը, հեղինակը
մեզանում ոչինչ խրախոյս և աջակ-
ցութիւն չէ գտնում: Ահա թէ ինչն
է սպանում մեր գրականութիւ-
նը: Չենք ասում որ եթէ լինէին
խրախոյս և աջակցութիւն, մեղա-
նում տաղանդների մի մեծ թիւ ա-
ռաջ կը դար. բայց գոնէ անուրա-
նալի է, որ շատ ու շատ ղեղեղիկ

ձգտումներ, բարի գիտաւորութիւններ խեղդում ոչնչանում են այն անմիջական գլուխեան մէջ, որ առաջացել է մեր անտարբերութիւնից ու անբարեխղճութիւնից, հալկական երկու յատկութիւններ, որոնց ամենաողորմ զոհերից զըլխատրը հայ գրականութիւնն է:

Վաղմուտէպիւս այս համարում տպուած է Միքայէլ Նալբանդեանցի համառօտ կենսարգոյթիւնը պատկերներով: Նախկին համարներում տպուած էին Ստեփաննոս Նաղարեանցի և Բաֆֆիի կենսագրութիւնները: Մենք հաճութեամբ կարդացինք այդ գլուխածքները, որոնց մէջ արժանապէս մեծարուած են մեր առաջադէմ և ազատամիտ զորոյնները: Այդ վերաբերմունքը պատիւ է բերում Միքայէլեան հայրերի երիտասարդ սերունդներին և միանգամայն մեր սէրն ու համակրանքն է գրաւում զէպի Վենետիկի վանքը: Յատենի է, օրինակ, թէ ինչ սաստկութեամբ Նալբանդեանցը յարձակում էր՝ Վենետիկի Միքայէլեանների վրայ, որքան դատաւարտում էր նրանց: Նրա այդ յարձակումները այսօր չեն խանգարում որ նոյն այդ Միքայէլեանները յարգանքով խօսեն Նալբանդեանի մասին, խոստովանեն նրա արժանաւորութիւնները և մեր գրականութեան մատուցած ծառայութիւնները: Ահա ինչն է մեզ համար գնահատելին: Եւ այդ յարգանքը, որ մատուցանում են Միքայէլեանները Նալբանդեանցին, ի հարկէ, չէ ցոյց տալիս թէ նրանք միանգամայն ընդունում են որ հանգուցեալ հրապարակասօսի զըրուածները ճիշտ ու անսխալ էին. բայց կայ անշուշտ այն, որ ընդունում է Նալբանդեանցի շատ նկատողութիւնների իրաւացիութիւնը: Այդպէս էլ պէտք է վերաբերուել գրական գործիչներին. մի մարդու արժանաւորութիւնը հասկանալու

և յարգելու համար չը պէտք է լինել նեղսիրտ, նախապաշարուած: Քննադատել, ջրել, ցոյց տալ պակասութիւնները կարելի է միշտ և ամեն ժամանակ, բայց ճանաչել ընդհանուր արժանաւորութիւնը, մեծարել գործիչի նշանակութիւնը, պէտք է նոյնպէս ամեն ժամանակ, անկախ այդ քննադատութիւնից: Աջողութիւն ենք ցանկանում Վաղմուտէպիւս այս ուղղութեամբ:

Մենք մինչև այժմ առիթ չունեցանք լիշտակելու Վաղմուտէպիւս խմբագրութեան մի այլ համակերէի և ամեն իրաւտաանքի արժանի գործը: Դա «Գեղունի» անունով պատկերազարդ թերթն է, որ անցեալ տարուայ նոյեմբեր ամսից սկսեց հրատարակուել պարբերաբար, երկու ամիսը մի անգամ: Այդ հրատարակութեան երկրորդ համարը, որ նոր լոյս տեսաւ, նուիրում է ամբողջապէս Հ. Ալիշանին: Բաղմաթի գեղեցիկ պատկերներով է նա զարդարուած, կայ մի բառական ընդարձակ չօղում, որ ծանօթացնում է մեզ զբալկան հսկայ գործիչի կեանքի հետ: Շատ սրտառու է և հետաքրքրական են Հ. Ալիշանի կեանքի մանրամասնութիւնները, որոնք մինչև մեծ ծերունու մահը չալտնի չէին մեր ընթերցող հասարակութեան: Թող այժմ կարդան, իմանան թէ ինչ առաքինութիւններ ու հրաշալի հոգի ունէր Ալիշանը, մի մարդ, որ բանաստեղծ էր հոգով, որի խօսքի և գործի մէջ ոչինչ տարբերութիւն չը կար:

Հանդէս Ամսօրեայ, փետրուար «Հարկ զօրէնս լուծանէ» «Հանդէսի» խմբագրութիւնը այս տարուանից դուրս եկաւ չոր ու ցամաք մասնագիտութեան շրջանից և ընդհանուր գրական հարցերով էլ է զբաղում: Մասնագիտական ամսագրի մէջ սկսել են առանձին ուշադրութիւն գրաւել

«Գրական թղթակցութիւն» տնտեսով նամակները, որոնք զրուում են Կ. Պօլսից և շօշափում են օրուայ նորութիւնները, Ողջունում ենք «Հանդէսի» այդ նոր քայլը: Փետրուարի համարում տպուած «Գրական թղթակցութիւնը» շատ հետաքրքրական է և լուրջ: Նա խօսում է Կ. Պօլսի հայ մամուլի մասին, վաղուց պէտք էր այդպիսի պահանջներ ներկայացնել Կ. Պօլսի հայ մամուլին: Նամակագիր Թաթուլ Վանանդադրի մի տո մի ցոյց է տալիս այդ մամուլի պակասութիւնները: Կ. Պօլսում հրատարակուող բոլոր հայ լրագիրները իրար նման են: Նրանք չունեն որոշ ուղղութիւն, ուստի ընդհանրապէս անգոյն և անհամ են: Լրագրութեան վրայ ծանրացած մի ակտն է այն խրատ, զոփութիւնը, առանց որի չէ անցնում համարեա ոչ մի օր: Եւ իրաւ, սարսափելի ծանր, խեղդող տպաւորութիւն է թողնում Կ. Պօլսի լրագրութեան այդ սոսկալի ակտոր: Լրագիրները լցւում են իբր թէ ինքնուրոյն վէպերով և վէպիկներով: «Գոնէ ինքնագիր, կարեոր, մեր բարձրէն աննուած ըլլան այս վէպերն ու վէպիկները, — ասում է նամակագիրը: — Այ, պարզապէս սինակներ սեղընելու համար՝ օտար լեզուներէ թարգմանուած մտրացածոյ զրութիւններ: Երբեմն անունն, այո՛, Տիգրան կամ Վահան կը հնչէ այս վիպիկներու հերոսներուն, բայց բարձր գաղղիական են, և իսկոյն թարգմանուած ըլլալը կը մատնուի: Կ. Պօլսի հայ լրագիրը չունի սկզբունք, նա, շահ, շահ, շահ: Ահա զեղեցիկ սկզբունք և նպատակ միանգամայն Այս բաղնին վրայ կը զոհուի ամեն կուսակցական պաշար, ընկերական յատկադիմութիւն, քաղաքական տեսութիւն: Ի՞նչ սոսկալի անպահանջութիւն: Եւ երբ միանգամայն այդ է սկզբունքը, ի՞նչ կա-

րալ ենք սպասել, բացի մեռելութիւնից: Շատ ճիշտ նկատում է նամակագիրը որ Կ. Պօլսում չը կայ քննադատութիւն: «Նկեղեցականաց ոմանց զեղծումներն կամ առանց բուն պատճառին տեղեակ ըլլալու իբր զեղծում, որոշմամբ արարքները խժբժել, ահա ամենէն աւելի մեծ ու լայնատարած ասպարէզն, որ ի գործ կը դրուի քննադատութիւն ըստածը»: Քննադատութեան պակասութիւնից է և այն, որ Կ. Պօլսի բոլոր լրագիրները բռնական պատերազմի ընթացքում միմիայն անդիպաներին զօրիւ ու փառաբանել զիսեն: Մի բուն քաջ մողովրդի հերոսական ջանքերը համարեա ոչ մի նշանակութիւն չունեցան նրանց համար: Անդիւրան մեծ է, փառաւոր է, առաջադէմ է, ուրեմն արդարն էլ նա է բռնական պատերազմում: Աւելորդ է ասել որ քննադատութեան այդ բացակայութիւնն է երևում և հետարական հարցերի մէջ: Սա մեռելութիւն է: Եւ նամակագիրը վերջացնում է իր տեսութիւնը հետեւեալ խօսքերով. «Ինչի՞նչ քար օր մը, որ արժանաւոր, որոշ ուղղութեան հետեւող, քննադատ, անշահասէր, սկզբունք ունեցող և հանդուրժող զրազէտներու և քաղաքագէտներու խմբակներ լառնէին և ազատ շունչ տանելով, ազատ շունչ ազդէին ընթերցող հասարակութեան: Այն ատեն միայն պիտի կանգնէր հայ լրագրութիւնն իր բարձրութեան վրայ»: Ցանկանում ենք որ շուտ դաչ այդ օրը: Ցանկանում ենք նոյնպէս որ «Հանդէս մամուրեան» այսպիսի հարցերով որքան կարելի է շատ և լաճախ զրազուի:

«Մանասեւ», լուսնուար: Պարիզում հրատարակուող այս մանասեւիտական հանդէսը, որ առաջ լոյս էր տեսնում տարին չորս անգամ,

այս տարւոանից ստիպուած եղաւ ամառդիր դառնալ և իւր ծրագրի մէջ մտցնել նաև «աղբալին», զրական և գիտական՝ բաժինն Աստուծոյ հետ ստիպուած եղաւ Այդ խոստովանում է խմբագրութիւնը, Նա ասում է որ մի պարբերական հրատարակութիւն «միայն փափագով, պղտորական համակրութիւններով չապրիր, այլ վճարող բաժանորդ հարկատու է, զրամ պէտք է»։ Իսկ «Բանասէրի» ընթերցողները ցանկութիւն են չալտնել, որ բացի բանասիրական յօդուածներից լինեն և գրական յօդուածներ։ Ահա բաժանորդների այդ ցանկութիւնից ճշշուած՝ պ. Բասմաճեան կերպարանափոխել է իւր հրատարակութիւնը Մենք իրաւացի ենք զրոտ մասնագիտական հրատարակութիւնը մեղանում չէ կարողանում ապրել բաժանորդների աջակցութեամբ, ինչ է մնում անել, եթէ ոչ վերածել նրան գրական մի հանդէսի, որ ընդհանուր բնատրութիւն կրելով, կարող է գրաւել բաժանորդների աւելի մեծ թիւ։ Ամբողջ հարցը այն է, թէ պ. Բասմաճեան ինչպէս կը կարողանայ զոհացնել իւր բաժանորդներին։ Այդ հարցը լուծելու համար մենք «Բանասէրի» առաջին համակում շատ քիչ նիւթ ենք գտնում։ Ամառգրի փոքրիկ զիրքը, թուում է, շատ բան թող տալ չէ կարող։ Սպասենք թէ ինչ կը բերեն հետեւեալ համարները։ Առ ալժամ նկատենք, որ առաջին համարում տպուած են Գամառ-Յաթիպայի արձանի բացման երկու տեսարանները, որոնք շատ գոհացուցիչ տպագրութիւն են թողնում։

«Համալսարան», յունուարի Վեհալաւ Կաթողիկոսը այս ամառգրի խմբագրութեան ուղարկել է օրհնութեան կոնդակ, որ տպուած է առաջին երեսում, ոսկեղօծ տա-

ռերով։ Նրեի այս պատճառով է, որ նոյն համարում «Հայ կղերք և գիտութիւն» վերնագրով մի ներբողական յօդուած է տպուած, որի մէջ ասում է, որ իբր թէ հայ կղերք արեւմտեան կղերականութեան նման չէ, որ հայ կղերք գիտութեան պաշտպան է եալլն։ Տեսէք թէ հայ կղերք ինչ ահագին բաներ է արել, «Հայ կղերք զրեթէ միշտ շարունակած է իւր նախնի հաւերուն ուղղութեամբ, այնքան նուիրումով և այնքան իսկամօթէն Ցեղը անկումէ պահպանելու ամենէ խնամա հողը զինքը կենդանացուց ու իւր հողերը մխրթարանքնություն հետ ներշնչեց անոր՝ զոյութեան անհրաժեշտ գիտակցութիւն մը։ Հայուն ապրած միջավայրը երբեք չառաջադիմութեան արշաւոյ մը չէր խոստանար. սակայն և այնպէս Թ. Գարուն վերջին կէսին մանաւանդ ամենէ լայն շփումը ունեցաւ ան կարգական քաղաքակրթութեան հետ։ Զօրաւոր ազացուց մը կարելի է նկատել այս՝ իւր ընդգրկած կրօնքին անկախ և թոյլատրող ոգիին։ Շատ խղճով պատուութիւններ են սրանք, լոկ մի շողաքորթում խմբագրութեան երեւակայութիւն, որի դէմ բողոքում է ինքը, պատմութիւնը։ Անհատներ ի մտին չենք խօսում, բայց հայ կղերականութիւնը ընդհանրապէս եղել է նոր մտքերի, նոր ուղղութիւնների անհաշտ թշնամի։ Երոպական քաղաքակրթութեան հետ լայն շփումն ունեցողը հայ երիտասարդութիւնն է եղել և այդ շփումը կատարուել է հակառակ կղերականութեան ցանկութեան և կամքի։ Լաւ կը լինի, որ «Համալսարանը», զէթ իւր վերնագրիւ արդարացնելու համար, թերթէ Խաչատուր Արքեպիսկոպոսի Ստեփան Ոսկանի, Ստեփաննոս Նազարեանցի պատմութիւնը։ այնտեղ նա կը տեսնէր գիտութիւնը ոսկանուած նոյն հայ կղերականու-

թեան ձեռքով, Մէկը, երկուսը կարող են լաւ լինել, բայց այդպէս հիւսցմանքով խօսել ամբողջ կատարել մասին առնուաղն ծիծաղելի է:

«Անահիթ», ղեկավարելու Այս հայ ամսագրի մասին, զժրախտաբար, շատ բան չենք կարող ասել: Մենք որոնում ենք նրա մէջ «սոցալիզմ», դրական և զերարտեստական» մի ամսագրին վաչկէ չօգուածներ, բայց շատ անշան բան եւք գտնում: Պ. Զօպանեանը շարունակում է իր սոցիալական իր, թշնամիների՝ դէմ, իսկ սոց. սոցիալիստ հասարակական և զրական հետաքրքրութիւն չունի և մենք չենք կարող նրա վրայ ուշադրութիւն դարձնել: Յանկալի կը լինէր տեսնել ամսագիրը մի զրակտն օրդանի բարձրութեան վրայ: Նշանաւոր է, օր սր. Զօպանեան հարկ է համարել, եթէ կարելի է ասել, թարգմանել Բաբիի «Խաղ-Պուշը» արեւմտեան բարբառով: Ինչո՞ւ: Որովհետեւ հայերը, երկիւրեւ զրոթեան են հասել որ ալ ևս միմեանց չեն հասկանում. մեր բարբառը սոցիալիստների համար չիմարէն է, երեկ,

և հարկաւոր է որ մեզ հասկանալու համար լինի թարգմանիչ միջնորդ: Այս է դուրս դուրս «Անահիթի» աչք թարգմանութիւնից: Խոստովանում ենք, մենք չէինք սրտում մեր արեւմտեան եղբայրակիցներից այդպիսի վերաբերմունք: Առնուազն մի ամօթալի հանգամանք է դա: Մենք կարգում ենք սոցիալիզմի գրողների գործերը և հասկանում ենք շատ լաւ. իսկ սոցիալիստները, Հասարակացած ենք որ նրանք էլ մեզ լաւ կը հասկանան, եթէ կամենան: Ո՛վ ղիտէ գուցէ առաջացերն էլ դադարէին հասկանալ թիւրքահայերին, եթէ մեզ մօտ էլ լինէին մարդիկ, որանք հարկաւոր համարէին թարգմանել սոցիալիստների գրուածքները: Բայց մեղանում այդպիսի թարգմանութեան միտքն անգամ վաչրենի մի բան է համարում: Մենք պարտաւոր ենք միմեանց հասկանալ. երկու բարբառներն էլ — արեւելեան և արեւմտեան — հայերէն լեզու են և նրանք պիտի իրար լարգեն, իրար մօտենան և ոչ թէ չինական սլաութիւն անջատուեն միմեանցից...

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Քաղու. պ. Ս. Մ ի ս ի Ր խ ա ն ե ա ն.—Հասցէները դեռ չենք ստացել:
Եւրեի. պ. Ի. Ք ա գ է ո ս ե ա ն.—Ձեր ուղարկած 9 բաժանորդագնով ուղարկում է „Մուրճ“ իննը զանազան հիմնարկութիւններին, իբրեւ նուէր Ձեր կողմից:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

1901 թ. «Մուրճ» № 12-ում, «Գերմանացիները արեւելքի մէջ» յօդուածում.

Երես	Տող	Տպուած է	պէտք է լինի
83	16	Նախաճաշը	Նախաճաշակը
„	40	Մոլութիւնը	Ցուլութիւնը

1902 թ. «Մուրճի» № 1-ում.

3	11	Ուսաց	Ուսահացոց
185	21	Բերցլիտաի	Բերցելիտաի
187	27	Դիւրան	Դիւնան

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ր Տ Ե Մ Ի Ս

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱՀԱՆԴԷՍ

Օրգան XX-րդ դարու հայ կանանց

Պիտի հրատարակուի իր սեփական տպարանին մէջ: Բաղկացած
32 մեծադիր երկսիւնեակ էջերէ:

Տէր և տնօրէն-խմբագիր՝

Օր. Մառի Պէլեքեան

Ե գիւղտոսի համար

Տարեկան բաժանորդագինն է. զըշ. ողջ . . . 40

Վեցամսեայ 25

Արտասահմանի համար

Տարեկան Փրանկ 12

Հասցէն՝ Rédaction de la Revue des Femmes Arméniennes
„Artémis“, le Caire, Egypte.

«ՄՈՒՐԺ» ամսագրի հետեակ թուականների ամփոփ հա-
մարները կարելի է ձեռք բերել, վճարելով՝

1899	Թուի համար 1	ա. 50 կող.	Դիմել՝	Тифлисъ, Вельяминов-
1890	»	1 » 50 »		ская, № 24, Ф. Я. Варта-
1891	»	5 » — —		заряну.
1892	»	5 » — —		Հանապարհածախսը գնողի
1893	»	5 » — —	վրայ է:	

4—3

4—3

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

կրստի դասաւանդների համար

Համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գինն է 70 Կոֆէկ

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրոնական և «Գուտտենբերգ»
գրավաճառողները:

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԵԼԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(30-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ 1902 ԹՈՒՄԱԿԱՆԻ

«Մշակը» հրատարակուելու է նույն պրոգրամով եւ նույն ուղղութեամբ

Ահիւն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագիրն. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնհմէկ եւ տասն ամսուանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. եւ մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրասանը (Բաղարնայա եւ Բարձնակայա փողոցների անկիւն), իսկ Բագում—ն. Դաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրւուելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունուում են բոլոր լեզուներով:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունուում:

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՐԱԶՄԱՎԵԲ-Ի

1902 տարի: Եյ

Կը ծանուցանենք, որ «Բազմավէպը» մեր ժողովրդեան զարգացման եւ յառաջդիմութեան համար, զրական տմեն մասնաճիւղի վերաբերեալ յօդուածներ կը պարունակէ. եւ առաջիկայ տարեշրջանով մտադիր ենք ընթերցասէր ժողովրդեան պահանջներուն դեռ աւելի կարեւորութիւն տալ:

Կը շարունակենք մեր բաժանորդաց «Գեղունի»-ի եւ «Մխիթար»-այ նման բացառիկ նուէրներ տալ. նմանապէս այդ նուէրները գեղարուեստական գրական տեսակէտով կը ջանանք աւելի հետաքրքրական ներկայացնել:

Այդ բացառիկ նոր պատկերազարդ պրակը կը կրէ իր առաջուան

«Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի»

անունը, որ պիտի հրատարակուի «Որբունի»-ի մեծութեամբ, միաթերթ, քառաձալ եռասուն եւ յատուկ ծածքով:

Եւ այս նորահաստատ գեղարուեստական թերթին ամենէն նուիրական նպատակն է, շարունակաբար, ասանց կրօնքի իւրութեան՝ նպատուկ ազգիս սովատանջ ծնողազուրկ սաներուն, իրենց լամբադրութիւնն մամուլով եւ ժողովուրդը բաժանորդագրութեամբ պարտական ենք օգնութեան հասնիլ, որչափ որ կարելի է:

«Գեղունի» կը տպենք 3000 օրինակ, եկամուտին կէսը կը յատկացնենք ազգային որբերուն:

Այս նոր թերթը պիտի պարունակէ ժողովրդական ժամանակակից տեղեկութիւններ, հետաքրքրական վէպեր, նշանաւոր ազգայնաց պատկերազարդ կենսագրութիւնը, ազգային եւ օտարազգի նշանաւոր նկարչաց գեղեցիկ գործոց պատկերները, եւ այլն:

Պատկերազարդ «Գեղունի» թերթը կը հրատարակուի երկու ամիսը մէկ անգամ:

Տարեկան բաժնեգրին է 3 ֆրանք. ուսումնայք կարող են յղել 1 ուրբի եւ 50 կոպէկի նամակագրում. Բազմավէպի բաժանորդք, եթէ կը փափագին չզրկուիլ այդ նուէրէն, կը խնդրենք որ «Բազմավէպի» բաժնեգրին (10 ֆր.) հետ, պարզ նամակադրոյմի համար 1 ֆրանք աւելի յղեն. այսինքն 11 ֆրանք (ուսումնայք 4 ուրբի եւ 50 կոպէկի նամակադրոյմ):

Ով որ «Գեղունի» թերթին համար հայ գեղարուեստի վերաբերեալ պատկերներ, կամ տեղեկութիւններ յղէ, նոյն պրակը ձրի կը ստանայ:

Մեր հասցէն. Rédaction de la Revue «BAZMAVEB»
(St. Lazare)

VENISE
(Italie)

Հ Ր Ա Ի Է Ր Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն

1902 թ.

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ“

Ո Ի Ս Ո Ի Մ Ն Ա Թ Ե Ր Թ

16-րդ ցրջան

Կը հրատարակուի նոյն ծրագրով եւ նոյն ուղղութեամբ ամեն ամսոյ սկիզբը:

«Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթը պիտի բովանդակէ այն ամեն հետաքրքրական հմտութիւն յօդուածները, որ հայ գրականութեան կը հային: Հայ պատմութեան նկատմամբ եղած ուսումնասիրութիւններն անաչառ քննադատութեան պիտի ենթարկէ: Հստ պարագայից՝ բանասիրութեան եւ լեզուաբանութեան մասն աւելի պիտի ընդարձակուի: Հայ ուսման եւ հայ լեզուին վերաբերեալ ամեն ազգային եւ օտարազգի գիտնական բանասէրներու յօդուածները, որ կերպով մը հայ ազգին, հայագիտութեան հետ առնչութիւն ունին, պիտի հրատարակէ:

Թերթիս բովանդակութիւնն ինքնազիր պիտի ըլլայ մեծաւ մասամբ, բայց թարգմանութիւնքն ալ պիտի չզրկուին, դերմանական գրութիւններն ի մասնաւորի, որ ո՛ր եւ է կերպով հայ անուան հետ կապակցութիւն ունին:

Ուսումնաթերթիս մէջ համով-հոտով «Գրական թղթակցութիւններ» վերնագրին տակ նոր բաժին մը պիտի բացուի: Պիտի չարունակուի «Ծագկէփունջ», «Գրական հրատարակ» ընդհ. տեսութեան երբեմն երբեմն տեղի տալով: Պիտի ջանանք նոր գիւտեր, օգտակար գիտելիքներ գիտական նորութիւններով զատակարգ մը գոհացնել:

Խմբագրութեան զրկուած ամեն գրքերու վրայ քննադատական համառօտ կամ ընդարձակ տեղեկութիւն պիտի տրուի: Քաղաքական տեսութիւնը նոյն ընդարձակութեամբ կը չարունակուի:

Թերթիս ծածկը պիտի զարդարուի ազգային թերթերու բովանդակութեան քաղուած միայն ազգային նիւթերով: Հունգարահայոց Armenia թերթին բովանդակութիւնն ալ պիտի զընենք: Յառաջ պիտի տանինք նոյնպէս թղթակցութիւնք հանդիսիս մեր բաժանորդաց անձուկ կապը: Իսկ գրական հարցմանց երբեմն աւանձին յօդուածներով պիտի պատասխանենք:

Խմբագրութեան հասցէն—A la Rédaction de Revue «Hantesse», Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ОТКРЫТА ПОДПИСКА НА ЕЖЕМЕСЯЧНЫЙ НАУЧНО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ

ГОДЪ III. КАВКАЗСКІЙ ВѢСТНИКЪ 1902 г.

„Кавказскій Вѣстникъ“ даетъ ежегодно около 3,000 страницъ оригинальныхъ и переводныхъ статей съ арм., груз., татарск., арабск. и съ европ. яз.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

въ годъ— $\frac{1}{2}$ года

Для городскихъ подписчиковъ.	9 р.	5 р.
Для иногородныхъ.	10 р.	6 р.

Разрѣчка допускается для учебныхъ заведеній и учащихся, подписывающихся непосредственно въ конторѣ журнала. Книжнымъ магазинамъ. ком. ск. 10%.

Адресъ Редакціи и Конторы: Тифлисъ, Тургеневская, № 11. Подписка принимается во всѣхъ книжныхъ магазинахъ, въ конторѣ журнала и въ отдѣленіи конторы: Тифлисъ, Голов. пр. № 1) (Книжный маг. Хидлекель).

Въ числѣ рукописей, имѣющихся въ Редакціи
находятся слѣдующія:

Пастырѣ, повѣсть А. Казбека, съ груз.—Со всѣхъ сторонѣ, повѣсть Арбоели, съ груз.—Честъ, романъ Ширванзаде, съ арм.—Зѣница Ока, О. Шалпрѣ.—Стихотворенія Ов. Туманьянца, съ арм.—Дитя страданья, романъ Аларкона, съ исп.—Мать и сынъ, драмат. этюдъ кн. Ил. Г. Чавчавадзе, съ груз.—Мемуары кн. Андроникова (1811 г.).—Максъ Мюллеръ, Бердяева.—Воспоминанія офицера генеральнаго штаба, С. Кишмишева.—Обычное право у казаковъ, А. Передѣльскаго.—Турецкій театръ, Эр. Россп, съ итал.—Вахтангъ VI и Петръ Великій, В. Романовскаго.—Обычное семейное право у армянъ, Самуельяна.—Вліяніе Византии на грузинское законодательство, Н. Тавдгиридзе.—Азіатская академія, проекты Кера и Гр. Уварова.—Мемуары Л. Исарлова.—Матеріалы для исторіи Эчмиадзинскаго патріаршаго престола.—Очерки по крѣпостному и кр. реформѣ въ Грузіи, А. Кишидзе.—Григорій Нарекскій, этюдъ Чобаньяна.—Елисаветпольская губернія, впечатлѣнія и воспоминанія, І. Сегаль.—Письма и записки нѣкоторыхъ кавказскихъ дѣятелей, а также Ренана, Мопасана, В. Гюго, Шопенгауера и др.

Полный экземпляръ „Кавказскаго Вѣстника“ за 1900 годъ можно получить въ конторѣ журнала за 11 р.; за 1901 г.—10 р.

Годовые подписчики получаютъ въ 1902 г. приложеніемъ къ „Кавказскому Вѣстнику“ романъ М. С. Хатисовой **ПО НОВОМУ ПУТИ.**

Редакторъ-издатель В. Д. КОРГАНОВЪ.

Открыта подписка на 1902 г., IX годъ изданія,
НА ЕЖЕНЕДѢЛЬНУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗ. СЕЛЬС. ХОЗЯЙСТВО“

органъ Императорскаго Кавказскаго общества сельскаго хозяйства.

Газета выходитъ по четвергамъ, безъ предварительной
цензуры,

ПОСЛѢДУЮЩЕЙ ПРОГРАММѢ:

1. Руководящія статьи по техническимъ и экономическимъ вопросамъ сельскаго хозяйства Кавказа. 2. Популярныя статьи (оригинальныя и переводныя) по полеводству, молочному хозяйству, садоводству, виноградарству и винодѣлю, шелководству, лѣсоводству, техническимъ производствамъ и проч. 3. Хроника и корреспонденціи. 4. Отчеты хозяевъ о произведенныхъ ими въ своихъ хозяйствахъ опытахъ и наблюденіяхъ. 5. Обзоръ литературы, русской и иностранной, по вопросамъ, относящимся къ Кавказу. 6. Сельско-хозяйственныя статистическія и рыночныя свѣдѣнія о производствѣ и потребленіи сельско-хоз. продуктовъ, о видахъ на урожай, о цѣнахъ на продукты; тарифы. 7. Правительственныя распоряженія. 8. Протоколы, доклады и отчеты общества и его органовъ. 9. Критика и библіографія. 10. Вопросы и отвѣты. 11. Сельско-хозяйственный календарь. 12. Домоводство. 13. Справочный указатель. 14. Смѣсь. 15. Метеорологическія наблюденія. 16. Объявленія.

ЗАДАЧА ГАЗЕТЫ заключается въ установленіи болѣе живой и тѣсной связи между обществомъ сельскаго хозяйства и хозяевами Кавказа, съ цѣлью, во первыхъ, совмѣстной разработки сельско-хозяйственныхъ вопросовъ Кавказа и, во вторыхъ, распространенія среди населенія необходимыхъ сельскохозяйственныхъ знаній.

Въ отдѣлѣ „Вопросы и отвѣты“ газета, при содѣйствіи спеціалистовъ, будетъ своевременно давать хозяевамъ отвѣты на тѣ вопросы, съ которыми они будутъ обращаться въ редакцію или общество сельскаго хозяйства.

Подписная цѣна съ доставкой и пересылкой: на годъ—4 руб., полгода—2 руб., $\frac{1}{4}$ года—1 руб. и 1 мѣсяць—40 к.

Подписка принимается въ Тифлисѣ, въ бюро Импер. Кавк. общ. сел. хоз., Барятинская ул., собственный домъ.

Отвѣтственный редакторъ А. А. Калантаръ.

IV годъ
изданія

ОТКРЫТА ПОДПИСКА

IV годъ
изданія

на 1902 г.

Н А Г А З Е Т У

„НЕФТЯНОЕ ДѢЛО“

Изданіе Совѣта съѣзда нефтенромышленниковъ въ Баку.

Выходитъ два раза въ мѣсяцъ по слѣдующей программѣ:

I. Указанія и распоряженія Правительства, касающіяся нефтяной промышленности. II. Самостоятельныя статьи, посвященные нефтяной промышленности и другимъ связаннымъ съ нею вопросамъ, каковы: судоходство, пути сообщенія, тарифы, кредитъ и т.п. III. Хроника нефтяного дѣла: буреніе, добыча нефти, заводская ея переработка, вывозъ и торговля нефтяными продуктами. IV. Новості техники нефтяного дѣла. V. Статистика нефтяного дѣла. VI. Обзоръ печати свѣдѣнія и мнѣнія другихъ изданій по вопросамъ нефтяной промышленности и ихъ критическая оцѣнка. VII. Корреспонденціи и телеграммы изъ нефтяныхъ районовъ и центровъ нефтяной торговли. VIII. Нефтяная биржа, цѣна на нефтяные продукты, состояніе рынковъ, акцій нефтенромышленныхъ обществъ и облія биржевыя свѣдѣнія. IX. Положеніе, нужды и статистика рабочаго населенія и служащихъ бакинскаго промысловаго района. X. Несчастные случаи и пожары на нефтяныхъ промыслахъ, заводахъ, складахъ, станціяхъ, пристаняхъ, судахъ и поѣздахъ. XI. Отчеты нефтенромышленныхъ фирмъ. XII. Библиографія: рецензіи о книгахъ и статьяхъ по нефтяной промышленности и вопросамъ, имѣющимъ связь съ нею. XIII. Смѣсь: мелкія новости изъ нефтяного міра. XIV. Отчеты о съѣздахъ нефтенромышленниковъ. XV. Представительская дѣятельность Совѣта съѣзда нефтенромышленниковъ: ходатайства, отзывы, мнѣнія и переписка Совѣта по вопросамъ и нуждамъ нефтяной промышленности съ правительственными и общественными учрежденіями. XVI. Хозяйственная дѣятельность Совѣта по благоустройству бакинскаго промысловаго и заводскаго районовъ: врачебное дѣло, народное образованіе, пути сообщенія, осушеніе промысловъ, пожарное дѣло, общественныя сооруженія, приходъ и расходъ суммъ и проч. XVII. Объявленія о предметахъ, имѣющихъ связь съ нефтенромышленностью.

Подписная цѣна съ доставкой:

на годъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р., на 3 мѣсяца 4 р.

Подписка принимается въ гор. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтенромышленниковъ.

Объявленія принимаются тамъ-же.

Редакторъ П. О. Лукасовъ.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1902 Г.
НА ЕЖЕДНЕВНУЮ ПОЛИТИЧЕСКУЮ И ЛИТЕРАТУРНУЮ
ГАЗЕТУ

АРГОНАВТЪ

Два раза въ недѣлю номера «Аргонанта» выходятъ съ
иллюстраціями.

ПОДПИСНАЯ ЦѢНА: съ пересылкой и доставкой;
годъ 7 р., 6 мѣсяцевъ 4 р., въ *Тифлисъ* 5 р., и 6 мѣся-
цевъ 3 р.

Годовые подписчики **БЕЗПЛАТНО** получаютъ, въ
видѣ приложенія, собраніе сочиненій Н. В. ГОГОЛЯ, въ
3-хъ томахъ, со множествомъ иллюстрацій, изданіе „На-
родная Польза“, которое выйдетъ въ свѣтъ въ Петербургѣ
21 февраля 1902 года и будетъ выданъ тифлискимъ и ба-
кинскимъ подписчикамъ въ первой половинѣ мар-
та 1902 г., а остальнымъ подписчикамъ Закавказья—выс-
ланъ почтой.

Подписка принимается въ Тифлисѣ, Головин-
скій, № 14, и въ отдѣленіи конторы, Головинскій № 3,
въ магазинѣ С. Маркянца; въ Баку Горчаковский, д.
Тагіева, въ магазинѣ Шрейбера.

Редакціонныя письма, статьи и сообщенія просятъ
адресовать на имя Ивана Григорьевича Хачатурова.

	—Համակրելի երևութներ.—Ժողովրդի անօգնականութիւնը, Ա.	197
	Գլուխական փոխառութիւնների հարցի առիթով, Ա.—ԳԻՕ.	208
16.	ՎԻԿՏՕՐ ՀԻԻԳՕ, յօդ. Լ.	212
17.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական կուսակցութիւնների վերաբերմունքը ղէպի հաշտութեան հարցը.—Բողբէրի Լիվերպուլեան ճառը.—Անգլո-եապօնական դաշնակցութիւն.—Գերմանիան Մերձաւոր Արեւելքում.—Բաղդադի երկաթուղին.—Ճոխ հաշիւները և իրաւագոյրկազմաբնակութիւն.—Մի հակապատկեր դրան.—Իսլանդիայի ինքնավարութեան ընդարձակումը. Վ. Ա.	230
	Սանատարեան դպրոցի տեղափոխութիւնը.	235
18.	† Օ. ԿԱՐՐԻԵՐ	237
19.	ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ.—Օձի թռչնը և հակաթռչնական շիճուկը.—Մի հազուադիտ օսկերացիա.—Թունաւորումն մազերի ներկով.—Վարակումն սոխէնների, բաժակների, դանակի, պատառաքաղի և գդալի միջոցով.—Ծխախոտի պատմութիւնից, Վ. Ա.	238
20.	ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	233
21.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	249
22.	ՅԱԻԵԼՈՒԱԾ.«ՕՐԱՄՈՒՏԻՆ», ՎԷՄ Ի. Ս. Տուրգենևի. 33—48	

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1902 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ր Ի

(Նոր շրջան, II-րդ տարի)

Խմբագրութեան անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր ՈՒ Ն Ը՝

Ռուսաստանում տարեկան 10 անգամ. Արևմտահայաստանում՝ 12 անգամ.

” Կէս տարին 6 ” ” ” 7 ”

” 1 ամսուան 1 ” ” ” 1 ” 20 Կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը (Գանձակաշա փողոց, № 21, տ. Ջանջուղաղովի):

Խայտառկեան այլ տեղերից պէտք է գրուել՝ Тифлисе, въ редакцію журнала „Мурч“.

Արևմտահայաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

Ծանօթութիւն. Ով դժուարանում է Ռուսաստանում տարեկան բաժանորդագրութիւնը (10 ռ.) վճարել միանուագ, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.):

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 Կ. (մարկաներով):

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զեկեղելու համար պէժ է վճարել՝

Մի երես ընտղ լայնարարութեան համար . 10 ռ.

1/2 ” ” ” ” ” 5 ”

1/3 ” ” ” ” ” 2 ”

ԱՊԱՌԻԷԼԻ ԿԱՄ ԶՐԻՆՆԵՐ՝ ոչ ոքի «Մուրճ» չէ ուղարկում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը չատուկ խնդրում է յօդուածագիրներին՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, չատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Ձեռնդրուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները՝ չեն վերադարձնում: Ձեռագիրը լետ տառնալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:

3. Գրուածքների վարձատրութեան համար որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճ» համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև լաջարդ համարի լոյս տեսնելու: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային դրասենեակի հաւատարմագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չի լանձնուած գանդատարին:

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍԻՆՆԻԿԵԱՆ